Գրիգորյան Ռ. Լ.

# ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան
2010

*ՀՏԴ 339.138 (07)*
*ԳՄԴ 65.9(2)8 ց7*
*Գ 888*

***Գրիգորյան Ռաֆայել Լենսերի***

*Գ 888 Ռիսկի կառավարում: Ուս. ձեռնարկ. - Եր. ԵրՃՇՊՀ հրատ., 2010. – 234 էջ:*

Ուսումնական ձեռնարկում ներառված են ռիսկի կառավարման հիմնախնդիրները, զետեղված է ռիսկ հասկացությունը, դրա նվազեցման և չեզոքացման մոտեցումները: Սույն ձեռնարկը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել ռիսկի կառավարման մոտեցումները և հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ինչպես տնտեսագիտական մասնագիտության ուսանողների, այնպես էլ բոլոր այն ընթերցողների համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ ռիսկի կառավարման հետ:

Հրատարակումը և տպագրումը իրականացվում է հեղինակի միջոցներով և նախատեսված է ուսանողներին անվճար տրամադրելու համար:

Տպագրության է երաշխավորվել Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի Գիտական խորհրդի 25.02.2010թ. թիվ 03-02/10 նիստում:

*Գրախոս՝ տ.գ.թ., դոցենտ Ս. Շ. Ստեփանյան*

Սույն հրատարակման հեղինակային իրավունքը պաշտպանված է համաձայն հեղինակային իրավունքի պաշտպանության Համընդհանուր Համաձայնագրի 2 Արձանագրության և Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների կողմից հեղինակային իրավունքների պաշտպանության Համաձայնագրի: Հրատարակման տեքստի արտատպման, մասնակի կամ ամբողջությամբ օգտագործման պատվերները պետք է հղվեն հեղինակին: Այնուամենայնիվ փոքր հատվածները կարող են արտատպվել առանց թույլտվության, սույն հրատարակմանը հղում կատարելու պայմանով:

ՀՏԴ 339.138 (07)
ԳՄԴ 65.9(2)8 ց7

ISBN 978-9939-63-031-1

© Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2010
© Ռաֆայել Գրիգորյան, 2010

## Բովանդակություն


Ներածություն ..... 4

**ԳԼՈՒԽ 1. ՌԻՍԿԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ**

1.1 Ռիսկի հասկացությունը ..... 7

1.2 Ռիսկի հոգեբանական, հասարակական և ընդհանուր փիլիսոփայական տեսակետը ..... 11

1.3 Ռիսկի տնտեսագիտական և օրենսդրական տեսակետը ... 15

1.4 Ռիսկը և անորոշությունը ..... 21

**ԳԼՈՒԽ 2. ՌԻՍԿ-ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ**

2.1 Ռիսկ-մենեջմենթի ծագման պատմությունը ..... 29

2.2 Ռիսկ-մենեջմենթի խնդիրները և փուլերը ..... 38

2.3 Ռիսկ-մենեջմենթի հիմնական աքսիոմները և սկզբունքները ..... 48

2.4 Ռիսկերի կառավարման օրենքները ..... 65

**ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

3.1 Ռիսկերի դասակարգման հիմնական սկզբունքները ..... 83

3.2 Ռիսկերի դասակարգման մեթոդաբանությունը ..... 88

3.3 Արտաքին և ներքին ռիսկեր ..... 101

3.4 Ռիսկի տարատեսակները և դրանց առանձնահատկությունները ..... 113

**ԳԼՈՒԽ 4. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

4.1 Ռիսկի որակական գնահատումը ..... 128

4.2 «Ռիսկերի քարտեզը» և որակական գնահատման մատրիցան ..... 135

4.3 Ռիսկի քանակական գնահատումը ..... 141

4.4 Ռիսկերի գնահատման մեթոդները ..... 145

**ԳԼՈՒԽ 5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

5.1 Ռիսկի ապահովագրումը ..... 162

5.2 Ռիսկի ֆինանսավորումը ..... 174

5.3 Ռիսկի հեջավորումը ..... 182

5.4 Ռիսկի դիվերսիֆիկացումը ..... 189

Հավելված 1. Թեստեր ..... 193

Հավելված 2. Ռիսկի խնդրին անդրադարձած գիտնականներ . 204

Հավելված 3. Ռիսկ-մենեջմենթի հիմնական եզրույթները ..... 225

Օգտագործված գրականություն ..... 232

*Ամենաշատը ռիսկի է դիմում նա,*
*ով ռիսկի երբեք չի դիմում*
*Ի. Վ. Բուշին*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ կյանքը ընդհանուր առմամբ իրենից ներկայացնում է արագ և անդարձելիորեն զարգացող և փոփոխվող բարդ համակարգ: Այդպիսի համակարգերի համար բնորոշ է բացթողնված հնարավորությունների իրողությունը, այսինքն անցյալին վերադառնալու, ավելի գիտակցված գործելու և ավելի հիմնավորված որոշումներ ընդունելու անհնարինությունը:

Օգտագործելով անբարենպաստ իրադարձությունների կանխատեսման գնահատման ստանդարտ մեթոդները մարդկանց մոտ, զուտ ինտուիտիվ մակարդակի վրա, այնպիսի տպավորություն է ձևավորվում, որ մեծ դժբախտությունները շատ ավելի հաճախ են տեղի ունենում, քան թե կարելի էր սպասել: Իրենց ներքին էությամբ մարդիկ շատ հաճախ թերագնահատում են անբարենպաստ իրադարձությունների հավանականությունը, իրենցից կարծես «դեն են քշում» այն և մեծամասամբ հակված չեն ընդունելու անբարենպաստ իրադարձությունների կանխագուշակման մոտեցումները: Այս է պատճառը, որ շատ մարդիկ հաճախ բախվում են այսպես կոչված «Կասանդրայի էֆեկտին»* և անտեսում են վտանգի մասին նախազգուշացումները և նախօրոք չեն ձեռնարկում այնպիսի միջոցառումներ, որոնք կօգնեն չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել հնարավոր վտանգը:

Ուստի ռիսկի կառավարման տեսությունը պետք է օգնի ճգտել ռիսկերի բացահայտման և գնահատման մեթոդների կիրառման և այդ հիմքի օպտիմալ որոշումներ կայացնել դրանց բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

*Կասանդրա - առասպելական կերպար, որի կանխագուշակումներին ոչ մեկ չէր հավատում, բայց դրանք միշտ իրականանում էին:

Ռիսկին, որպես ձեռնարկատիրական գործունեության բնութագիր, առաջին անգամ ուշադրություն է դարձվել ֆրանսիացի տնտեսագետ Ռիչարդ Կանտիլյոնի կողմից XVII դարում:

1776թ.-ին Ադամ Սմիթը իր «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին հետազոտության» մեջ շահույթի անգամ սովորական նորմայի ստացումը պայմանավորում էր ռիսկի մեծ կամ փոքր աստիճանի հետ:

Ռիսկի խնդրին ուշադրություն են դարձրել դասական տնտեսագիտության ներկայացուցիչներ՝ Ջոն Միլը և Ուիլիամ Սենիորը, նոր դասական տնտեսագիտության ներկայացուցիչներ Ալֆրեդ Մարշալը և Արթուր Պիգուն:

Տնտեսական հարաբերությունների զարգացման խորացման հետ մեկտեղ անցյալ դարի սկզբում ռիսկի խնդիրը սկսեց ուսումնասիրվել մի խումբ մասնավոր գիտությունների՝ մաթեմատիկայի, վիճակագրության որոշ բաժինների, իրավական և տնտեսական մի շարք գիտակարգերի կողմից: Այնուհետև «ռիսկ» հասկացությունը հետազոտության ենթարկվեց որոշ կոնկրետ գիտությունների շրջանակներում, այդ թվում խաղերի և հավանականությունների տեսություններում, օպտիմալ որոշումներ կայացնելու, ընդհանուր և հասարակական հոգեբանության, տնտեսական, իրավական և այլ գիտակարգերի կողմից:

Տնտեսագիտության մեջ ռիսկի և անորոշության պայմաններում կառավարման առաջին տեսական մշակումները առաջացել են դեռ անցյալ դարի սկզբին: Արդեն 1921թ.-ին Ֆրենք Նայթի աշխատության մեջ պարունակվում էր ռիսկերի, ճիշտ է, բացարձակապես որակական վերլուծությունը՝ ֆինանսական տեսության կոնտեքստում:

Ջոն Մեյնարդ Քեյնսը «Զբաղվածության, տոկոսի և դրամի ընդհանուր տեսություն» իր աշխատության մեջ նույնպես ուշադրություն է դարձրել ռիսկի գնահատմանը:

XX դարի 40-ական թվականներին ռիսկի աստիճանի գնահատումն ու վերլուծությունը ճանաչվեց որպես տնտեսական գործունեության ընթացքում որոշումներ ընդունելու հիմնական պայմաններից մեկը: Դրան դրդեց Ջոն ֆոն Նեյմանի և Օսկար Մորգենշտերնի կատարված ուսումնասիրությունը, որտեղ առաջին

անգամ ուսումնասիրվել էր ռիսկի տեսակետից՝ ֆիզիկական անձի օգտավետության և ինստիտուցիոնալ միավորի շահույթի բարձրացման հիմնախնդիրը:

Ընդհանուր առմամբ, անցյալ դարի սկզբից, տարբեր ժամանակներում ռիսկի խնդրին բավականաչափ ուշադրություն էր տրամադրվում և ռիսկի գնահատման, վերլուծության ու կառավարման խնդրի հետազոտությամբ տարբեր ժամանակ զբաղվել են՝ Գ. Մարկովիցը, Ջ. Դանցինգը, Ու. Շարպը, Լ. Սեվիջը, Ք. Էրոուն, Ջ. Նեշը, Պ. Բերնսթայնը, Կ. Ռեդհեդը, Ս. Հյուսը, Ռ. Քրիստինան, Չ. Քենեդին, Ա. Ջուկատոն, Ջ.Մերիտը, Պ. Գրաբովին, Ն. Խոխլովը, Վ. Կապուստինը, Ա. Ալգինը, Ի. Բալաբանովը, Մ. Կարյակինը և ուրիշներ:

Սինենույն ժամանակ՝ ռիսկի պայմաններում որոշումներ ընդունելու խնդրի հիմնաքարը, որը դրվել էր 1979թ.-ին ամերիկացի գիտնականներ Դանիել Կահնեմանի և Ամոս Տվերսկու «Հեռանկարների տեսություն. ռիսկի պայմաններում որոշումների վերլուծություն» (Prospect theory: An analysis of decisions under risk) հոդվածի հայտագալուստի հետ, թույլ տվեց հոգեբան Դանիել Կահնեմանին և տնտեսագետ Վերնոն Սմիթին՝ այդ ոլորտին նվիրված այլ հետազոտությունների հետ մեկտեղ, ստանալ տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակ «*որոշումների ընդունման և այլընտրանքային շուկաների մեխանիզմների հիմնարար ուսումնասիրությունների համար*» և արմատական փոփոխություններ մտցնել տվյալ ոլորտ, որը մասնավորապես ապացուցում է ռիսկի պայմաններում որոշումների ընդունման իռացիոնալությունը և ժխտում է ռացիոնալ վարքի սկզբունքը:

Վերոնշյալ բոլոր հեղինակների աշխատությունները նշանավոր ներդրում են կատարել ռիսկի տեսության զարգացման և կայացման մեջ, բայց դրա հետ մեկտեղ Դ.Կահնեմանի վերջին վաստակը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ռիսկի կառավարման մեթոդական հարցերը դեռ բավականաչափ և հիմնավորապես հետազոտված չեն և տնտեսության ոլորտներում առկա են ռիսկերի նվազեցման շատ հիմնախնդիրներ, որոնք տեսական-մեթոդաբանական մշակումների և գործնական լուծումների կարիք ունեն:

# ԳԼՈՒԽ 1
# ՌԻՍԿԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*Ով ռիսկի չի դիմում, նա շամպայն չի խմում*
*Ժողովրդական ասացվածք*

## 1.1 Ռիսկի հասկացությունը

Գաղտնիք չե, որ երեխաները լույս աշխարհ ի հայտ գալով սկսում են շոշափել աշխարհը խաղալով: Սկզբում նրանք խաղում են տարբեր խաղալիքներով՝ շոշափելով, ձեռք տալով դրանց, կոտրելով և այլն: Այդ պարագայում երեխայի ծնողները ունենալով «կյանքի փորձ» աշխատում են թույլ չտալ որպեսզի նման խաղալիքներով խաղալիս երեխան իրեն վնաս պատճառի: Այսինքն նրանք նվազեցնում կամ ընդհանրապես չեզոքացնում են ռիսկի գործոնը, որի հետևանքով կարող են անբարենպաստ իրադարձություններ տեղի ունենալ:

Հասունանալով մարդիկ սկսում են խաղալ այլ խաղեր, որտեղ բացի անվտանգությունից նրանք հետապնդում են նաև անձնական շահը: Հարկ է նշել, որ մարդկության ստեղծման օրվանից մարդիկ միշտ խաղացել և խաղում են տարբեր խաղեր, հույս ունենալով որ հաղթելու են: Պատահականության տեսակետից ամենագրավիչ խաղերը նրանք են, որոնք մարդիկ խաղում են խաղատներում: Այդ խաղերում հաղթանակը մեծապես կապված է պատահականության հետ: Այդտեղ առկա է միայն հաղթելու հավանականության աստիճանը, որը բավարար չէ որպեսզի գուշակություն արվի թե ո՞վ կհաղթի, ո՞վ ոչ: Այլ խաղերում առկա է նաև ոչ միայն պատահականության գործոնը, այլ նաև խաղացողի վարպետությունը: Օրինակ՝ պոկեր թղթախաղը: Այս և շատ ու շատ այլ խաղեր կապված են այլընտրանքների գնահատման հետ, որը անմիջական սերտ կապի մեջ է ռիսկ հասկացության հետ:

Այստեղ անհրաժեշտ է փորձել հասկանալ տվյալ հասկացության ընդհանուր սահմանումը, որ *ռիսկը դա մարդու*

*կողմից գիտակցված փաստ է, որը գոյություն ունի մարդու կամիքց դուրս՝ ապագայում տեղի ունեցող իրադարձության արդյունքների անորոշության հետ*:

Հասարակության զարգացումը՝ համաձայն Լուիս Մորգանի կողմից մշակված պատմամշակույթային պարբերացմանը, անցել է երեք դարաշրջան՝ վայրիություն, բարբարոսություն և քաղաքակրթություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է երեք մակարդակից՝ ցածր, միջին և բարձր, իսկ հասարակության զարգացման հիմնական աղբյուրն է մարդկային գործունեությունը, ուստի՝ որպես պատմական կատեգորիա, *ռիսկը՝ կապված հասարակության զարգացման և մարդկային գործունեության ամբողջ ընթացքի հետ, դա մարդու կողմից գիտակցված հնարավոր վտանգն է, որն առաջացել է այն ժամանակ, երբ մարդու մոտ ի հայտ է եկել վախը՝ մահվան, վաղվա իրադարձությունների անորոշության նկատմամբ և հարցը՝ թե ի՞նչ հարված կհասցնի ճակատագիրը*: Այդ վախը առաջացել է մարդու մոտ քաղաքակրթության ցածր մակարդակի ժամանակաշրջանում: Դրա հետ կապված մարդկությունը ցանկանում է իմանալ տվյալ հարցի պատասխանը, որպեսզի պատրաստ լինի ցանկացած անակնկալի և հնարավորություն ունենա կանխարգելել վտանգ սպառնացող իրադարձությունը, քանի որ մարդկանց համար հետաքրքիր չէ միայն իմացությունը, այլ ավելի շատ նրանց հուզում է վտանգից խուսափումը և նրա նվազեցումը:

Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց ծագել են ապրանքա-դրամային հարաբերությունները և ռիսկը դարձել է նաև տնտեսագիտական կատեգորիա:

Ներկայումս «ռիսկ» բառը շատ հաճախ է օգտագործվում առօրյա կյանքում և լիովին շարադրել նրա ստուգաբանությունը բավականին բարդ է:

Ռիսկի տակ ընդունված է հասկանալ հնարավոր կորստի վտանգը, որը կախված է բնության երևույթներից և մարդկային գործունեության ձևերից:

«Ռիսկ» բառի ստուգաբանությունը ըստ Նիկլաս Լումանի ծագել է արաբերենից:

Միևնույն ժամանակ «ռիսկ» բառը տարածում է ստացել Իսպանիայում (risco-ուղղաբերձ ժայռ) ծովագնացների մոտ, որի տակ նրանք ի նկատի ունեին տարբեր տեսակի վտանգներ:

Ռիսկ եզրույթի ծագումնաբանությունը որպես վտանգի արտահայտիչ ընկած է ֆրանսերեն risque - «վտանգ» բառի հիմքում, որը ծագել է հուներեն rizikon - «ժայռ, քերծ» բառից, որը կազմվել է risa - «ժայռի ստորոտ» բառից, այսինքն «ռիսկ անել» բառացիորեն նշանակում է «շրջանցել ժայռը, քերծը»: Միևնույն ժամանակ «ռիսկ» բառի ծագումնաբանությունը ընկած է նաև հին իտալերեն risicare բառի հիմքում, որը նշանակում է «խիզախել»:

Ռիսկի հասկացողությունը տրված է Իրավաբանական բառարանում, այն էլ որպես «գույքի պատահական ոչնչացման ռիսկ»:

Օժեգովի բացատրական բառարանի համաձայն ռիսկը սահմանված է որպես «հնարավոր վտանգ»:

Դալի բացատրական բառարանում տրված է «ռիսկ անել» բառակապակցության բացատրությունը, որը նշանակում է «խիզախել, անել ինչ-որ բան առանց հաշվարկի, բախտի քմահաճույքին թողնելով ձեռնարկել որևիցէ բան» և նույն տեղում ներկայացված են նաև որոշ արտահայտություններ, ասացվածքներ՝ կապված ռիսկ բառի հետ, որոնք օգտագործվում են առօրյա կյանքում:

Վեբստերի բառարանում ռիսկը սահմանված է որպես «possibility of loss or injury» (կորուստի կամ վնասի հնարավորություն):

Բրիտանական հանրագիտարանում ռիսկի սահմանումը տրված է որպես «risk is present in a situation if the result or outcome of a choice, a decision or an action cannot be anticipated with certainly» (ռիսկը գոյություն ունի այն իրադարձությունում, եթե ընտրության,

որոշման կամ գործողության արդյունքը որոշակի կանխատեսված լինել չի կարող):

Ռիսկ եզրույթի սահմանումները տնտեսագիտական գրականությունում բազմազան են: Տարբեր ոլորտներում և ճյուղերում առկա են ռիսկի՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի, ավելի քան երեսուն սահմանում, որոնցից ոչ մեկը չի ստացել համընդհանուր ճանաչում, սակայն բոլոր սահմանումների մեջ առկա են կորուստի և վտանգի հասկացությունները և տվյալ իմաստով էլ այն կիրառում է ստացել տնտեսագիտությունում:

Սինենույն ժամանակ վտանգը դա ռիսկ չէ: Վտանգը գոյություն ունի անկախ և մինչ որոշակի պահ և հավասարության նշան դնել վտանգի և ռիսկի միջև սխալ է:

Վտանգը ուղեկցում է մեզ առօրյա կյանքում՝ ճանապարհին, փողոցում, աշխատանքի վայրում և նույնիսկ տանը: Այսպես թե այնպես, միշտ առկա է որևէ անհաջողության տեղի ունենալու հավանականությունը: Բայց այս ամենը անկանխատեսելի վտանգն է, որը մի կողմից կապում են ճակատագրի հետ, իսկ մյուս կողմից այն այդքան մեծ չէ, հատկապես, եթե մարդ զգույշ է և հետևում է անվտանգության կանոններին: Այլ հարց է ռիսկը: Ռիսկի դիմելը որոշվում է սեփական ընտրությամբ՝ գիտակցաբար և նպատակաուղղված: Սուբյեկտը դիմում է ռիսկի՝ իմանալով ռիսկի պատճառները և աղբյուրները, օգտագործելով անվտանգության մեխանիզմները, նվազեցման եղանակները, որոնք չեն բացառում խուսափումը ռիսկից: Այլ կերպ՝ ռիսկը դա կանխատեսելի և կառավարելի վտանգն է:

*Ստուգողական հարցեր*

1. Ե՞րբ է ծագել ռիսկ հասկացությունը՝ որպես պատմական կատեգորիա և ինչո՞վ է այն պայմանավորված:
2. Ո՞րն է «ռիսկ» բառի ստուգաբանությունը:
3. Ի՞նչ հասկացություններ են ներկայացված «ռիսկ» եզրույթի վերաբերյալ տարբեր բառարաններում:

## 1.2 Ռիսկի հոգեբանական, հասարակական և ընդհանուր փիլիսոփայական տեսակետը

Հոգեբանական, հասարակական և ընդհանուր փիլիսոփայական առումով ռիսկի խնդրին ուշադրություն են դարձրել գերմանացի գիտնականներ՝ Նիկլաս Լումանը, Ուլրիխ Բեկը, Ռիչարդ Շեֆերը, անգլիացի Էնտոնի Գիդդենսը և ուրիշներ:

Ժամանակակից տնտեսական գործունեությունը հնարավոր չէ առանց ռիսկի, քանի դեռ շուկան ինքնին պայմանավորում է անորոշության որոշակի, բավականին բարձր մակարդակ:

Ցանկանում ենք, թե ոչ՝ շուկայական տնտեսության շրջանակներում, իրականացնելով որևէ գործունեություն, մենք գործ ենք ունենում ռիսկի բարձր աստիճանի հետ և խնդիրը կայանում է նրանում, որ գործունեություն իրականացնելիս դիմում ենք ռիսկի՝ շահույթ ստանալու ակնկալիքով: Միևնույն ժամանակ շահույթի ստացման հետ պայմանավորված գործունեությունը կարող է նաև բերել կորստի:

Անհրաժեշտ է ոչ թե խուսափել ռիսկից, այլ կարողանալ զգալ այն, գնահատել, իմանալ թույլատրելի սահմանները: Չի կարելի հրաժարվել փողոց անցնել՝ ճանապարհային վթարից վախենալու պատճառով, այլ անհրաժեշտ է իմանալ և հետևել անվտանգության կանոններին, որը նույնպես չի նշանակում, որ ռիսկը վերացավ՝ նա պարզապես նվազեցվեց:

Ինքնին ռիսկի առկայությունը, որն ուղեկցում է այս կամ այն գործունեությունը, չի հանդիսանում ոչ թերություն և ոչ էլ հաջողության չափանիշ: Հակառակը, ռիսկի բացակայությունը ազդում է գործունեության դինամիկայի, առաջընթացի և արդյունավետության վրա:

Ռիսկը կարելի է կառավարել, այսինքն կիրառել տարբեր միջոցառումներ, որոնք թույլ են տալիս որոշակի սահմաններում կանխատեսել ռիսկային իրադարձության տեղի ունեցումը և օգտագործելով տարբեր մեթոդներ չեզոքացնել կամ նվազեցնել այն:

Ռիսկիայնության աստիճանի, մակարդակի, սահմանների վերաբերյալ գոյություն չունեն համընդհանուր նորմեր, կանոններ և խորհուրդներ: Ռիսկի տեսության և փորձի զարգացման տվյալ փուլում յուրաքանչյուրը ինքնուրույն է որոշում ցուցանիշները, որոնք բնութագրում են ընդունելի ռիսկի աստիճանը:

Դրա պատճառն այն է, որ ռիսկի գործոնը բնորոշ է տնտեսական գործունեության բոլոր ոլորտներին և դա է պայմանավորել այն, որ և հայրենական, և արտասահմանյան հեղինակները իրենց աշխատություններում փորձեր են արել սահմանում տալ ռիսկ հասկացողությանը:

Գերմանացի սոցիոլագ Ուլրիխ Բեկը իր աշխատությունում նշել է ռիսկի հատկանշական սոցիալական առանձնահատկությունները. «առաջինը՝ ռիսկը միշտ ստեղծվում է սոցիալական համակարգում, երկրորդը՝ ռիսկի ծավալը հանդիսանում է սոցիալական հարաբերությունների և գործընթացների որակի ֆունկցիան, և երրորդը՝ ռիսկի աստիճանը կապված է փորձագետներից և փորձագիտական գիտելիքներից»:

Նա նշել է, որ ռիսկի խնդիրը անմիջականորեն կապված է մի կողմից ինդուստրիալիզացման հետ, իսկ մյուս կողմից մոդերնիզացման անկանխատեսելի (անբարենպաստ) հետևանքներից:

Հետազոտությունների արդյունքում Ու. Բեկը տվել է ռիսկի հետևյալ սահմանումը. «Ռիսկը կարող է սահմանվել որպես վտանգների և վնասների հասարակության համակարգված փոխգործունեություն, որոնք արտադրվում են մոդերնիզացման գործընթացով: Ռիսկը՝ ի տարբերություն անցյալ դարաշրջանների,

հանդիսանում է մոդերնիզացման վտանգավոր ուժի հետևանք և դրանից առաջացնող անվստահության և վախի զգացմունք»:

Բրիտանացի սոցիոլագ Էնտոնի Գիդդենսի կոնցեպցիայի շրջանակներում, ռիսկը վերլուծության է ենթարկվել սոցիալական համակարգերի մակարդակով: Համաձայն Է. Գիդդենսի «ցանկացած սոցիալական գործողություն ռիսկային է. պասիվությունը, անգործությունը և որոշումը հրաժարվել գործողություն իրականացնելուց նույնպես հանդիսանում է սոցիալական «գործողություն», որը կարող է լինել ոչ պակաս ռիսկային»:


Ռիսկի մեկ այլ սահմանում է նշում Նիկլաս Լումանը, որը փորձում է տալ ռիսկ հասկացության սահմանման այլ ձև, ռիսկի և վտանգի միջև տարբերության շեշտադրմամբ: Ըստ նրա «կամ հավանական վնասը դիտարկվում է որպես որոշման հետևանք՝ այդ դեպքում մենք խոսում ենք ռիսկի՝ հատկապես որոշման ընդունման ռիսկի մասին, կամ էլ համարվում է, որ նման վնասի պատճառները արտաքին են, այսինքն նրանք վերագրվում են արտաքին աշխարհին: Այդ դեպքում մենք խոսում ենք վտանգի մասին»:

Մեկ այլ հեղինակ ռիսկը անմիջականորեն կապում է վտանգի հետ - բնական կամ մարդու կողմից ստեղծված: Ռ. Շեֆերը դիտարկում է վտանգը «որպես հնարավոր կորուստ *(pontential loss)*, ի տարբերություն սպասվող կորուստների *(expected loss)»:*

Ռ. Շեֆերը վտանգները դասակարգել է հետևյալ կերպ:

Բնական վտանգներին են վերաբերվում՝ օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժները: Սոցիալական վտանգները ծագում են սոցիալական համակարգերի կամ տեխնոլոգիաների անցանկալի գործունեության հետևանքով:

Վտանգները, որոնք չեն վերաբերվում տեխնոլոգիաներին, կոչվում են մշակույթային. անձնական փոխհարաբերություններ (միկրոմակարդակ), հանցագործություն (մեզոմակարդակ), սխալ քաղաքական որոշումների ընդունում (մակրոմակարդակ):




Գծանկար 1. Վտանգների դասակարգումը ըստ Ռ.Շեֆերի

*Ստուգողական հարցեր*

1. Ովքե՞ր են անդրադարձել ռիսկ հասկացությանը հոգեբանական, հասարակական և ընդհանուր փիլիսոփայական տեսակետներից:
2. Ինչո՞վ է պայմանավորված ռիսկի առկայությունը:
3. Որո՞նք են ռիսկի հատկանշական սոցիալական առանձնահատկությունները:
4. Որտե՞ղ է ստեղծվում ռիսկը և ինչո՞վ է այն պայմանավորված:
5. Ու՞մ տեսակետից «պասիվությունը» համարվում է ոչ պակաս ռիսկային և ինչու՞:
6. Ո՞վ է փորձել առանձնացնել «ռիսկ» և «վտանգ» հասկացությունները և որո՞նք են դրա պատճառները:
7. Ո՞վ է կապել ռիսկ հասկացությունը վտանգի հետ և ինչպե՞ս է այն դասակարգել:

*Սկսանալ շահույթ ջդիմել ռիսկի, ձեռք բերել փորձ չեմթարկվել վկսանգի,*
*արժանանալ պարգեւների չաշխատել՝ նույպես անհնար է.*
*հնչպես ապրել չլինել ծնված*
*Սենեկա*

## 1.3 Ռիսկի տնտեսագիտական և օրենսդրական տեսակետը

Ռիսկի խնդրին բավականաչափ ուշադրություն է դարձվել դասական տնտեսագիտության ներկայացուցիչների կողմից: Ջոն Միլը և Ուիլիամ Սենիորը ձեռնարկատիրական եկամուտի կառուցվածքում տարբերում էին տոկոսը (որպես ներդրված կապիտալի բաժին), ձեռնարկատիրոջ աշխատավարձը և ռիսկի համար վճարումը (որպես ձեռնարկատիրական գործունեության հետ կապված հնարավոր ռիսկի հատուցում): Միևնույն գործոնները՝ չափավորությունը, ռիսկը, լարված աշխատանքը՝ պահանջում են համապատասխան վարձահատուցում և այն պետք է ստանան համախառն շահույթից: Երեք մասերը՝ որոնց կարելի է համարել բաժանվում է շահույթը, կարող են ներկայացվել որպես տոկոս ըստ կապիտալի, ապահովագին և աշխատավարձ ձեռնարկության կառավարման համար, որտեղ ռիսկը նույնացվում է այն կորուստների մաթեմատիկական սպասումի հետ, որոնք կարող են տեղի ունենալ ընտրված որոշման արդյունքում:

Սակայն ռիսկի էության այդպիսի միակողմանի մեկնաբանումը կտրուկ առարկում էր առաջացրել արտասահմանյան տնտեսագետների մի մասի մոտ:

XX դարի 30-ական թվականներին տնտեսագետներ Ալֆրեդ Մարշալն ու Արթուր Պիգուն մշակել էին ձեռնարկատիրական ռիսկի նոր դասական տեսության հիմունքները: Այդ տեսության հիմունքները կայանում են հետևյալում՝ ձեռնարկատերը, որը աշխատում է անորոշության պայմաններում և որի շահույթը պատահական փոփոխական է, գործարք կնքելիս ղեկավարվում է երկու չափանիշներով՝

- ակնկալվող շահույթի չափերով,
- շահույթի հնարավոր տատանումների արժեքով:

Շատ հաճախ տնտեսագիտական գրականության մեջ ռիսկը զուգորդվում է միայն անորոշ պայմաններում տնտեսվարման անբարենպաստ հետևանքների հետ: Ռիսկը ներկայացվում է, որպես կանոն, հնարավոր անհաջողության, նյութական և այլ կորուստների տեսքով, որոնք կարող են առաջանալ ընտրված որոշման կենսագործման արդյունքում:

Սինոնյն ժամանակ ռիսկը դիտվում է որպես անորոշության մի տարր, որը կարող է անդրադառնալ այս կամ այն սուբյեկտի գործունեության վրա: Այդ իսկ պատճառով տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտը չի կարող իրականացնել իր գործունեությունը առանց ռիսկի, ինչպես նաև ռիսկերի տեսակներից ոչ մեկը չի կարող լիովին չեզոքացվել նրա կողմից: Եթե հաշվի առնենք, որ միևնույն ժամանակ, սուբյեկտի գործունեության նպատակը հանդսիսանում է առավելագույն շահույթի ստացումը, ապա նա պետք է հսկայական ուշադրություն դարձնի հավանական ռիսկերի ներքո իր գործունեության իրականացմանը:

Բազմաթիվ տեսակետների համաձայն ռիսկը կապված է անբավարար արդյունքների, ռեսուրսների և շահույթի կորստի հետ: Սակայն ռիսկի նկատմամբ այդպիսի միակողմանի մոտեցումը հիմնված է միայն ողջամտության, այլ ոչ թե գիտական հիմնավորվածության վրա: Եթե ռիսկը կապված լիներ միայն բացասական արդյունքների հետ, կատարելապես անբացատրելի կլիներ սուբյեկտի պատրաստակամությունը դիմելու նրան: Այն կարող է արդարացված լինել և իրականում արդարացվում է նրանով, որ այստեղ գոյություն ունի հզոր մի խթան: Ռիսկը ենթադրվող հնարավոր անհաջողության հետ մեկտեղ զուգակցվում է նաև բարենպաստ ելքի հետ: Բարձր շահույթը՝ դա յուրահատուկ եկամուտ է, որը հատուկ է ռիսկային տնտեսական գործունեությանը:

Ուշագրավ է, որ տնտեսագիտության տեսության մեջ ռիսկը կապված է «շահույթի» հասկացության՝ այն բաց թողնելու և կորուստներ կրելու հետ: Սուբյեկտը, որը ցանկանում է մեծ շահույթ ստանալ, պետք է ստանձնի ռիսկը, որը թույլ է տալիս ինչպես մեծ հատուցման, այնպես էլ մեծ կորուստների հնարավորությունը:

Ռիսկի խնդիրը բավականաչափ «հասունացել է» և ռիսկի տեսությունը սկսել է ակտիվ զարգանալ արտասահմանում 1950-ական թվականների սկզբին: Ուսումնասիրությունների մեծ մասը՝ նվիրված ռիսկի վերլուծությանը, պատկանում է ԱՄՆ-ի գիտնականներին, չնայած այդ խնդիրը ուսումնասիրվել է նաև արևմուտքի այլ երկրներում:

Տնտեսագիտության տեսությունում ռիսկը առավել հաճախ ներկայացվում է մի քանի տարբեր տեսակետներից՝ ռիսկ որպես հնարավորություն, ռիսկ որպես վտանգ և սպառնալիք, և ռիսկ որպես անորոշություն: Սակայն այդ հայեցակարգերը մեկուսացված չեն և իրենցից ներկայացնում են ռիսկի կառավարման ամբողջական տարածությունը կամ կոնտինիումը:

Առաջինը ռիսկին, որպես տնտեսագիտական կատեգորիայի, անդրադառձել է Ջ.Մ.Քեյնսը: Իր աշխատության տասնմեկերորդ գլխում նա նշում է հետևյալ ռիսկերի տեսակները.

1. Ձեռնարկատիրոջ ռիսկ, կապված նրա կասկածների հետ ապագայում ստացվելիք օգուտի առումով, որն առաջ է գալիս այն ժամանակ, երբ ձեռնարկատերը շրջանառության մեջ է դնում իր դրամական կապիտալը:

2. Կրեդիտորի ռիսկ, որն առաջանում է այն ժամանակ, երբ կիրառություն է գտնում ձեռնարկատերերի վարկավորման մեխանիզմը: Այստեղ ռիսկի կրողը հանդիսանում է կապիտալ տրամադրողը, որն կասկածում է դրա ստացողի նկատմամբ ունեցած վստահության վրա, քանի որ նա կարող է կորցնել իր կապիտալը ինչպես ոչ ճիշտ հաշվարկներ կատարելու, այնպես էլ կանխամտածված կերպով սննկացում կազմակերպելու դեպքում (այդ թվում նաև՝ օրինական ճանապարհով):

3.Դրամական միավորի արժեզրկման ռիսկ, կապված սղաճի հետևանքով կապիտալի իրական արժեքի նվազեցման հետ (այդ առումով Քեյնսն ունեցվածքի ձևով տրված վարկն ավելի ապահով է համարում, քան դրամական):

Ռիսկ հասկացության համար գոյություն չունի միանշանակ և համընդհանուր սահմանում՝ սակայն ռիսկի հատկանշական բնույթն այն է, որ ռիսկը կապված է անցանկալի հետևանքների հետ: Միևնույն ժամանակ հարց է առաջանում, եթե նախկինում ռիսկ հասկացությանը չի տրվել սահմանում, արդյո՞ք անհրաժեշտ է տվյալ հասկացությանը տալ գիտական հիմնավորում:

Միգու՞ցե ռիսկը ինքնին ըմբռնելի հասկացություն է, որը չի կարող երկիմաստություն ունենալ և ի՞նչ դեր է խաղում ռիսկը տնտեսական գործունեության ժամանակ:

Տնտեսական գործունեության նախապատրաստման և իրականացման ժամանակ անխուսափելիորեն և օբյեկտիվորեն գոյություն ունի պատահականության գործոնը, որը սուբյեկտը կարող է մասամբ կանխատեսել, բայց կարող են լինել նաև անկանխատեսելի դեպքեր:

Այդ պատահականության տարրը բերում է անցանկալի հետևանքների (վնասներ) և կարող է ունենալ տարբեր բնույթ (տնտեսական, քաղաքական, աղետային, իրավական և այլն): Այլ կերպ ասած՝ տնտեսական գործունեության ժամանակ կարող են տեղի ունենալ անբարենպաստ իրադարձություններ, որոնք վտանգ են պարունակում սուբյեկտի համար:

Պետությունը՝ մի կողմից շահագրգռված լինելով տնտեսության կայուն զարգացման մեջ, մյուս կողմից ինքնին մասնակցելով՝ լիազորված մարմինների միջոցով, տնտեսական (ներքին և արտաքին) շրջանառությանը, օգտագործելով ռիսկի ինստիտուտը կանոնակարգեր է հաստատում, որոնք արտահայտված են տարբեր իրավական նորմերում, որոնք թույլ են տալիս նվազեցնել վնասակար իրադարձությունները:

Հաշվի առնելով այն փաստը, որ ցանկացած տնտեսական գործունեություն շուկայական հարաբերությունների ժամանակ կանոնակարգվում են ազգային օրենսդրություններով և միջազգային նորմերով, ապա տնտեսական բարեփոխումների սկզբից օրենսդիրը ավելի հաճախ է ներգրավում ռիսկ եզրույթը օրենսդրական ակտերի տեքստերի մեջ:

Որպես օրինակ կարելի է թվարկել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքում ռիսկ եզրույթը օգտագործվում է մեկ անգամ, «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում ութ անգամ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում մեկ անգամ, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում տասներեք անգամ, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում մեկ անգամ, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքում մեկ անգամ և այլն:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր *ռիսկով* իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակն է գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալ»:

Նմանատիպ սահմանում է տրված «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքում, որտեղ նշված է. «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից եւ իր *ռիսկով* իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

Հատկանշական է, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում ռիսկ եզրույթը օգտագործվում է 63 անգամ:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ տնտեսական բարեփոխումների ընթացքում օրենսդիրը ուշադրություն է դարձնում ռիսկի հասկացությանը և ռիսկայնության գաղափարին:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի որոշ հոդվածներում նշվում է ռիսկը որպես «հնարավոր վնասի չափ», «ձեռնարկատիրական ռիսկի համար՝ ձեռնարկատիրական գործունեության վնասներ», բայց միևնույն ժամանակ ռիսկի հասկացությունը ոչ մի տեղ չի բացվում:

Միայն «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում վերացական ներկայացված է ապահովագրական ռիսկի հասկացությունը. «Ապահովագրական ռիսկ է համարվում այն պատահարի (դեպքի) տեղի ունենալու հավանականությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրությունը»:

Ռիսկ հասկացությունը օգտագործվում է միջազգային իրավական փաստաթղթերում, որոնք կարգավորում են սուբյեկտների տնտեսական հարաբերությունները ավելի հաճախ, քան Հայաստանի իրավական համակարգում:

Սակայն նշենք, որ միջազգային տնտեսական իրավունքի նորմերը նույնպես չեն տալիս ռիսկ հասկացության սահմանումը:

*Ստուգողական հարցեր*

1. Ինչպե՞ս է ներկայացված ռիսկը դասական տնտեսագիտությունում:
2. Ինչպիսի՞ տեսակետներից է ներկայացվում ռիսկը տնտեսագիտության տեսությունում:
3. Ո՞վ է առաջինը ռիսկին անդրադարձել որպես տնտեսագիտական կատեգորիա և ինչպե՞ս է այն նկարագրել:
4. Ո՞ր օրենսդրական ակտերում են ներկայացված ռիսկի հասկացությունները:

*Ռիսկը առազանում է այն ժամանակ,*
*երբ դուք չգիտեք թե ինչեք անում*
*Ուորեն Բաֆեթ*

## 1.4 Ռիսկը և անորոշությունը

Տնտեսական գործունեության իրականացման ժամանակ սուբյեկտի համար բարդ հիմնախնդիրներից մեկը իրականացվող գործարքում ֆինանսական միջոցների օգտագործման օպտիմալ տարբերակի ընտրությունն է: Սուբյեկտը այս դեպքում բախվում է անորոշությունների զանազան տարատեսակների հետ: Դրանց համալիրը իր համամասնության մեջ կազմում է այսպես կոչված կրիտիկական անորոշություն, որի պարագայում գործողության մեջ է մտնում ռիսկի տարրը:

Մարդկային գործունեության ցանկացած բնագավառում լիովին խուսափել ռիսկից անհնարին է, քանի դեռ այն կապված է մարդկանց կողմից ընդունվող որոշումների ելքի վրա ազդող բազմաթիվ պայմանների և գործոնների հետ:

Երբ մարդիկ դիմում են որոշակի գործողությունների և համոզված չեն լինում, որ այն կբերի դրական արդյունքի, ասում են, որ նրանք ռիսկի են դիմում և կախված արդյունքից ասում են, որ այդ ռիսկի դիմելը արդարացված էր կամ ոչ: Այսինքն՝ ռիսկի դիմելու կարողությունը յուրաքանչյուր մասնավոր դեպքում արդարացված և չարդարացված ռիսկի միջև սահմանի հնարավորությունն է:

Ռիսկի հասկացությունը առավել հաճախ հանդիպում է այն ժամանակ, երբ խոսքը գնում է մարդու բարեկեցության մասին:

Այդ կապակցությամբ այսօր գոյություն ունեն ռիսկի զանազան տեսություններ և բաժիններ, իսկ տնտեսագիտության մեջ գոյություն ունի ինքնուրույն առարկա, որը կոչվում է «ռիսկերի կառավարում» (risk-management):

Դա զարմանալի չէ, չէ՞ որ Խորհրդային Միության պլանային տնտեսության ժամանակ ռիսկը գաղափարական տեսակետից ոչ մի կերպ չէր զուգակցվում տնտեսության զարգացման հչռակված պլանային բնույթի հետ: Վարչա-հրամայական համակարգը ձգտում էր ձեռներեցության ոչնչացմանը, նրա անխուսափելի գործոնի՝ ռիսկի հետ միասին:

Հայտնի է, որ «ռիսկ» և «անորոշություն» հասկացությունները բնորոշ են միայն շուկայական կամ անցումային տնտեսություններին: Սակայն բացառել «ռիսկի» և «անորոշության» առկայությունը պլանային տնտեսության մեջ սխալ կլինի:

Պլանային տնտեսության ժամանակաշրջանում կարելի էր գործ ունենալ պետպատվերի չկատարման, արտադրանքի խոտանացման և այլ ռիսկերի հետ, որոնք բխում էին սովորաբար նորմերի և կանոնների խախտման հետևանքով:

Ռիսկը կապված է ապագայի անորոշության հետ: Այն առաջանում է այն ժամանակ, երբ վերջնական ստացված արդյունքները տարբերվում են ակնկալվող արդյունքներից: Միևնույն ժամանակ, եթե մենք ակնկալում ենք, որ հաջողության կհասնենք և ոչինչ չենք անում, ապա դա պասիվ դիրքորոշում է, իսկ, եթե փորձում ենք ապահովագրել բացասական ազդեցությունների գործոները և կարողանում ենք ապահովել բարենպաստ ելքը ապագայում, ապա դա ակտիվ դիրքորոշում է: Ուստի անորոշության և ռիսկի հիմնախնդիրներին հարկավոր է ավելի հիմնավորապես մոտենալ:

Ռիսկի գործոնը ստիպում է սուբյեկտին տնտեսել ֆինանսական և նյութական ռեսուրսները, հատուկ ուշադրություն դարձնել նոր գործարքների հաշվարկների արդյունավետութաև վրա և այլն: Տնտեսական գործունեության մեջ ռիսկի գործոնը հատկապես մեծանում է տնտեսության անկայուն վիճակի ժամանակաշրջաններում, որը զուգորդվում է սղաճի պրոցեսներով և այլն, և անգամ լավագույն կանխատեսումները չեն կարող լիովին

բացառել շուկայի անորոշությունը: Իսկ որտեղ անորոշությունն ու պատահականությունն է, այնտեղ հնարավոր չէ խուսափել ռիսկից:

Ռիսկի գոյությունը անմիջականորեն կապված է անորոշության հետ: Առանձին հետազոտողների կողմից «անորոշություն» հասկացության մեկնաբանման առանձին տեսանկյունները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Առանձին հետազոտողների կողմից «անորոշություն» հասկացության մեկնաբանումը

| «Անորոշություն» հասկացության սահմանումներ | Սահմանման հեղինակներ |
|---|---|
| Բիզնեսի ոլորտում գործունեության կանոններին անծանոթ լինելու հետևանք | Վորոպայեվ Յու. |
| Պայմանավորված է անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ | Կապուստին Վ. |
| Բնութագրվում է անբավարար տեղեկություններով այն պայմանների մասին, որոնցում ընթանալու է տնտեսական գործունեությունը, այդ պայմանների կանխորոշելիության, կանխատեսման ցածր աստիճանով | Ռայզբերգ Բ. Ա. |
| Կապված է գործունեության պայմանների կամ հետևանքների մասին տեղեկատվության թերատության կամ անստույգության հետ | Կուզմին Վ.<br>Գուբենկո Ա. |
| Պայմանավորված է այն գործոնների գործողությամբ, որոնց վրա մարդը չի կարող ազդել (օբյեկտիվ անորոշություն): Կապված է արտաքին միջավայրի մասին սուբյեկտի գիտելիքների պակասության հետ (սուբյեկտիվ անորոշություն) | Տամբովցեվ Վ.<br>Կելներ Գ. |

Ռիսկի կառավարման տեսության մեջ ռիսկ և անորոշություն (Risk և Uncertainty) հասկացությունների մեջ գոյություն ունի անհամանիշություն: Մի տեղ այդ հասկացությունները նույնացվում են և նրանց միջև դրվում է հավասարության նշանը (Risk = Uncertainty), իսկ մյուսում՝ այդ հասկացությունները օգտագործվում են տարբեր իմաստներով:

Պոլ Սամուելսոնը պարզաբանում է. «Անորոշությունը ծնում է անհամապատասխանելիություն՝ մարդկանց սպասելիքների և իրականում տեղի ունեցածի միջև: Այդ անհամապատասխանելիության քանակական արտահայտությունը հանդիսանում է շահույթը (կամ կորուստը)»:

Ակնհայտ է, որ սպասվելիք շահույթի հավանական մեծությունը և ռիսկի մեծությունը գտնվում են ուղիղ կախվածության մեջ:

Ամերիկացի գիտնական Ֆրենք Նայթը նշում էր, որ գոյություն ունեն հավանականության երկու տեսակներ՝ մաթեմատիկական և վիճակագրական. Մաթեմատիկական հավանականությունը դա ամեն ինչում նույնանման դեպքերի բացարձակ համասեռ դասակարգումն է: Վիճակագրական հավանականությունը, դա հավասար հավանական այլընտրանքների փոփոխական համակցությունների չվերածվող պնդումների միջև կապի արտահայտման հաճախականության էմպիրիկ գնահատականն է:

Պիտեր Բերնսթայնը բացահայտել է ներկա ժամանակաշրջանի ամենակարևորագույն կանխադրույթներից մեկը. չնայած որ ռիսկը՝ մեր կյանքի անփոփոխ ուղեկիցն է, կարելի է խուսափել այս կամ այն բացասական հետևանքներից՝ կիրառելով տարբեր տեսակի վիճակագրական մեթոդներ, պատմասոցիոլոգիական փորձը և մաթեմատիկական վերլուծությունը:

Ներկա ժամանակշրջանի բնորոշիչ հատկանիշ է հանդիսանում տիրապետումը ռիսկի պայմաններում որոշումների կայացման ռազմավարությունը, որը հիմնվում է այն ըմբռնելու և հասկանալու վրա, որ ապագան աստվածների քմահաճույքը չէ և որ մարդիկ անզոր չեն բնության առջև: Ապագայի հնարավոր տարբերակները

կանխատեսելու և այլընտրանքային որոշումների մեջ ընտրելու հնարավորությունը դրված է ժամանակակից հասարակությունների հիմքում:

Ռիսկը կապված է հոգեբանության, մաթեմատիկայի, վիճակագրության և պատմության առավել բարդ ասպեկտների հետ և պատահական չէ, որ տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակները շնորհվում էին այն գիտնականներին, որոնց հետազոտություններում բավականաչափ ուշադրություն է դարձվում անորոշության և ռիսկի հիմնախնդիրներին:

Մասնավորապես Քենեթ Էրոուի հոդվածում, որը առաջին անգամ հրապարակվել էր 1951 թվականին, ներկայացված է տնտեսագիտության մեջ ռիսկի և անորոշության թեմայի զարգացման բավականին տարողաշատ տեսությունը:

Նոբելյան մրցանակի մեկ այլ մրցանակակիր՝ մաթեմատիկոս Ջոն Նեշը, որը ճանաչում է ստացել խաղերի տեսության և ռիսկի ու տեղեկատվության անհամաչափության պայմաններում որոշումներ ընդունելու վերաբերյալ իր աշխատանքներով, դուրս բերեց հասկացություն, որ լրիվ և չհակասող տվյալների կիրառմամբ ճշգրիտ հաշվարկների վրա հիմնված զուտ մաթեմատիկական մեթոդները կարող են սխալվել փորձեր կատարելիս դրանք կիրառելու «կյանքի» իրադրություններ կոչվող իրադարձությունների լայն դասի նկատմամբ՝ խաղի, հասարակական հարաբերությունների զարգացման և այլն, որոնց կարելի է ավելացնել նաև գործնական իրադրությունները, ինչպիսիք են՝ գործընկերոջ ընտրությունը, գործունեության նախագծումը և այլն:

Նյու-Ջերսիի Պրինստոնի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Դանիել Կահնեմանը 2002 թվականին դարձավ տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիր: Նա արժանացավ այդ մրցանակին անորոշության և ռիսկի հետ կապված իրադրություններում անհատի կողմից որոշումներ կայացնելու մեխանիզմների ուսումնասիրությանը նվիրված

աշխատանքների համար: Նա կարողացավ ցույց տալ, որ այդ որոշումները միշտ չէ, որ համապատասխանում են ավանդական տնտեսագիտության տեսության կանխադրույթներին:

Դանիել Կահնեմանը և Վերնոն Սմիթը միավորել են հոգեբանությունն ու տնտեսագիտությունը: Դ. Կահնեմանի հետազոտությունները կիզակետվում են իրադրությունը գնահատելու և անորոշության պայմաններում որոշումներ ընդունելու մարդկանց ունակության վրա:

Դանիել Կահնեմանը՝ հոգեբանության պրոֆեսոր Ամոս Տվերսկու հետ համահեղինակությամբ իրենց հանրահայտ հոդվածում սկիզբ են դրել այդպես կոչված «վարքային տնտեսագիտությանը» (behavioral economics): Բազմաթիվ փորձերի հիման վրա նրանք ապացուցել են, որ մարդիկ չեն կարող ռացիոնալ կերպով գնահատել ակնկալվող շահերի կամ կորուստների արժեքները: Նրանք բացահայտել են, որ մարդիկ տարբեր ձևով են արձագանքում համարժեք իրադրություններին՝ կախված նրանից, կորցնում են նրանք, թե շահում են: Նրանց ուսումնասիրության համաձայն, մարդիկ պատրաստ են ռիսկի դիմել կորուստներից խուսափելու և հակված չեն ռիսկի դիմել շահույթ ստանալու համար:

Անցկացված փորձերի հիման վրա նրանք ցույց են տվել, որ անգամ հավանականության տեսությունը լավ իմացող մաթեմատիկոսները՝ կյանքի իրական իրադրություններում, չեն օգտագործում իրենց գիտելիքները, այլ ելնում են իրենց մոտ կազմավորված ստերեոտիպներից, նախապաշարմունքներից և հույզերից:

Մինչ վերջին ժամանակները տնտեսագետները միշտ վերաբերվում էին մարդուն որպես ռացիոնալ էակի: Իհարկե, տնտեսագետները տեսնում էին, որ մարդիկ ոչ միշտ են ռացիոնալ վարվում: Սակայն նրանց պետք էր որոշ պարզեցված պատկեր՝ իդեալական մոդել, որպեսզի հնարավոր լինի օգտագործել մաթեմատիկան, այսինքն՝ հաշվարկել իրադարձությունները: Այդ

մոտեցումը թույլ տվեց մաթեմատիկականացնել տնտեսական գիտությունը գրեթե ինչպես ֆիզիկան:

Սակայն ի տարբերություն այլ գիտությունների, տնտեսագիտության մեջ միշտ բացակայում է կատարվելիքի մասին լիակատար տեղեկատվությունը: Այսինքն միշտ առկա է ռիսկի իրադրությունը:

Դանիել Կահնեմանը իր ամբողջ կյանքը նվիրել է տնտեսագիտության հիմնարար կանխադրույթի՝ մարդկային գործունեության ռացիոնալության ժխտմանը և շնորհելով նրան Նոբելյան մրցանակը տնտեսագետները փաստորեն ներողություն են խնդրել, որ վերջին 300 տարին թյուրիմացության մեջ են պահել մարդկանց: Նոբելյան կոմիտեի կարծիքով՝ Դ.Կահնեմանը, ցուցադրելով, թե ինչքան վատ են մարդիկ կարողանում նախագուշակել ապագան «բավարար հիմքերով հարցի տակ դրեց տնտեսագիտության հիմնարար կանխադրույթների գործնական արժեքը»:

Նախկինում ռիսկին և անորոշությանը նվիրված ուսումնասիրություններն ու գաղափարները, ինչպես նաև Ջոն ֆոն Նեյմանի և Օսկար Մորգենշթերնի հետազոտությունները, որոնք աքսիոմատիկ մոտեցման հիման վրա ռացիոնալ հիմնավորում բերեցին վտանգավոր որոշումներ ընդունելու կանոնների մեջ և բացահայտեցին «ակնկալվող օգտավետության տեսությունը», որը վերանայվեց 1950 թվականներին Պ. Սամուելսոնի կողմից և փոխակերպվեց որպես «ակնկալվող օգտավետության մաքսիմիզացիայի» սկզբունք, հերքվեց Դ. Կահնեմանի կողմից: Համաձայն Դ. Կահնեմանի որոշումներ կայացնելու ընթացքում անհատները ցանկացած դեպքում սխալվում են: Ավելին, նրանք սխալվում են գրեթե նույն ձևով, և այդ կանոնավորությունը հնարավորություն է տալիս կանխագուշակել և դասակարգել մարդկային սխալները:

Արդյո՞ք դա նշանակում է, որ այժմ հարկ կլինի վերացնել ռացիոնալ վարքի սկզբունքի վրա հիմնված տնտեսական

գիտությունը: Ոչ մի դեպքում: Պարզապես, ինչպես և տնտեսագիտության շատ այլ հասկացություններ, ռացիոնալության սկզբունքը նկարագրում է ոչ թե այն, ինչը իրականում կա, այլ որոշ իդեալական մոդել:

Այսպիսով, տնտեսագիտության այս ոլորտում՝ փիլիսոփայական «բացասման բացասման օրենքի» դրույթներից ելնելով, տեղի է ունեցել բավականին մեծ շարժ և ընդունելով, որ եթե մարդը չխուսափի կորուստներից, չձգտի առավել արդյունավետ ձևով գործել, ինչը հատուկ է բնության մեջ ամեն գործողության, առավել ևս մարդկային գոյությանը, կարելի է նշել, որ «անորոշության» և «ռիսկի» հասկացությունները հանդիսանում են ոչ բավականաչափ հետազոտված և մարդ պետք է իր բոլոր ունակությունները ներդնի, որպեսզի հնարավորինս նվազեցնի իր գործունեության ընթացքում “ռիսկի” և “անորոշության” գործոնները:

Եվ մինչդեռ գոյություն ունի տնտեսական գործունեությունը՝ ռիսկերի կառավարումը և դրանց հետ կապված հիմնախնդիրները միշտ կլինեն արդիական:

*Ստուգողական հարցեր*

1. Տնտեսական գործունեության ընթացքում ե՞րբ է ռիսկի տարրը մտնում գործողության մեջ և ինչու՞:
2. Ի՞նչ փոխկապակցվածություն ունի ռիսկը և շահույթը:
3. Ինչպիսի՞ մեկնաբանություններ ունի «անորոշություն» հասկացությունը:
4. Ի՞նչ կանխադրույթ է ներկայացրել ռիսկի վերաբերյալ Պիտեր Բերնսթայնը:
5. Ի՞նչ անհամաչափություն է ներկայացված Ջոն Նեշի ուսումնասիրություններում:
6. Ո՞րն է եղել Դանիել Կահնեմանի և Վերնոն Սմիթի հայտնագործությունը:

# ԳԼՈՒԽ 2
# ՌԻՍԿ-ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*Եթե ակնկալվում է արտասովոր շահույթ,*
*ապա պետք է լինի արտասովոր ռիսկ*
*Ռևորեն Հոուփպորթ*

## 2.1 Ռիսկ-մենեջմենթի ծագման պատմությունը

Ռիսկ-մենեջմենթ տարողունակ հասկացության իմաստը հնարավորինս ամբողջական բացահայտելու համար նպատակահարմար է նախապես դիտարկել «մենեջմենթ» հասկացության էությունը:

«Մենեջմենթ» հասկացությունը սկիզբ է առել հին անգլիական *manage* բառից (լատիներեն *manus*՝ ձեռք): Բառացիորեն *manage* բառը միջնադարյան Անգլիայում նշանակում էր «հեծնել ձիուն, նստել, վարժեցնել»: Պայմանավորված լինելով հեծնելու, ձիուն վարժեցնելու, այսինքն՝ կառավարման գործընթացի հետ, այդ բառի իմաստը տեղ է գտել և պահպանվել է «կառավարել» հասկացության մեջ, որը պայմանավորեց կառավարման մասին մի ամբողջ գիտության անվանումը:

Կառավարման և կազմակերպման ոլորտում առաջատար տեսաբաններից Պ.Դրուկերը կառավարումը սահմանում է որպես «անկազմակերպ բազմությանն արդյունավետ, նպատակաուղղված և արտադրողական խմբի վերածող՝ գործունեության հատուկ տեսակ»:

**Որպես երևույթ՝** մենեջմենթը իրենից ներկայացնում է նպատակաուղղված ներգործություն կառավարող սուբյեկտի կողմից՝ կառավարման օբյեկտի նկատմամբ:

**Որպես գործընթաց՝** մենեջմենթը իր մեջ ներառում է հաջորդական գործողությունների շարք, որին կարելի է դասել

պլանավորումը, կազմակերպումը, կարգավորումը, պատճառաբանումը, հսկողությունը և հաշվառումը:

**Որպես համակարգ՝** մենեջմենթը իրենից ներկայացնում է փոխադարձ կախվածության մեջ գտնվող այնպիսի տարրերի ամբողջություն, ինչպիսիք են մարդիկ, տեղեկատվությունը, կառուցվածքը և այլն:

**Գիտական տեսակետից** մենեջմենթն իրենից ներկայացնում է կառավարման խնդիրները ուսումնասիրող գիտություն: Գիտական տեսակետից մենեջմենթի հիմնական խնդիրներն են հանդիսանում. կառավարչական աշխատանքի բնույթի բացատրությունը, կառավարչական գործընթացի պատճառա-հետևանքային կապի հաստատումը, մարդկանց համատեղ աշխատանքի առավելագույն արդյունավետ պայմանների բացահայտումը: Կառավարման գիտական կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն թույլ է տալիս ժամանակին և արդյունավետ կառավարել կազմակերպության ընթացիկ գործունեությունը, նախագուշակել իրադարձությունների զարգացման հնարավոր տարբերակները և ըստ դրանց մշակել գործելակերպի ռազմավարությունն ու մարտավարությունը, գրագետ իրականացնել նպատակների և խնդիրների լուծումը:

Հաճախ **մենեջմենթը** դիտարկում են որպես **արվեստ**, որը հենվում է նրա հիմունքների մեջ ընկած ընբռնման սկզբունքների և մեթոդների վրա: Նման մոտեցման պատճառն այն է, որ կառավարչական գործունեության օբյեկտ հանդիսացող ցանկացած կազմակերպություն իրենից ներկայացնում է սոցիալ-տեխնիկական բարդ համակարգերի ամբողջություն, որոնց գործունեության վրա ազդում են բազմաթիվ ներքին և արտաքին գործոններ:

Հաճախ «մենեջմենթ» հասկացությունը զուգորդվում է այն մարդկանց հետ, որոնց աշխատանքը կայանում է ձեռնարկության ամբողջ անձնակազմի ջանքերի համաձայնեցման մեջ՝ գործունեության նպատակներին հասնելու նպատակով: Բացի

դրանից «մենեջմենթ» հասկացությամբ կարող է նաև անվանվել ժամանակակից կազմակերպությունների կառավարման ապարատը, անկախ նրանց սեփականության ձևից և գործունեության նպատակներից:

Հիմնվելով վերը շարադրած փաստարկների վրա, **ռիսկ-մենեջմենթը** կարելի է սահմանել որպես ժամանակակից մենեջմենթի հիմնական ուղղություններից մեկը, որն ուսումնասիրում է տնտեսական սուբյեկտի գործունեության ընթացքում ծագող ռիսկերի կառավարման հիմնախնդիրները:

Դեռ հին հունական պատմաբան Հերոդոտոսը նշել է, որ «մեծ գործերը սովորաբար եզրապատված են լինում մեծ ռիսկով»: Սակայն, այն հեղափոխական գիտակցումը, որ ամեն ինչ Աստծո ձեռքերում չէ, այդքան էլ նոր չէ, այն մոտ 350 տարեկան է: Դեռ 1654թ. մաթեմատիկոս Պյեր դը Ֆերմի և մաթեմատիկոս, փիլիսոփա և գյուտարար Բլեզ Պասկալի, որն այդ ժամանակ զբաղվում էր մոլեխաղերի ուսումնասիրությամբ, համագործակցության արդյունքում ի հայտ եկավ հավանականության տեսությունը: Այդ տեսությունը հսկա աշխարհահայեցողական և փորձնական թռիչք դարձավ: Ժամանակի ընթացքում հավանականության տեսությունը վերածվեց տեղեկատվության կազմակերպման և մեկնաբանման գործիք: XVIII դարում գերմանացի գիտնական Գոտֆրիդ Վիլհելմ Լեյբնիցը առաջ քաշեց մի գաղափար, որը այնուհետ շվեցարացի Յակոբ Բերնուլին հիմնավորեց որպես մեծ թվերի օրենք և մշակեց վիճակագրական ընթացակարգը:

1730թ. ֆրանսիացի Անրի դը Մուվրը առաջարկեց նորմալ բախշման կառուցվածքը և ռիսկի չափը՝ ստանդարտ շեղումը: Ութ տարի անց Բերնուլին սահմանեց ակնկալվող օգտակարությունը, որի վրա էլ վերջին հաշվով հիմնվում է ներդրումների տեսությունը: Բերնուլին համալրեց հավանականության տեսությունը իրադարձությունների այս կամ այն արդյունքի օգտակարության կամ գրավչության մեթոդով: Բերնուլիի գաղափարը կայանում էր նրանում, որ որոշում կայացնելու ընթացքում, մարդիկ ավելի շատ

ուշադրություն են դարձնում տարբեր արդյունքների հետևանքների մեծությանը քան նրանց տեղի ունենալու հավանականությանը:

XIX դարի վերջին անգլիացի Ֆ.Գալտոնը առաջարկեց ռեգրեսիան կամ միջին արժեքի վերադարձը համարել որպես համապարփակ վիճակագրական օրինաչափություն: Նա ռեգրեսիան դիտարկում էր որպես ժամանակի ընթացքում երևույթների նորմայի վերադարձ: Հետագայում ապացուցվեց, որ ռեգրեսիայի օրենքը գործում է զանազան իրավիճակներում՝ սկսած մոլեխաղերից և դժբախտ պատահարների հավանականության հաշվարկներից և վերջացրած տնտեսական ցիկլերի տատանման կանխատեսմամբ:

1952թ-ին Չիկագոյի համալսարանի ասպիրանտ՝ 1990թ. տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակակիր Հարրի Մարկովիցը, իր «Ներդրումների տարանջատումը» հոդվածում մաթեմատիկորեն հիմնավորեց ներդրումային պորտֆելի տարանջատման ռազմավարությունը: Մասնավորապես, նա ցուցադրեց, թե ինչպես կարելի է նվազեցնել շեղումը ակնկալվող ցուցանիշից՝ ներդրումների կշռադատված տեղաբախշման եղանակով:

1994թ. Ջոն Նեշը դարձավ Նոբելյան մրցանակակիրը տնտեսագիտության գծով «ոչ կոոպերատիվ խաղերի տեսության հավասարակշռության վերլուծության համար»: Նրան հաջողվեց բացահայտել մրցակցության նոր դեմքը, հետագայում «Նեշի հավասարակշռություն» կամ «ոչ կոոպերատիվ հավասարակշռություն» անվանում ստացած մի այնպիսի իրավիճակը, որի դեպքում երկու կողմերը իդեալական ռազմավարություն են օգտագործում, որն իր հերթին բերում է կայուն հավասարակշռության հաստատմանը: Նման դեպքում խաղացողները շահագրգռված են լինում այդ հավասարակշռության պահպանման մեջ, քանի որ ցանկացած փոփոխություն կբերի նրանց իրավիճակի առավել վատթարացմանը:

Դանիել Կահնեմանը՝ հոգեբանական, «վարքային» տնտեսագիտության հիմնադիրներից մեկը՝ 2002թ. տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակի արժանացավ, տնտեսագիտության մեջ հոգեբանական մեթոդաբանության կիրառման համար, մասնավորապես՝ դատողությունների ձևավորման և անորոշության պայմաններում որոշումների ընդունման համար:

Այսպիսով, ռիսկ-մենեջմենթի ժամանակակից գործնական բոլոր գործիքները՝ խաղերի տեսությունից մինչ քաոսի տեսություն, սկիզբ են առնում 1654-1754 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

Սկսած 1940-ական թվականներից սկսվեծ ապահովագրման գիտության և տեխնոգեն ռիսկերի ոլորտում ուսումնասիրությունների արագ միաձուլում: Անկասկած, ռիսկերը առկա են ամենուրեք, սակայն հնարավոր չէ ապահովագրվել բոլոր հնարավոր ռիսկերից: Այդ իսկ պատճառով, որոշ մասնագետներ կարծում էին, որ ռիսկ-մենեջմենթը ծագել է ապահովագրությունից, սակայն շատ շուտ պարզ դարձավ, որ ռիսկերի ապահովագրումը ռիսկերի կառավարման միայն գործիքներից մեկն է, իսկ ռիսկ-մենեջմենթի կիրառման ընդգրկումը շատ ավելի լայն է:

XX դարի երկրորդ կեսի վերջում ի հայտ եկած տեխնիկական և տեխնոլոգիական նոր լուծումները, ֆինանսական շուկայի լայնացումը, մրցակցության ուժգնացումը, գլոբալիզացիան, ֆինանսական գործիքների ակտիվ զարգացումը, ինչպես նաև մարդկության ամբողջ փորձը՝ նախադրյալ ծառայեց ռիսկերի կառավարման մասին նոր գիտության ծագման համար:

Ռիսկերը միշտ գոյություն են ունեցել, սակայն որպես համակարգված մոտեցում և նոր կառավարչական գիտություն ռիսկ-մենեջմենթի ծննդյան թիվ կարելի է համարել XX դարի կեսը: 1955թ. ամերիկյան Տեմպլի համալսարանի պրոֆեսոր Ուեյն Սնայդերը առաջին անգամ առաջարկեց «ռիսկ-մենեջմենթ» եզրույթը, իսկ Ռասել Գլաները 1956թ. «Հարվարդ Բիզնես Ռեվյուի»

34-րդ հատորում առաջին անգամ տվեց «ռիսկ-մենեջեր» մասնագիտության նկարագրությունը: Կարելի է ասել, որ այդ ժամանակից սկսվեց մարդկության՝ ռիսկերի մասին բոլոր գիտելիքների ամփափումը և ակտիվ վերլուծությունը՝ սկիզբ առավ կառավարչական նոր գիտության ձևավորումը:

Ռիսկ-մենեջմենթի նշանակությունը դժվար կլինի վերագնահատել: Ռիսկերի կառավարման արդյունավետ կառուցվածքի բացակայությունը որպես որոշումների կայացման համակարգի մի մաս, բերում է անցանկալի հետևանքների և խոշորագույն ընկերությունների սնանկացմանը:

Ռիսկ-մենեջմենթի կիրառումը անհրաժեշտ է դարձել մեծ դրամական հոսքերի և հիմնական ակտիվների կառավարման ոլորտներում, այսինքն՝ բանկերում, ապահավգրական ընկերություններում, ներդրումային հիմնադրամներում և այլն: Ֆինանսական ինստիտուտների կողմից ռիսկ-մենեջմենթի արագ կիրառումը պայմանավորված է հիմնական երկու պատճառներով՝ մի կողմից, հնարավորություն է ընձեռնվում ռիսկերի ոչ միայն որակական, այլ նաև քանակական գնահատումը, ինչը իր հերթին թույլ է տալիս կիրառել մոդելավորման տարբեր մաթեմատիկակական մեթոդներ և կառավարման հավանականական վերլուծություններ: Մյուս կողմից, առկա են վերահսկման մարմինների պահանջները: Օրինակ, բանկային վերասկողության Բազելյան կոմիտեն կարգադրում է բանկերին գնահատել հնարավոր ռիսկերը՝ վարկային կազմակերպության կապիտալի բավականության որոշման նպատակով: Արդյունքում՝ ռիսկերի կառավարումը ֆինանսական ոլորտում զարգացած է շատ ավելի լավ, քան թե տնտեսագիտության այլ ոլորտներում:

Պետք է նշել, որ ռիսկ-մենեջմենթը դա միջառարկայական գիտություն է, որը միաձուլում է գիտելիքների տեխնիկական, տնտեսական, իրավաբանական և մի շարք այլ ոլորտները: Ռիսկ-մենեջերի հիմնախնդիրն է ռիսկ-մենեջմենթ գորցընթացի կազմակերպումը: Ռիսկ-մենեջերի ամբողջ աշխատանքն ուղղված է

բացասական հետևանքներից խուսափման կամ հնարավոր կորուստների նվազեցման մեջ: Խիստ կարևոր է նաև ռիսկ-մենեջմենթի այնպիսի ինտեգրացումը ընկերության բոլոր գործողությունների մեջ, որի ընթացքում ընկերության յուրաքանչյուր պատասխանատու անձ՝ բարձրագույն օղակի մենեջերից մինչև ճարտարապետը, պետք է իր գործողությունները գնահատեն ռիսկի և հնարավոր հետևանքների տեսակետից: Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար իր հերթին պետք է լինի նաև ռիսկ-մենեջեր, բայց որպես գլխավոր ռիսկ-մենեջեր միևնույն է հանդես է գալիս ձեռնարկության ղեկավարը, քանզի նա է ընդունում վերջնական որոշումը՝ լինի դա նոր գործարք, թե նոր նախագիծ:

Տեխնիկական և տեխնոլոգիական առաջընթացի հետ զուգընթաց ավելանում են նաև անորոշության գործոնները՝ քանակական և որակական առումով: Համապասխանաբար, իր զարգացման տվյալ փուլում ռիսկ-մենեջմենթը հանդես է գալիս որպես մենեջմենթի նոր փիլիսոփայություն, որը հիմնվում է բիզնեսի նկատմամբ ամբողջական ըմբռնման վրա: Անշուշտ, ռիսկ-մենեջմենթը որպես գիտություն դեռ նոր է ձևավորվում, սակայն արդեն պարզ է, որ մարդու կենսագործունեության ոչ մի տեսակ տարանջատված չէ ռիսկից և հետևաբար անհրաժեշտ է ռիսկերի կառավարում: Ռիսկ-մենեջերի հիմնական գործիքը պետք է լինի պատճառա-հետևանքային կապերի հասկացողությունը: Ռիսկ-մենեջերը, բժշկի նման պատասխանատու է ընկերության առողջության համար, ուստի և ընկերությունը պետք է ընկալվի որպես միասնական ամբողջական մարմին, որտեղ բոլոր գործընթացները և համակարգերը գտնվում է փոխադարձ կապի և կախվածության մեջ: Բժշկության մեջ առկա է այնպիսի հասկացություն ինչպիսինն է «դիսպանսերիզացիան»՝ երբ ուսանողները, ծառայողները կամ բանվորները տարին մեկ անգամ անցնում են լիակատար բժշկական զննում հիվանդությունների բացահայտման նպատակով: Նման կերպով, ցանկացած

ձեռնարկություն նույնպես պետք է գտնվի ռիսկ-մենեջերի մշտական հսկողության տակ՝ պարբերաբար անցնի ռիսկերի ախտաճշում, որպեսզի հնարավոր լինի նոր որոշումներ ներմուծել բացահայտված ռիսկերի կառավարման խնդիրների մեջ, հսկել և վերահսկել նրանց կատարման արդյունքները, քանզի բիզնեսի առանձին տարրերի նկատմամբ հատուկ ուշադրության դեպքում մնացյալ տարրերը վաղ թե ուշ կխափանվեն: Ընդ որում, այդ խափանումը կարող է պայմանավորված լինել ինչպես ռիսկերի թերագնահատմամբ, այնպես էլ ներմուծած որոշումների կողմնակի ազդեցությամբ: Վնասի ծավալները ուղղակիորեն կախված կլինի այդ գործոնների արժեքականությունից և ընդհանուր առմամբ ընկերության բիզնեսի վրա ազդեցության աստիճանից:

Եթե ֆինանսական ինստիտուտների (բանկերի, ներդրումային հիմնադրամների և այլն) համար ֆինանսները հանդես են գալիս որպես հիմնական միջոց, ապա նրանց համար բնական է գնահատել ռիսկերը կապված հենց ֆինանսների՝ որպես հիմնական միջոցների հետ: Սակայն, երբ նույնատիպ մոտեցումը կիրառվում է արդյունաբերական ոլորտի ընկերությունների նկատմամբ, որոնց հիմնական միջոցները ոչ թե ֆինանսներն են, այլ գույքային ակտիվները (շենքեր և շինություններ, մեքենաներ և այլն) ապա նման մոտեցումը կարելի է առնվազն անհեռատես համարել: Այնուամենայնիվ, շատ արդյունաբերողներին մինչ այժմ հետաքրքրում են համախառն եկամուտով, բաժնետոմսերի բորսային արժեքով և այլ ֆինանսասական ցուցանիշներով ռիսկերը, քան օպերացիոն և այլ ռիսկերը:

Եվ վերջին հաշվով, ռիսկ-մենեջմենթը մեկանգամյան գործընթաց չէ, այն լուրջ կառավարչական գործիք է, որը թույլ է տալիս բացահայտել և նվազեցնել հնարավոր ռիսկերի դրսևորումը: Չնայած մեթոդոլոգիաների, լուծումների և մոտեցումների բազմազանությանը, ռիսկ-մենեջմենթը ունի երեք սկզբունքային մաս՝ դա ռիսկերի ախտորոշումն է, լուծման ընտրությունը և մոնիթորինգը: Համապատասխանաբար, այդ երեք բաղադրիչ

մասերը պետք է կրկնվեն որոշակի պարբերականությամբ: Ռիսկ-մենեջմենթի բոլոր գործողությունները պետք է ցիկլային բնույթ կրեն, հաշվի առնելով այն փաստը, որ ռիսկ-մենեջմենթի հաջողակ զարգացման համար անհրաժեշտ է առնվազն երեք տարի: Հնարավոր չէ վերացնել բոլոր ռիսկերը, բայց հնարավոր է հսկողության տակ պահել ավելի առաջնահերթները: Ընկերության կողմից՝ նրա ռազմավարական նպատակների վրա ուղղված արդյունավետ մենեջմենթի և այլ ընկերությունների նկատմամբ մրցակցային առավելության ստեղծումը հնարավոր է միայն ռիսկերի կառավարման ամբողջական համակարգի կազմակերպման և ներմուծման դեպքում: Շուկան ինքն է թելադրում ընկերություններին ռիսկերի կառավարման ինտեգրված համակարգի անհրաժեշտությունը, թեպետ, տվյալ հարցում նորմատիվ կարգավորումը կարող է ավելի շատ ազդեցություն ունենալ:

Այդ կապակցությամբ, հարկ է ևս մեկ անգամ նշել, որ ռիսկ-մենեջմենթը՝ դա միջառարկայական գիտություն է՝ դեռ երիտասարդ, բայց շատ կարևոր, արագ զարգացող և հեռանկարային:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում մենեջմենթը:
2. Ինչու՞մն է կայանում ռիսկ-մենեջմենթի զարգացման նախապատմությունը:
3. Ե՞րբ է ծագել «ռիսկ-մենեջմենթ» հասկացությունը և ո՞վ է առաջինը առաջարկել «ռիսկ-մենեջմենթ» եզրույթը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթը:
5. Ի՞նչ է կոչված բացահայտելու և կանխելու ռիսկ-մենեջմենթը:
6. Ինչպե՞ս կարելի է սահմանել ռիսկ-մենեջմենթ հասկացությունը:

*Երջանկության արժանի է միայն այն մարդը,*
*ով յուրաքանչյուր պահի պատրաստ է վտանգել իր մարմինը,*
*իր բարեկեցությունը, իր կյանքը հանուն մեծ գործի*
*Թեոդոր Ռուզվելտ*

## 2.2 Ռիսկ-մենեջմենթի խնդիրները և փուլերը

*Ռիսկ-մենեջմենթ* եզրույթի մասին կարելի է ասել, որ բիզնեսը դա ռիսկի գիտակցված ընդունումն է՝ եկամուտի տեսքով համապատասխան պարգևատրման դիմաց, այսինքն ռիսկ-մենեջմենթի հիմքում ընկած են ռիսկի աստիճանի նվազեցման համար գործողությունների նպատակաուղղված կազմակերպումը, անորոշ իրավիճակներում եկամուտի (շահույթի, հասույթի) ստացման և ավելացման արվեստը:

Յուրաքանչյուր գործունեություն իր նպատակներին հասնելու համար ստիպված է իր վրա *ռիսկեր* վերցնել և *ռիսկ-մենեջմենթը* կոչված է լավատեսեցնել այդ *ռիսկերի* հավաքածուն:

Ռիսկերի քանակը և ծավալները աշխարհում անընդհատ ավելանում են՝ արժևորելով *ռիսկ-մենեջմենթի* նշանակությունը:

Ռիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրներն են ֆինանսական կայունության մակարդակի բարձրացումը և կառավարման մեխանիզմների կատարելագործումը:

Ռիսկ-մենեջմենթը՝ որպես գործունեության ուրույն տեսակ նպաստում է երկու կարևոր խնդիրների լուծմանը. առաջինը՝ ռիսկ-մենեջերների աշխատանքը թույլ է տալիս մշակել շարժառիթներ կազմակերպություններում ռիսկեր առաջացնող տարրերի կողմից ռիսկերի հանդեպ առավել հավասարակշռված մոտեցման համար: Ռիսկ-մենեջմենթը կարող է դառնալ կազմակերպության փիլիսոփայություն, նրա կազմակերպչական մշակույթի տարր՝ հասանելի յուրաքանչյուր աշխատակցի համար: Երկրորդը՝ ռիսկերի կառավարման համակարգի ներուժի կիրառումը՝ մակրոհարթության վրա, կարող է լուծել գլխավոր խնդիրը՝

ապահովել կազմակերպության և ամբողջ շուկայի թափանցիկությունը:

**Ռիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրները** կայանում են նրանում, որպեսզի ապահովվի՝

- ռիսկերի արդյունավետ կառավարման համար պահանջների կատարումը, այդ թվում նաև կազամակերպության մասնակիցների բիզնեսի պահպանվածության ապահովումը,
- հաշվետվության հարիր վիճակը, ինչը թույլ է տալիս ստանալ համապատասխան տեղեկատվություն կազմակերպության ենթաբաժանմունքների և դրանց հետ կապված ռիսկերի մասին,
- որոշակիությունը ծառայողական փաստաթղթերի մեջ և որոշումների կայացման ժամանակ սահմանված ընթացակարգերի և իրավասությունների պահպանումը:

Ռիսկ-մենեջմենթը ներառում է իր մեջ կառավարման **ռազմավարություն և մարտավարություն**:

**Կառվարման ռազմավարություն** ասելով հասկանում ենք՝ դրված նպատակի իրականացման համար միջոցների օգտագործման ուղղություն և եղանակ: Այս եղանակին համապատասխանում է որոշման ընդունման համար օրենքների և սահմանափակումների որոշակի հավաքածուն:

Ռազմավարությունը թույլ է տալիս կենտրոնացնել ուժերը իրեն չհակասող որոշման տարբերակների վրա՝ բացառելով բոլոր մնացած տարբերակները: Դրված նպատակին հասնելուց հետո ռազմավարությունը՝ որպես նրան հասնելուն ուղղություն և եղանակ, դադարում է գոյություն ունենալ: Նոր նպատակները նոր ռազմավարության մշակման խնդիրներ են առաջ բերում:

**Մարտավարությունը** կոնկրետ գործելաձևեր և մեթոդներ են կոնկրետ պայմաններում՝ դրված նպատակի իրականացման

համար: Կառավարման մարտավարության խնդիր է հանդիսանում օպտիմալ որոշման և տվյալ տնտեսական իրավիճակում կառավարման առավել ընդունելի մեթոդների և գործելաճների ընտրությունը:

Ռիսկ-մենեջմենթը, որպես կառավարման համակարգ, բաղկացած է երկու ենթահամակարգերից՝ կառավարվող ենթահամակարգից (կառավարաման օբյեկտ) և կառավարող ենթահամակարգից (կառավարման սուբյեկտ):

Ռիսկ-մենեջմենթում **կառավարման օբյեկտ** են հանդիսանում ռիսկերը, կապիտալի ռիսկային ներդրումները և երկու տնտեսվարող սուբյեկտների միջև տնտեսական հարաբերությունները: Այդ տնտեսական հարաբերությունների մեջ մտնում են ապահովագրողի և ապահովագրվողի միջև, փոխառուի և վարկատուի միջև, ձեռնարկատերերի (գործընկերներ, մրցակիցներ) միջև հարաբերությունները և այլն:

Ռիսկ-մենեջմենթում **կառավարման սուբյեկտը** մարդկանց հատուկ խումբ է (ֆինանսական կառավարիչ, ակվիզիտոր, ակտուար, անդերրայթեր և այլն), որը կառավարչական ներազդեցության ամենատարբեր գործելաճների և եղանակների միջոցով նպատակուղղված ազդեցություն է իրականացնում կառավարման օբյեկտի վրա:

**Ռիսկ-մենեջմենթը** իրականացնում է որոշակի գործառույթներ. **նախիմացություն, կազմակերպում, կարգավորում, համաձայնեցում, խթանում, վերահսկում:**

**Նախիմացությունը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է օբյեկտի և նրա տարբեր մասերի ֆինանսական վիճակի փոփոխությունների հեռանկարային մշակում: Ռիսկի կառավարման ընթացքում նախիմացությունը կարող է իրականացվել ինչպես անցյալի՝ ապագայի արտարկման (էկստրապոլյացիայի) հիման վրա՝ հաշվի առնելով փոփոխության

միտման փորձագիտական գնահատականը, այնպես էլ փոփոխությունների ուղղակիորեն կանխատեսման հիման վրա:

**Կազմակերպումը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է մարդկանց միավորում, որոնք համատեղ իրականացնում են կապիտալի ռիսկային ներդրման ծրագիր՝ որոշակի օրենքների և ընթացակարգերի հիման վրա: Այդ օրեքները և ընթացակարգերը ներառում են կառավարման մարմինների ստեղծում, կառավարման ապարատի համակարգի կառուցում, կառավարչական ենթաբաժանմունքների միջև փոխհարաբերությունների հաստատում, կանոնների, չափորոշիչների, մեթոդիկաների մշակում և այլն:

**Կարգավորումը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է կառավարման օբյեկտի վրա ազդեցություն, որի միջոցով տրված չափորոշիչներից շեղման առաջացման դեպքում ստեղծվում է այդ օբյեկտի կայունության վիճակ: Կարգավորումը ներառում է գլխավորապես առաջացած շեղումների վերացմանն ուղղված ընթացիկ միջոցառումներ:

**Համաձայնեցումը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է ռիսկի կառավարման համակարգի բոլոր օղակների աշխատաքների համաձայնեցվածություն: Համաձայնեցումը ապահովում է կառավարման օբյեկտի, կառավարման սուբյեկտի, կառավարման ապարատի և առանձին աշխատողի հարաբերությունների միասնությունը:

**Խթանումը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է ֆինանսական կառավարիչների և այլ մասնագետների՝ իրենց աշխատանքի արդյունքի համար հետաքրքրվածության հանդեպ մղում:

**Վերահսկումը** ռիսկ-մենեջմենթում իրենից ներկայացնում է ռիսկի աստիճանի նվազեցմանն ուղղված աշխատանքի կազմակերպման ստուգում: Վերահսկման միջոցով տեղեկություններ են հավաքվում գործողությունների նախատեսված ծրագրի իրականացման աստիճանի, կապիտալի

ռիսկային ներդրումների շահութաբերության, ռիսկի և եկամուտի հարաբերակցության մասին, ինչի հիման վրա կատարվում են փոփոխություններ ֆինանսական ծրագրերի, ֆինանսական աշխատանքի կազմակերպման, ռիսկ-մենեջմենթի կազմակերպման մեջ: Վերահսկումը ենթադրում է ռիսկի աստիճանի նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունքների վերլուծություն:

### Ռիսկ-մենեջմենթի փուլերը

Ռիսկ-մենեջմենթում ընդունված է առանձնացնել մի քանի կարևոր փուլեր, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. ռիսկ-մենեջմենթի կազմակերպման **առաջին փուլը** ռիսկի նպատակի և կապիտալի ռիսկային ներդրումների նպատակի սահմանումն է: Ռիսկի հետ կապված յուրաքանչյուր գործողություն միշտ նպատակաուղղված է, քանի որ նպատակի բացակայությունը ռիսկի հետ կապված որոշումը դարձնում է անիմաստ: Ռիսկի նպատակը դա արդյունք է, որը անհրաժեշտ է ստանալ: Դա կարող է լինել շահույթ, հասույթ, եկամուտ և այլն: Կապիտալի ռիսկային ներդրումների նպատակը առավելագույն շահույթի ստացումն է: Ռիսկերի կառավարման նպատակների հարցադրումների փուլը բնութագրվում է վերլուծության եղանակների կիրառմամբ, տնտեսական կոնյուկտուրայի կանխատեսմամբ, ձեռնարկության հնարավորությունների և կարիքների հայտնաբերմամբ՝ նրա զարգացման ընթացիկ ծրագրերի և ռազմավարության շրջանակներում: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել «ախորժակը ռիսկի համար» և ռիսկի կառավարման քաղաքականությունը կառուցել դրա հիման վրա:

**Ռիսկի վերլուծության փուլում** կիրառվում են վերլուծության քանակական և որակական մեթոդները: Գնահատման նպատակն է որոշել ռիսկի աստիճանի ընդունելիությունը: Որակական գնահատումը ենթադրում է որակական արտահայտման կողմնորոշիչի հաստատում: Օրինակ, «նվազագույն ռիսկ»,

«չափավոր ռիսկ», «առավելագույն ռիսկ», «անթույլատրելի ռիսկ»: Այս կամ այն խմբին վերագրման համար հիմք է հանդիսանում չափորոշիչների համակարգը, որը տարբեր է ռիսկի յուրաքանչյուր պորտֆելի համար: Որակական գնահատական է տրվում ռիսկի պորտֆելի մեջ մտնող յուրաքանչյուր գործառնության և ընդհանուր պորտֆելի գործառնության համար:

**Երրորդ փուլում** կատարվում է ռիսկի վրա ազդեցության տարբեր մեթոդների արդյունավետության համադրում. խուսափում ռիսկից, ռիսկի նվազեցում, ռիսկի ընդունում, ամբողջ ռիսկի կամ ռիսկի մի մասի փոխանցում երրորդ անձին, ինչը ավարտվում է վերջիններիս առավել ընդունելի հավաքածուի ընտրման մասին որոշման մշակմամբ: Ռիսկի հետ վարվելու որևէ եղանակի ընտրությունը որոշվում է ընտրված եղանակի արդյունավետությամբ և կազմակերպության գործունեության կոնկրետ ուղղվածությամբ:

Այս փուլի արդյունք պետք է դառնա ռիսկի մասին նոր գիտելիքը, որը թույլ կտա անհրաժեշտության դեպքում վերականոնավորել ռիսկի կառավարման վերընշված նպատակները, այսինքն, ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների ամբողջության ձևավորումը՝ նշելով վերջիններիս իրականացումից սպասվող, ներդրման ժամկետի, ֆինանսավորման աղբյուրների և տվյալ ծրագրի իրականացման համար պատասխանատու անձանց արդյունքը:

Ռիսկ-մենեջմենթի կազմակերպման կարևոր փուլեր են նշված ծրագրի իրականացման վերահսկումը, ռիսկային որոշման ընտրված տարբերակի իրականացման արդյունքների գնահատումը և վերլուծությունը: Ընդ որում, խորհուրդ է տրվում հավաքել ծրագրի մշակման սխալների և թերությունների մասին ամբողջ տեղեկատվությունը, որ ի հայտ է եկել ծրագրի իրականացման ընթացքում: Այդպիսի մոտեցումը թույլ կտա իրականացնել հետագա միջոցառումների ծրագրերի մշակում՝

ուղղված ռիսկի նվազեցման առավել որակյալ մակարդակի վրա՝ ռիսկի մասին ստացված նոր գիտելիքների կիրառմամբ:

Յուրաքանչյուր փուլի արդյունքները հաջորդ փուլերի համար վերածվում են ելակետային տվյալների՝ ձևավորելով հետադարձ կապով որոշումների ընդունման համակարգ: Այդպիսի համակարգը ապահովում է նպատակների առավել արդյունավետ իրականացում, քանի որ յուրաքանչյուր փուլում ստացված գիտելիքները թույլ են տալիս ոչ միայն կանոնավորել ռիսկի վրա ազդեցության եղանակները, այլ նաև՝ ռիսկի կառավարման նպատակները:

### Ռիսկ-մենեջմենթի հիմնական օրենքները

Հոգեբանական առումով մարդիկ ռիսկի են դիմում իրենց նպատակներին հասնելու համար: Քանի որ նրանց նպատակները տարբեր են, տարբեր են լինում նաև ռիսկի նկատմամբ նրանց վերաբերմունքը, ուստի ռիսկի կառավարման մի մասը կազմում է սեփական հույզերը կառավարելու կարողությունը:

Ռիսկի մասին դատողությունները կախված են այն միջավայրից, որտեղ նրանք տեղի են ունենում: Ռիսկը հանդիսանում է ընտրության տարբերակի ասպեկտ, և այն կշիռը, որը նա ստանում է վերջնական որոշման մեջ, կախված է այդ տարբերակի շահավետությունից, ինչպես նաև որպես այդպիսին գործունեության գնահատականից:

Համաձայն Դ.Կահնեմանի՝ մարդկանց մոտ «այն, ինչ ավելի հեշտ է մթքի գալիս, համարվում է ավելի հավանական և ընդհակառակը»: Սակայն հիշողությունները ենթակա են այլ գործոնների ազդեցությանը, ինչպիսիք են՝ թարմությունը և պայծառությունը:

Այդ առումով անգամ Ալբերտ Էյնշթեյնը, չնայած որ նա կհասկանար մաթեմատիկական հաշվարկները, երևի թե, չէր կարողանա մողելի մեջ մտցնել վարքային էֆեկտները, որոնք

կբացատրեին իրական և տեսականորեն գնահատված իրադարձությունների միջև տարբերությունը:


**Վերընշվածի հետ կապված ռիսկ-մենեջմենթում առանձնացնում են հետևյալ հիմնական օրենքները.**

- Չի կարելի դիմել ռիսկի ավելի շատ, քան կարող է թույլ տալ սեփական կապիտալը:
- Հարկավոր է մտածել ռիսկի հետևանքների մասին:
- Չի կարելի վտանգել շատը քչի համար:
- Դրական որոշումը ընդունվում է միայն կասկածի բացակայության դեպքում:
- Կասկածների առկայության դեպքում ընդունվում են բացասական որոշումներ:
- Չի կարելի կարծել, որ միշտ գոյություն ունի մեկ որոշում: Հնարավոր է, որ կան այլ որոշումներ:

Ռիսկերի կառավարման հիմք է հանդիսանում հետևյալը՝

- ռիսկի կառավարման ռազմավարության ընտրություն,
- լիակատար ըմբռնում, թե ինչ ռիսկերի ազդեցության տակ է գտնվում գործարքը,
- ռիսկի գնահատումը և նրա աստիճանի որոշումը,
- այն ռիսկերի վերացումը՝ ըստ հնարավորության, որոնց դիմելու անհրաժեշտությունը բացակայում է,
- ռիսկի նվազեցման մեխանիզմի ընտրությունը:

Ամփոփելով վերը նշվածը կարելի է ասել, որ ռիսկի կառավարման գործընթացը իրենից ներկայացնում է համալիր համակարգ և ամբողջ գործընթացը կարելի է պատկերել հետևյալ տեսքով:




Գ-ծանկար 2. Ռիսկի համալիր կառավարման բլոկ-սխեմա

*Ստուգողական հարցեր*

1. Թվարկեք ռիսկերի կառավարման համակարգի հիմնական խնդիրները:
2. Ի՞նչ են ներառում կառավարման մարտավարությունը և ռազմավարությունը ռիսկ-մենեջմենթում:
3. Ի՞նչ ենթահամակարգերից է բաղկացած ռիսկ-մենեջմենթը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում կառավարման օբյեկտը ռիսկ-մենեջմենթում:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում կառավարման սուբյեկտը ռիսկ-մենեջմենթում:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում նախիմացությունը ռիսկ-մենեջմենթում:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում կազմակերպումը ռիսկ-մենեջմենթում:
8. Ի՞նչ է իրենից ներկայացնում կարգավորումը ռիսկ-մենեջմենթում:
9. Ի՞նչ է իրենից ներկայացնում կանոնավորումը ռիսկ-մենեջմենթում:
10. Ի՞նչ է իրենից ներկայացնում խթանումը ռիսկ-մենեջմենթում:
11. Ի՞նչ է իրենից ներկայացնում վերահսկումը ռիսկ-մենեջմենթում:
12. Ի՞նչ փուլեր է ընդունված առանձնացնել ռիսկ-մենեջմենթում:
13. Ի՞նչ հիմնական օրենքներ են առանձնացնում ռիսկ-մենեջմենթում:
14. Ի՞նչն է հանդիսանում ռիսկերի կառավարման հիմք:
15. Ի՞նչ փուլերից է բաղկացած ռիսկի համալիր կառավարման բլոկ-սխեման:

*Ապացուցված չէ, որ ռիսկը ապնիվ գործ է,*
*սակայն ապնիվ գործը գրեթե միշտ ռիսկ է*
*Ֆերնանդո դը Ռոխաս*

## 2.3 Ռիսկ-մենեջմենթի հիմնական աքսիոմները և սկզբունքները

### Ռիսկ- մենեջմենթի հիմնական աքսիոմները

Ռիսկ-մենեջմենթի աքսիոմակարգի հիմքում դրված է **հակադրությունների անբացառելիության մասին** պնդումը:

Նշված պնդումը հարմարեցնելով ռիսկ-մենեջմենթի պահանջներին՝ կստանանք նրա հետևյալ ձևակերպումը. կառավարման տեսության «անռիսկ գոտի» իդեալական կատեգորիայի գոյությունը օբյեկտիվորեն պայմանավորում է վերջինիս ամբողջովին հակառակ «բացարձակ ռիսկի գոտի» իդեալական կատեգորիայի գոյությունը:

«Անռիսկ գոտի» իդեալական կատեգորիան որոշում է կառավարչական գործունեության պայմաններ, որոնց դեպքում յուրաքանչյուր ծրագրված գործողությունների բարեհաջող իրականացման հավանականությունը հավասար է 100%: Վերջինիս հակառակ «բացարձակ ռիսկի գոտի» իդեալական կատեգորիան նույնացվում է այն պայմանների հետ, որոնց դեպքում ծրագրված գործողությունների իրականացման հավանականությունը հավասար է զրոյի: Վերընշված երկու կատեգորիաներն էլ համարվում են իդեալական այն պատճառով, որ իրական կառավարչական գործունեության մեջ նրանցով որոշվող պայմանները երբեք չեն առաջանում: Ընդ որում բոլոր, գործնականում կառավարչական իրավիճակները տեղակայվում են հենց դիտարկված երկու իդեալական կատեգորիաներով սահմանափակված ընդգրկման շրջանակներում:

Այսպիսով, «անռիսկ գոտի» - «բացարձակ ռիսկի գոտի» հակադրության անբացառելիության մասին դրույթը կարելի է համարել **ռիսկ-մենեջմենթի առաջին և հիմնական աքսիոմը:**

Որպես **ռիսկ-մենեջմենթի երկրորդ աքսիոմ** կարելի է առանձնացնել **ռիսկերի համընդհանրության մասին դրույթը**, ըստ որի այս կամ այն աստիճանի ռիսկերը միշտ առկա են կազմակերպության արտաքին կամ ներքին միջավայրի գործունեության բոլոր ոլորտներում և տարրերում: Այլ կերպ ասած, կառավարման համակարգի յուրաքանչյուր տարրի և տնտեսական կազմակերպության գործունեության յուրաքանչյուր տեսակի համար գոյություն ունի ծրագրված միջոցառումների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման օբյեկտիվ հավանականությունը:

Բացի երկու վերը դիտարկված դրույթներից անհրաժեշտ է կիրառել ևս երեք դրույթ, որոնք ունեն հետևյալ ձևակերպումները.

- յուրաքանչյուր համակարգ, անկախ նրա տեսակից, բնույթից և հատկանիշներից, կարող է գոյություն ունենալ, զարգանալ և գործել միայն ժամանակի և տարածության մեջ,
- յուրաքանչյուր համակարգ, անկախ իր էությունից և նշանակությունից, ունի իր՝ համակարգի հատկանիշներով որոշվող ներքին տարածությունը և ունի իր ժամանակը (ավելի շուտ ժամանակի ընթացքի ռիթմը), որը որոշվում է համակարգի ներքին գործընթացների ընթացքի արագությամբ (նախևառաջ փոխանակման գործընթացների, որոնք համակարգի տարրերի և մասերի միջև փոխհարաբերությունների հիմքն են կազմում),
- համակարգի ներսում յուրաքանչյուր գործընթացի ընթացքի արագությունը միշտ վերջ ունի և չի կարող լինել անվերջ մեծ կամ անվերջ փոքր (այլ կերպ ասած, ոչ մի փոխգործողություն համակարգի մեջ չի կարող տևել անվերջ և չի կարող տեղի ունենալ վայրկենական):

Փորձենք հարմարեցնել վերը նշված դրույթները ռիսկ-մենեջմենթի երրորդ, չորրորդ և հինգերորդ աքսիոմների ձևակերպման նպատակով:

**Ռիսկ-մենեջմենթի երրորդ աքսիոմը** կարելի է սահմանել այսպես. յուրաքանչյուր ռիսկ կարող է առաջանալ, զարգանալ և գործել միայն ժամանակի և տարածության մեջ: Ավելի կոնկրետ, ռիսկերը միշտ գոյություն ունեն որոշակի աշխարհագրական տարարածության մեջ և ժամանակի որոշակի ընթացքում:

**Ռիսկ-մենեջմենթի չորրորդ աքսիոմի** էությունը կայանում է հետևյալում. յուրաքանչյուր ռիսկ ունի իր ներքին տարածությունը և ժամանակը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր ռիսկ կարող է առաջանալ միայն սահմանափակ տարածության վրա և գոյություն ունենալ ավարտ ունեցող ժամանակի ընթացքում:

**Ռիսկ-մենեջմենթի հինգերորդ աքսիոմը** ունի հետևյալ բովանդակությունը՝ ռիսկերի գոյության ժամանակը չի կարող լինել անվերջ երկար և չի կարող հավասարվել զրոյի:

**Ռիսկ-մենեջմենթի սկզբունքները**

«Սկզբունք» բառը սերում է լատինական «principium»՝ սկիզբ, հիմք բառից: Սկզբունքներում ընդհանրացվում են ժամանակակից գիտությանը հայտնի բոլոր օրենքները և օրինաչափությունները, ինչպես նաև էմպիրիկ (փորձով հաստատված) փորձը: Ավելի ընդհանուր տեսքով կառավարման սկզբունքները կարելի է սահմանել որպես նախասկզբնական՝ նորմի, օրենքի և օրինաչափության գործընթացի համեմատություն, որոնք բխում են հասարակության և արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և էությունից, ինչի կատարումը նպաստում է խնդրի լուծմանը և հասարակության առջև դրված նպատակների իրականացմանը:

Կառավարման սկզբունքների բովանդակության վրա էական ազդեցություն են ունենում ոչ միայն ժամանակակից գիտությանը հայտնի կառավարման օրենքները և կուտակված փորձը:

Կառավարման սկզբունքները որոշող գործոնների թվին կարելի է դասել տվյալ ժամանակահատվածում գոյություն ունեցող արտադրողական գործունեության իրականացման միջոցները, արտադրության միջոցներով իրականացվող սեփականության ձևերը, ինչպես նաև սոցիոմշակութային գործոնները:

Կառավարման սկզբունքները իրենցից ներկայացնում են կառավարման հարաբերություններից սերող հիմնական դրույթներ: Նրանք ձևավորում են կառավարման գործընթացի համակարգի, կառուցվածքի և կազմակերպման հանդեպ պահանջները:

Ինչպես և կառավարչական օրենքները, կառավարման սկզբունքները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի: Առաջին խմբին են պատկանում ամբողջ կառավարման համակարգին վերաբերող կառավարման ընդհանուր սկզբունքները: Երկրորդ խմբին են պատկանում կառավարման համակարգի առանձին բաղկացուցիչներին վերաբերող կառավարման սկզբունքները: Երրորդ խմբին պատկանող սկզբունքները կանոնակարգում են գործունեության կոնկրետ տեսակների և երևույթների կառավարման օրենքները և կարգը:

Կառավարման ընդհանուր սկզբունքների համակարգում հիմնական կարելի է համարել **կառավարման գիտական հիմնավորման սկզբունքը**: Կառավարման հանդեպ գիտական մոտեցումը պահանջում է գործոնների ամբողջության համընդհանուր և համալիր ուսումնասիրություն, որոնք ազդում են կազմակերպության գործունեության արդյունավետության վրա:

Կառավարման երկրորդ, ոչ պակաս կարևոր սկզբունք է հանդիսանում **կառավարչական խնդիրների լուծման հանդեպ համակարգային մոտեցման սկզբունքը**: Համակարգային մոտեցումը պահանջում է, որպեսզի ղեկավարները դիտարկեն կազմակերպությունը որպես փոխկապված, փոխկախված և միմյանց հետ անընդհատ փոխգործողություն կատարող տարրերի ամբողջություն, ինչպիսին են մարդը, կառուցվածքը, խնդիրները և

տեխնոլոգիաները, որոնք ուղղված են տարբեր նպատակների իրականացմանը:

Համակարգային մոտեցման մեջ գլխավորը համակարգերի ամբողջականության մասին պատկերացումների մշակումն ու կիրառումն է: Ճանաչել ամբողջը նշանակում է բացահայտել նրա էությունը և յուրահատկությունը, տարրերի բաղադրությունը, որակական և քանակական բնութագիրը, կառուցվածքը, տարրերի գործառնությունները և դրանց ազդեցությունը ընդհանուրի գործունեության վրա, համակարգի ամբողջականությունը ապահովող ներգրավական գործառնությունները, տվյալ ամբողջականության պատմությունը:

Համակարգային մոտեցման հիմքում ընկած է համակարգային վերլուծությունը, որը իր մեջ ներառում է համակարգի աշխատանքի նպատակի ձևակերպում, նրա մեջ մտնող տարրերի որակական և քանակական բաղադրության սահմանում:

**Կառավարման օպտիմալության սկզբունքը** սահմանում է կառավարման նպատակների իրականացման պահանջ՝ ժամանակի և միջոցների նվազագույն ծախսերով:

Վերընշված սկզբունքի հետ անքակտելիորեն կապված է կառավարման ճկունության սկզբունքը, որի իրացումը թույլ է տալիս ապահովել կազմակերպության յուրաժամանակ հարմարեցումը արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններին կամ նրա արագ վերակառուցումը՝ աշխատանքի նոր նպատակներին համապատասխան:

Կառավարման մեջ սոցիալական գործոնների դերի բարձրացման հետ մեկտեղ առաջին պլան մղվեց կառավարման ժողովրդավարացման սկզբունքը, որը իր մեջ ներառում է սեփականատերերի, ղեկավարների, աշխատանքային կոլեկտիվի և կազմակերպության առանձին աշխատակիցների շահերի բավարարման պահանջ՝ արդար հիմքերի վրա:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է ասել, որ ժամանակակից փուլում կառավարման ընդհանուր սկզբունքների

համակարգում հիմնական տեղը զբաղեցնում են կառավարման գիտական հիմնավորման սկզբունքը, կառավարչական խնդիրների լուծման հանդեպ համակարգային մոտեցման սկզբունքը, ինչպես նաև կառավարման օպտիմալության, ճկունության և ժողովրդավարականացման սկզբունքները:

Կարելի է առանձնացնել կառավարման ևս երկու ոչ պակաս կարևոր սկզբունքներ՝ կանոնակարգման և ֆորմալիզացման սկզբունքները:

**Կարգավորման սկզբունքի** համաձայն՝ կառավարման համակարգում տեղի ունեցող բոլոր գործընթացները պետք է խստագույնս կանոնակարգվեն: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր կազմակերպությունում պետք է մշակված լինի նորմերի և օրենքների լայն համակարգ, որը կորոշի ինչպես ամբողջ կազմակերպության աշխատանքի, այնպես էլ նրա առանձին կառուցվածքային ենթաբաժանմունքների կարգը:

**Ֆորմալիզացման սկզբունքը** նախատեսում է կազմակերպության աշխատանքի օրենքների և նորմերի ֆորմալ ամրագրում՝ ղեկավարի հրամանների, ցուցումների, կարգադրումների տեսքով, ինչպես նաև պաշտոնական հրահանգների և կոնկրետ կառուցվածքային ենթաբաժանմունքների մասին դրույթների տեսքով:

Կարգավորման և ֆորմալիզացման սկզբունքների կիրառումը թույլ է տալիս կանոնակարգել կազմակերպության աշխատանքային գործընթացը, դարձնել այն ավելի պլանաչափ, ռացիոնալ, վստահելի և կանխատեսելի:

Վերը նշված կառավարման ընդհանուր սկզբունքների ցանկը ամենևին ամբողջական չէ: Այստեղ դիտարկված էին միայն հիմնական և առավել ունիվերսալ սկզբունքները: Ընդ որում, հարկավոր է հիշել, որ յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական համակարգ ստեղծվում և աշխատում է որոշակի կոնկրետ նպատակների իրականացման համար, այդ պատճառով էլ սկզբունքները, որոնցով առաջնորդվում են կազմակերպության

կառավարիչները, պետք է ընտրվեն անհատականորեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար՝ ելնելով տվյալ աշխատանքի նպատակներից:

**Մասնավոր ընդունված է անվանել կառավարման այն սկզբունքները**, որոնք վերաբերում են կառավարման համակարգի առանձին տարրերի: Կառավարման մասնավոր սկզբունքների խմբի մեջ կարելի է առանձնացնել երկու ենթախումբ:

Առաջին ենթախումբը իր մեջ ներառում է **կառավարման առանձին գործառույթների իրականացմանը** վերաբերող սկզբունքները: Այս խումբը ներառում է ծրագրման, կազմակերպման, հաշվառման, վերահսկման սկզբունքներ, միջոցառումների մարքեթինգային ուսումնասիրությունների սկզբունքներ և այլն:

Երկրորդ խմբին են պատկանում **կառավարման առանձին կողմերի հետ կապված կառավարչական սկզբունքները**: Օրինակ՝ սոցիալական, տնտեսական, կազմակերպչական-տեխնիկական և այլն, ինչպես նաև կառավարման մակարդակների հետ կապված սկզբունքները (կառուցվածքային ենթաբաժանում, կազմակերպում, ոլորտ, ազգային տնտեսություն):

Կառավարման մասնավոր սկզբունքների նկարագիրը տալու նպատակով առավել մանրամասն անհրաժեշտ է դիտարկել վերը նշված ենթախմբեր մտնող որոշ սկզբունքները:

Առաջին ենթախմբի նկարագիրը տալու համար որպես օրինակ կարելի է օգտագործել կազմակերպման և հաշվառման սկզբունքները: Կազմակերպման սկզբունքների շարքում առանձնացնում են գերակայության, համապատասխանության և կազմակերպման ընթացքի ճնավորման սկզբունքները:

Գերակայության սկզբունքների կազմի մեջ են մտնում նպատակի գերակայությունը, կազմակերպության ստեղծման ընթացքում կառուցվածքի հանդեպ գործառույթների գերակայությունը, կառուցվածքների գերակայությունը գործող կազմակերպությունների գործառույթների հանդեպ,

կառուցողական ենթաբաժանմունքի ստեղծման ժամանակ կառավարման սուբյեկտի գերակայությունը կառավարման օբյեկտի հանդեպ, գործող կազմակերպությունների համար կառավարման օբյեկտի գերակայությունը կառավարման սուբյեկտի հանդեպ:

**Նպատակի գերակայության սկզբունքը** ձևակերպվում է հետևյալ կերպ: Նպատակ-խնդիր-գործառույթ համակարգում ամենաբարձր աստիճանի գերակայությունը ունի նպատակ, ապա խնդիր և հետո գործառույթ:

**Կազմակերպության ստեղծման ժամանակ կառուցվածքի հանդեպ գործառույթների գերակայության սկզբունքը** վկայում է՝ նոր կազմակերպությունների նախագծումը և ստեղծումը նախևառաջ պայմանավորված է կոնկրետ գործառույթների իրականացման անհրաժեշտությամբ: Այն դեպքերում, երբ բացակայում է կազմակերպության կառուցվածքային ենթաբաժանմունքների հավաքակազմի ձևավորման հնարավորությունը, գործառույթների հավաքակազմին համապատասխան դիտարկվում են կազմակերպության կառուցման այլ տարբերակներ՝ ելնելով նպատակի գերակայությունից, ինչի իրականացմանը պետք է ծառայեն վերընշված գործառույթները:

**Գործող կազմակերպություններում գործառույթների հանդեպ կառուցվածքների գերակայության սկզբունքի իմաստը** կայանում է հետևյալում: Արդեն ձևավորված և նորմալ աշխատող կազմակերպություններում փոխներգործության գործընթացները ընդհանում են այնպես, որ համակարգի չբավարարող տարրերը հետզհետե ի հայտ են գալիս, իսկ ավելորդները հետզհետե անհետանում են: Տվյալ սկզբունքի համաձայն գործող կազմակերպությունները ի վիճակի են իրականացնել գործառույթների միայն սահմանափակ քանակություն: Տվյալ քանակության շրջանակներից դուրս գալու դեպքում շատ

հավանական է մի իրավիճակ, երբ կազմակերպությունը ընդունակ չէ ապահովել իր դեմ ծառացած խնդիրների որոշումը:

**Ճկուն կազմակերպություններում կառավարման օբյեկտի հանդեպ կառավարման սուբյեկտի գերակայության սկզբունքը** ունի հետևյալ բովանդակությունը: Կազմակերպության ստեղծման ընթացքում նրա հիմնախնդիրները իրենց պահանջներին համապատասխան պետք է ընտրեն աշխատակազմ, գործունեության բնույթ, իրավական-կազմակերպչական ձև և կազմակերպության այլ չափորոշիչներ:

**Գործող կազմակերպությունների համար սուբյեկտի հանդեպ կառավարման օբյեկտի գերակայության սկզբունքի** էությունը կայանում է հետևյալում: Կազմակերպության կառավարման բոլոր աստիճանների ղեկավարները պետք է նշանակվեն կոնկրետ կառուցվածքային ենթաբաժանմունքների պահանջներին և բնույթին համապատասխան:

**Համապատասխանության սկզբունքներին** վերաբերում են դրված նպատակների և առանձնացված ռեսուրսների համապատասխանության սկզբունքը, կարգադրողության և ենթարկվածության համապատասխանության սկզբունքը, արտադրության արդյունավետության և շահավետության համապատասխանության սկզբունքը, կառավարման և արտադրության կենտրոնացման և ապակենտրոնացման լավագույն համադրության սկզբունքը:

**Առանձնացված ռեսուրսների և դրված նպատակի համապատասխանության սկզբունքը** ունի հետևյալ բովանդակությունը. յուրաքանչյուր նպատակի պետք է համապատասխանի ֆինանսական, հումքային, նյութական, էներգետիկ և մարդկային ռեսուրսների հավաքածու, ինչը թույլ կտա ապահովել նշված նպատակի իրականացումը:

**Կարգադրողության և ենթարկվածության համապատասխանության սկզբունքը** վկայում է, որ յուրաքանչյուր աշխատակից պետք է

ունենա իր մեկ ուղղակի ղեկավար և գործառնական ղեկավարների որևէ քանակություն:

**Արտադրության արդյունավետության և շահավետության համապատասխանության սկզբունքը** կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. յուրաքանչյուր արտադրության համար համապատասխանությունները պետք է գտնվեն աշխատանքի արդյունավետության և ամբողջական ծախսերի միջև: Նշված սկզբունքը հաստատում է օրենքներ, ըստ որոնց կազմակերպության յուրաքանչյուր հավելյալ ծախսեր պետք է արդարացվեն նրա աշխատանքի և արդյունավետության ենթադրվելի և փաստացի բարձրացմամբ:

**Կառավարման և արտադրության կենտրոնացման և ապակենտրոնացման լավագույն համադրության սկզբունքի** ձևակերպումը ունի հետևյալ տեսքը. չափազանց փոքր և չափազանց մեծ կազմակերպությունները աշխատում են նվազ արդյունավետ, քան միջին չափ ունեցող կազմակերպությունները: Այլ կերպ ասած, կազմակերպության չափսերը պետք է լավագույն կերպ համապատասխանեն նրա նպատակներին, խնդիրներին, գործունեության բնույթին, շուկայի յուրահատկությանը և այլն:

**Կազմակերպման ընթացքի կառուցումը** պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների հիման վրա:

- հատուկ ուղղվածության դրված նպատակի իրականացման համար, այլ ոչ ներքին կամ արտաքին զայրացնող ազդեցությունների ոչնչացում.
- համալիր մոտեցում կազմակերպման ընթացքի վրա ազդող կառավարվող և ոչ կառավարվող գործոնների ուսումնասիրությանը.
- կազմակերպման ընթացքի օբյեկտիվության ապահովում.
- ընթացքի լավագույն և լիարժեք տեղեկատվության ապահովում.

- նախագծվող գործընթացի բոլոր փուլերի գործառնությունների և ընթացագարերի խիստ կարգորոշում.
- գործընթացի հատկանիշների համապատասխանությունը կազմակերպության տեխնիկական, տնտեսական, սոցիալական և կազմակերպչական ռեսուրսներին.

**Կառավարչական հաշվառման կազմակերպման և իրականացման սկզբունքին** են վերաբերում՝

- ձեռնարկության գործունեության անընդհատությունը,
- ծրագրման և հաշվառման համար միևնույն չափման միավորների կիրառումը,
- ինչպես ամբողջ ձեռնարկության, այնպես էլ նրա յուրաքանչյուր կառուցվածքային ենթաբաժանմունքների գործունեության արդյունքների առանձնաբար գնահատումը,
- կառավարման նպատակով առաջնային և միջանկյալ տեղեկատվության հաջորդականություն և հաճախակի կիրառումը,
- կազմակերպության ներքին հաշվետվության ցուցանիշների համակարգի ձևավորում՝ որպես կառավարման մեկ մակարդակի վրա գտնվող առանձին կառուցվածքային ենթաբաժանմունքների և կառավարման տարբեր հարթությունների միջև կոմունիկացիոն կապերի հիմքը,
- ծախսերի և խնայողությունների միջոցով բյուջետային (նախահաշվային) մեթոդի կիրառումը,
- լիարժեքություն և վերլուծողականություն, որ սպառիչ տեղեկատվություն է ապահովում հաշվառման օբյեկտների վերաբերյալ,
- պարբերականություն, որը արտացոլում է ձեռնարկության՝ հաշվառման քաղաքականության կողմից հաստատված արտադրողական և առևտրային ցիկլերը:

Կառավարման մասնավոր սկզբունքների երկրորդ խմբի բնութագրման համար անհրաժեշտ է դիտարկել կաղրային քաղաքականության սկզբունքները: Կաղրային քաղաքականության կազմակերպման և իրականացման սկզբունքների համակարգի մեջ կարելի է առանձնացնել մի քանի տարբեր խմբեր: Դրանցից առավել հատկանշական են աշխատակազմի կառավարման համակարգի կառուցման սկզբունքների և կաղրերի ընտրության սկզբունքների խմբերը:

Աշխատակազմի կառավարման համակարգի ձևավորումը իրականանում է հետևյալ սկզբունքների հիման վրա. աշխատանքի նպատակների համապատասխանությունը աշխատակազմի կառավարման գործառույթներին, աշխատակազմի կառավարման առաջնայնությունը, աշխատակազմի կառավարաման ինտռա- և ինֆռա- գործառույթների լավագույն հարաբերակցությունը, օպերատիվ արձագանքում կազմակերպության աշխատանքի յուրահատկության փոփոխություններին, պոտենցիալ նմանագործումներին:

**Աշխատակազմի կառավարման գործառույթների և աշխատանքի նպատակների համապատասխանության սկզբունքը** ունի հետևյալ բովանդակությունը՝ աշխատակազմի կառավարման գործառույթների ձևավորումը և փոփոխությունները պետք է իրականացվեն կազմակերպության աշխատանքի պահանջներին և նպատակներին խիստ համապատասխան:

**Աշխատակազմի կառավարման գործառույթների առաջնայնության սկզբունքի** իմաստը կայանում է հետևյալում. աշխատակազմի կառավարման համակարգի տարրերի բաղադրությունը, քանակական և որակական նկարագրերը, ինչպես նաև տեղեկատվական կապերի բնույթը և փոխազդեցությունները նրանց միջև ուղղակի կախվածության մեջ են գտնվում աշխատակազմի կառավարման գործառույթների բովանդակությունից:

**Աշխատակազմի կառավարման ինտրա- և ինֆրա-գործառույթների լավագույն հարաբերակցության սկզբունքը** որոշում է գործառույթների միջև անհրաժեշտ չափաբաժինները, որոնք ուղղված են աշխատակազմի կառավարման կազմակերպմանը, այսինքն ինտռա-գործառույթի և աշխատակազմի կառավարման գործառույթների, այսինքն ինֆռա-գործառույթների միջև:

**Կազմակերպության աշխատանքի յուրահատկության գործնական արձագանքի սկզբունքի** էությունը կայանում է աշխատակազմի կառավարման գործառույթների կողմնորոշման կանխման անհրաժեշտության մեջ, որը ուղղված է հիմնական գործունեության զարգացմանը, ի տարբերություն գործառույթների, որոնք ուղղված են օժանդակ գործունեությանը:

**Ներուժակ նմանագործման սկզբունքը** վկայում է այն, որ կազմակերպության առանձին աշխատակիցների ժամանակավոր բացակայությունը չպետք է ընդհատի նրա գործունեության ընթացքը: Այլ կերպ ասած, յուրաքանչյուր աշխատակից պետք է ի վիճակի լինի կատարել ստորադաս և վերադաս աշխատակիցների կամ իր մակարդակի երկու աշխատակիցների ծառայողական պարտականությունները:

Կադրերի ընտրության ընթացքում պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական սկզբունքները. իրավիճակի սկզբունքը, համատեղության սկզբունքը, համադրության սկզբունքը, փոխհատուցման սկզբունքը և հարաշարժության սկզբունքը:

**Իրավիճակի սկզբունքի** էությունը կայանում է նրանում, որ կադրերի ընտրության ընթացքում անհրաժեշտ է ոչ միայն հաշվի առնել թեկնածուի բնութագրի ընդհանուր համապատասխանությունը կոնկրետ պաշտոնի պահանջներին, այլ նաև ուշադրություն դարձնել կոնկրետ իրավիճակին:

Կադրերի ներքին ռոտացիայի ժամանակ և կողմնակի աշխատողների ընտրության ժամանակ մեծ նշանակություն ունի **համատեղության սկզբունքը:**

Նախևառաջ հարկ է հիշել, որ նոր պաշտոնի հավակնող սեփական աշխատողները կազմակերպության անբաժանելի մասն են կազմում և այդ պատճառով, խուսափելով աղապտացման շրջանից, կարող են միանգամից և մեծ նվիրվածությամբ անցնել պաշտոնական պարտականությունների իրականացմանը: Ընդ որում կողքից ընդունված աշխատողները մեծ ջանք պետք է գործադրեն, որպեսզի ներգրավվեն կոլեկտիվ և դառնան նրա անբաժանելի մասնիկը: Սակայն մյուս կողմից նման աշխատողները կարող են ավելի օբյեկտիվ գնահատել կազմակերպության մեջ տեղի ունեցող գործընթացները՝ հրավիրելով ղեկավարների ուշադրությունը այն թերությունների վրա, որոնք արդեն սովորական երևույթներ են դարձել մյուս աշխատակիցների համար:

Կադրերի ընտրության համակարգում ոչ պակաս կարևոր նշանակություն ունի **համադրության սկզբունքը**: Նրա իմաստը կայանում է «հին» և «նոր» աշխատողների համատեղ ջանքերի լավագույն ներգրավման ապահովման մեջ: Եթե առաջինները, այսպես ասած, կենսական և աշխատանքային փորձի կրողներն են, ապա երկրորդները առավել ակտիվ և պակաս պահպանողական են, շատ հաճախ նաև տիրապետում են առավել ժամանակակից և առաջադիմական գիտելիքների: Կազմակերպության բոլոր կառուցվածքային ենթաբաժանումներում առաջին և երկրորդ տեսակի աշխատակիցների ռացիոնալ համադրությունը կազմակերպության արդյունավետ աշխատանքի անքակտելի նախապայմանն է:

**Փոխհատուցման սկզբունքը** խորհուրդ է տալիս կատարել կադրերի ընտրությունը այնպես, որպեսզի մի աշխատակցի բացասական հատկությունները փոխհատուցվեն մյուսի դրական հատկություններով:

Եվ վերջապես **հարաշարժության սկզբունքը** հաստատում է շարժականության և կայունության համադրության անհրաժեշտությունը: Շարժականությունը թույլ է տալիս ժամանակին անցկացնել

արտաքին միջավայրի փոփոխություններին և կազմակերպության պահանջներին համապատասխան կադրերի առաջադրմանը և ռոտացիային ուղղված միջոցառումները: Կայունությունը անհրաժեշտ է երկարատև ծրագրերի իրականացման համար:

Ռիսկ-մենեջմենթի հատուկ սկզբունքների շարքին կարելի է դասել՝

- ռիսկի հանդեպ օրինապահ վերաբերմունքի սկզբունքը,
- նախիմացության սկզբունքը,
- ապահովագրման սկզբունքը,
- պահեստավորման սկզբունքը,
- կորուստների մինիմիզացման և եկամուտների մաքսիմիզացման սկզբունքը:

**Ռիսկերի հանդեպ օրինապահ վերաբերմունքի սկզբունքը** պահանջում է ղեկավարից յուրաքանչյուր ռիսկ դիտարկել որպես տնտեսական գործունեության օբյեկտիվ և անխուսափելի գործոն: Ըստ նշված սկզբունքի՝ յուրաքանչյուր մակարդակի կառավարիչ պետք է ձգտի չխուսափել ռիսկերից, այլ հմուտ կերպով կառավարել դրանք՝ ապահովելով կազմակերպության գործունեության առավելագույն արդյունավետություն:

**Նախիմացության սկզբունքը** վկայում է՝ ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ծախսերի և չնախատեսված կորուստների մակարդակի նվազեցման նպատակով կազմակերպության ղեկավարությունը պետք է անընդմեջ քայլեր ձեռնարկի ռիսկերի առաջացման նախիմացության համար: Նախիմացությունը թույլ է տալիս կանխավ նախապատրաստվել հնարավոր բացասական երևույթների դեմ և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ դրանց տեղափակման և չեզոքացման համար:

**Ապահովագրման սկզբունքի** համաձայն անհրաժեշտ է օգտագործել արտաքին ապահովագրական կազմակերպությունների հնարավորությունները ձեռնարկատիրական ռիսկերի հետ կապված ամբողջ կամ մասնակի կորուստների մարման

համար: Կազմակերպության կողմից իրականացվող յուրաքանչյուր նոր նախագիծ կամ ռիսկային գործառնություն անհրաժեշտ է նախօրոք ապահովագրել: Անհաջողության դեպքում կազմակերպության ստացած ապահովագրական գումարը թույլ կտա ամբողջովին կամ մասնակի փոխհատուցել կրած վնասները:

**Պահեստավորման սկզբունքը** ենթադրում է կազմակերպության ներսում ներքին պահեստային ֆոնդերի ստեղծում, որոնց միջոցները կարելի է օգտագործել ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Օրինակ՝ նախագծի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների գների կտրուկ և չնախատեսված բարձրացման դեպքում կազմակերպությունը ներքին պահեստի հաշվին կարող է լցնել առաջացած տարբերությունը և ժամանակին ապահովել ծրագրված միջոցառումների իրականացումը:

Եվ վերջապես, **կորուստների մինիմիզացման և եկամուտների մաքսիմիզացման սկզբունքը** պահանջում է ղեկավարից մի կողմից հավասարաչափ օգտագործել կազմակերպության ենթակայության տակ գտնվող ռեսուրսները, մյուս կողմից՝ ձգտել եկամուտների մակարդակի բարձրացմանը՝ ռիսկային նախագծերի գրագետ իրականացման ճանապարհով: Վերջինս կօգնի հասնել առավելագույն արդյունավետության ոչ միայն ռիսկերի կառավարման, այլ նաև ամողջ կազմակերպության գործունեության մեջ:

*Ստուգողական հարցեր*

1. Քա՞նի աքսիոմ է առկա ռիսկ-մենեջմենթում:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթի առաջին և հիմնական աքսիոմը:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթի երկրորդ աքսիոմը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթի երրորդ աքսիոմը:

5. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթի չորրորդ աքսիոմը:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկ-մենեջմենթի հինգերորդ աքսիոմը:
7. Ինչպե՞ս կարելի է սահմանել ռիսկ-մենեջմենթի սկզբունքները:
8. Ի՞նչ է իրենից ներկայացնում կառավարման գիտական հիմնավորման սկզբունքը:
9. Ի՞նչ է իրենից ներկայացնում կառավարչական խնդիրների լուծման հանդեպ համակարգային մոտեցման սկզբունքը:
10. Ի՞նչ է հաստատում կառավարման օպտիմալության սկզբունքը:
11. Ի՞նչ է ենթադրում ֆորմալիզացման սկզբունքը:
12. Ի՞նչ է իրենից ներկայացնում նպատակի գերակայության սկզբունքը:
13. Ի՞նչ են իրենցից ներկայացնում համապատասխանության սկզբունքները:
14. Ի՞նչ է խորհուրդ է տալիս փոխհատուցման սկզբունքը
15. Ի՞նչ է վկայում նախիմացության սկզբունքը:
16. Ինչպե՞ս պետք է իրականացվի կազմակերպման գործընթացի կառուցումը:
17. Ի՞նչ է ենթադրում ռիսկերի հանդեպ օրինապահ վերաբերմունքը:
18. Ի՞նչ է հարկավոր կիրառել ապահովագրման սկզբունքի հետ միասին:
19. Ի՞նչ է ենթադրում պահեստավորման սկզբունքը:
20. Ի՞նչ է պահանջում կորուստների մինիմիզացման և եկամուտների մակսիմիզացման սկզբունքը:

## 2.4 Ռիսկերի կառավարման օրենքները

Օրենքը բավականին բարդ և ծավալուն հասկացություն է: Առավել ընդհանուր տեսքով՝ այն կախվածություն է, որը կամ ամրագրվում է օրենսդրական փաստաթղթերում, կամ ընդունելի է մարդկանց լայն խմբերի կողմից, կամ վայելում է հեղինակավոր գիտնականների ճանաչումն ու աջակցությունը:

**Գիտական տեսանկյունից օրենք կարելի է համարել** «հասարակության և բնության մեջ երևույթների միջև կրկնվող, կայուն, էական և անհրաժեշտ հարաբերությունը»:

Կառավարչական օրենքների էության ուսումնասիրության համար հիմնական խնդիրներից մեկը այդ հասկացության ամբողջական և լիարժեք սահմանումն է: Ուսումնասիրողների շարքում այս հարցի շուրջ չկա մեկ միասնական կարծիք:

Ոմանք պնդում են, որ կառավարման օրենքները հասարակական զարգացման օրենքներ են, որոնք հանդես են գալիս ինչպես կառավարող և կառավարվող համակարգերի հետ փոխգործության մեջ, այնպես էլ յուրաքանչյուրի մեջ առանձին և արտահայտվում են մարդկանց գործունեության և նրանց տնտեսական փորձի մեջ: Այսպիսի սահմանումը բավականին ծավալուն է, բայց դրա հետ մեկտեղ ունի մեկ էական թերություն: Այն չի բացահայտում «օրենք» հասկացության էությունը, այսինքն հավելյալ բացատրություններ է պահանջում:

Ոմանք էլ սահմանում են կառավարման օրենքները որպես կառավարման նպատակների և նրանց իրականացման համար միջոցների կապ: Այս սահմանումը առավել ընդունելի է: Հիմնվելով այս սահմանման վրա՝ կարելի է վերջնական եզրահանգում անել:

**Կառավարման օրենքները** իրենցից ներկայացնում են կառավարչական գործունեության նպատակների և դրանց

իրականացման մեթոդների միջև տեսական կամ էմպիրիկ ձևով հաստատված և տրամաբանորեն հիմնավորված կախվածություններ:

Ռիսկ-մենեջմենթը, որպես գիտական կառավարման ինքնուրույն ձևավորվող ճյուղ, ևս ունի իր օրենքները, ընդ որում նպատակահարմար է դիտարկել նշված օրենքները համալիր ձևով, այսինքն՝ կառավարման ընդհանուր տեսության հետ փոխկապված:

Կառավարման օրենքների ամբողջությունը կարող է պայմանականորեն բաժանվել երեք հիմնական խմբերի:

Առաջին խմբին են պատկանում **կառավարման ընդհանուր օրենքները**: Նրանք արտացոլում են կառավարչական գործունեության առավել ընդհանուր պատճառահետևանքային կախվածությունները:

Երկրորդ խմբին են պատկանում **կառավարման մասնակի օրենքները**, որոնց կիրառման միջոցով կարելի է բարձրացնել կառավարման ամբողջ համակարգի, ինչպես նաև նրա առանձին տարրերի և օղակների աշխատանքի արդյունավետությունը:

Եվ վերջապես երրորդ խմբին նպատակահարմար է դասել կառավարման տեսության տարբեր ճյուղերի հետ կապված օրենքները: Այդպիսի օրենքները կարելի է անվանել **«հատուկ»** եզրույթով: Հենց երրորդ խմբին են պատկանում ռիսկ-մենեջմենթի օրենքները: Սակայն նախքան ռիսկերի կառավարման օրենքների անմիջական ուսումնասիրությանն անցնելը, նպատակահարմար է հակիրճ ներկայացնել կառավարման ընդհանուր և մասնակի օրենքների բովանդակությունը:

Կառվարման ընդհանուր օրենքների խմբին են պատկանում.

1. կառավարման սոցիալական բովանդակության և կառավարման օբյեկտ հանդիսացող գործունեության իրականացման ձևի համապատասխանության օրենքը,
2. գիտակցված և պլանաչափային կառավարման գերադասելի արդյունավետության օրենքը,

3. կառավարման համակարգի միասնության օրենքը,
4. կառավարող և կառավարվող համակարգերի հարաբերականության օրենքը,
5. կառավարման համակարգում ուղիղ և հակադարձ կապով բովանդակության և ձևերի՝ նրա ենթահամակարգերի միջև տնտեսական բնույթի հարաբերություններին համապատասխանման օրենքը,
6. կառավարման օրենքների գործողությունների միասնության օրենքը:

Բացահայտենք վերը թվարկված օրենքներից յուրաքանչյուրի էությունն ու բովանդակությունը:

**Կառավարման սոցիալական բովանդակության և կառավարման օբյեկտ հանդիսացող գործունեության իրականացման ձևի համապատասխանության օրենքի** իմաստը կայանում է հետևյալում:

Կառավարումը ունի երկու կողմ: Մի կողմից այն իրենից ներկայացնում է աշխատակիցների աշխատանքի ղեկավարման օբյեկտիվ գործընթաց, մյուս կողմից՝ կողմերի հարաբերություններ՝ կոնկրետ գործունեության իրականացման ընթացքում:

Առաջին առանձնահատկությունը ենթադրում է, որ կառավարումը հանդիսանում է պատմականորեն պայմանավորված անհրաժեշտություն, քանի որ աշխատակիցները համատեղ աշխատանքի պայմաններում ստիպված մտնում են կառավարչական հարաբերությունների մեջ՝ ենթարկվելով արտադրողական գործընթացի ղեկավարի ցուցումներին: Մյուս առանձնահատկությունը վկայում է այն մասին, որ աշխատանքային գործընթացի մասնակից կողմերը մտնում են սեփականության հարաբերությունների մեջ: Եթե կառավարման հարաբերությունների առաջացումը պայմանավորված է հասարակական աշխատանքի տեսակով և նրա կոոպերացիայի մակարդակով, ապա արտադրողական հարաբերությունների

բնույթը որոշում են տվյալ հասարակական ֆորմացիային հատուկ սեփականության հարաբերությունները:

Այսպիսով, կառավարումը կարելի է դիտարկել կազմակերպչական-տեխնիկական և հասարակական-տնտեսական տեսանկյուններից:

Տեխնիկական տեսանկյունից կառավարումը կարելի է դիտարկել որպես կոոպերատիվ աշխատանքի մասնակիցների կողմից իրականացվող աշխատանքի բոլոր տեսակների միասնություն: Այս իմաստով այն նպատակ ունի միավորել կենդանի և իրայնացված աշխատանքները, պահպանել աշխատանքային գործընթացում անհրաժեշտ կապերը և չափաբաժինները: Արտադրության կառավարումը, որպես տեխնիկական անհրաժեշտություն, բնութագրում է զարգացում ստացած մակարդակը և կառավարման կազմակերպման որակական առանձնահատկությունները:

Կառավարման հարաբերությունների, որպես հասարակական-տնտեսական կատեգորիա, դիտարկման դեպքում առաջի պլան է մղվում կառավարամաև հասարակական բնույթը, որը պատասխանում է հետևյալ հարցին՝ ու՞մ շահերից է բխում կառավարման իրականացումը: Սոցիալական իմաստով կառավարումը իրենից ներկայացնում է հարաբերություններ աշխատանքի միջոցների սեփականատիրոջ և վարձակալված աշխատողների միջև: Այն հանդես է գալիս որպես աշխատանքի միջոցների սեփականատիրոջ գործառույթ, որը իրականանում է իր կողմից՝ սեփական շահերից ելնելով: Սրանից հետևում է, որ կառավարման նպատակը, ինչպես նաև նրա մեթոդները և ձևերը, գտնվում են անմիջական կախվածության մեջ սեփականության ձևից՝ աշխատանքի հաշվին:

**Գիտակցաբար պլանաչափական կառավարման գերադասելի արդյունավետության օրենքը** վկայում է, որ գիտակցական, պլանաչափային կառավարմամբ տնտեսական համակարգերը

փաստացի ավելի արդյունավետ են, քան տարերային կարգավորմամբ ընթացող տնտեսական գործընթացները:

Զարգացման պլանաչափությունը, որը հիմնված է օբյեկտիվ տնտեսական օրենքների կիրառման վրա, ստեղծում է ամբողջ հասարակության շահերից բխող տնտեսության լավագույն զարգացման հնարավորությունը:

Արտադրության և սպառման (հասարակական մարքեթինգ), կառավարման խնդիրների և աշխատակիցների շահերի (հասարակական կառավարում) անմիջական կապը աշխատողների մոտ ստեղծում են անկեղծ շահագրգռվածություն կազմակերպության աշխատանքի արդյունավետության բարձրացման վերաբերյալ: Կառավարման նպատակ է դառնում հասարակության շահերից ելնելով ռեսուրսների օպտիմալ օգտագործմամբ առավելագույն տնտեսական արդյունավետության հասնելը՝ բնակչության աճող նյութական և հոգևոր պահանջների բավարարման համար:

**Կառավարման համակարգերի միասնության օրենքի** համաձայն յուրաքանչյուր կազմակերպության գործունեություն իրենից ներկայացնում է կենտրոնացված կառավարվող համակարգ: Նշված համակարգը իր հերթին բաժանված է կառավարման հիերարխիկ աստիճանների, որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է վերը կանգնած հիերարխիկ համակարգի ենթահամակարգ (կամ ենթահամակարգերի միասնություն): Կազմակերպության հիերարխիկ կառուցվածքը հանդիսանում է նրա պլանաչափային զարգացման և աշխատանքի հիմքը:

Կառավարման հիերարխիկ կառուցվածքի հայեցակարգը ձակերպվել է դեռ XX դարի սկզբին, գերմանացի հասարակագետ՝ Մաքս Վեբերի կողմից: Այն ենթադրում է՝

- աշխատանքի հստակ բաժանում, որն ապահովում է ավելի լավ վերապատրաստված կադրերի օգտագործման հնարավորություն,

- թիմերի աստիճանական շղթա, այսինքն կառավարման վերադաս աստիճաններից հրահանգների փոխանցումը ստորադաս աստիճաններին՝ հերթականության կարգով,
- աշխատակազմի պահելաճևի ֆորմալ օրենքների և նորմերի առկայություն,
- կադրերի ընտրություն կոնկրետ պաշտոնի համար՝ որակավորման պահանջներին համապատասխան, որոնք ամրագրված են համապատասխան պաշտոնական հրահանգների և տեղեկատուների մեջ:

Կառավարող և կառավարվող համակարգերի (կառավարաման օբյեկտ և սուբյեկտ) հարաբերականության օրենքի էությունը կայանում է կառավարման ոլորտի՝ գործունեության կոնկրետ տեսակի հետ համապատասխանության մեջ:

Կառավարաման յուրաքանչյուր համակարգ բաղկացած է կառավարման օբյեկտից և կառավարման սուբյեկտից: Որպես կառավարման օբյեկտ հանդես է գալիս կազմակերպության տնտեսական գործունեությունը: Կառավարման օբյեկտը համապատասխան մարմիններ կամ կառուցվածքային ենթաբաժանմունքներ են, որոնք իրականացնում են կառավարման օբյեկտի նպատակաուղղված ղեկավարում:

Կառավարման օբյեկտը և սուբյեկտը ձևակերպված են որոշակի համակարգերում՝ կառավարող և կառավարվող: Այդ համակարգերը կառավարման համակարգի անբաժանելի բաղկացուցիչ տարրեր են: Նրանք գտնվում են անընդհատ փոխգործության մեջ: Ընդ որում գլխավոր և որոշիչ դերը պատկանում է կառավարման օբյեկտին (կառավարվող համակարգին): Այստեղ տեղի ունեցող փոփոխությունները որոշում են կառավարման սուբյեկտի զարգացման ընթացքը և բովանդակությունը, ինչը արտահայտվում է կառավարման ձևի և մեթոդների կատարելագործման մեջ: Սակայն իրերի այսպիսի դասավորությունը ամենևին չի նշանակում, որ սուբյեկտը կառավարման մեջ պասիվ դեր ունի: Չէ որ հենց կառավարման

սուբյեկտն է աշխատեցնում առանձին կազմակերպության և ամբողջ հասարակության արտադրողական ուժը: Այդ պատճառով, որքան բարձր է կառավարման արդյունավետությունը, այնքան բարձր է համատեղ գործունեության արդյունավետությունը այլ հավասար պայմաններում:

Այսպիսով, կառավարող և կառավարվող համակարգերի հարաբերակցությունը հարաբերությունների տեսակ է, որի հիմքում ընկած է նրանց փոխադարձ ազդեցությունը, ինչը ենթադրում է նրանց միջև օպտիմալ հարաբերակցությունների հաստատում և պահպանում, այդ թվում նաև զբաղված աշխատողների թվաքանակի հետ կապված, տեխնիկական ապահովվածության և տնտեսական ցուցանիշների հետ կապված:

Կառավարման համակարգում ուղիղ և հակադարձ կապի բովանդակության և ձևերի՝ նրա ենթահամակարգերի միջև տնտեսական բնույթի հարաբերություններին համապատասխանման օրենքի իմաստը հետևյալն է:

Կառավարման իմաստը կառավարման սուբյեկտի կողմից կառավարման օբյեկտին համապատասխան գործողությունների կատարման մասին ազդակների փոխանցման մեջ է: Այդ ազդակները իրենցից ներկայացնում են հրաման-որոշումներ, որոնք կայացվել են այն տեղեկատվության հիման վրա, որը ստացել է կառավարող մարմինը կազմակերպության արտաքին և ներքին միջավայրից կապի միջոցով:

Կառավարող և կառավարվող համակարգերի միջև կապը կարող է լինել ուղիղ և հակադարձ: Ուղիղ կապը արտահայտվում է հրաման-ազդակների ձևով, որոնք գալիս են կառավարման սուբյեկտի կողմից դեպի կառավարման օբյեկտ: Հակադարձ կապը իրենից ներկայացնում է հրաման-ազդակներ, որը ստանում է կառավարվող համակարգը կառավարող մարմնի կողմից և արտահայտում են նրա արձագանքը կառավարող ազդեցությանը:

Կառավարման մարմնի կողմից կառվարող ազդեցությունը իրականանում է սուբյեկտային և օբյեկտային տեսակի ուղիղ

ազդակների միջոցով: Օբյեկտին անխափան կառավարելու համար դա բավարար չէ: Անհրաժեշտ է հակադարձ կապ կառավարվող օբյեկտի կողմից կառավարող սուբյեկտներին՝ համակարգը վերահսկման և արտաքին միջավայրի կողմից ազդեցության հաշվառման նպատակով:

Եթե հակադարձ կապը համակարգում բացակայում է կամ ինչ-ինչ պատճառներով չի որսվում կառավարման մարմնի կողմից, ապա այդպիսի համակարգը վերջին հաշվով կարող է դուրս գալ վերահսկումից և դառնալ անկառավարելի:

Այսպիսով, կառավարման յուրաքանչյուր գործընթաց պետք է ներառի իր մեջ չորս հիմնական բաղադրիչ: Այդպիսի բաղադրիչներ են՝

- մտնող ազդեցությունը (ուղիղ կապ), այսինքն կառավարող համակարգից դեպի կառավարվող համակարգ տեղեկատվական ազդակներ,
- մտնող ազդեցության վերափոխումը, որը կայանում է ըստ որոշակի ալգորիթմի ստացվող ազդակների մշակման մեջ,
- ստացվող ազդեցության վերաձևավորման արդյունք, այսինքն կառավարվող համակարգի կատարողական գործողությունը,
- արդյունքի ներգործությունը ստացվող ազդեցության վրա (հակադարձ կապ), այսինքն կառավարող համակարգ կառավարման օբյեկտի ընթացիկ վիճակի և աշխատանքի մասին հաշվետվությունների մուտք:

Հասարակական-տնտեսական համակարգերում հակադարձ կապի ձևերը և բովանդակությունը տարբեր բնույթներ են կրում: Այստեղ մտնում են հաշվետու տվյալները, կառավարվող օբյեկտը բնութագրող հավելյալ տեղեկությունները և այլն:

Որքան բարձր է կառավարման մակարդակը, այնքան բարդ է նրա՝ կառավարվող համակարգի հետ հակադարձ կապի իրականացումը: Այդ իսկ պատճառով կազմակերպության կառավարման ամենաբարձր մակարդակների վրա հակադարձ

կապի հանդեպ կիրառվում են հետևյալ երեք հիմնական պահաջները: Առաջին պահանջը կայանում է նրանում, որպեսզի հակադարձ կապի ձևերը յուրաքանչյուր կոնկրետ մակարդակի վրա կրեն ընդհանրացնող բնույթ և լինեն փոխկապակցված հակադարձ կապի համապատասխան ձևերի հետ հիերարխիկ սանդղակի այլ աստիճանների վրա:

Երկրորդ պահանջը կայանում է նրանում, որ հակադարձ կապի ձևերը պետք է թույլ տան փոխհատուցել համակարգի վրա զայրացնող արտաքին ներգործությունների ազդեցությունը, որոնց բնույթը անհայտ է մնում:

Եվ, վերջապես, երրորդ պահանջը ենթադրում է կառավարող համակարգի ճկուն արձագանքի հնարավորություն յուրաքանչյուր տեսակի հակադարձ կապին:

Կառավարման յուրաքանչյուր համակարգի օպտիմալ աշխատանքը և զարգացումը հնարավոր է միայն ուղիղ և հակադարձ կապի բովանդակության և ձևերի՝ նրա տարբեր աստիճանների և մասշտաբների ենթահամակարգերի միջև փոխհարաբերությունների տնտեսական բնույթին առավել ամբողջական համապատասխանման դեպքում:

Կառավարման օրենքների գործողությունների միասնականության մասին օրենքի էությունը կայանում է նրանում, որ կառավարման երևույթների և գործընթացների ընթացքը հավասարապես ներդրված ուժերի արդյունք է, որոնցից յուրաքանչյուրը ենթարկվում է կառավարման այս կամ այն օրենքին: Այլ կերպ ասած, կառավարման օրենքները անմիջականորեն փոխգործակցում են, ազդելով միմյանց վրա իրենց հատկություններով: Կառավարման արդյունավետությունը կախված է ամբողջ կառավարման օրենքների համակարգի ակտիվ կիրառման աստիճանից:

Որպեսզի առավել ամբողջական ձևով կիրառել կառավարման օրենքները, անհրաժեշտ է մի կողմից առանձնացնել յուրաքանչյուր առանձին օրենքի գործողությունները, մյուս կողմից՝ պարզել բոլոր

բացահայտված օրենքների փոխներգործության մեխանիզմը, որոնք մասնակցում են տվյալ կոնկրետ կառավարչական գործընթացի կամ երևույթի մեջ:

Կառավարման մասնավոր օրենքների շարքում կարելի է առանձնացնել օրենքներ, որոնք վերաբերում են կառավարող ենթահամակարգին, և կազմակերպության օրենքներ (այսինքն՝ կառավարվող ենթահամակարգին):

**Կառավարող ենթահամակարգին վերաբերող մասնավոր օրենքների** շարքին են դասվում՝

1. կառավարման գործառույթների փոփոխության մասին օրենքը,

2.կառավարման աստիճանների թվաքանակի կրճատման մասին օրենքը,

3. կառավարման գործառույթների կենտրոնացամաման մասին օրենքը,

4. վերահսկման տարածման մասին օրենքը,

**Կառավարման գործառույթների փոփոխության մասին օրենքը** վկայում է, որ կառավարման մակարդակի իջեցումը կամ բարձրացումը անխուսափելիորեն հանգեցնում է որոշ գործառույթների նշանակության կարևորության բարձրացմանը և որոշների՝ նվազեցմանը:

**Կառավարման աստիճանների կրճատման մասին օրենքի** էությունը կայանում է նրանում, որ որքան քիչ է կազմակերպության կառուցվածքի մեջ կառավարման աստիճանները, այնքան հավասար պայամանների դեպքում առավել գործադրական և արդյունավետ է կառավարումը:

**Կառվարման գործառույթների կենտրոնացման մասին օրենքը** հաստատում է, որ կառավարումը օբյեկտիվորեն ձգտում է գործառույթների ավելի մեծ կենտրոնացման կառավարման յուրաքանչյուր աստճանի վրա, և հետևաբար՝ կառավարչական աշխատակազմի թվաքանակի մեծացմանը:

**Վերահսկման տարածվածության մասին օրենքի** համաձայն գոյություն ունի որոշակի կախվածություն ստորադասների քանակի և ղեկավարաների կողմից նրանց գործողությունների վերահսկման հնարավորությունների միջև:

Կազմակերպության օրենքների ամբողջությունը, կախված նրանց կարևորության աստիճանից, կարելի է պայմանականորեն բաժանել երկու հիմնական ենթախմբերի: Առաջին ենթախմբին են պատկանում կազմակերպության առավել կարևոր և հիմնարար օրենքները: Վերջիններիս թվին են պատկանում սիներգիայի օրենքը, գոյատևման օրենքը և զարգացման օրենքը: Կազմակերպության քիչ կարևոր օրենքները, ինչպիսին են տեղեկատվածության–դասակարգման օրենքը, սինթեզի վերլուծության ամբողջականության օրենքը, հավասարաչափության և կոմպոզիցիայի օրենքը, կազմում են երկրորդ ենթախումբը:

**Սիներգիայի օրենքը** վկայում է, որ յուրաքանչյուր կազմակերպության համար գոյություն ունի տարրերի այնպիսի հավաքածու, որի դեպքում նրա ներուժը միշտ կլինի կամ զգալի բարձր նրա մեջ մտնող տարրերի սովորական գումարից, կամ էականորեն ցածր նշված գումարից:

Նշված օրենքի համաձայն յուրաքանչյուր կազմակերպության ղեկավարի խնդիրը առաջին հերթին կայանում է նրանում, որպեսզի գտնել այդ տարրերի առավել օպտիմալ հավաքածուն:

**Ինքնապահպանության օրենքի** էությունը կայնում է նրանում, որ յուրաքանչյուր նյութական համակարգ ձգտում է պահպանել իրեն և օգտագործում է դրա համար իր ողջ ներուժը: Այլ կերպ ասած, կազմակերպության ստեղծագործ ռեսուրսների գումարը պետք է գերազանցի արտաքին և ներքին կործանարար գործոնների միագումար ազդեցությունը: Հակառակ դեպքում կազմակերպությունը ուղղակի կդադարի գոյություն ունենալ:

Ինքնապահպանության օրենքի կիրառման փորձը անքակտելիորեն կապված է ամբողջ կազմակերպության և նրա

ղեկավարների անձնական անվտանգության ապահովման հետ: Անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության մեջ կարելի է առանձնացնել երկու հիմնական ուղղություն՝ օպերատիվ և ռազմավարական: Անվտանգության ապահովման օպերատիվ գործունեությունը ենթադրում է ձեռնարկության տարածության, շենքերի, կառույցների, սարքավորումների, հումքի, նյութերի և պատրաստի արտադրանքի պաշտպանության իրականացում, ինչպես նաև աշխատակիցների անձնական անվտանգության ապահովում: Անվտանգության ապահովման ռազմավարությունը պահանջում է կազմակերպության արտաքին և ներքին միջավայրերի վիճակի մասին կանխատեսումների մշակում՝ հնարավոր վտանգների պարզման և չեզոքացման նպատակով:

**Զարգացման օրենքը** ունի հետևյալ բովանդակություն՝ յուրաքանչյուր նյութական համակարգ ձգտում է հասնել առավելագույն միագումար ներուժի:

Կազմակերպության զարգացումը կարելի է ներկայացնել կենսական ցիկլի տեսքով: Յուրաքանչյուր նյութական համակարգի **կենսական ցիկլը** իր մեջ ներառում է իրար հերթականորեն փոխարինող ութ փուլեր՝

1. անզգայունության շեմ,
2. ներդրում,
3. աճ,
4. հասունություն,
5. հագեցվածություն,
6. անկում,
7. տապալում,
8. չեզոքացում:

Ընդ որում, առաջին չորս փուլերը իրենցից ներկայացնում են առաջադիմական զարգացման գործընթաց, իսկ վերջին երեքը՝ հետադիմական:

**Տեղեկացվածության-դասակարգման օրենքը** կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ որքան շատ տեղեկատվության է

տիրապետում կազմակերպությունը արտաքին և ներքին միջավայրի ընթացիկ և հեռանկարային վիճակի մասին, այնքան մեծ է նրա նորմալ աշխատանքի հավանականությունը:

Այս օրենքը պահանջում է տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանցման արդյունավետ համակարգի նորմալ աշխատանքի համար պայմանների ստեղծում, զարգացում և ապահովում, ինչը անհրաժեշտ է համապատասխան և հիմնավորված կառավարչական որոշումների ընդունման համար:

**Սինթեզի և վերլուծության ամբողջության օրենքը** հաստատում է, որ յուրաքանչյուր նյութական համակարգ ձգտում է աշխատանքի առավել տնտեսող ռեժիմի՝ վերլուծության և սինթեզի միջոցով:

Վերլուծությունը իրենից ներկայացնում է ուսումնասիրվող օբյեկտի հատկությունների, հատկանիշների ուսումնասիրություն, նրա՝ առանձին բաղկացուցիչ մասերի պայմանական բաժանման միջոցով:

Իր հերթին, սինթեզը կայանում է առանձին բաղկացուցիչների մասին տեղեկատվության ընդհանրացման և ուսումնասիրության ամբողջ օբյեկտի մասին տեղեկատվական տվյալների միագումարի ձևավորման մեջ:

Վերլուծության և սինթեզի ամբողջության մասին օրենքի դրույթների գործնականում իրականացման համար անհրաժեշտ է հետևյալը՝ կազմակերպության անընդհատ կատարելագործման ծրագրերի կազմում և իրականացում, մարքեթինգային հետազոտությունների անցկացում, արտադրողական և ոչ արտադրողական ծախսերի կրճատում և այլն:

Կառավարչական վերլուծության և սինթեզի համակարգի հիմք է կազմում **աստիճանական մոտեցման մեթոդը**: Այս մեթոդը ներառում է չորս մակարդակ:

Առաջին մակարդակ՝ նախնական վերլուծություն կողմնակի դիտորդի տեսանկյունից: Նման վերլուծությունը սովորաբար

իրականացվում է բարեկամ կազմակերպությունների խորհրդատուների կամ ներկայացուցիչների կողմից:

Տվյալ մակարդակի վրա վերլուծության անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթեր են՝

- սահմանադիր պայմանագիրը,
- հաշվապահական հաշվեկշիռը,
- բիզնես-նախագիծը,
- կառավարման կազմակերպչական կառուցվածք:

Վերլուծության անցկացման արդյունքում մշակվում են համակարգային բնույթի ընդհանուր հանձնարարականներ:

Երկրորդ մակարդակը ենթադրում է խորհրդակցության ժամանակ կազմակերպության առաջատար մասնագետների այսպես ասած ուղեղային հարձակման անցկացումը:

Դրա համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

- հիմնական չլուծված խնդիրների ցուցակը,
- վերը նշված խնդիրների լուծման միջոցների վերաբերյալ մասնագետներից յուրաքանչյուրի նախնական հանձնարարականները:

Ամփոփիչ փաստաթուղթ է հանդիսանում դրված հարցերին խորհրդատուի հետ համաձայնեցված պատասխանների ցանկը:

Երրորդ մակարդակի վրա իրականացվում է ձեռնարկության զարգացման խմբի ստեղծումը և ռազմավարության ձևավորումը: Անհրաժեշտ փաստաթղթերն են՝

- կազմակերպության զարգացման խմբի ստեղծման մասին ղեկավարի կարգադրությունը.
- զարգացման խմբի ուսուցման նախագիծը.
- կազմակերպության հիմնական հաշվետվությունները:

Զարգացման խմբի գործունեության հիմնական արդյունքը ձեռնարկության տեխնոլոգիական, տնտեսական և ֆինանսական քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումն է:

Կառավարչական վերլուծության չորրորդ մակարդակը ենթադրում է զարգացման խմբի՝ որպես կազմակերպության նոր կառուցվածքային ենթաբաժանմունքի մշտական աշխատանք:

Պահանջվող փաստաթղթեր են՝

- կազմակերպության գործունեության մասին ընթացիկ հաշվետու փաստաթղթերը,
- բիզնես-ծրագիրը,
- մարքեթինգային ուսումնասիրությունների արդյունքները:

Ամփոփիչ փաստաթղթեր են համարվում ճշտված բիզնես-ծրագիրը, ինչպես նաև արտադրության և կառավարման համակարգերի կատարելագործմանն ուղված հանձնարարականները:

**Կոմպոզիցիայի և համամասնության օրենքը** վկայում է՝ յուրաքանչյուր նյութական համակարգ ձգտում է պահպանել իր կառուցվածքի մեջ բոլոր անհրաժեշտ տարրերը, որոնք գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ: Ընդ որում, կազմակերպության անհրաժեշտ տարրերը ձևավորում են նրա կոմպոզիցիան, իսկ նրանց հարաբերակցությունը իրենից ներկայացնում է հենց համամասնություն:

Նշված օրենքի աշխատանքը իրականանում է երեք հիմնական օրենքների հիման վրա՝ ծրագրման, համաձայնեցման, լիակատարության:

**Ծրագրման սկզբունքը** ենթադրում է, որ յուրաքանչյուր կազմակերպություն պետք է ունենա գործունեության և զարգացման նախագիծ:

**Համաձայնեցման սկզբունքը** վկայում է, որ յուրաքանչյուր կազմակերպություն պետք է հետևի ռազմավարական, մարտավարական և օպերատիվ փոփոխություններին և համապատասխան ուղղումներ մտցնի կատարողական մեխանիզմի մեջ:

**Լիակատարության սկզբունքի** համաձայն յուրաքանչյուր կազմակերպություն կամ սեփական ուժերով, կամ կողմնակի կազմակերպությունների կամ անկախ փորձագետների միջոցով պետք է իրականացնի կառավարման հիմնական աշխատանքի գործառույթների ամբողջ հավաքածուն:

Կառավարման օրենքների նեղ փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը կարելի է տեսնել կառավարող ենթահամակարգին վերաբերող օրենքների օրինակի վրա: Կառվարման աստիճանների թվաքանակի կրճատման մասին օրենքը փոխազդում է կառավարման գործառույթների՝ յուրաքանչյուր աստիճանի վրա կենտրոնացման մասին օրենքի հետ: Կենտրոնացման առավելությունները ակնհայտ են, քանի որ այն թույլ է տալիս իրականացնել կառավարման հիմքում ընկած տեղեկատվության մշակման աշխատատարության զգալի կրճատում: Մյուս կողմից կառավարող մարմնի խոշորացման որոշակի փուլում ներքին տեղեկատվության ծավալը այնքան է մեծանում, որ կազմակերպությունը սկսում է աշխատել ինքն իր վրա, այսինքն ծախսում է ժամանակի զգալի մասը ոչ արտադրողական աշխատանքի վրա:

Կազմակերպության օրենքները ևս սերտորեն կապված են և փոխազդում են միմյանց միջև: Ընդ որում, նրանց փոխազդեցությունը կարող է ունենալ ոչ միայն դրական այլ նաև բացասական հետևանքներ:

Օրինակ՝ սիներգիայի օրենքի համաձայն՝ կազմակերպության կտրուկ խոշորացմանը կարելի է հասնել աշխատակազմի թվաքանակի մեծացման միջոցով: Սակյան այս պնդումը արմատապես հակասում է համամասնության և կոմպոզիցիայի, վերլուծության և սինթեզի օրենքների դրույթներին:

Նմանատիպ ձևով համամասնության և կոմպոզիցիայի մասին օրենքը պահանջում է կազմակերպության կայունության ապահովում, ինչը հակասում է ինքնապահպանության օրենքի բովանդակությանը, որի համաձայն կազմակերպությունը պետք է

ունենա բավարար ճկունություն շուկայական տնտեսության պայմաններում նորմալ աշխատանքի համար:

Այժմ կարելի է փորձել ձևակերպել ռիսկերի կառավարման հիմնական հատուկ օրենքները:

Ռիսկ-մենեջմենթի առավել կարևոր օրենք է **ռիսկի անխուսափելիության օրենքը**: Այս օրենքի իմաստը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր կազմակերպության գործունեություն միշտ ուղեկցվում է ռիսկերով, որոնք առկա են նրա արտաքին կամ ներքին միջավայրերում: Հիմնվելով այս օրենքի գործողությունների վրա, կարելի է անել հետևություն այն մասին, որ ժամանակակից ձեռնարկատիրական գործունեության պայմաններում ամբողջովին խուսափել ռիսկերից հնարավոր չէ, այդ իսկ պատճառով հարկավոր է ընկալել դրանք որպես կառավարման համակարգի օբյեկտիվ տարր:

Ռիսկ-մենեջմենթի՝ իր կարևորությամբ երկրորդ օրենք կարելի է համարել **պոտենցիալ շահույթների և կորուստների համադրության օրենքը:** Նշված օրենքի իմաստը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ՝ գործնականում ռիսկի յուրաքանչյուր իրավիճակում կորուստների կամ վնասների պոտենցիալ հնարավորությունը համադրվում է հավելյալ եկամուտի ստացման պոտենցիալ հնարավորության հետ:

Որպես ռիսկի կառավարման երրորդ օրենք կարելի է առանձնացնել **ռիսկի աստիճանի և նախատեսված եկամուտների աստիճանի միջև ուղիղ կախվածության օրենքը**, որը ունի հետևյալ բովանդակությունը՝ որքան մեծ է ռիսկի աստիճանը տնտեսական գործառնության իրականացման ժամանակ, այնքան մեծ է այդ գործառնության արդյունքում սպասվող եկամուտի չափը, և որքան ցածր է ռիսկի աստիճանը, այնքան փոքր է ծրագրված եկամուտների չափը: Գործնականում այս օրենքը առավել վառ է արտահայտվում նոր նախագծերի ներդրումների ժամանակ: Չէ՞ որ որքան ռիսկային է նախագիծը, այնքան մեծ հասույթ են ցանկանում ստանալ ներդրողները վերջինիս հաջող

իրականացման դեպքում: Եվ հակառակը՝ ներդրողները պատրաստ են ներդնել իրենց կապիտալները, թեկուզ և ոչ մեծ տոկսադրույքներով, այն դեպքում, երբ նախագծի ձախողման ռիսկը նվազագույն է:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ են իրենցից ներկայացնում կառավարման օրենքները ռիսկ-մենեջմենթում:
2. Որո՞նք են կառավարման ընդհանուր և մասնավոր օրենքները:
3. Ի՞նչ է ենթադրում գիտակցաբար պլանաչափ կառավարման գերադասելի արդյունավետության օրենքը:
4. Ի՞նչ է ենթադրում կառավարման համակարգերի միասնության օրենքը:
5. Ո՞րն է կառվարման օրենքների գործողությունների միասնության օրենքի էությունը :
6. Որո՞նք են կառավարող ենթահամակարգին վերաբերող մասնավոր օրենքները:
7. Ի՞նչ է ենթադրում սիներգիայի օրենքը:
8. Ո՞րն է ինքնապահպանության օրենքի էությունը:
9. Ինչպե՞ս կարելի է ձևակերպել տեղեկացվածության-դասակարգման օրենքը:
10. Ի՞նչ է հաստատում վերլուծության և սինթեզի միասնության օրենքը:
11. Ի՞նչ է ենթադրում համամասնության և կոմպոզիցիայի օրենքը:
12. Ի՞նչ է ենթադրում ռիսկի աստիճանի և նախատեսված եկամուտների մակարդակի միջև ուղիղ կախվածության օրենքը:

# ԳԼՈՒԽ 3
# ՌԻՍԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

*Մենք կանխազգում ենք մեր մտադրության իրականացման հետ կապված դժվարությունները, սակայն հապշտապեպ ենք մտածում նրանց մասին, որ արմատապես մեզ մեզ*
*Մարկիզ Լյուկա դը Կլապյե Վովենարգ*

## 3.1 Ռիսկերի դասակարգման հիմնական սկզբունքները

Եթե չլինեին ռիսկերը, չէր լինի ոչ' բիզնես, ոչ' էլ շամպայն խմելու առիթ: Բայց մենք դեռևս ունենք և' այս, և' այն, չէ որ ռիսկերը բիզնեսում դա հնարավորության, բախտի, հաջողության և նոր հնարավորությունների բնական միջավայրն են:

Ձեռնարկատիրոջը փակուղի մտցնելու հեշտ միջոց է նրան հարցնելը. «Ինչպե՞ս եք վերաբերվում ռիսկերին»: Առաջին արձագանքը միշտ բացասական կլինի. «Ռիսկերը խանգարում են աշխատել: Եթե չլինեին ռիսկերը, գործերն ավելի լավ կլինեին...» Սակայն, եթե շարունակենք զրույցը, կպարզվի, որ ռիսկերի հետ մեկտեղ կանհետանան ոչ միայն բիզնեսի խոչընդոտները, այլ նաև ինքը բիզնեսը: Պարադո՞քս է: Բնավ ոչ, չէ որ ռիսկերը շանսի, բախտի, հաջողության բնական միջավայրն են, այլ պայմաններում դրանք չեն գոյատևում: Այդ իսկ պատճառով բարձրագույն բիզնես-վարպետությունը ոչ թե ռիսկերի համապարփակ ոչնչացումն է, այլ տեղային և համակարգված ազդեցությունն է դրանցից յուրաքանչյուրի վրա, որը նպաստում է խնդիրների փոխակերպմանը:

Բերենք ձեռնարկատիրոջը փակուղու առաջ կանգնեցնելու մեկ այլ օրինակ: Հարցրեք նրան. «Ո՞ր ռիսկերն են առավել վտանգավոր բիզնեսի համար»: Առաջին արձագանքը կլինի. «Անկայուն տնտեսական և քաղաքական իրավիճակը, օրենսդրության թերությունները, կոռուպցիան, քրեական հանցա-

գործությունները, մատակարարների անհուսալիությունը…»: Իսկ եթե խորամուխ լինենք, կպարզվի, որ բոլոր այդ (արտաքին) ռիսկերը կազմում են ընդհանուր ռիսկերի 25 տոկոսը: Մնացած 75%-ը ներքին ռիսկերն են, որոնք գտնվում են ընկերության ներսում: Դրանցից են անկարգապահությունը, հիմնավորման համակարգի անարդյունավետությունը, ոչ որակյալ անձնակազմը և այլն:

Ռիսկը ընդգրկում է սուբյեկտի գրեթե ամբողջ գործունեությունը և այդ կապակցությամբ ռիսկերի ճիշտ կառավարման համար առաջանում է դրանց համակարգման և դասակարգման անհրաժեշտությունը:

Ռիսկերի դասակարգման հարցերը բավականաչափ բարդ խնդիր է: Ռիսկերի դասակարգման տակ պետք է հասկանալ ռիսկերի բազմազանության համակարգումը ըստ այնպիսի հատկանիշների և չափորոշիչների, որոնք թույլ են տալիս միավորել ռիսկերի ենթաբազմությունները:

Ներկայումս ռիսկի հետազոտությանը նվիրված գրեթե յուրաքանչյուր աշխատանքում կամ գրքում տրվում է ռիսկերի դասակարգման որևէ մոտեցում: Տնտեսագիտական գրականությունում այսօր արդեն կարելի է առանձնացնել ռիսկերի ավելի քան 220 տեսակներ և շուրջ 40 ըստ դրանց տարբեր հատկանիշների կարելի է դասակարգել ռիսկերը:




Գծանկար 3. Ռիսկերի տիեզերք

Գծանկար 3-ում ներկայացված է այդպես կոչված «ռիսկերի տիեզերքը», որը բնութագրում է այդ ոլորտի մեծ ընդգրկումը:

Այս աշխարհում ցանկացած օբյեկտ ենթարկվում է այլ օբեկտների և երևույթների ազդեցությանը, որոնք կոչվում են գործոններ: Այդպիսի ազդեցության արդյունքում է, որ կատարվում են մեր կողմից պաշտպանված օբյեկտի վիճակի փոփոխությունները: Սակայն գործոնները շատ են, դրանց ազդեցությունը կատարվում է ըստ բարդ օրենքների և դա երբեք հստակ ու ամբողջությամբ հնարավոր չէ իմանալ: Այսպես, մեզ շրջապատող աշխարհում առաջանում է անորոշություն:

Անորոշությունը վերաբերվում է նրան, որ մենք հստակ և ամբողջությամբ չենք կարող իմանալ՝ ինչպես այդ ազդեցությունը կանդրադառնա նրա վիճակի վրա, երբ և ինչպես կփոխվի այդ օբյեկտը:

Ապագայի հետ կապված մենք կարող ենք միայն ենթադրություններ անել, այդ իսկ պատճառով ռիսկը միշտ չափվում է հավանականության այն աստիճանով, որ ապագայում որևէ օբյեկտի վիճակը կվատթարանա մինչև հստակ մեծություն:

Ցանկացած տնտեսական գործունեություն միշտ ենթադրում է, որ կա եկամուտ ստանալու հնարավորություն, բայց կա նաև վնաս կրելու ռիսկ:

Գործարարության ամեն տեսակում, ամեն ձեռնարկության աշխատանքում առկա է այնպիսի կարևոր չափորոշիչների լրակազմ, որոնք բնութագրում են իրենց՝ նպատակետին հասնելու, զարգանալու, այս բարդ աշխարհում գոյատևելու ունակությունները: Դա եկամուտի չափերն են, կայունությունը, շուկայի չափաբաժինը, շրջանառության ծավալը, գործընկերների հուսալիությունը, անվտանգությունը և այլն:

Ռիսկերի կառավարման ենթակառուցվածքի ստեղծումն անհնար է առանց առկա ռիսկերի և դրանց ռացիոնալ ընդունման անհրաժեշտության գիտակցման: Ռիսկերի հանդեպ եղած վերաբերմունքի արտացոլումը **ռիսկերի կառավարման ընհանուր**

**կազմակերպչական քաղաքականություն է:** Ռիսկերի կառավարման քաղաքականությունը պետք է հստակ սահմանի գիտակցաբար ընդունվող ռիսկերի շրջանակը:

***Դասակարգում*** ասելով, հասկանում ենք գիտելիքների կամ մարդու գործունեության որևէ ոլորտի համաստորադաս հասկացությունների համակարգ, որը օգտագործվում է որպես այդ հասկացությունների միջև կապեր հաստատելու միջոց: Այսպիսով՝ *ռիսկերի դասակարգումը նշանակում է ռիսկերի ամբողջության համակարգում որևէ հատկանիշի կամ չափորոշչի հիման վրա, որոնք թույլ են տալիս միավորել ռիսկերի ենթաբազմությունը առավել ընդհանուր հասկացությունների մեջ:*

Մեծ մասամբ, ընտրված չափանիշները թույլ չեն տալիս ընդգրկել ռիսկերի ամբողջ բազմությունը, սակայն հիմնական ռիսկերի շարքը առկա է տնտեսագիտական գրականության մեջ: Սրանից ելնելով, այդ ընդհանուր հասկացությունների մեջ մտնող ռիսկերի ենթաբազմությունը դասակարգելու փորձեր բավականին հաճախ են կատարվում:

Այսօրվա դրությամբ ռիսկերի առավել ամբողջական և ունիվերսալ դասակարգումը մշակվել է *Coopers & Lybrand* աուդիտորների խմբի կողմից և շարադրված է «Ռիսկերի կառավարման համընդհանուր սկզբունքներ»-ում *(Generally Accepted Risk Principles — GARP): GARP-ը* առանձնացնում են ռիսկերի 6 խումբ. *շուկայական, վարկային, կենտրոնացման, իրացվելիության, գործառնական, գործարար իրադարձության:*

Ռիսկերի՝ այս գործոնների ազդեցությամբ հարուցված կորուստները կազմակերպության համար շատ զգալի կարող են լինել:

Ռիսկերի դասակարգումը անցկացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք պահանջներ, որոնք թույլ են տալիս ավելի մանրազնին դիտարկել յուրաքանչյուր ռիսկը՝ նրա մասնավորեցման, մանրամասն հետազոտման և գնահատման նպատակով:

Տվյալ պահանջները հետևյալն են՝

- Դասակարգվող ռիսկերում ռիսկերը չպետք է խմբավորված լինեն որոշակի խմբերի, որի պատճառով տեղի կունենա ռիսկի «ողողում», ինչի հետևանքով կարող է տեղի ունենալ տվյալ ռիսկի սխալ հետազոտություն և գնահատում:
- Յուրաքանչյուր ռիսկ պետք է սահմանվի և գնահատվի առանձին, քանի որ որքան ճշգրիտ է սահմանված ռիսկը, այնքան հեշտ է գնահատել այն:
- Ռիսկերի դասակարգումը չպետք է լինի խիստ, այսինքն գործունեություն իրականացնելիս՝ կախված կատարվող գործարքից, ռիսկերի ցանկը կարող է լրացվել:

Ամփոփելով ասվածը՝ պետք է նշել, որ ռիսկերի և դրանց դասակարգման խնդրով տնտեսագետները զբաղվում են վաղուց: Բոլոր ռիսկերը միանշանակ դասակարգելու ընդունված չափանիշներ չկան մի շարք պատճառներով. տնտեսվարող սուբյեկտների գործունեության յուրահատկություն, ռիսկերի տարբեր արտահայտում և դրանց տարբեր աղբյուրներ:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում բարձրագույն բիզնես-վարպետությունը:
2. Ո՞ր ռիսկերն են առավել վտանգավոր գործարարության համար:
3. Ի՞նչ է նշանակում ռիսկերի դասակարգումը:
4. Քա՞նի տեսակի ռիսկեր են առանձնացվում տնտեսագիտական գրականությունում:
5. Ի՞նչ է ենթադրում տնտեսական գործունեությունը:
6. Ո՞րն է ռիսկերի հանդեպ վերաբերմունքի արտացոլումը:
7. Ի՞նչ պահանջներ է անհրաժեշտ հաշվի առնել ռիսկերի դասակարգման ժամանակ:

## 3.2 Ռիսկերի դասակարգման մեթոդաբանությունը

Ռիսկերի դասակարգման ժամանակ անհրաժեշտ է հետևել այն սկզբունքին, ըստ որի ռիսկերի դասակարգումը պետք է մշակվի ամեն գործունեության համար առանձին՝ կախված գործունեության ծավալից և բարդության աստիճանից:

Ռիսկերի դասակարգման հիմնական սկզբունք է հետևյալ մեթոդաբանությունը, ըստ որի ռիսկերը դասակարգվում են.

1. **Կախված հնարավոր արդյունքից՝**
   - *ստատիկ (պարզ) կամ մաքուր*, որոնք ենթադրում են բացասական կամ զրոյական արդյունքի հնարավորություն և ներառում են բնական, բնապահպանական, քաղաքական, տրանսպորտային և կոմերցիոն ռիսկերի մի մասը (գույքային, արտադրական, առևտրային):

***Մաքուր ռիսկը*** դա անսպասելի կամ չծրագրված կորստի հնարավորություն է՝ առանց հնարավոր շահույթի այլընտրանքի: Ռիսկերի այս դասում տիրում է դրանց նվազեցման՝ ապահովագրման մեխանիզմի իշխանությունը: Մաքուր ռիսկը բնութագրվում է հետևյալ երեք չափորոշիչներով՝

1) *սպասված կամ անցանկալի հետևանքներով:* Հնարավոր է միայն վերջիններիս կորուստ կամ չիրագործում: Մարդը կարող է չմահանալ որոշակի ժամանակահատվածում: Տունը կարող է չհրդեհվել: Սակայն մարդն, այնուամենայնիվ, մահկանացու է և կարող է հանկարծակի մահանալ: Տունը կարող է հրդեհվել ամենատարբեր պատճառներով: Եվ երկու դեպքում էլ դրանք սպասվելիք անցանկալի դեպքեր են:

2) *օբյեկտիվ հավանականություն:* Մաքուր ռիսկը առկա է միայն այն դեպքում, երբ իրադարձությունների անցանկալի զարգացումը իրական աշխարհի պարտադիր հատկությունն է: Եվ ամենևին պարտադիր չէ, որպեսզի ռիսկային գոտում գտնվող օբյեկտը (մարդը կամ կազմակերպությունը) տեղյակ լինի այդ ռիսկի գոյության մասին: Վերջինիս դեպքում հնարավոր է երկու իրավիճակ: Առաջինը՝ վտանգները գոյություն ունեն, սակայն նախապես չեն ձևակերպվում (օրինակ՝ եթե ասուպն ընկնի որևէ տան վրա): Երկրորդը՝ վտանգ չկա, սակայն մարդը հավատում է այդ վտանգի գոյությանը (օրինակ՝ ինչ-որ «գիտակ» կանխագուշակում է աշխարհի վերջը 2020թ. կամ արևի խավարման ժամանակ):
3) *միշտ չէ, որ չափելի է:* Մաքուր ռիսկի աստիճանը կարող է չափման ենթակա չլինել: Սակայն, թեև ոչ-ոք չի կարող նախօրոք հաշվարկել կորստի հավանականությունը, դա չի նշանակում ռիսկի բացակայությունը: Ռիսկերի մեծ մասը, որոնք այժմ փոխհատուցվում են ստանդարտ ապահովագրական վկայականներով, ժամանակին չէին կարողանում հաշվարկել:
    - *<u>սպեկուլյատիվ (շահադիտական)</u>*, որոնք արտահայտվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքի ստացման հնարավորությամբ՝ կապված շուկայի կոնյուկտուրայի, տարադրամի փոխարժեքի տատանման հետ:

*Սպեկուլյատիվ ռիսկը*, ըստ սահմանման, ոչ միայն կորուստ կրելու, այլ նաև դեպքերի զարգացման տարբերակներից որոշակի օգուտ քաղելու հավանականության իրավիճակն է: Գործարարության մեջ ռիսկերի այս դասը հանդիպում է շատ հաճախ: Եվ գործարարի դերը տնտեսության մեջ, թերևս, այն է, որ նա իր վրա վերցնի այս տեսակի ռիսկը: Կա երկու խնդիր, որ ձգտում են լուծել գործարարները՝ պահպանել որոշակի, արդեն

նվաճած բարեկեցությունը և/կամ կայուն կերպով բազմապատկել այդ բարեկեցությունը: Ոչ' այս, ոչ' այն նպատակին հնարավոր չէ հասնել առանց կորստի ռիսկի, այսինքն՝ ներկա բարեկեցության աստիճանի նվազման: Դա և' լավ է, և' վատ: Դա և' կորցնելու, և' ձեռք բերելու հավանականությունն է: Ռիսկի զրոյական աստիճան չի լինում, նույնիսկ ոչինչ չանելով՝ մենք ենթարկվում ենք ռիսկի: Գործարարը պետք է սովորի ռիսկը իր վրա վերցնել: Գարծարար ռիսկը կարելի է և պետք է գիտակցաբար կառավարել:

**2. Կախված առաջացման պատճառից՝**

- *<u>բնական,</u>* որոնք կախված չեն մարդու գործունեությունից,
- *<u>տեխնածին (կամ մարդածին)</u>*, որոնք առաջանում են մարդու տնտեսական գործունեության արդյունքում (վթար),
- *<u>խառը ռիսկեր:</u>* Դրանք բնական ռիսկերն են, որոնք առաջանում են մարդու տնտեսական գործունեության արդյունքում (անտառային հրդեհներ, որոնք առաջանում են երբեմնի չորացված ճահիճների տորֆի ինքնաայրման դեպքում):

**3. Ըստ գործունեության ոլորտի՝**

- *<u>արդյունաբերական և տեխնիկական ռիսկեր,</u>* որտեղ արդյունաբերական ռիսկերը ձեռնարկության կամ երրորդ անձանց վնաս հասցնելու վտանգն է՝ արտադրական գործընթացի նորմալ ընթացքի խաթարման հետևանքով, որն արտահայտվում է մեքենաների և սարքավորումների անսարքությամբ, վթարային իրավիճակների ստեղծմամբ, օրինակ՝ գազի արտահոսքից: Իսկ *<u>տեխնիկական ռիսկեր</u>* ասելով (դրանց խմբին են դասում երբեմն նաև օբյեկտների շինարարության կամ շրջանառու ֆոնդերի ձեռք բերման

հետ կապված *նախագծային ռիսկերը*)՝ հասկանում ենք այն ռիսկերը, որոնք ուղեկցում են նոր օբյեկտների կառուցապատումը և դրանց հետագա շահագործումը, որն իր մեջ ներառում է.

- *շինարարամոնտաժային*՝ շինանյութի կորստի կամ վնասվածք տարերային աղետների հետևանքով, օբյեկտի գործառնության խախտում նախագծային և մոնտաժային սխալների պատճառով, օբյեկտի շինարարությամբ զբաղված անձնակազմին ֆիզիկական վնաս հասցնելը,
- *շահագործական*՝ կապալառուի երաշխիքային պարտավորությունների խախտում նշված ժամանակահատվածում օբյեկտի անխափան շահագործման առումով, որը երբեմն անվանում են նաև հետգործարկման երաշխիքային պարտավորությունների չկատարման ռիսկ:

Ռիսկերի այս դասին են պատկանում նաև.

- ✓ *նյութատեխնիկական ռիսկերը,* որոնք պայմանավորված են ձեռնարկության նյութատեխնիկական բազայի մակարդակով,
- ✓ *տնտեսական ռիսկերը,* որպես քաղաքացիական պատասխանատվություն կրելու հավանականություն՝ շրջակա միջավայրին վնաս հասցնելու, ինչպես նաև երրորդ անձանց կյանքին և առողջությանը վնաս հասցնելու պատճառով արտադրական օբյեկտների շինարարության և շահագործման մոտակա և հեռակա արդյունքների միջոցով,
- ✓ *տրանսպորտային ռիսկերը*, որոնք առաջանում են տարբեր տեսակի փոխադրումների ժամանակ և բաժանվում են ծովային, ցամաքային

(երկաթուղային, ավտոտրանսպորտային, բեռնարկղային) և օդային ռիսկերի,

- ✓ *<u>ապահովագրական ռիսկերը</u>*, որոնք, կախված վտանգի աղբյուրից, լինում են ռիսկեր՝ կապված բնության տարերային ուժերի հետ, և ռիսկեր, կապված մարդու նպատակաուղղված գործողությունների հետ (ավտովթար, ենթակապալառուների պարտականությունների չկատարում):

- *<u>բանկային ռիսկեր</u>*, որտեղ հիմնականը *<u>վարկային ռիսկերն</u>* են՝ կապված վարկային գումարը և դրա տոկոսները ընդհանրապես չվերադարձնելու հետ և, մասնավորապես՝ նախանշված ժամկետում: Վարկային ռիսկի տարատեսակ է *<u>տոկոսային ռիսկը</u>*, որն առաջանում է, երբ վարկը տրվում է «լողացող», այլ ոչ թե ֆիքսված տոկոսադրույքով: Տոկոսային ռիսկերի դասին են պատկանում առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային հաստատությունների, լիզինգային ընկերությունների վնասների կրման ռիսկերը ներգրավված կապիտալի համար վճարվող տոկոսադրույքի, տրամադրված վարկերի դրույքների բարձրացման հետևանքով: Էմիտենտ-բանկը, որը թողարկում է ֆիքսված տոկոսով միջնաժամկետ և երկարաժամկետ արժեթղթեր միջնաժամկետ տոկոսի ընթացիկ անկման դեպքում, ֆիքսվածի համեմատ, տոկոսային ռիսկ կրում է, քանի որ այն կարող էր շուկայից առավել ցածր տոկոսով միջոցներ ներգրավել: Ռիսկի այս տեսակը արժեզրկման պայմաններում տոկոսադրույքների արագ աճի դեպքում կարևոր է նաև կարճաժամկետ արժեթղթերի համար: Տոկոսադրույքի շուկայական դրույքի աճը հանգեցնում է արժեթղթերի, հատկապես, ֆիքսված տոկոսով բաժնետոմսերի փոխարժեքի անկման: Տոկոսի

բարձրացման պարագայում կարող է սկսվել ավելի ցածր տոկոսով թողարկված և, ըստ թողարկման պայմանների, էմիտենտի կողմից վաղաժամկետ ետ ընդունվող արժեթղթերի զանգվածային անկում: Վարկային ռիսկերին են պատկանում նաև պարտքային արժեթղթեր թողարկած էմիտենտի ռիսկերը, եթե պարզվի, որ այն ֆինանսապես ի վիճակի չէ վճարել դրանց շահաբաժինները կամ պարտքի հիմնական գումարը:

- Ֆինանսական ռիսկերը պայմանավորված են դրամական միջոցների կորստի հավանականությամբ և, որպես օրենք, ավելանում են ժամանակին համընթաց: Դրանք բաժանվում են հետևյալ տեսակների.
  - ✓ *դրամի գնողունակության հետ կապված ռիսկեր*, որոնք ներառում են *արժեզրկման ռիսկերը*, *ինֆլյացիոն ռիսկերը* (գների մակարդակի անկում, ձեռներեցության տնտեսական պայմանների վատթարացում և եկամուտների անկում), *արժույթային ռիսկեր* (արժույթային կորուստների վտանգ արժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով), և *իրացվելիության ռիսկեր* (կապված են արժեթղթերի կամ ապրանքների իրացման ժամանակ կորստի հավանականության հետ՝ նրանց սպառողական արժեքի գնահատման փոփոխության պատճառով),
  - ✓ *ներդրումային ռիսկեր,* որոնք կապված են կապիտալի ներդրման հետ, որ ներառում է՝ *բացթողնված շահույթի ռիսկերը*, այսինքն, չկայացած միջոցառման պատճառով անուղղակի ֆինանսական վնաս (չստացված եկամուտ),
  - ✓ պորտֆելային ներդրումներից, վարկերի, ավանդների և տոկոսների ներգրավման արդյունքում *եկամտաբերության ներգրավման ռիսկ,* որը ներառում է տոկոսային և վարկային ռիսկերը: Ներդրողը տոկոսային ռիսկ է կրում

ֆիքսածի համեմատ միջնաժամկետ տոկոսի ընթացիկ աճի դեպքում ֆիքսած տոկոսով միջնաժամկետ և երկարաժամկետ արժեթղթերի մեջ միջոցներ ներդնելով, այսինքն՝ նա կարող էր նշված պայմաններով միջոցներ ներդնելու դիմաց եկամուտների աճ ստանալ,

- ✓ *ուղղակի ֆինանսական կորուստների ռիսկ*, որը ներառում է *բորսայական ռիսկը*՝ բորսաներում իրական ապրանքի համար, ըստ գործարքի, չվճարման, միջնորդ գործակալներին միջնորդավճար-կուրտաժի* չվճարման, ֆյուչերսային գործառնությունների հետ կապված ռիսկեր.
- ✓ սելեկտիվ ռիսկ (կապիտալի ներդրման սխալ ընտրության, ներդրումային պորտֆելի ձևավորման ժամանակ ներդրումների համար արժեթղթերի տեսակի սխալ ընտրության ռիսկ).
- ✓ *անանկության ռիսկ*՝ սեփական կապիտալի ամբողջական կորստի և կապիտալի ներդրման սխալ ընտրության պատճառով, ըստ պայամանավորվածության, վճարունակ չլինելու վտանգը:
- *Առևտրային ռիսկերն* իրենցից ներկայացնում են ֆինանսա-տնտեսական և առևտրային գործունեության ընթացքում կորուստների վտանգ:

Ըստ կառուցվածքային հատակնիշների նրանք լինում են՝

- ✓ *գույքային*, որոնք կապված են ձեռներեցի գույքի կորստի հավանականության հետ՝ գողության, դիվերսիայի, անփութության, տեխնիկական և տեխնոլոգիական կարգապահության խախտման պատճառով.

*COURTAGE (ֆրանս. միջնորդ-գործակալի կոմիսիոն պարգևատրում)

- ✓ *արտադրողական* , որոնք կապված են արտադրության կանգնեցման հետևանքով կրած վնասների, հիմնական և շրջանառու ֆոնդերի խաթարումների հետ, ինչպես նաև ռիսկեր, կապված արտադրության մեջ նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման հետ.
- ✓ *առևտրային ռիսկեր,* որոնք առաջանում են ինչպես վաճառողի, այնպես էլ գնորդի կողմից պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում:

**4. Ըստ առաջացման աղբյուրի** ռիսկերը լինում են՝

- *արտաքին ռիսկեր*, որոնք անմիջապես կապված չեն ձեռնարկության գործունեության հետ (նրա գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրության չկանխատեսված փոփոխություն, քաղաքական իրավիճակի փոփոխություն, նոր մրցակիցների ի հայտ գալ, շուկայի կոնյունկտուրայի փոփոխություն և այլն).
- *ներքին ռիսկեր*, որոնք առաջանում են ոչ արդյունավետ կառավարման և սխալ մարքեթինգային (շուկայավարման) և կադրային քաղաքականության դեպքում: Դրանց թվին են պատկանում նաև *արհեստավարժության ռիսկերը* , որոնք կապված են աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների կատարման հետ:

**5. Ըստ որոշումների կայացման հարթության՝**

- *մակրոտնտեսական ռիսկեր* . պետական մակարդակ,
- *տեղային ռիսկեր.* առանձին ընկերությունների մակարդակի վրա:

**6. Ըստ ազդեցության շրջանի՝**

- *կարճատև ռիսկեր,* որոնք սպառնում են ձեռնարկին որոշակի ժամանակահատվածի ընթացքում (տեղափոխման ժամանակ

տրանսպորտային ռիսկը, ըստ պայմանագրի չվճարելու ռիսկը),

- *<u>կայուն ռիսկեր,</u>* որոնք անընդհատ սպառնում են ձեռնարկատիրական գործունեությանը տվյալ տարածաշրջանում կամ ոլորտում:

**7.Ըստ թույլատրելիության աստիճանի՝**

- *<u>թույլատրելի ռիսկ,</u>* դա որոշման ռիսկն է, որի չիրականացման արդյունքում ձեռնարկությանը սպառնում է եկամտի կորուստ: այս գոտու սահմաններում ձեռնարկատիրական գործունեությունը պահպանում է իր տնտեսական ամբողջականությունը, այսինքն կորուստները առկա են, սակայն դրանք չեն գերազանցում եկամտի սպասվող չափը.
- *<u>կրիտիկական ռիսկ,</u>* որի դեպքում ձեռնարկությանը սպառնում է հասույթի կորուստ, այլ կերպ ասած, կրիտիկական ռիսկի գոտին բնութագրվում է կորուստների սպառնալիքով, որոնք նախօրոք գերազանցում են սպասված եկամուտը և ծայրահեղ դեպքում կարող են հանգեցնել ձեռնարկության կողմից նախագծի մեջ ներդրված բոլոր միջոցների կորստի.

  Ընդ որում, հնարավոր է ռիսկի երկու աստիճան՝

  - ✓ *<u>առաջին աստիճանի</u>*՝ զրոյական եկամուտի ստացման սպառնալիք, բայց նաև արտադրական նյութական ծախսերի փոխհատուցում.
  - ✓ *<u>երկրորդ աստիճանի</u>*՝ ամբողջական չափով կորուստների սպառնալիք, երբ ստիպված ես փոխհատուցել ծախսերը քո հաշվին:
- *<u>աղետային ռիսկ.</u>* ռիսկ, որի դեպքում առաջանում է ձեռնարկության անվճարունակություն. կորուստները կարող են հասնել ձեռնարկության գույքային կարողությանը հավասար մեծության: Այս խմբին է

պատկանում նաև ցանկացած ռիսկ՝ կապված մարդկանց կյանքի համար ուղղակի վտանգի և էկոլոգիական (բնապահպանական) աղետների առաջացման հետ:

**8. Ըստ օրինաչափականության աստիճանի՝**

- *<u>օրինաչափական</u>* (արդարացված),
- *<u>ոչ օրինաչափական</u>* (չարդարացված):

**9. Ըստ առաջացման հատվածի՝**

- *<u>Քաղաքական ռիսկը</u>* կայանում է եկամուտը ամբողջությամբ չստանալու, սոցիալ-քաղաքական իրադրության փոփոխման հետևանքով կրած որոշակի կորուստների հնարավորության մեջ, ինչը կարող է արտահայտվել հետևյալ իրադարձությունների տեսքով.
  - ✓ ազգայնականացում և էքսպրոպրիացիա (սեփականազրկություն) առանց համարժեք փոխհատուցման,
  - ✓ ձեռներեցության ոլորտում օրենսդրության փոփոխություններ,
  - ✓ արբիտրաժային (միջնորդական) իրավունքի փոփոխություններ,
  - ✓ ռազմական գործողություններ և զանգվածային անկարգություններ,
  - ✓ արժույթային սահմանափակումներ,
  - ✓ ձեռնարկությունների ազգայնականացում և ապրանքների բռնագրավում,
  - ✓ հարկային օրենսդրության փոփոխություններ:
- *<u>Տնտեսական ռիսկն</u>* առաջանում է տնտեսական ոլորտի աննպաստ փոփոխությունների արդյունքում, օրինակ, շուկայի կոնյունկտուրայի կառավարման կազմակերպչական կառուցվածքի, նյութերի գների փոփոխման հետևանքով. սղաճի աճը, որն արժեզրկում է


ֆիրմայի ամորտիզացիոն ֆոնդերի պաշարները, աղավաղում է բոլոր տնտեսական հաշվարկները, զարգացման հեռանկարները դարձնում է անորոշ, ուժեղացնում է ներդրումային ռիսկերը:

**10. Ըստ ընդգրկման ծավալի՝**

- *Երկրային ռիսկ*, որի հայեցակարգն առաջացել է 1960-70թթ. այլ երկրների տնտեսության մեջ կապիտալի ներդրման հանդեպ ներդրողների ակտիվ հետաքրքրության արդյունքում, որտեղ հնարավոր էր ստանալ ավելի բարձր եկամուտ: Երկրային ռիսկի հասկացությունը սովորաբար շաղկապվում է «համաշխարհային պորտֆել» հայեցակարգի ենթատեքստի հետ, որի համաձայն՝ տարբեր երկրների կապիտալի ներդրման բաժինները պետք է բաշխվեն հակառակ համեմատական նրանց երկրային ռիսկին: Երկրային ռիսկ ասելով հասկանում ենք երկրում քաղաքական և տնտեսական իրադրության անկայունություն, որը բացասաբար է ազդում ձեռնարկատիրական գործունեության արդյունքների վրա:
- *Տարածաշրջանային ռիսկ,* որը նշանակում է որոշակի տարածաշրջանում քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմաններ, երբ աճում է կորուստների հավանականությունը ռազմական և ահաբեկչական գործողությունների, ձեռնարկատիրական գործունեության մեջ՝ կառավարման տարածաշրջանային մարմինների միջամտության պատճառով:
- *Միջազգային ռիսկը* կարևոր է հաշվի առնել այն ձեռներեցներին, որոնք ելք ունեն դեպի միջազգային շուկա, մասնակցում են միջազգային մրցութային աճուրդների կամ ներգրավում են միջազգային ներդրողներ: Վերջին տարիներին աշխարհում տեղի ունեցող տարբեր երկրների տնտեսությունների գլոբալիզացիայի պայմաններում

ռիսկերը, որոնք առաջացել են առանձին վերցված երկրում կամ տարածաշրջանում, կարող են հանգեցնել գլոբալ ճգնաժամերի, ինչի մասին վկայում է 2007 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամը:

Ընդհանրացված տեսքով ռիսկերի դասակարգումը ներկայացված է հետևյալ սխեմատիկ տեսքով.




Գծանկար 4. Ռիսկերի դասակարգում

*Ստուգողական հարցեր*

1. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված հնարավոր արդյունքից և ո՞րն է դրանց տարբերությունը:
2. Ինչպիսի՞ ռիսկ չի լինում:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում մաքուր ռիսկը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում սպեկուլյատիվ ռիսկը:
5. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված առաջացման պատճառից:
6. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված գործունեության ոլորտից:
7. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված առաջացման աղբյուրից:
8. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված որոշման կայացման հարթությունից:
9. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված ազդեցության ժամանակաշրջանից:
10. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված թույլատրելության մակարդակից:
11. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված օրինաչափականության աստիճանից:
12. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված առաջացման հատվածից:
13. Ինչպե՞ս են դասակարգվում ռիսկերը՝ կախված ընդգրկման ծավալից:

*Երբ մարդն իր վրա է վերցնում չուրջ ռիսկ,*
*նրան անհրաժեշտ է ներքին կարգապահություն*
*Ջորջ Սորոս*

## 3.3 Արտաքին և ներքին ռիսկեր

Դիտարկելով ռիսկը յուրաքանչյուր կազմակերպության գործունեության մեջ, հարկավոր է առաջնորդվել ռիսկի դասակարգմամբ՝ ներքինի և արտաքինի, և միևնույն ժամանակ պատկերացում ունենալ ռիսկի օբյեկտների մասին:

### Ռիսկի օբյեկտները

Ռիսկի օբյեկտները այն ամենն է, ինչ ենթարկված է արտաքին և ներքին գործոնների ազդեցությանը: Դա այն ամենն է, ինչի փոփոխությունը հանգեցնում է ամբողջ տնտեսական գործունեության վիճակի վատթարացմանը, կորուստների և վնասների:

Ռիսկի օբյեկտները դա այն է, ինչ ենթակա է գործոնների ազդեցությունից ակտիվ պաշտպանության: Դրանք և' կոնկրետ նյութական օբյեկտներ են, և' գործունեության առանձին տեսակները, և' կարևոր արժեքները:

Ռիսկերի դասակարգման ժամանակ հարկավոր է առանձնացնել՝ պաշտպանության ենթակա ռիսկի օբյեկտների հետևյալ խմբերը.

1. Գույք (հող, շենքեր և կառույցներ, սարքավորումներ, տրանսպորտ, իրավունքներ և արտոնություններ, առևտրային ապրանքանիշեր և բրենդեր, նոու-հաու, փորձ, գուդվիլ, մտավոր սեփականություն):
2. Եկամուտներ (գործարար հարաբերություններ, հասույթ, վարձակալություն, վճարման հանձնարարականներ):

3. Ազատում պատասխանատվությունից (արտադրանքի վտանգ, արտադրության վտանգ, իրավախախտումների վտանգ):
4. Առանցքային անձնակազմ (կյանք և առողջություն, գործարար հեղինակություն, կապեր, անձնական եկամուտներ, անձնական ազատություն, բացառիկ անձնային հատկանիշներ):

### Արտաքին ռիսկ

Ինչպես նշեցինք, արտաքին ռիսկը անմիջապես կախված չէ կազմակերպության գործունեության հետ: Այն պայմանավորված է երկրի քաղաքական կայունության մակարդակով, պետական համակարգերի ֆինանսա-տնտեսական գործունեությամբ, սոցիալական ոլորտի վիճակով և այլ գործոններով:

Ռիսկի արտաքին գործոնները այնպիսի իրադարձություններ, երևույթներ, մարդիկ և կազմակերպություններ են, որոնք դրսից կարող են ազդել տնտեսական գործունեության վրա և հնարավոր կորուստների պատճառ են հանդիսանում:

Այդպիսի արտաքին գործոնները բազմաթիվ են, նրանք փոխկապված և փոխկախված են, նրանց ազդեցությունը տնտեսական գործունեության վրա ենթարկված է բարդ օրենքների:

Հնարավոր չէ ունենալ տնտեսական գործունեության վրա արտաքին գործոնների ազդեցության ամբողջական և ճշգրիտ պատկեր:


Ռիսկի արտաքին գործոնները անհրաժեշտ է դասակարգել ըստ հետևյալ խմբերի.

1. Մրցակցության գործոններ,
2. Ռեգիոնալ տնտեսական իրավիճակի գործոններ,
3. Ազգային տնտեսական իրավիճակի գործոններ,
4. Տեխնածին իրավիճակների գործոններ,
5. Բնական աղետների գործոններ,

6. Սոցիալական իրավիճակների գործոններ,
7. Քաղաքական իրավիճակների գործոններ,
8. Ֆինանսական շուկաներում իրավիճակի գործոններ,
9. Բիզնեսի ոլորտում իրավական իրավիճակի գործոններ,
10. Քրեական բնույթի գործոններ:

Արտաքին ռիսկի մի տեսակ է երկրային ռիսկը: Երկրային ռիսկերը ազդեցություն են գործում սուբյեկտի վրա, ընդ որում, կախված աշխարհագրական և տարածքային դիրքից այդ ներգործությունը կարող է իրականացվել ինչպես սուբյեկտի երկրում քաղաքական որոշումների և երկրի իրադարձությունների հետևանքով, այնպես էլ միջազգային իրադրության պատճառով:

Երկրային ռիսկի ուսումնասիրության շրջանակներում տարբերակում են քաղաքական (որը իր հերթին բաժանվում է մակրոռիսկի և միկրոռիսկի) և առևտրային ռիսկերը: Վերջինս իր հերթին, կախված իր ազդեցության մակարդակից, բաժանվում է. 1) պետական մակարդակով՝ տրանսֆերտային ռիսկի, 2) սուբյեկտի մակարդակով՝ անվճարունակության ռիսկի:




Գծանկար 5. Երկրային ռիսկի դասակարգում

Եթե «ռիսկի» հասկացությունը աշխարհի պես հին է, ապա երկրային ռիսկի ենթատեսակ՝ «քաղաքական ռիսկի»

հասկացությունը վերջերս է մտել տնտեսական գործածության մեջ: Ռիսկի տվյալ տարրատեսակը առաջացել է անցյալ դարի կեսերին: Մասնավորապես, 1950-ական թթ.-ի վերջին Կուբայում տեղի ունեցած իրադարձությունների պատճառով ծագել է քաղաքական ռիսկերի կանխորոշման և գնահատման անհրաժեշտությունը: Արևմտյան ընկերություններում ստեղծվել էին հատուկ կառույցներ, որոնք սկսել էին զբաղվել քաղաքական ռիսկերի մակարդակի գնահատմամբ, որոնց ազդեցության տակ է գտնվում այլ երկրներում ընկերությունների գործունեությունը:

Միևնույն ժամանակ քաղաքական ռիսկի գնահատման մեթոդների բացակայությունը զգալի բարդություններ էր ստեղծում այն գնահատելու համար: 1979թ.-ի Իրանի իսլամական հեղափոխությունից հետո կասկածի տակ էին դրվել քաղաքական կանխորոշումների վերլուծության մեթոդները և ընդհանուր առմամբ վերանայվել և ստեղծվել էին քաղաքական ռիսկի վերլուծության նոր մեթոդները:

Ժամանակակից պայմաններում արևմուտքում քաղաքական ռիսկի հիմնախնդրին հսկայական ուշադրություն է դարձվում:

Քաղաքական ռիսկի դասակարգումը մակրո- և միկրո- ռիսկերի անհրաժեշտ է այլ գործոնների վրա ազդեցության պարզաբանման համար: Այդ առումով քաղաքական ռիսկը դասակարգվում է հետևյալ կերպ:

Քաղաքական ռիսկի դասակարգում

| | Արտաօրինական ռիսկ | Օրինական-կառավարչական ռիսկ |
|---|---|---|
| Մակրոռիսկ | Հեղափոխություն | Օրենսդրության փոփոխություն |
| Միկրոռիսկ | Ահաբեկչություն | Առևտրային կարգավորում |

Արտաօրինական ռիսկը նշանակում է ցանկացած իրադարձություն, որի աղբյուրը գտնվում է երկրի գոյություն ունեցող լեգիտիմ կառույցներից դուրս՝ ահաբեկչություն, սաբոտաժ, զինված հեղաշրջում, հեղափոխություն և այլն:

Օրինական-կառավարչական ռիսկը հանդիսանում է ընթացիկ քաղաքական գործընթացի ուղակի արդյունքը և ներառում է այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են առևտրի, դրամավարկային քաղաքականության, համատեղ ձեռնարկությունների և այլն վերաբերյալ օրենսդրության փոփոխությունները:

Միևնույն ժամանակ՝ համաձայն «Տնտեսագետ» հետազոտական խմբի կողմից անցկացված ուսումնասիրությունների, ոչ ահաբեկչությունը, ոչ հեղափոխական փոփոխությունները, չնայած դրանք չի կարելի անտեսել, չեն ներկայացնում այնչափ ակնհայտ սպառնալիք սուբյեկտի համար, որքան բյուրոկրատիան և կոռուպցիան:

Առ այսօր համաշխարհային պրակտիկայում քաղաքական ռիսկերի վերլուծության համար օգտագործվում են որակական և քանակական գնահատումը: Ռիսկի տվյալ տեսակի նկատմամբ այս տարբերվող մոտեցումները վկայում են այդ խնդրի բարդության մասին: Այդ մոտեցումներից յուրաքանչյուրն ունի որոշակի առավելություններ ու թերություններ:

Քաղաքական ռիսկերի որակական գնահատումը թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր կոնկրետ իրադրության առանձնահատկությունը: Սակայն տվյալ մեթոդիկայի հիմքում, քաղաքական ռիսկի մեծության գնահատման ժամանակ, ընկած են փորձագետների եզրակացությունները:

Միևնույն ժամանակ գրեթե ցանկացած փորձագիտական գնահատական կարող է ունենալ բարձր սխալմունք և շատ հաճախ չունենալ գործնական-կիրառական նշանակություն, ուստի որակական վերլուծության հիման վրա քաղաքական ռիսկերին վերապահվում են «քիչ հավանական», «բացառված չէ»,

«միանգամայն հնարավոր է», «խիստ հավանական է» և այլ կարգերը:

Սակայն տվյալ գնահատականները այնքան էլ արժանահավատ չեն և քաղաքական ռիսկի գնահատման ժամանակ վերլուծության արդյունքների հուսալիությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է օգտագործել քանակական մոտեցումը, որի օգնությամբ կազմվում է ռեյթինգային աղյուսակը և համեմատվում են երկրների քաղաքական ռիսկի աստիճանները:

Միևնույն ժամանակ, քաղաքական ռիսկերի քանակական գնահատականը ծայրաստիճան բարդ է: Իրոք, շատ բարդ է որոշել արտակարգ իրադրություն մտցնելու կամ այս կամ այն նորմատիվ ակտի ընդունման հավանականությունը:

Սակայն, անկախ քաղաքական ռիսկերի ճշգրիտ չափման անհնարինությունից, գործարք իրականացնելու նախագծման ժամանակ սուբյեկտը պետք է կանխատեսի, թե օրենսդրության կամ պետության գործողության ինչպիսի փոփոխությունները կարող են բացասաբար անդրադառնալ գործարքի վրա, ուստի քաղաքական ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է օգտագործել «հիբրիդային մեթոդը», այսինքն՝ որակական և քանակական մոտեցումների զուգակցումը, որը թույլ կտա ոչ միայն պարզաբանել ռիսկային քաղաքական իրադարձության հավանականությունը, այլ նաև տարբեր երկրները համեմատել ըստ դրանցում ռիսկի աստիճանի:

Ամփոփելով, նշենք, որ վերևում ասվածը մեկ անգամ ևս պայմանավորում է այն փաստը, որ տնտեսական գործունեություն իրականացնելիս սուբյեկտը պետք է բավականաչափ ուշադրություն դարձնի քաղաքական ռիսկերին և պատշաճ կերպով հաշվի առնի գործոնների հետևյալ երեք խմբերը՝

- քաղաքական ռիսկի գործոններ, այսինքն՝ քաղաքական բնույթի առավել էական երևույթների ամբողջություն, որը դրական կամ բացասական ազդեցություն կարող է թողնել տնտեսական գործունեության իրականացման վրա,

- այդ գործոնների առաջացման հավանականություն, ինչպես նաև քաղաքական ռիսկի, քաղաքական իրադրության բարենպաստ կամ անբարենպաստ փոփոխության հնարավորությունը,
- իրականացվող գործունեության վրա քաղաքական ռիսկի գործոնների ազդեցության լրջության աստիճանը:

Ելնելով նրանից, որ քաղաքական ռիսկը բարդ, բազմագործոնային համակարգ է, որը բաղկացած է զանազան փոխկապակցված տարրերից, այն կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական բաղադրիչների, որոնք կապված են.

- գործադիր և օրենսդիր մարմինների կողմից երկրում (տարածաշրջանում) հասարակական-քաղաքական և տնտեսական իրադրությունը կտրուկ փոփոխող անսպասելի օրենքներից, հրամաններից, կարգադրություններից,
- գործադուլներից, հացադուլներից,
- քաղաքական ռեկետից, սպառնալիքներից, քաղաքական գործիչների առևանգումներից կամ սպանություններից,
- կառավորության կամ նրանում խոշոր հաստիքային փոփոխություններից,
- ընդդիմության հակագործություններից,
- կոռուպցիայից,
- հանցագործություններից,
- գործազրկությունից,
- քաղաքական որոշումներ կայացնող անձանց սխալներից,
- հարկային օրենսդրության մեջ փոփոխություններից,
- հասարակության, տեղական իշխանության մարմինների հնարավոր բացասական վերաբերմունքից,
- հեղափոխությունից և այլն:

Քաղաքական ռիսկի ուսումնասիրությունը սոցիալ–քաղաքական, տնտեսական և այլ տեսակի տեղեկատվության

հավաքագրման համալիր ընթացակարգ է, ինչպես նաև՝ վերջինիս վերլուծությունը և գնահատումը:

Քաղաքական ռիսկի ուսումնասիրության կառուցվածքը ներառում է չորս փուլ:

1. ուսումնասիրության ոլորտի համալիր վերլուծություն,
2. քաղաքական ռիսկի գործոնների համակարգային գնահատում,
3. քաղաքական ռիսկի նախագուշակում,
4. քաղաքական ռիսկի կառավարում:

Ուսումնասիրման ոլորտի համալիր վերլուծությունը ներառում է գործոնների ընտրություն՝ կախված նպատակակետից, գործոնների համակարգի ստեղծում: Քաղաքական ռիսկի գործոնների համակարգային գնահատման փուլում որոշվում է գործոնի կարևորության աստիճանը, նրա «արժեքը» մոդելի կառուցվածքում, մուտք գործող տեղեկատվության հուսալիությունը:

Քաղաքական ռիսկի նախագուշակումը ներառում է իրավիճակի զարգացման և նրա հետևանքի առավել հավանական սցենարների մշակում:

Քաղաքական ռիսկի կառավարման փուլում ծրագրվում և իրականացվում են բացասական միտումների դեմ կանխիչ միջոցները:

Քաղաքական ռիսկերի վերլուծության ժամանակ առավել արդյունավետ կիրառվում են փորձագիտական գնահատականների վրա հիմնված մոդելները:

Համապատասխան պարբերականներում փորձագիտական տեղեկատվություն ներկայացնող հայտնի մակրոկողմնորոշում ունեցող դասին են պատկանում հետևյալ մոդելները.

**BERI մոդելը (Business Environment Risk Index)**, որը ներկայացնում է 50 երկրների ռիսկի եռամսյակային ինդեքսները՝ գնահատված 15 չափորոշիչներով:

**WPRF մոդելը (World Political Risk Forecasting),** որը պատկանում է Frost & Sullivan կազմակերպությանը,

ներկայացնում է 80 երկրների քաղաքական և տնտեսական ռիսկի մասին ամենամսյա հաշվետվություն 18 ամսվա համար:

**II մոդելը (International Investor),** որը հրապարակում է ավելի քան 116 երկրների վարկային հնարավորությունների ցուցանիշները:

**ICRG մոդելը (International Country Risk Guide)**, որը ներկայացնում է ավելի քան 100 երկրների քաղաքական և տնտեսական ռիսկի ամենամսյա ցուցանիշը:

**Control Risks մոդելը**, որն առջարկում է 70 երկրներում ռիսկի գնահատման ինդեքսները՝ եռամսյա կտրվածքով:

**Oxford Analytical Data** մոդելը՝ 50 երկրներում ռիսկի ամենօրյա գնահատում՝ "իրադարձություն-մեկնաբանություններ" մոդելի հիման վրա:

Ինչպես նշված էր վերևում, երկրային ռիսկի մեկ այլ տարատեսակ են հանդիսանում տրանսֆերտային ռիսկը և անվճարունակության ռիսկը: Սակայն անվճարունակության ռիսկը տնտեսական գրականության մեջ շատ հաճախ սահմանում են որպես դեբիտորական ռիսկի տարատեսակ:

Միևնույն ժամանակ տրանսֆերտային ռիսկին և անվճարունակության ռիսկին տրված սահմանումներում հանդես են գալիս երկուսին էլ բնորոշ գծերը, այսինքն՝ չվճարման կամ չհատուցման ռիսկը:

Անվճարունակության ռիսկը ենթադրում է, որ տնտեսական գործունեության ժամանակ գնորդը տարբեր պատճառներով չի կարող կամ չի ցանկանում կատարել իր վճարման պարտավորությունները:

Ինչպես անվճարունակության, այնպես և տրանսֆերտային ռիսկի դեպքում քանակական գնահատականի մեթոդը չի կարող կիրառվել, քանի որ որոշել գնորդի անվճարունակության հավանականությունը կամ աստիճանը հնարավոր չէ:

### Ներքին ռիսկ

Ներքին ռիսկը կապված է անմիջապես կազմակերպության վիճակի և գործունեության հետ: Ներքին ռիսկը պայմանավորված է ռիսկի ներքին գործոններով:

Ռիսկի ներքին գործոնները իր տնտեսական գործունեության ներսում կորուստների պատճառներն են:

«Ամենավտանգավոր թշնամին ներքին թշնամին է»՝ դասականի այս մեջբերումը հարմար է նաև բիզնեսի համար: Եթե արտաքին ազդեցությանը մենք սպասում ենք և փորձում ենք հակազդել նրա «ներխուժմանը», ապա ներքին գործոնները շատ հաճախ նկատելի չեն:

Ռիսկերի ներքին պատճառներ են հանդիսանում կազմակերպության ոչ կատարյալ կառուցվածքը, բիզնեսի կառավարման սխալները, աշխատողների մոտ բարեխիղճ աշխատանքի մոտիվացիայի բացակայությունը, իսկ շատ հաճախ նաև սաբոտաժը, վնասակարությունը, գողությունը, աշխատակիցների դավաճանությունը:

Ռիսկերի հաջող կառավարման համար անհրաժեշտ է առանձնացնել ռիսկի ներքին գործոնների հետևյալ խմբերը.

1. Գործառնական-տեխնոլոգիական գործոններ,
2. Ադմինիստրատիվ-կառավարչական գործոններ,
3. Գիտա-ճարտարագիտական գործոններ,
4. Կազմակերպչական-կառուցվածքային գործոններ,
5. Քրեական բնույթի գործոններ,
6. Մարդկային գործոններ:

Առանձնացնում են ներքին ռիսկի հետևյալ տեսակները.

- Արտադրական ռիսկ (կազմակերպության կողմից պատվիրատուի հետ, ըստ պայամանագրի, իր պարտավորությունները չկատարելու հնարավորություն),

- Ֆինանսական (վարկային) ռիսկ (կազմակերպության կողմից ներդրողի հանդեպ ֆինանսական պարտավորությունների չկատարման հնարավորություն),
- Ներդրումային ռիսկ (ներդրումա-ֆինանսական պորտֆելի գնազրկման հնարավորություն),
- Շուկայական ռիսկ (շուկայական տոկասադրույքների տատանման հնարավորություն, ինչպես ազգային տարադրամի, այնպես էլ արտասահմանյան տարադրամի):

Գոյություն ունեն ներքին ռիսկի վերլուծության հետևյալ մեթոդները.

1) վիճակագրական մեթոդ,
2) ծախսերի նպատակահարմարության վերլուծության մեթոդ,
3) փորձագիտական գնահատականների մեթոդ
4) վերլուծական մեթոդ,
5) նույնատիպերի օգտագործման մեթոդ,
6) վիճակագրական փորձությունների մեթոդ:

Կազմակերպության գործունեության ամենատարբեր հարթությունների վրա (համաշխարհային, երկրային, տարածաշրջանային, տեղական) բացի արտաքին և ներքին ռիսկերի գնահատման տարբեր մոդելների կիրառումից, կարող է կառուցվել ներքին և արտքին ռիսկի ընդհանուր մոդել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հարթության յուրահատկությունները: Ընդհանուր մոդելի կառուցումը ենթադրում է արտաքին և ներքին ռիսկերի ցուցանիշների միջև կախվածությունների հաստատում: Քանի որ կազմակերպության գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումն է, ապա ներքին ռիսկի ցուցանիշները կարելի է դիտարկել որպես հիմնական և գնահատել արտաքին ռիսկերի ազդեցությունը նրանց վրա: Օրինակ՝ այնպիսի ցուցանիշը, ինչպիսինն է փոխհատուցվելիության շրջանը, որը դիտարկվում է ներքին ռիսկի բազմաթիվ մոդելներում, կարող է

կախված լինել նաև արտաքին ռիսկի տարբեր ցուցանիշներից, ինչպիսիք են քաղաքական կայունությունը, վերաբերմունքը արտասահմանյան ներդրողների հանդեպ, ենթակառուցվածքների զարգացումը:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ են իրենցից ներկայացնում ռիսկերի օբյեկտները:
2. Ինչի՞ց է կախված արտաքին ռիսկը:
3. Ի՞նչ գործոններով է պայմանավորված արտաքին ռիսկը:
4. Ինչպե՞ս է դասակարգվում երկրային ռիսկը:
5. Ինչպե՞ս է դասակարգվում քաղաքական ռիսկը:
6. Ինչպիսի՞ գործոններով է պայմանավորված քաղաքական ռիսկը:
7. Ինչպիսի՞ մոդելներ են կիրառվում քաղաքական ռիսկի վերլուծության ժամանակ:
8. Ինչպիսի՞ կառուցվածք է ներառում քաղաքական ռիսկի ուսումնասիրությունը:
9. Ի՞նչ են ենթադրում անվճարունակության և տրանսֆերտային ռիսկերը:
10. Ինչի՞ց է կախված ներքին ռիսկը:
11. Ինչպիսի՞ գործոններով է պայմանավորված ներքին ռիսկը:
12. Ներքին ռիսկի ինչպիսի՞ տեսակներ գոյություն ունեն:
13. Ինչպիսի՞ մեթոդներ գոյություն ունեն ներքին ռիսկի վերլուծության համար:

## 3.4 Ռիսկերի տարատեսակները և դրանց առանձնահատկությունները

Ռիսկի տեսությունը թույլ է տալիս առանձնացնել ռիսկի առավել ընդհանուր խմբերը.

1. Կազմակերպչական ռիսկեր,
2. Շուկայական ռիսկեր,
3. Վարկային ռիսկեր,
4. Իրավական ռիսկեր,
5. Տեխնիկական-արտադրական ռիսկեր:

1. Կազմակերպչական ռիսկեր: Այս խմբի մեջ կարելի է ներառել ռիսկեր, որոնք կապված են կազմակերպության կառավարման (մենեջմենթի), նրա աշխատակիցների գործած սխալների հետ. ներքին վերահսկման համակարգի խնդիրների, վատ մշակված աշխատանքի օրենքների հետ և այլն, այսինքն՝ ռիսկեր, որոնք կապված են կազմակերպության աշխատանքի ներքին կազմակերպման հետ: Նմանատիպ ռիսկի լավագույն օրինակ էր «խնդիր 2000»-ը (Millennium Bug), որը կարող էր հանգեցնել զգալի կորուստների:

2. Շուկայական ռիսկերը կապված են տնտեսական կոնյունկտուրայի անկայունության հետ. ապրանքի գնի փոփոխության պատճառով ֆինանսական կորուստների ռիսկ, արտադրանքի հանդեպ պահանջարկի նվազման ռիսկ, տրանսլյացիոն արժույթային ռիսկ, իրացվելիության ռիսկ և այլն:

3. Վարկային ռիսկը հավանականությունն է այն բանի, որ պայմանագրի մասնակիցները՝ գործընկերները, ի վիճակի չեն կատարել պայանագրային պարտավորությունները ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին դրույթներով: Այս ռիսկի ազդեցությունը նվազեցնել կարելի է նախնական փուլում

պայմանագրի քննարկման, վերջինիս կնքման դեպքում հնարավոր կորստի և շահույթի վերլուծության ճանապարհով:

4. Իրավական ռիսկերը կորստի ռիսկերն են՝ կապված այն բանի հետ, երբ օրենսդրությունը ընդհանրապես հաշվի չի առնվել կամ փոփոխվել է գործարքի ընթացքում, տարբեր երկրների օրենսդրությունների անհամապատասխանության ռիսկեր, ոչ կոռեկտ կազմված փաստաթղթաշրջանառության ռիսկ, որի արդյունքում կողմերից մեկը կարող է չկատարել պայմանագրի պայամանները և այլն:

5. Տեխնիկական-արտադրական ռիսկերը շրջակա միջավայրին վնաս հասցնելու ռիսկերն են (բնապահպանական ռիսկ), վթարների, հրդեհների առաջացման հետ կապված ռիսկեր, նախագծման և մոնտաժի ընթացքում թույլ տված սխալների արդյունքում օբյեկտի աշխատանքի խաթարման ռիսկ, մի շարք կառուցողական սխալներ և այլն:

Յուրաքանչյուր տնտեսական գործունեության մեջ կա գումարային կորուստների վտագ, որը բխում է այս կամ այն տնտեսական գործառնության յուրահատկությունից: Այդպիսի կորուստների վտանգը ֆինանսական ռիսկ է: *Ֆինանսական ռիսկերը* առևտրային (կոմերցիոն) ռիսկեր են: Ֆինանսական ռիսկերը սպեկուլյատիվ ռիսկեր են: Ֆինանսական ռիսկի յուրահատկություններից է վնաս հասցնելու հավանականութունը՝ ֆինանսավարկային և բորսային ոլորտներում որևէ տեսակի գործառնությունների անցկացման դեպքում, ֆոնդային շղթայական փստաթղթերի հետ գործառնությունների անցկացման արդյունքում, այսինքն ռիսկեր, որոնք սերում են այդ գործառնությունների բնույթից: Ֆինանսական ռիսկերի դասին են պատկանում վարկային ռիսկերը, տոկոսային ռիսկերը, արժույթային ռիսկերը, բացթողնված ֆինանսական շահույթի ռիսկը:

Ռիսկերը գոյանում են ֆինանսական հոսքերի շարժի հետ կապված և ֆինանսական ռեսուրսների շուկայում արտահայտվում

են հիմնականում տոկոսային, արժույթային, վարկային, առևտրային, ներդրումային ռիսկերի տեսքով:

*Տոկոսային ռիսկը* առաջանում է տոկոսադրույքների տատանման պատճառով, ինչը հանգեցնում է ներդրումների տոկոսների կամ հասույթների վճարման համար ծախսերի փոփոխության, այսինքն՝ սպասվածի համեմատ շահույթի (կամ կորստի) չափերի փոփոխության: Ռիսկի այս տեսակի հետ բախվում են բանկերը, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ձեռնարկությունները, որոնք միջոցներ են պարտքով վերցնում կամ ներդնում են դրանք տոկոսներ բերող ակտիվների մեջ (պետական արժեթղթեր, ձեռնարկությունների բաժնետոմսեր և այլն) :

Տոկասային ռիսկի կառավարման մեթոդներ են օպցիոնները, ֆյուչերսային գործառնությունները և այլն:

*Արժույթային ռիսկը* առաջանում է միջազգային ֆինանսական շուկաներում տարադրամի փոխարժեքի երկարատև կամ կարճատև տատանումների արդյունքում:

*Վարկային ռիսկը* այն բանի հավանականությունն է, երբ գործընկերները՝ պայմանագրի կողմերը, ի վիճակի չեն կատարել պայանագրային պարտավորությունները ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին դրույթներով: Այս ռիսկի ազդեցությունը նվազեցնել կարելի է նախնական փուլում պայմանգրի քննարկման, վերջինիս կնքման դեպքում հնարավոր կորստի և շահույթի վերլուծության ճանապարհով:

*Բիզնես (գործարար) ռիսկը* առաջանում է այն դեպքերում, երբ կազմակերպության տնտեսական կամ առևտրային գործունեությունը պակաս հաջող է քան առաջ կամ քան սպասվում էր: Օրինակ՝ իրացման չափերը կարող են նվազել այն պատճառով, երբ մրցակիցները իջեցրել են գները կամ առաջարկել են շուկայում մրցակից ապրանք: Ռիսկ-մենեջմենթի հիմնական խնդիրներից մեկն է բիզնես-ռիսկը նվազագույնի հասցնելը՝ արտադրության արդյունավետ աշխատանքի ապահովման, ծառայությունների և

ապրանքների սպառման շուկաների մանրամասն ուսումնասիրության, շուկայում տեղի ունեցող փոփոխություններին ճկուն արձագանքելու ճանապարհով:

Արժեթղթերի շուկան ծնում է ներդրումային ռիսկ: Ներդրումային ռիսկի էությունը կայանում է ներդրվող կապիտալի և շահույթի կորստի ռիսկի մեջ:

Արժեթղթերի շուկայում ֆինանսական գործիքների գնորդները կամ ներդրողներ, կամ սպեկուլյանտներ են, կամ խաղացողներ են: Ներդրողը գումար է ներդնում երկար ժամկետով՝ դիվիդենտի կամ տոկոսի տեսքով շահույթի ստացման հաշվարկով, փորձում է նվազեցնել ներդրված կապիտալի կորստի ռիսկը: Սպեկուլյանտները այն անձիք են՝ արժեթղթերի առևտրականները, ներդրումային բանկերը, որոնք հավակնում են շուկայում միանգամյա գործարքների հաշվին շահույթ ստանալուն: Խաղացողները ռիսկի են դիմում՝ հույս ունենալով կռահել միտումները և փող վաստակել ֆինանսական գործիքների ուղղության սպասվող փոփոխության հաշվին:

Սթափ ներդրողը ներդրման ժամանակ գործում է առաջին հերթին հաշվի առնելով սեփական անվտանգությունը, ապա ապագայում ստացվող հասույթը:

Փողի գնողունակության կորստի ռիսկը կանխորոշվում է երկրում արժեզրկման տեմպերով: Այս տիպի ռիսկը անդրադառնում է քաղաքացիների խնայողությունների վրա, որոնք պահվում են խնայողական կամ առևտրային բանկերում կամ «բարձի տակ», ինչպես նաև ֆիքսված շահույթով փաստաթղթերի մեջ: Հասարակ բաժնետոմսերը, որոնց վրա դիվիդենտները մշտական մեծություն չեն համարվում, պաշտպանված են արժեզրկումից, քանի որ դրա տեմպերի աճին զուգընթաց մեծանում է նաև շահույթը, որից վճարվում են դիվիդենտները: Բացի այդ, արժեզրկման դեմ ապահովագրական գործուն միջոց է բաժնետոմսերի տեսքով դիվիդենտների վճարումը:

**Տոկոսային ռիսկ**

Տոկասային ռիսկը դա ռիսկ է այն շահույթի համար, որն առաջանում է տոկոսադրույքի անբարենպաստ տատանումների պատճառով, որոնք հանգեցնում են տոկոսների վճարման ծախսերի բարձրացման կամ տրամադրված վարկերի ներդրումներից և մուտքագրումներից ստացված հասույթի նվազմամբ:

Այն կազմակերպությունը, որը ձգտում է «կուլ տալ» մեկ այլ կազմակերպություն, որոշ ժամանակ հետո կհայտնվի տոկոսային ռիսկի գոտում, եթե այդ ձեռքբերումը ֆինանսավորվում է փոխառության միջոցներով, այլ ոչ բաժնետոմսերի թողարկման ճանապարհով:

Բանկերը և այլ ֆինանսական հաստատությունները, որոնք տոկոսային շահույթ բերող զգալի միջոցներ ունեն, սովորաբար ավելի շատ են ենթարկված տոկոսային ռիսկի: Եթե կազմակերպությունը զգալի վարկեր է վերցրել, ապա տոկոսային ռիսկերի ոչ արդյունավետ կառավարումը կարող է հասցնել կազմակերպությանը սնանկացման եզրին:

**Փոխառուի ռիսկ**

Փոխառուի համար ռիսկը երկակի բնույթ է կրում: Ստանալով փոխառությունը ֆիքսած դրույքով, փոխառուն ռիսկի է ենթարկվում տոկոսադրույքների անկման հետևանքով, իսկ ազատ տատանվող տոկոսադրույքով փոխառության դեպքում այն ռիսկի է ենթարկվում տոկոսադրույքների մեծացման պատճառով: Այդպիսի ռիսկը կարելի է նվազեցնել, եթե հնարավոր լինի կանխագուշակել, թե որ ուղղությամբ կփոփոխվեն տոկոսադրույքները փոխառության համար՝ համապատասխան ժամանակամիջոցի ընթացքում:

**Վարկատուի ռիսկը**

Վարկատուի համար դա փոխառողի ռիսկի հայելային արտացոլումն է: Որպեսզի հնարավոր լինի ստանալ առավելագույն

հասույթ, բանկը պետք է տրամադրի ֆիքսած տոկոսադրույքով վարկեր, երբ տոկոսադրույքների անկում է սպասվում, և լողացող դրույքով վարկեր, երբ սպասվում է տոկոսադրույքների բարձրացում:

Ներդրողը կարող է միջոցները ներդնել կարճատև ավանդներում կամ տատանվող տոկոսադրույքներով ավանդներում և ստանալ տոկոսային շահույթ: Ներդրողը պետք է գերադասի ֆիքսած տոկոսադրույքը, երբ ենթադրվում է տոկոսադրույքների անկում, և տատանվող, երբ սպասվում է վերջիններիս աճ:

Տոկոսադրույքների փոփոխությունը՝ կախված փոխառության ժամկետից, կարելի է արտահայտել տոկոսային շահույթի կորագծի օգնությամբ: Տոկասային շահույթի նորմալ կորագիծ է համարավում վերընթաց կորագիծը: Այն նշանակում է, որ երկարաժամկետ փոխառությունների համար տոկոսադրույքները ավելի բարձր են, քան կարճաժամկետ փոխառությունների համար, և դրանով իսկ նրանք փոխհատուցում են վարկատուներին նրանց միջոցների կապվածության համար ավելի երկար ժամկետով և ավելի բարձր տոկոսային ռիսկով:

Տոկոսային ռիսկի վերաբերյալ բանկի տեսակետը տարբերվում է կորպորատիվ հաճախորդի տեսակետից: Ֆինանսասական հաստատությունների համար տոկոսային ռիսկը լինում է հիմքային և ժամանակավոր խզման ռիսկ:

Հիմքային ռիսկը կապված է տոկոսադրույքների կառուցվածքում փոփոխությունների հետ: Հիմքային ռիսկը առաջանում է այն ժամանակ, երբ միջոցները վերցվում են մի տոկոսադրույքով, իսկ պարտք են տրվում կամ ներդրվում են մեկ այլ տոկոսադրույքով:

Ժամանակային ընդհատման ռիսկը առաջանում է այն ժամանակ, երբ փոխառությունները ստանում կամ տրամադրում են մեկ դրույքով, սակայն վերցված և տրամադրված վարկերի վերանայման ժամկետների մեջ որոշակի ընդհատումներով: Ռիսկը առաջանում է տոկոսադրույքների վերանայման ժամանակի

ընտրության հետ կապված, քանի որ նրանք կարող են փոխվել վերանյամաև րոպեների միջև ընկած ժամանակահատվածում:

**Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկը վնասների առաջացման հնարավորություն է՝ հաճախորդի ֆինանսական պարտավորությունների ժամկետանց վճարման կամ չվճարման հետևանքով: Վարկային ռիսկի է ենթարկվում ինչպես վարկատուն (բանկը), այնպես էլ փոխառուն (ձեռնարկությունը):

*Բանկերի համար*

Բանկերի համար վարկային ռիսկը առաջանում է փոխառուի բանկային պարտքերի գումարներից, ինչպես նաև հաճախորդների՝ այլ գործարքներից կուտակված պարտքերից:

Կազմակերպությունները որոշակի վարկային ռիսկի կարող են ենթարկվել նաև բանկի հետ իրենց գործառնությունների ընթացքում: Եթե կազմակերպությունը ունի շատ ազատ միջոցներ, որոնք նա ներդնում է բանկային ավանդի մեջ, բանկի իրացվելիության ռիսկի առաջացման դեպքում կազմակերպությունը կկորցնի իր ներդրումների մեծ մասը: Մեծ տոկոսայն ռիսկ կա նաև մեկ բանկում չափազանց մեծ ավանդի տեղադրման դեպքում, քանի որ, գիտակցելով, որ կազմակերպությունը կանոնավոր ներդրող է, այդ բանկը կարող է նմանատիպ բարձր տոկոսադրույք չառաջարկել նոր ավանդի համար, որը կազմակերպությունը կարող էր ստանալ մեկ այլ բանկում:

Վարկային ռիսկը առկա է վարկավորման ամբողջ ընթացքում: Առևտրային վարկի տրամադրման դեպքում ռիսկը առաջանում է վաճառքի պահից սկսած և շարունակվում է մինչև գործարքից գումարի ստացման պահը:

Բանկային փոխատվության դեպքում վարկային ռիսկի շրջանը տևում է մինչև փոխատվությունը վերադարձնելու ժամկետի սկիզբը: Վարկային ռիսկի մեծությունը այն գումարն է, որը կարող է կորչել

պարտքի չվճարման կամ հետաձգման դեպքում: Առավելագույն պոտենցիալ վնասը հաճախորդի չվճարելու դեպքում պարտքի ամբողջ գումարն է: Ժամկետանց վճարումները ուղղակի վնասների չեն հանգեցնում: Առաջանում են անուղղակի վնասներ: Դրանք հանդիսանում են պահումներ տոկոսներից կամ տոկոսների կորուստներ (անհրաժեշտից ավելի երկար ժամանակ պարտապաններին ֆինանսավորելու անհրաժեշտության պատճառով), որոնք կարելի էր ստանալ, եթե գումարները շուտ վերադարձվեին և ավանդների տեսք ստանային: Չնայած որ վարկային ռիսկը մեծ է դժվար դրության մեջ գտնվող ընկերությունների համար, բանկերը ամեն դեպքում ստիպված են տրամադրել այդ վարկերը, որպեսզի չկորցնեն հնարավոր շահույթները:

*Ընկերության համար*

Երբ տնտեսությունը գտնվում է անկման ամենացածր աստիճանին, վարկավորման մասին որոշում ընդունելու ժամանակ վարկային ռիսկը զգալիորեն քիչ է, քան տնտեսական աճի ժամանակ: Դա կապված է այն բանի հետ, որ եթե ընկերությունը ստանում է շահույթ ռեցեսիայի ընթացքում, ապա, ամենայն հավանականությամբ, ապագայում, երբ տնտեսական պայմանները կբարելավվեն, ընկերությանը կհաջողվի կենդանի մնալ և բարգավաճել:

Ընկերությունները, որոնք գերազանցում են վաճառքի սովորական համարվող ծավալը, ունեն ռիսկի բարձր աստիճան: Վաճառքի չափազանց մեծ չափեր առաջանում են այն դեպքում, երբ ընկերությունը բարձր է գնահատում իր ռեսուրսները և ֆինանսավորման ոչ բավարար աղբյուրների դեպքում փորձում է պահպանել գործարար ակտիվության չափազանց մեծ ծավալը:

Ձեռնարկությունների մշտական ծախսերը ամենամսյա կամ ամենամյա ծախսեր են, որոնց գումարը նույնն է մնում՝ չնայած այդ ժամանակահատվածում գործարար ակտիվության բարձրացմանը

կամ իջեցմանը: Փոփոխական ծախսերը իրենցից ներկայացնում են ծախսեր, որոնք շատանում են, երբ ավելանում է վաճառքի ծավալը և քչանում են, երբ այն պակասում է: Այն ընկերությունները, որոնց ծախսերը հիմնականում կայուն են, վաճառքի ծավալի մեծացման դեպքում ստացված հասույթի զգալի խոշորացումից ունակ են օգուտ քաղել, սակայն նրանք խոցելի են վաճառքի տեմպերի ցանկացած անկման դեպքում: Այս դեպքում գումարի ներհոսքը քիչ կլինի, սակայն ծախսերը կմնան նախկին մակարդակի վրա: Արդյունքում՝ գումարային միջոցների շահույթը և ներհոսքը կնվազեն: Կարելի է ասել, որ ընկերությունները, որոնք ունեն բարձր կայուն ծախսեր և գործում են վաճառքի փոփոխական ծավալներով, ունեն բարձր վարկային ռիսկեր: Չափազանց շատ ներդրումային պարտավորություններ ունեցող ընկերությունները բարձր վարկային ռիսկ ունեն:

Վարկային ռիսկ ասելով հասկանում են այն հավանականությունը, որ ընկերությունը չի կարողանա մարել իր պարտքերը ժամանակին և ամբողջությամբ: Նշենք պարքերի մարման երեք հիմնական աղբյուրները.

- ընկերության գործունեության արդյունքում ստացված գումարային միջոցներ,

- ընկերության ֆինանսական ակտիվների, արժեթղթերի կամ խնայողությունների վաճառքից ստացված դրամական միջոցներ,

- հավելյալ նոր միջոցներ, օրինակ՝ սեփական բաժնետոմսերի թողարկում կամ ընկերության կողմից ստացված նոր փոխատվություն:

Գոյություն ունի պարտքերի վճարման համար դրամական միջոցների չորս պոտենցիալ աղբյուր՝ առևտրային գործառնություններ, ֆիքսված ակտիվների վաճառք, նոր միջոցների հայթայթում և երրորդ կողմի երաշխիք: Դրամական միջոցների շարժի վերլուծությունը ընկերության՝ իր պարտքերի մարման համար միջոցներ ստեղծելու ունակության գնահատումն է: Միջոցների հիմնական աղբյուր է հանդիսանում ընկերության

կողմից տարվող առևտրային գործարքների արդյունքում ստացված դրամական ներհոսքը:

**Ձեռնարկատիրական ռիսկ**

Ձեռնարկատիրության իրականացումը իր ցանկացած տեսքով կապված է ռիսկի հետ, որը ընդունված է անվանել տնտեսական կամ ձեռնարկատիրական:

Շուկան, նախևառաջ, տնտեսական ազատություն է: Ձեռներեցներից բարձր միայն օրենքն և դրա կողմից հաստատված սահմանափակումներն են: Պետական կարգավորումը շուկայի պայմաններում ենթադրում է հարկային համակարգի և ձեռնարկատիրական գործունեության իրականացման նորմերի հաստատում: Մնացածը սահմանվում է արտադրողով և սպառողով, նրանց կամքով և ինչ-որ առումով էլ դասավորվում է պատահական:

Տնտեսական ազատության համար ստիպված ես լինում վճարել: Չէ որ մի ձեռներեցի ազատությունը ուղեկցվում է այլ ձեռներեցների ազատությամբ, որոնք ազատ են գնելու կամ վաճառելու նրա արտադրանքը, առաջարկել դրա դիմաց իրենց գինը, վաճառել նրան իր ապրանքը որոշակի գներով, թելադրել գործարքի իր պայմանները:

Ընդ որում՝ բնական է, որ նրանք, ում հետ տնտեսական հարաբերությունների մեջ ես մտնում, ձգտում են նախևառաջ իրենց շահին, իսկ մեկի շահը կարող է մյուսների համար վնաս լինել: Ընդ որում՝ մրցակից-ձեռներեցը ընդհանրապես միտված է իր ախոյանին դուրս մղել շուկայից:

Հետևաբար, ուզենք թե ոչ, վերացնելով ձեռներեցությունը, ստիպված կլինենք գործ ունենալ անորոշության և բարձր ռիսկի հետ: Իրական ձեռներեցի, նոր տեսակի տնտեսվարողի խնդիրը առանց ռիսկի, նախօրոք նախագուշակված արդյունքով գործ փնտրելու մեջ չէ:

Այսպիսի մոտեցման դեպքում շուկայական տնտեսության մեջ կարելի է ընդհանրապես գործից դուրս կամ առանց գործ մնալ:

Պետք է ոչ թե խուսափել անխուսափելի ռիսկից, այլ գնահատել նրա աստիճանը և չանցնել թույլատրելի սահմանները:

Ասվածից հետևում է ձեռներեցի վարքի առաջին օրենքը՝ ոչ թե խուսափել ռիսկից, այլ կանխատեսել այն՝ ձգտելով նվազեցնել մինչև ամենացածր հնարավոր աստիճանը:

Նշենք, որ ձեռնարկատիրական ռիսկի տեսությունը մասամբ ձևավորվել է նաև արդեն ձևավորված շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Ստացվում է, որ շուկայական միջավայրում ինքը կյանքը, արտադրության, բաշխման, փոխանակման, արտադրանքի սպառման գործընթացները սովորեցնում են վարքագծի կանոններ ռիսկի և անորոշության առկայության պայմաններում, խրախուսում են նրանց իմացությունը և խստորեն պատժում չիմացության համար:

Նշենք, որ գոյություն ունեն ձեռնարկատիրական գործունեության առանձին տարատեսակներ, որտեղ ռիսկը ենթարկվում է հաշվարկի, գնահատման և որտեղ ռիսկի աստիճանի որոշման մեթոդները մշակված են թե տեսականորեն, թե գործնականում:

Ձեռնարկատիրական ռիսկի գնահատման դեպքում առաջին հերթին հետաքրքիր է ոչ թե ամբողջ կազմակերպության ճակատագիրը, այլ վտանգի և հնարավոր վնասի չափը որոշակի գործարքի և նրան ուղեկցող գործունեության տեսակների պայմաններում:

Օրինակ՝ ապահովագրելով տունը կամ ձեռնարկությունը հրդեհից, ապահովագրական գործակալությունը վերլուծում է միայն օբյեկտի հրդեհման վտանգը և դրա արդյունքում առաջացած այն գույքային վնասի չափը, որը նա պետք է փոխհատուցի: Համապատասխանաբար որոշվում են և ապահովագրական վճարումները:

Իսկ ձեռնարկատերը ստիպված է ուսումնասիրել ապրանքի արտադրության, գնման, վաճառքի, ինչպես նաև ձեռնարկության

գործունեության այլ տեսակների դեպքում առաջացած ռիսկը: Չէ որ նրան հետաքրքրում է ոչ թե ռիսկի փոխհատուցումը, այլ վնասի կանխարգելումը, բայց սա արդեն բոլորովին այլ բան է:

Տնտեսական (ձեռնարկատիրական) ռիսկի տակ պետք է հասկանալ ռիսկ, որն առաջանում է գործունեության ցանկացած տեսակի դեպքում՝ կապված ապրանքների, ծառայությունների արտադրության, դրանց իրացման, ֆինանսական գործառնությունների, առևտրի, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական նախագծերի հետ:

Գործունեության դիտարկված տեսակների մեջ ստիպված ենք օգտագործել և դիմել նյութական, աշխատանքային, ֆինանսական, տեղեկատվական ռեսուրսներին, այնպես որ ռիսկը կապված է այդ ռեսուրսների ամբողջական կամ մասնակի կորստի սպառնալիքի հետ:

Արդյունքում՝ ձեռնարկատիրական ռիսկը բնութագրվում է որպես ռեսուրսների հնարավոր, հավանական կորստի կամ եկամուտի ոչ լրիվ ստացման վտանգ այն տարբերակի համեմատ, որը հաշվարկված էր ձեռնարկատիրական գործունեության տվյալ տեսակի ռացիոնալ օգտագործման համար:

Այլ կերպ ասած՝ ռիսկը այն բանի սպառնալիքն է, որ ձեռներեցը կորուստներ կկրի հավելյալ ծախսերի տեսքով՝ գործողությունների ծրագրով նախատեսվածից ավել, կամ կստանա հաշվարկվածից ավելի քիչ եկամուտներ:

Ձեռնարկատիրական ցանկացած գործունեություն անխուսափելիորեն կապված է ծախսերի հետ, այն դեպքում երբ ծախսերը առաջանում են հանգամանքների անբարենպաստ զուգադիպման, սխալ հաշվարկների արդյունքում և իրենցից ներկայացնում են նախանշվածից ավել ծախսեր:

Իսկապես, եթե ռիսկը եկամուտի կամ ռեսուրսի կորստի վտանգ է, ապա գոյություն ունի նրա քանակական չափը, որը որոշվում է կորուստների բացարձակ կամ հարաբերական մակարդակով:

Իր բացարձակ արտահայտմամբ ռիսկը կարող է որոշվել հնարավոր կորուստների մեծությամբ իր նյութական-առարկայական (ֆիզիկական) կամ արժեքային (դրամային) արտահայտումներով, եթե իհարկե վնասը ենթարկվում է այդպիսի չափման:

Իր հարաբերական արտահայտմամբ ռիսկը սահմանվում է որպես հնարավոր կորուստների մեծություն, որը վերաբերում է որոշակի բազայի, ինչի տեսքով առավել հարմար է ընդունել ձեռներեցի գույքային կարողությունը կամ տվյալ տեսակի ձեռնարկատիրական գործունեության համար ռեսուրսների ընդհանուր ծախսերը, կամ ձեռներեցությունից սպասվող եկամուտը:

Ձեռնարկության վերաբերյալ ռիսկի հարաբերական մեծության որոշման համար որպես բազա նպատակահարմար է վերցնել ձեռնարկության հիմնական ֆոնդերի և շրջանառու միջոցների արժեքը կամ տվյալ ձեռնարկատիրակա գործունեության համար նախանշված հանրագումար ծախսերը՝ նկատի ունենալով ինչպես ընթացիկ ծախսերը, այնպես էլ կապիտալի ներդրումները կամ հաշվարկի եկամուտը (շահույթը): Այս կամ այն բազայի ընտրությունը չունի սկզբունքային նշանակություն, սակայն նախապատվությունը պետք է տալ այն չափորոշիչին, որը բնութագրվում է ամենաբարձր աստիճանով: Հետևաբար կորուստներ կհամարվեն շահույթի, եկամուտի նվազումը սպասված մեծությունների համեմատ: Ձեռնարկատիրական կորուստները, առաջին հերթին, ձեռնարկատիրական շահույթի պատահական նվազումն է:

**Արժույթային ռիսկ**

Արժույթային ռիսկերը կազմում են առևտրային ռիսկերի մի մասը, որոնց ենթարկված են միջազգային տնտեսական հարաբերությունների սուբյեկտները:

Արժույթային ռիսկը արժույթային կորուստների վտանգն է վճարման արժույթի հանդեպ (փոխառության) գնի արժույթի փոխարժեքի փոփոխության արդյունքում պայմանգրի ստորագրման կամ վարկային համաձայնագրի և վճարման իրականացման միջև ընկած ժամանակահատվածում: Արժույթային ռիսկի հիմքում ընկած է դրամական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը նշված ժամանակահատվածում: Արժույթային ռիսկի ենթարկվում են գործարքի երկու մասնակից կողմերը:

**Արժույթային օպցիոններ և ֆյուչերսներ**

Արժույթային օպցիոնը գործարք է՝ օպցիոնի գնորդի և արտարժույթի վաճառողի միջև, որը օպցիոնի գնորդին իրավունք է տալիս պայմանավորված ժամանակահատվածում գնել կամ վաճառել արժույթի գումարը որոշակի փոխարժեքով վաճառողին վճարվող պարգևատրման դիմաց: Արժույթային օպցիոնները կիրառվում են, եթե օպցիոնի գնորդը ձգտում է ապահովագրել իրեն արժույթի փոխարժեքի որոշակի ուղղության փոփոխության հետ կապված կորուստից: Փոխարժեքի փոփոխության արդյունքում կորուստների ռիսկը կարող է լինել մի քանի տեսակի:

Ֆորվարդային արժույթային գործարքը արժույթի որոշակի գումարի գնում կամ վաճառք է գործարքի կնքման օրվա փոխարժեքով գործարքի կնքման և իրականացման միջև ընկած ժամանակային ընդմիջումով: Ֆորվարդային արժույթային գործարքները իրականացվում են բորսայից դուրս: Որպես ֆորվարդային գործարքի կողմեր սովորաբար հանդես են գալիս բանկերը և առևտրաարդյունաբերական կորպորացիաները:

Արժույթային ֆյուչերսները առաջին անգամ սկսեցին կիրառվել Չիկագոյի արժույթային բորսայում 1972թ.: Արժույթային ֆյուչերսները արագ գործարքներ են բորսայում, որոնք իրենցից ներկայացնում են որոշակի արտարժույթի առուվաճառք գործարքի կնքման պահին արձանագրվող փոխարժեքով՝ որոշակի ժամանակ

անց իրականացնելու պայմանով: Արժույթային ֆյուչերսների և ֆորվարդ-գործառնությունների տարբերությունները հետևյալն են՝

1. ֆյուչերսներ ստանդարտ պայմանագրի առուվաճառքն է,
2. ֆյուչերսի պարտադիր պայման է երաշխիքային ավանդը,
3. երկու պայմանդիր կողմերի միջև հաշվարկները իրականանում են արժույթային բորսային կից կլիրինգային պալատի միջոցով, որը երկու կողմերի միջև միջնորդ և միաժամանակ գործարքի երաշխավոր է հանդիսանում:

Ֆորվարդային պայմանգրի առավելությունը ֆյուչերսի համեմատ նրա բարձր իրացվելիությունն է և արժույթային բորսայում մշտական արժեքորոշումը:

Ֆյուչերսների օգնությամբ արտահանողները իրենց գործառնությունների հեջավորման հնարավորություն են ունենում:

*Ստուգողական հարցեր*

1. Թվարկեք ռիսկերի ընդհանուր խմբերը:
2. Ի՞նչ են իրենից ներկայացնում ֆինանսական ռիսկերը:
3. Ի՞նչ են իրենից ներկայացնում տոկոսային ռիսկերը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարկային ռիսկը:
5. Ո՞րն է վարկային ռիսկի տարբերությունը բանկի և ընկերության համար:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում ձեռնարկատիրական ռիսկը:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում արժույթային ռիսկը:
8. Ի՞նչ են իրենցից ներկայացնում արժույթային օպցիոնները և ֆյուչերսները:

# ԳԼՈՒԽ 4
# ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

*Նա, ով միայն ապահով շահույթ է որոնում, հապճեպ թե դառնա շատ հարուստ, իսկ ով իր ողջ ունեցվածքը ներդնում է վտանգավոր ձեռնարկումներում, համախ անանկանում եւ ընկնում է աղքատության մեջ, դրա համար հարկավոր է ռիսկը համադրել որոշ ապահովության՝ վնասներից զերծ մնալու համար*
*Բենյամին Ֆրենկլին*

## 4.1 Ռիսկի որակական գնահատումը

Ռիսկի գնահատումը հետաքրքիր է դառնում այն ժամանակ, երբ տեղի է ունենում կամ ակնկալվում է որևէ ձեռնարկատիրական գործունեություն: Հենց ինչ-որ բան ձեռնարկելու համար է, որ նախապես անհրաժեշտ է գնահատել բոլոր հնարավոր հետևանքները: Եթե հետևանքներն ընդունելի են, ապա գործողությունն իրականացվում է: Հակառակ դեպքում, որպես կանոն, դրանից հրաժարվում են:


Հայտնի է, որ կարելի է արդյունավետ կառավարել միայն այն, ինչը կարելի է գնահատել: Այլ կերպ, մենք կարող ենք կառավարել ոչ թե ռիսկը, այլ նրա ցուցանիշների արժեքները և ոչ ավելին: Ռիսկի գնահատման մեթոդները սահմանում են նրանց կառավարման մեթոդները: Ուստի ռիսկի որակյալ կառավարման համար անհրաժեշտ է այն լիովին գնահատել՝ ինչպես կգնահատենք, այնպես էլ կկառավարենք: Այսպիսով, ռիսկի գնահատումը առաջնային է կառավարման գործընթացի համար:

Համաձայն ամերիկյան «Նախագծերի կառավարման ինստիտուտի» մշակումների՝ ռիսկերի կառավարման գործընթացը սովորաբար ներառում է հետևյալ ընթացակարգերի կատարումը.

1. Ռիսկի կառավարման նախագծում,
2. Ռիսկի որոշակիացում,
3. Ռիսկի որակական գնահատում,
4. Ռիսկի քանակական գնահատում,

5. Ռիսկի գործոնների վրա ազդեցության նախագծում,
6. Մոնիտորինգ և հսկում

Այս բոլոր ընթացակարգերը փոխադարձ կապի մեջ են միմյանց հետ, ինչպես նաև այլ ընթացակարգերի հետ, որը կարելի է ընդհանրացված ցույց տալ հետևյալ սխեմատիկ հաջորդականությամբ:




Գ-ծանկար 6. Ռիսկերի կառավարման գործընթաց

Ռիսկի կառավարման նախագծումը իր մեջ ներառում է գործարքի կազմակերպման, նախընտրելի մեթոդաբանության, ռիսկերի որոշակիացման համար տվյալների ընտրությունը, իրադրության վերլուծության համար ժամանակային ինտերվալի որոշումը և այլն:

Ռիսկի որոշակիացումը իր մեջ ներառում է հետևյալ քայլերը՝

- ռիսկի բացահայտում,
- ռիսկի անվանակոչում,
- ռիսկի նկարագրում:

Ռիսկի որոշակիացման ընթացքում կազմվում է տվյալ գործարքի վրա ազդող ռիսկերի ցուցակը և դրանց առաջացման պատճառները, բնութագրվում են ռիսկերի հատկանիշները և այլն:

Ռիսկի որոշակիացումը հանդիսանում է ռիսկի կառավարման հենքը: Այն անհրաժեշտ է, բայց բավարար չէ: Կարևոր է

գնահատել, թե ինչպես է ազդում գործարքի արդյունքների վրա կոնկրետ ռիսկը:

Տնտեսական ճգնաժամը, քաղաքական անկայունությունը և այլ բացասական գործոնները բերում են այն բանին, որ շատ սուբյեկտներ պաշտպանված չեն բազմաթիվ ռիսկերից և դրա հետևանքը կայանում է նրանում, որ դեռևս չի կազմավորվել ռիսկերի կառավարման համալիր տեխնոլոգիական մոտեցումը:

Ռիսկի կառավարման խնդիրը չի կարող արդյունավետ լուծվել տարբեր միջոցառումների կիրառմամբ: Այդպիսի խնդիրները լուծվում են ռիսկի համալիր կառավարման տեխնոլոգիայի ներդրմամբ, որոնք դիտարկում են գործարքի բոլոր ասպեկտները:

Յուրաքանչյուր ռիսկին անհրաժեշտ է համալիր մոտեցում, որը նշանակում է, որ տնտեսական գործունեության նախագծման և/կամ իրականացման ժամանակ անհրաժեշտ է լինում ընտրել ռիսկի գնահատման մեթոդը:

Ուստի ռիսկի կառավարման էությունը կայանում է որոշակիացված ռիսկերի *գնահատման* մեջ, որը ամբողջությամբ կազմում է «ռիսկի վերլուծություն» հասկացությունը:

Տնտեսագիտության տեսությունում գոյություն ունեն ռիսկերի գնահատման բազմաթիվ մեթոդներ:

Սույն ձեռնարկում մենք դիտարկում ենք այն մեթոդները, որոնք առավել հաճախ են կիրառվում: Այդ մեթոդները հետևյալն են.

- որակական (Qualitative)՝ որոշվում են ռիսկի գործոնները,
- քանակական (Quantitative)՝ որոշվում են ռիսկի աստիճանները,
- հիբրիդային (Hybrid)՝ որակական և քանակական մեթոդների համակցություն:

Վեբսթերի բառարանում որակական գնահատումը ներկայացված է որպես «...բաղադրիչների նույնացման համար նախատեսված վերլուծություն», որի խնդիրն է հանդիսանում՝ որոշել ռիսկի գործոնները, փուլերը և այն աշխատանքները, որոնց

կատարման ժամանակ առաջանում է ռիսկը և այլն, այսինքն՝ սահմանել ռիսկի պոտենցիալ ոլորտները:

**Ռիսկի որակական գնահատումն** ուղղված է պատասխանելու հետևյալ հարցերին. ինչպիսի՞ ռիսկ է մեզ սպասում, ռիսկի ինչպիսի՞ աղբյուրներ և գործոններ են առկա, որտե՞ղ են դրանք գտնվում, ե՞րբ այդ ռիսկերը կարող են արդիական դառնալ, ինչո՞վ է դրսևորվում ռիսկը, գործունեության ո՞ր կողմերը և/կամ մասնակիցները կարող են ենթարկվել ռիսկի:

Օրինակ՝ օտարերկրյա դեբիտորի վարկային ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն նրա հուսալիությունը որպես վճարողի, այլ նաև պետության՝ կոնտրագենտի տեղայնացման երկրի քաղաքական և տնտեսական համակարգի որակը: Մենք ունենք երկու դեբիտոր, որոնցից յուրաքանչյուրի պարտքը կազմում է 10000 եվրո, սակայն մեկը գտնվում է Գերմանիայում, իսկ մյուսը՝ Լիբանանում: Ո՞ր կոնտրագենտի վարկային ռիսկն է ավելի բարձր:

Ռիսկի որակական և քանակական գնահատման մեթոդների միջև հիմնական տարբերությունը կայանում է գնահատման տեսակների և եղանակների միջև:

Ռիսկի որակական և քանակական գնահատման միջև տարբերությունը կայանում է հետևյալում:

Որակական գնահատման ընթացքում իրականացվում է.

- ռիսկի առաջացման գործոնների բացահայտում,
- ռիսկի աստիճանի որոշում:

Քանակական գնահատման ընթացքում իրականացվում է.

- մաթեմատիկական մեթոդներով վիճակագրական տվյալների մշակում,
- ռիսկի աստիճանի քանակական արտայատում:

Ռիսկի որակական գնահատումը՝ որոշակիացված ռիսկի որակական վերլուծության գործընթաց է, որը գնահատում է որոշակիացված ռիսկերի կարևորությունը հետագա վերլուծության

կամ ուղղակի նվազեցման համար: Այս մեթոդը հանդիսանում է ավելի պարզ և կիրառելի:

Ռիսկի որակական գնահատման մեթոդը հիմնվում է նկարագրողական բնույթ կրող «մեղմ» եղանակների վրա, իսկ քանակականը՝ մաթեմատիկական ապարատի օգտագործմամբ վիճակագրական տվյալների օգտագործման «կոշտ» եղանակի վրա:

Միևնույն ժամանակ ռիսկի որակական գնահատման գործընթացը պետք է ներառի ոչ միայն կոնկրետ ռիսկի, նրա առաջացման հնարավոր պատճառների բացահայտման, ենթադրվող հետևանքների վերլուծության նկարագրողական բնույթի վրա, այլ նաև պետք է իր մեջ ներառի բացահայտված ռիսկի նվազեցման վերաբերյալ առաջարկությունները:

Ռիսկի որակական գնահատումը իրականացվում է ստանդարտ մեթոդներով և միջոցներով:

Նման ստանդարտ մեթոդներ են հանդիսանում.

- ինդուկտիվ մոտեցումը՝ փաստերի հավաքագրում, համակարգում և ընդհանրացում:
- դեդուկտիվ մոտեցումը՝ վարկածների առաջադրում, որոնք հետագայում համադրվում են փաստերի հետ:
- պոզիտիվ մոտեցումը՝ ուսումնասիրում է այն, ինչ կա:
- նորմատիվ մոտեցումը՝ արտահայտում է սուբյեկտիվ պատկերացումները այն մասին, թե ի՞նչ կարող է լիներ:

Ռիսկի որակական գնահատումը կամ անբարենպաստ իրադարձության առաջացման տեղի ունենալու հավանականությունը յուրաքանչյուր գործարքի համար առանձին է որոշվում:

Որակական գնահատում անցկացնելիս ռիսկի աստիճանները դիտարկվում են որպես ցածր, չափավոր, բարձր, կրիտիկական և անթույլատրելի: Տվյալ մոտեցումը սուբյեկտիվ է, բայց հենց դա են խորհուրդ տալիս բազմաթիվ արտասահմանյան հետազոտությունները:

Սա այն մեթոդիկան է, որի ընթացքում որոշվում է յուրաքանչյուր ռիսկի առաջացման հավանականությունը ըստ աստիճանավորում ունեցող սանդղակի՝ “High” (բարձր), “Serious” (լուրջ), “Medium” (միջին) և “Low” (ցածր):

- H = Բարձր ռիսկ՝ պահանջում է մանրակրկիտ հետազոտություն և կառավարում,
- S = Լուրջ ռիսկ՝ անհրաժեշտ է կառավարման բարձր մակարդակի ուշադրությունը,
- M = Միջին ռիսկ՝ անհրաժեշտ է հստակ սահմանված լինի կառավարման պատասխանատվությունը,
- L = Ցածր ռիսկ՝ հաղթահարվում է սովորական ընթացակարգերով:

Այդ մեթոդիկայի կիրառման դեպքում առանձին ռիսկերի գնահատականների հիման վրա ընդհանուր գնահատական է դրվում ամբողջ համակարգին, իսկ ռիսկերը դասավորվում են ըստ իրենց կարևորության: Տվյալ մեթոդիկան թույլ է տալիս արագ իրականացնել ռիսկի որակական գնահատումը:

Ընդհանրացնելով վերը նշվածը անհրաժեշտ է նշել նաև ռիսկի գործոնների վրա ազդեցության նախագծման և մոնիտորինգի ու հսկման հասկացությունները:

Ռիսկի գործոնների վրա ազդեցության նախագծումը՝ դա ռիսկի բացասական ազդեցության նվազեցման համար մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումն է:

Ռիսկի մոնիտորինգը և հսկումը որոշում է մնացորդային ռիսկերը և գնահատում է ռիսկի նվազեցմանն ուղված միջոցառումների արդյունավետությունը:

Այսպիսով ռիսկի կառավարման գործընթացում որակական գնահատման հիմնական խնդիրը կայանում է ռիսկերի համակարգման և գործարքի վրա ազդող ռիսկերի աստիճանի որոշման մեջ:

Ռիսկի որակական գնահատում իրականացնելուց առաջ նշենք, որ նախորդ գլխում ներկայացված ռիսկերի դասակարգման հետ

մեկտեղ փաստացի իրականացվել է ռիսկերի որոշակիացումը, այսինքն առանձնացվել են այն հիմնական ռիսկերը, որոնք բնորոշ են տնտեսական գործունեությանը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մասնավորեցնել տնտեսական գործունեությանը բնորոշ ռիսկերը ըստ խմբի, տեսակի, դասի, կատեգորիայի, առաջացման պատճառի և գործոնների, որոնք պայմանավորում են տվյալ ռիսկի առաջացումը: Այդ նպատակով ռիսկի որակական գնահատման ժամանակ առաջ է գալիս «ռիսկերի քարտեզի» և ռիսկի որակական գնահատման մատրիցայի կառուցման խնդիրները:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչն է կարելի արդյունավետ կառավարել:
2. Ի՞նչ է ներառում ռիսկի կառավարման գործընթացը:
3. Ո՞րն է ռիսկի կառավարման էությունը:
4. Ի՞նչ հարցերի է ուղղված պատասխանելու ռիսկի որակական գնահատումը:
5. Ռիսկի գնահատման ինչպիսի՞ մեթոդներ կան:
6. Ի՞նչ է իրականացվում ռիսկի որակական գնահատման ընթացքում:
7. Ի՞նչ է իրականացվում ռիսկի քանակական գնահատման ընթացքում:
8. Ո՞րն է ռիսկի որակական և քանակական գնահատման տարբերությունը:
9. Ինչպիսի՞ մեթոդներով և միջոցներով է իրականացվում ռիսկի որակական գնահատումը:
10. Ինչպե՞ս են որակվում ռիսկի աստիճանները՝ որակական գնահատում անցկացնելիս:

*Պատերազմում մարդկանց մեծամասնությունը վկրանգի է ենթարկում կյանքն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտքը ջարդարարելու համար, բայց միայն քչերն են պատրաստ միշտ ռիսկի դիմել այնպես, ինչպես դա պահանջում է այն նպատակը, հանուն որի նրանք ռիսկի են գնում*
*Ֆրանսուա դը Լարոշֆուկո*

## 4.2 «Ռիսկերի քարտեզը» և որակական գնահատման մատրիցան

Ռիսկերի կառավարման արդյունավետ գործիք է հանդիսանում «ռիսկերի քարտեզը»: Այդ քարտեզի կառուցման բարդությունը հաճախ կապված է տնտեսական գործունեության ոչ հստակ նպատակների և որոշումներ կայացնելու շղթայում հիմնական գործընթացների կարգորոշման բացակայությամբ:

Ռիսկերի քարտեզը թույլ է տալիս ռիսկերը համակարգել ըստ ռիսկի գործոնների, ռիսկի օբյեկտների, կորուստների տեսակների և մեծության, նրանց հավանականության աստիճանի:

Ռիսկերի քարտեզը դա ռիսկերի գրաֆիկական պատկերումն է յուրաքանչյուր տնտեսական գործունեության համար առանձին:

Ռիսկերի քարտեզը թույլ է տալիս նյութականացնել ռիսկերը, դրանք ակնհայտ դարձնել, թույլ է տալիս գնահատել իրավիճակը, որոշում ընդունել, նախագծել «մարտական» գործողությունը և ջախջախիչ հարված հասցնել ռիսկերին:

Ռիսկերի քարտեզը հաճախ պարզապես թույլ չի տալիս մոլորվել բիզնեսի անմատչելի ոլորտներում և խրվել անլուծելի խնդիրների «ճահճի» մեջ:

Ռիսկերի քարտեզն օգնում է գտնել նպատակներին հասնելու ուղին՝ պարտություն կրելու ամենափոքր ռիսկով:

Ռիսկերի քարտեզը, սովորաբար, ձևավորվում է որպես աղյուսակ, որի սյունակների մեջ մտցվում են ռիսկի բոլոր օբյեկտները, որոնք ենթակա են պաշտպանության, իսկ տողերի մեջ՝ բոլոր արդիական արտաքին և ներքին գործոնները: Տողերի և սյունակների հատման վանդակներում նշվում են կոնկրետ ռիսկերն

ըստ բանաձևի՝ կորուստների մեծությունը և դրանց տեղի ունենալու հավանականությունը: Ռիսկերի այդպիսի գրաֆիկական պատկերումը թույլ է տալիս պարզ ներկայացնել կոնկրետ կորուստները որպես կոնկրետ գործոնների ազդեցության հետևանք՝ ռիսկի կոնկրետ օբյեկտների վրա:

Ռիսկերի քարտեզը կազմելիս հարց է ծագում: Քանի՞ ռիսկ է հնարավոր և անհրաժեշտ ի հայտ բերել: Նշենք, որ տվյալ հարցի հստակ ձևակերպումը բացակայում է: Ցանկացած գործունեության մեջ, անցկացնելով ուղեղային գրոհ փորձագետների հետ և հստակ նկարագրելով բոլոր բիզնես-գործընթացները, մասնակիցների դերերը և արդյունքի համար պատասխանատվությունը, կարելի է հայտնաբերել 100-150 ռիսկի գործոն: Տնտեսական գործունեության փուլերից յուրաքանչյուրում ռիսկերն ի հայտ բերելուց հետո, անհրաժեշտ է դրանք դասավորել՝ ելնելով յուրաքանչյուր ռիսկային իրադարձության և հնարավոր վնասի հավանականությունից: Այդպիսի վերլուծության հիմնական նպատակն է որոշել, թե ո'ր ռիսկերն են ավելի ծանրակշիռ, և մշակել դրանց հակազդելու մեթոդները: Կարևոր է հիշել, որ ռիսկերի կառավարումը մեկանգամյա գործողություն չէ, կազմեցինք քարտեզը և բարեհաջող կերպով մոռացանք: Անհրաժեշտ է մշտապես խմբագրել ռիսկերի քարտեզը և որոշումներ կայացնելու մեխանիզմները՝ կախված տեղի ունեցածից: Ռիսկերի քարտեզը ձևավորվում է կուտակումների միջոցով, այն մշտապես լրացվում է և տնտեսական գործունեության իրականացմանը զուգընթաց լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Շատ ռիսկեր հեռանում են գործունեության ավարտի հետ: Մեկ անգամ ի հայտ բերված ռիսկերի հավանականությունը և հետևանքներն ու դրանց գերակայությունները կարող են հետագայում փոփոխվել: Կարող են ի հայտ գալ նաև նոր ռիսկեր: Ռիսկերի կրկնակի վերլուծությունը ցանկալի է անցկացնել այնպես, որ նոր տվյալները հասանելի լինեն տնտեսական գործունեության յուրաքանչյուր նոր փուլի պլանավորման համար:

Այդ առումով նպատակահարմար է որպես օրինակ դիտարկել արտաքին առևտրային գործարքի «ռիսկերի քարտեզը», որը ներկայացնում է գործարքի վրա ազդող ռիսկերի բազմազանությունը և ընդհանուր պատկերը կունենա հետևյալ տեսքը:

**Արտաքին առևտրային գործարքի «ռիսկերի քարտեզ»**

| Ռիսկի խումբը | Ռիսկի տեսակը | Ռիսկի դասը | Ռիսկի կառուցվածքը | Ռիսկի պատճառը | Ռիսկի գործոնները |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Արտաքին ռիսկեր | Երկրային ռիսկ | Քաղաքական ռիսկ | Մակրոռիսկ | Հեղափոխություն | գործադուլներ, հացադուլներ, գրչյցեր, սրած, ահաբեկություն, կոռուպցիա |
| | | | | Օրենսդրության փոփոխություն | կառավարության փոփոխություն հակազդում մաքսատուրքերի կիրառում |
| | | | Միկրոռիսկ | Ահաբեկչություն | քաղաքական ռեկետ, քաղաքական գործիչների առևանգումներ կամ սպանություններ |
| | | | | Առևտրային կարգավորում | հարկային, մաքսային և այլ օրենսդրության մեջ փոփոխություններ |
| | | Առևտրային ռիսկ | Անվճարունակության ռիսկ | Պարտապանի անվճարունակություն | պարտապանի սնանկացում, |
| | | | | Պարտապանի չվճարման կամեցողություն | խաբեբաություն, անբարեխիղճ առևտրային գործարքներ |
| | | | Տրանսֆերտային ռիսկ | Պարտապան-պետության անվճարունակություն | երկրի վճարաունակությունը համակարգի ծանր կացություն |
| | | | | Վճարային մորատորիում | կառավարության կողմից իրենց կամ իրենց նախորդների կողմից ընդունված պարտավորությունները կատարելու հրաժարում |
| | | | | Պարտապանի հաշվի ուղեկապում | հանցագործություն |
| | | | | Գումարների արտահոսքերի խոչընդոտ | վարչական կարգադրություններ |
| | Տրանսպորտային ռիսկ | | | | վատ եղանակ երթուղի վատ սերվիսային սպասարկում սխալ տրանսպորտային միջոցի ընտրություն սխալ փաթեթավորում տարացվող երկրում անբարենպաստ իրադարձություններ քննության տարբերություններ |
| Ներքին ռիսկեր | Գնային ռիսկ | Գնի փոփոխման ռիսկ | | | միջազգային շուկայում ապրանքների գնի փոփոխություն հարկերի դրույքաչափերի փոփոխություն |
| | | Տարադրամի փոխարժեքի փոփոխման ռիսկ | | | սրած տարադրամների կոնվերտացիա |

Գծանկար 7. Արտաքին առևտրային գործարքի «ռիսկերի քարտեզը»

Սակայն «ռիսկերի քարտեզում» ներկայացված յուրաքանչյուր ռիսկի տեսակին համապատասխան ռիսկի գործոնները չեն պայմանավորում զուտ տվյալ ռիսկի աստիճանը, այլ կարող են պայմանավորել նաև այլ ռիսկերի աստիճանները: Օրինակ՝ սղաճի

հետևանքով բարձրանում է տարադրամի փոխարժեքի փոփոխման ռիսկի մակարդակը, ապրանքի գնի փոփոխման ռիսկի մակարդակը, քաղաքական ռիսկի մակարդակը և այլն: Այսինքն ռիսկի գործոնները խիստ սահմանազատված չեն կոնկրետ ռիսկի տեսակի համար:

Մասնավորապես, ռիսկի որակական գնահատում անցկացնելիս այլ մեթոդիկաների շարքում առավել լայն տարածում է ստացել ռիսկի որակական գնահատման մատրիցայի կառուցումը:

«Ռիսկերի քարտեզի» կառուցումը հնարավորություն է ստեղծում ստեղծել գործարքի որակական գնահատման մատրիցան:

Ռիսկի որակական գնահատման մատրիցա

| Likelihood Հավանականություն / Consequence Հետևանք | | Insignificant Ցածր | Minor Չափավոր | Major Բարձր | Critical Կրիտի-կական | Extreme Անթույ-լատրելի |
|---|---|---|---|---|---|---|
| Almost Certain Գրեթե վստահ | A | S | S | H | H | H |
| Likely Հավանաբար | B | M | S | S | H | H |
| Possible Հնարավոր | C | L | M | S | H | H |
| Unlikely Դժվար թե | D | L | L | M | S | H |
| Rare Հազվադեպ | E | L | L | M | S | S |

Ռիսկի որակական գնահատումը կարող է անցկացվել նաև ռիսկի համապատասխան հատվածը կամ գոտին որոշելու միջոցով: Կախված կորուստների մեծությունից սահմանվում *է. ոչ ռիսկային*

*գոտի, թույլատրելի ռիսկի գոտի, ծայրահեղ ռիսկի գոտի, աղետաբեր ռիսկի գոտի:*


Ռիսկի գոտիների բաշխումը ներկայացված է ստորև:

**Ոչ ռիսկային գոտին** մի հատված է, որտեղ սպասվում են զրոյական կամ բացասական կորուստներ:

**Թույլատրելի ռիսկի գոտին դա այն** հատվածն է, որտեղ ձեռնարկատիրական գործունեության տվյալ տեսակը պահպանում է իր տնտեսական նպատակահարմարությունը, այսինքն, կորուստները ավելի քիչ են քան ակնկալվող շահույթը:

**Ծայրահեղ ռիսկի գոտին այն** հատվածն է, որտեղ կորուստների հավանականությունը գերազանցում է ակնկալվող շահույթի մեծությունը:

**Աղետաբեր ռիսկի գոտին այն** հատվածն է, որտեղ կորուստները գերազանցում են ծայրահեղ մակարդակը և մաքսիմումում կարող են հասնել մի մեծության, որը հավասար է ձեռներեցի գույքային կարգվիճակին:





Գ-ծանկար 8. Ռիսկի գոտիները

Ռիսկի մասին ավելի լիակատար պատկերացում է տալիս կորուստների հավանականության կախվածությունը դրանց մեծությունից:

Գ-ծանկար 9-ում ներկայացված է կորուստների որոշակի մակարդակի առաջացման հավանականությունների բաշխման տիպային կորը, որը կոչվում է «ռիսկի կոր»: Այդ կորը կառուցելու

համար օգտագործվում են վիճակագրական, փորձագիտական կամ հաշվարկավերլուծաբանական մեթոդներ:

Գ-ծանկար 9-ում ընդունված են հետևյալ նշանակումները. Р- կորուստների տեղի ունեցման հավանականության աստիճանը, Рթ - թույլատրելի ռիսկի տեղի ունեցման հավանականությունը, Рծ - ծայրահեղ ռիսկի տեղի ունեցման հավանականությունը, Ըա - աղետաբեր ռիսկի տեղի ունեցման հավանականությունը, ΔԿԸ - հնարավոր կորուստների մեծությունը:




Գ-ծանկար 9. Ռիսկի կորը

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում «ռիսկերի քարտեզը»:
2. Ինչպե՞ս է ձևակերպվում «ռիսկերի քարտեզը»:
3. Ի՞նչ հնարավորություն է ստեղծում «ռիսկերի քարտեզի» կառուցումը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկի որակական գնահատման մատրիցան:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկի գոտին և ինչպես է այն դասակարգվում:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում «ռիսկի կորը»:

*Ես չեմ զանում ռսկրրներն կրծոտել ոչ ամբողջությամբ մաքրապարդել:*
*Չեմ սպասում, միշտեւ գներր հասնեն մաքսիմումի:*
*Չէ որ նրանք անապատել չնկնել ու սովորություն ունեն:*
*Ես իմ քայլն եմ կապարում արդեն այն ժամանակ,*
*երբ շահույթն ինձ թվում է արդարացի*
*Քերբ Քերբոյան*

## 4.3 Ռիսկի քանակական գնահատումը

Ռիսկի կառավարման ընթացքում որակական գնահատումից բացի, անհրաժեշտ է իրականացնել նաև ռիսկի քանակական գնահատում, որն ավելի բարդ խնդիր է: Սակայն նշենք, որ ոչ միշտ է, որ կարելի է քանակապես որոշել ռիսկի աստիճանը:

Ռիսկի քանակական գնահատման ժամանակ կարևոր նշանակություն ունի որակական գնահատման ժամանակ որոշված ռիսկերի աստիճանները:

Բացարձակ արտահայտությամբ ռիսկը կարող է սահմանվել հնարավոր կորուստների մեծությամբ՝ նյութական (ֆիզիկական) կամ արժեքային (դրամական) արտահայտությամբ: Հարաբերական արտահայտությամբ ռիսկը կարող է սահմանվել որպես հնարավոր կորուստների մեծություն՝ վերագրված որևէ հենքին, որի տեսքով առավել հարմար է ընդունել կամ սուբյեկտի գույքային վիճակը, կամ ձեռնարկատիրական գործունեության տվյալ տեսակի վրա ռեսուրսների ընդհանուր ծախսերը, կամ ակնկալվող եկամուտը (շահույթը):

Եթե հաջողվում է այս կամ այն եղանակով կանխատեսել, գնահատել հնարավոր կորուստները ըստ տվյալ գործարքի, դա նշանակում է, որ ստացվել է ռիսկի քանակական գնահատականը:

Քանակական իմաստով ռիսկը ենթադրում է ակնկալվող կամ միջին արժեքից արդյունքի շեղման հնարավորությունը՝ ինչպես դեպի նվազող, այնպես էլ դեպի աճող կողմը:

Ռիսկի համալիր գնահատման դեպքում որակական և քանակական մեթոդները հանդիսանում են փոխադարձ լրացնող և նրանցից որևէ մեկի անտեսումը սխալ մոտեցում է հանդիսանում:

Ռիսկի համալիր գնահատումը կոչված է որոշել նրա հնարավոր տեսակները, նրա մակարդակի վրա ազդող գործոնները, ինչպես նաև ռիսկի առաջացման քանակապես արտահայտված հավանականությունը և հնարավոր վնասը: Այսպիսով թույլատրելի ռիսկի աստիճանի որակական գնահատումը սերտորեն կապված է քանակական գնահատման հետ: Եվ եթե ռիսկի որակական գնահատման համար փորձ ու գիտելիք է պահանջվում, ապա ռիսկի քանակական գնահատման համար անհրաժեշտ են վիճակագրական տվյալներ, որոնք մշակվում են տարբեր մաթեմատիկական եղանակներով:

Վեբսթերի բառարանում քանակական գնահատումը սահմանված է որպես «...բաղադրիչների քանակը և մեծությունը որոշելու համար նախատեսված վերլուծություն», որի խնդիրն է հանդիսանում առանձին դասակարգված, որոշակիացված ռիսկերի հավանականությունների և աստիճանների քանակական որոշումը:

Ռիսկի քանակական գնահատման արդյունքում առաջ է գալիս այն վնասի գումարը, որով հղի է սուբյեկտի տվյալ ձեռնարկատիրական գործունեությունը:

Քանակական գնահատում անցկացնելու համար անհրաժեշտ են ելակետային տվյալներ, որոնց ստացման համար գոյություն ունի երկու մոտեցում՝

- սուբյեկտիվ (փորձագիտական): Իրականացվում է սեփական փորձի և սուբյեկտի կառուցվածքում աշխատող մասնագետների և հրավիրված խորհրդատուների փորձագիտական գնահատականների հիման վրա.
- օբյեկտիվ (վիճակագրական տվյալների հիման վրա): Եթե սուբյեկտը նախագծում է իր կողմից նախկինում որոշ ժամանակի ընթացքում արդեն իրականացվող գործունեության շարունակումը, այն կարող է

կանխորոշման համար օգտագործել նախկին գործունեության վիճակագրությունը:

Համաշխարհային պրակտիկայում այս մեթոդներից յուրաքանչյուրը մաքուր ձևով չի կիրառվում, քանի որ հազվադեպ են հանդիպում իրադրություններ, որոնցում բացակայում են որևէ վիճակագրական տվյալներ, իսկ ցանկացած վիճակագրության վրա հիմնված կանխորոշումը միշտ պետք է հաշվի առնի իրադրության հնարավոր փոփոխությունը, այսինքն՝ պարունակի փորձագիտական գնահատականների տարրեր:

Սակայն միևնույն ժամանակ ռիսկի քանակական գնահատականների ստացման խնդիրը կայանում է ինչպես հասանելի վիճակագրության բացակայության մեջ, այնպես էլ նրանում, որ փորձագիտական գնահատականները հաճախակի կողմնորոշվում են աղետային հետևանքների վրա, որոնք հիմնվում են անմիջական անձնական փորձի, մամուլում արտահայտվող դատողությունների և այլնի վրա և, վերջապես, ինտուիցիայի վրա:

Ռիսկի քանակական գնահատման ընթացքում ձևավորվում է անբարենպաստ իրադրությունների զարգացման համար սցենարների հավաքածուն, որը կազմում է ռիսկի չեզոքացման և/կամ նվազեցման՝ դիվերսիֆիկացման, հեջավորման, ապահովագրման, ֆինանսավորման և այլն, սցենարի ընտրության հիմքը:

Ռիսկի քանակական գնահատման ժամանակ սցենարների հավաքածուն պայմանավորված է հիմնավոր պնդումով:

**Պնդում.** Գործունեության ռիսկի քանակական գնահատումը հնարավոր է միայն գործունեության ելքերի բազմության հավանական բնութագրերի դեպքում:

Հարկ է շեշտել, որ անկախ այն բանից հակված է սուբյեկտը ռիսկի դիմելու կամ ոչ, նա պետք է կարողանա քանակապես գնահատել իրականացվող կամ հնարավոր գործարքի ռիսկը:

Ռիսկի քանակական գնահատման ժամանակ հաճախ օգտվում են ռիսկի թույլատրելի մակարդակի փորձագիտական սանդղակից:

Ռիսկի թույլատրելի մակարդակի փորձագիտական սանդղակ

| N/N | Ռիսկի մեծություն (R) | Ռիսկի աստիճանավորումների անվանում | Ռիսկից կորուստների դասդ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | 0,00 – 0,10 | Նվազագույն ռիսկ (L) | Նվազագույն կորուստներ |
| 2 | 0,10 – 0,25 | Փոքր ռիսկ (L) | |
| 3 | 0,25 – 0,40 | Միջին ռիսկ (M) | Բարձր կորուստներ |
| 4 | 0,40 -,0,60 | Բարձր ռիսկ (S) | Ճգնաժամային կորուստներ |
| 5 | 0,60 – 0,70 | Առավելագույն ռիսկ (S) | Ճգնաժամային կորուստներ |
| 6 | 0,70 – 0,80 | Ճգնաժամային ռիսկ (H) | Անթույլատրելի կորուստներ |
| 7 | 0,80 – 1,00 | Աղետալի ռիսկ (H) | |

Ընդ որում, եթե R=1, ապա դա նշանակում է, որ ռիսկը հավասար է 100%, որը նշանակում է, որ տնտեսական գործունեությունը արդեն կարելի է անհաջող անվանել:

Միևնույն ժամանակ, եթե R=0, ապա դա նշանակում է, որ հաշվարկները անհրաժեշտ է վերանայել, քանի որ իրականում ռիսկերից ոչ մեկի հավանականության աստիճանը չի կարող զրոյին հավասար լինել:

*Ստուգողական հարցեր*

1. Ինչպե՞ս են արտահայտվում ռիսկի աստիճանները:
2. Ի՞նչ է նշանակում ռիսկի քանակական գնահատում:
3. Ի՞նչ է անհրաժեշտ ռիսկի քանակական գնահատում անցկացնելու համար:
4. Ի՞նչ մոտեցումներ են կիրառվում ելակետային տվյալներ ստանալու համար:
5. Ո՞րն է ռիսկի քանակական գնահատման ժամանակ հիմնավոր պնդումը:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկի թույլատրելի մակարդակի փորձագիտական սանդղակը:

*Երբ խոշոր ու շատ հազվադեպ բիզնես եմ կենտրոնում, հասկանում եմ, որ ինչ-որ մեկը նկատազուրկը մեկ անգամ, մեծ ռիսկի է դիմել*
*Պիտեր Դրուկեր*

## 4.4 Ռիսկերի գնահատման մեթոդները

Ռիսկի կառավարման համաշխարհային փորձում ռիսկերի գնահատման համար օգտագործում են զանազան մեթոդներ՝ վիճակագրական, ծախսերի նպատակահարմարության վերլուծության, փորձագիտական գնահատականների, վերլուծաբանական, անալոգների օգտագործման, սցենարների, արժանահավատ համարժեքների, որոշման ծառերի, զգայունության վերլուծության, իմիտացիոն մոդելավորման (Մոնթե-Կարլոյի մեթոդ) և այլն:

**Վիճակագրական մեթոդը** կայանում է նրանում, որ ուսումնասիրվում է տվյալ կամ նմանատիպ արտադրությունում տեղ գտած կորուստների և շահույթների վիճակագրությունը, սահմանվում է այս կամ այն տնտեսական արդյունքի ստացման մեծությունն ու հաճախականությունը և կազմվում է ապագայի համար առավել հավանական կանխորոշումը:

Ռիսկի քանակական գնահատման վիճակագրական մեթոդը պահանջում է տվյալների նշանակալից զանգվածի առկայություն, որոնք միշտ չէ, որ առկա են ձեռներեցի տրամադրության տակ: Տվյալների հավաքագրումը և մշակումը կարող է չափազանց թանկ լինել: Դրա համար հաճախ տեղեկատվության անբավարարության դեպքում ստիպված են լինում դիմել այլ մեթոդների:

Ռիսկի գնահատման վիճակագրական մեթոդն ապահովում է վերլուծության արդյունքների ընդունելի արժանահավատությունը, հետազոտվող համակարգի և նրա արտաքին միջավայրի զարգացման միտումները հեռանկարում պահպանելու պայմանի դեպքում: Գործնականում զարգացման միտումների գնահատման համար լայնորեն գործածվում են փորձագիտական

գնահատականների մեթոդները: Այդ պատճառով գործնականի համար ավելի ընդունելի տարբերակ է հանդիսանում վիճակագրական և փորձագիտական մեթոդների համակցությունը:

**Փորձագիտական մեթոդը** կայանում է ռիսկի քանակական գնահատականներ ստանալու մեջ՝ փորձառու ձեռներեցների կամ մասնագետների կարծիքների մշակման հիման վրա: Այդ մեթոդի կիրառումը հատկապես արդյունավետ է և բարդ՝ չկազմավորվող խնդրահարույց իրավիճակների լուծման դեպքում, երբ տեղեկատվության ոչ լիակատարությունը և հավաստիությունը թույլ չի տալիս օգտագործել վիճակագրական կամ այլ կազմավորված մեթոդներ ռիսկի քանակական գնահատման համար: Փորձագիտական մեթոդը կիրառում են աշխատանքի նախնական փուլերում այն դեպքում, եթե մուտքի տեղեկատվության ծավալն անբավարար է հանդիսանում արդյունավետության քանակական գնահատականի համար (արդյունքների վրիպումը գերազանցում է 30%):

Այս մեթոդի թերություններին են վերաբերվում ստացված գնահատականների հավաստիության երաշխիքի բացակայությունը, ինչպես նաև փորձագետների հարցում անցկացնելու և ստացված տվյալների մշակման հետ կապված բարդությունները: Փորձագիտական գնահատականների հավաստիության աճը պահանջում է ըստ շատ չափանիշների փորձագետների ընտրության և փորձագետների կարծիքների մշակման որակական մեթոդների համապատասխան ընթացակարգ:

Ինչպես ցույց է տալիս գործունեության տարբեր ոլորտներում փորձագիտական գնահատականների օգտագործման փորձը, փորձագիտության ընթացակարգերի ճիշտ կազմակերպման և փորձագետների կարծիքների համաձայնեցման դեպքում, որը որոշվում է հատուկ մեթոդներով, գնահատականների արժանահավատությունը երաշխավորվում է:

Ռիսկի գնահատման համար ներգրավվող փորձագետներին պետք է հասանելի լինեն.

- նախագծի մասին մշակողի տրամադրության տակ գտնվող ամբողջ տեղեկատվությունը,
- փորձագետները պետք է ունենան դատողության բավարար ստեղծագործական մակարդակ,
- համապատասխան առարկայի բնագավառում ունենան գիտելիքների անհրաժեշտ մակարդակ,
- ազատ լինեն նախագծի վերաբերյալ անձնական նախապատվություններից,
- հնարավորություն ունենան գնահատել նույնականացված ռիսկերի ցանկացած թիվ:

**Փորձագիտական վերլուծության ալգորիթմն** ունի հետևյալ հաջորդականությունը

- ըստ ռիսկի յուրաքանչյուր տեսակի որոշվում է սահմանային մակարդակը, որն ընդունելի է կազմակերպության համար: Ռիսկերի սահմանային մակարդակը որոշվում է ըստ 100 բալանի սանդղակի;
- սահմանվում է՝ անհրաժեշտության դեպքում, փորձագետների իրազեկության մակարդակի դիֆերենցված գնահատականը, որը գաղտնիք է հանդիսանում: Գնահատականը դրվում է ըստ տասը բալանի սանդղակի;
- ռիսկերը փորձագետների կողմից գնահատվում են ռիսկային իրադարձության տեղի ունենալու հավանականության տեսանկյունից (միավորի մասերով) և տվյալ ռիսկերի վտանգի տեսանկյունից նախագծի հաջող ավարտի համար (100 բալանի սանդղակով);
- փորձագետների կողմից ըստ ռիսկի յուրաքանչյուր տեսակի դրվող գնահատականները մշակողի կողմից բերվում են աղյուսակում: Դրանցում որոշվում է ինտեգրալային մակարդակը, ըստ ռիսկի յուրաքանչյուր տեսակի;

- համեմատվում են փորձագիտական հարցումի արդյունքում ստացված ռիսկերի ինտեգրալային մակարդակը և ռիսկի տվյալ տեսակի համար սահմանային մակարդակը, և որոշում է կայացվում ռիսկի տվյալ տեսակի ընդունելի լինելու մասին;
- այն դեպքում, երբ ռիսկերի մեկ կամ մի քանի տեսակների ընդունված սահմանային մակարդակը ցածր է ստացված ինտեգրալային նշանակություններից, մշակվում է միջոցառումների համալիր, որոնք ուղղված են ի հայտ բերված ռիսկերի ազդեցության նվազեցմանը նախագծի իրականացման հաջողության վրա և իրականացվում է ռիսկերի կրկնակի վերլուծություն:

**Փորձագիտական մեթոդն** իրենից ներկայացնում է փորձագետների գնահատականների մշակում ըստ ռիսկերի յուրաքանչյուր տեսակի և ռիսկի ինտեգրալ մակարդակի որոշում:

Դրա տարատեսակներն են հանդիսանում:

**Դելֆիի մեթոդը,** որի դեպքում փորձագետները պատասխանները համատեղ քննարկելու և ղեկավարի կարծիքը հաշվի առնելու հնարավորությունից զրկված են: Այս մեթոդը թույլ է տալիս բարձրացնել փորձագիտական գնահատականների օբյեկտիվության մակարդակը:

Դրական կողմեր են հաշվարկների պարզությունը, ճշգրիտ տեղեկատվություն ունենալու և համակարգիչներ կիրառելու անհրաժեշտությունը:

Բացասական կողմերն են գնահատականների սուբյեկտիվությունը:

**Կորուստների տեղի ունենալու** վերլուծության մեթոդը ուղղված է դեպի ռիսկերի պոտենցիալ գոտիների հայտնաբերումը և օգտագործվում է այն անձի կողմից, ով որոշում է կայացնում միջոցների ներդրման, կապիտալին սպառնացող ռիսկը մինիմալին հասցնելու համար: Ենթադրվում է, որ միջոցների գերծախսը կարող

է առաջանալ չորս հիմնական գործոններից մեկից կամ նրանց համակցություններից.

- ամբողջությամբ նախագծի կամ նրա առանձին փուլերի և բաղկացուցիչների արժեքի նախնական թերագնահատումը,
- նախագծման սահմանների փոփոխությունը, պայմանավորված չնախատեսված հանգամանքներով,
- զանազանությունը արտադրողականության մեջ (արտադրողականության տարբերությունը նախագծով նախատեսվածից),
- նախնականի հետ համեմատած նախագծի արժեքի մեծացումը սղաճի կամ հարկային օրենսդրության փոփոխության հետևանքով:

Այս գործոնները կարող են մանրամասնվել: Տիպային ցանկի բազայի վրա կարելի է կազմել ծախսերի հնարավոր աճի մանրամասն ստուգիչ ցանկ ըստ հոդվածների ՝ նախագծի յուրաքանչյուր տարբերակի կամ նրա տարրերի համար:

**Համանմանությունների մեթոդը** ենթադրում է վերլուծական նախագծերի վերլուծությունը՝ գնահատվող նախագծի պոտենցիալ ռիսկի հայտնաբերման համար: Առավել կիրառելի է կրկնվող նախագծերի ռիսկի գնահատման դեպքում: Համանմանությունների մեթոդը ավելի հաճախ գործածվում է այն դեպքում, երբ ռիսկի գնահատման այլ մեթոդներն անընդունելի են և կապված է համանման նախագծերի ռիսկերի վերաբերյալ տվյալների բազայի օգտագործման հետ: Համանմանությունների մեթոդի օգնությամբ ռիսկերի վերլուծություն անցկացնելիս կարևոր երևույթ է հանդիսանում նախագծերի գնահատումը դրանց ավարտից հետո, որը կիրառվում է մի շարք հայտնի բանկերի կողմից, օրինակ, Համաշխարհային բանկի: Այդպիսի հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները մշակվում են ավարտված նախագծերում կախվածությունների հայտնաբերման համար, որը թույլ է տալիս հայտնաբերել պոտենցիալ ռիսկը՝ նոր ներդրումային նախագիծ իրականացնելիս:

**Սցենարների մեթոդն** իրենից ներկայացնում է բարձր որակավորում ունեցող փորձագետների կողմից իրավիճակի զարգացման մի քանի հնարավոր տարբերակների կանխորոշման մեթոդը:

Սցենարային վերլուծությունը կարող է գործածվել նաև որպես ռիսկային արժեքի ստանդարտ հաշվարկի լրացում, որն արտացոլում է միայն նորմալ, շուկայական ռիսկը:

Յուրաքանչյուր սցենարի հիմք կազմում են պորտֆելի արժեքի շուկայական գործոնների փոփոխությունների մեծության և ուղղության մասին փորձագիտական վարկածները (ենթադրությունները), այնպիսին, ինչպիսիք են տոկոսադրույքները, տարադրամի փոխարժեքները, բաժնետոմսերի և ապրանքների գները և այլն՝ կանխորոշման ժամանակաշրջանի նկատմամբ: Այնուհետև այդ ենթադրություններին համապատասխան կատարվում է պորտֆելի արժեքի վերագնահատում: Ստացված արժեքի փոփոխությունն էլ հանդիսանում է պոտենցիալ կորուստների գնահատականը:

Սցենարային մոտեցման գլխավոր արժանիքը կայանում է նրանում, որ այն չի պահանջում փոփոխությունների տեղաբաշխման հավանականությունների օրենքի իմացություն՝ հիմնական շուկայական գործոնների համար: Մյուս կողմից, ցանկացած սցենարային գնահատականներ կրում են սուբյեկտիվության կնիքը, բացի այդ, նրանք հիմնվում են ոչ պարզ ենթադրության վրա, որ ապագայում ակտիվների վարքը կունենա նմանություն անցյալում նրանց վարքին, ինչն ընդհանուր առմամբ հեռու է ակնհայտ լինելուց:

Սցենարային մոտեցումն իրականացվում է **պորտֆելի կայունության թեստավորման** (stress testing) ընթացակարգում: Որպես սցենար կարող են ընտրվել շուկայական գործոնների առավել անբարենպաստ փոփոխությունների դեպքերը, որոնք տեղ էին գտել անցյալում: Ուրիշ այլընտրանք է հանդիսանում վարկածային սցենարի կազմումը, որտեղ մոդելավորվում են

շուկայական գործոնների էքստրեմալ տատանումները, որոնց թափն ընդունվում է, օրինակ, ստանդարտ շեղումների 5 կամ 10 մեծությանը հավասար:

Էքստրեմալ իրադարձությունների կայունության նկատմամբ պորտֆելի թեստավորման նպատակն է հանդիսանում ռիսկերի կառավարման համակարգերի ունակության ստուգումը՝ դիմադրել իրավիճակի անբարենպաստ զարգացմանը: Մասնավորապես, ճգնաժամային շրջաններում կտրուկ նվազում է ֆինանսական գործիքների իրացվելիությունը, ինչն անհնարին է դարձնում անվնասաբեր գործառությունների անցկացումը՝ ապրանքների գների և վաճառքի միջև սպրեդի պատճառով: Նման իրավիճակներում ընկերությունները, որոնք գործածում են ֆյուչերսային պայմանագրեր հեջավորման համար, հաճախ բախվում են միջոցների ժամանակավոր անբավարարության հետ, ժամկետային շուկայում իրենց դիրքերի ընթացիկ ֆինանսավորման համար: Իրացվելիության ռիսկի նման դրսևորումները նույնպես կարող են հաջող կերպով մոդելավորվել սցենարային մոտեցման օգնությամբ:

Սցենարների մեթոդը թույլ է տալիս ռիսկերի վերաբերյալ բավականաչափ ակնառու պատկեր ստանալ գործարքի կատարման զանազան տարբերակների համար: Այն միաժամանակ հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն ստանալ նաև զգայունության և գործարքում հնարավոր շեղումների մասին: Իսկ համակարգչային ծրագրային միջոցների կիրառումը թույլ է տալիս բարձրացնել նման գնահատման արդյունավետությունը՝ սցենարների թվի գրեթե անսահման մեծացման և լրացուցիչ փոփոխականների ներմուծման եղանակով:

Ռիսկերի գնահատման մեխանիզմը հիմնված է ոչ պարզորոշ տրամաբանության մեթոդի վրա, որը ըստ էության հանդիսանում է փորձագիտական մի համակարգ, որտեղ գիտելիքների հենք են կազմում մուտքային մեծությունների և ռիսկի փոխկապակցվածության տրամաբանություն արտահայտող

կանոնները, որոնք ձևականացված են «եթե..., ապա...» պատճառահետևանքային տեսակի կանոնների օգնությամբ:

Ժամանակակից ռիսկ-մենեջմենթի, որը ֆորմալիզացիան հավանականության մոտեցման հիման վրա է օգտագործում, հիմք է հանդիսանում *ռիսկային արժեքի հայեցակարգը:*

Ռիսկ-մենեջմենթի փորձում միշտ գոյություն է ունեցել ակտիվների պորտֆելի արժեքի հնարավոր կորուստների միասնական, օպերատիվ և բոլորի կողմից հասկանալի գնահատման կարիք՝ որոշակի ժամանակահատվածում: Ռիսկային արժեքի ցուցանիշը հենց համապատասխանում է այդ բոլոր պահանջներին: Այն մշակվել է 1980-ականների վերջերին և անմիջապես ընդունվել է ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցների կողմից:

**Ռիսկային արժեքը** (VaR) արտացոլում է հնարավոր վնասները ֆինանսական գործիքի, ակտիվների պորտֆելի, ընկերության և այլն արժեքի փոփոխությունից, որը կարող է տեղի ունենալ որոշակի ժամանակաշրջանում դրա առաջացման *առաջադրված* հավանականությամբ: Օրինակ, երբ ասում են, որ 1 օրվա համար ռիսկային արժեքը կազմում է 100 հազ. դրամ 95% հավատարմագրային միջակայքով (կամ 5% կորստի հավանականությամբ) դա նշանակում է, որ 1 օրվա ընթացքում 100 հազ. դրամը գերազանցող կորուստները կարող են տեղի ունենալ ոչ ավել, քան 5% դեպքերում:

Այլ կերպ՝ ռիսկային արժեքը, դա կորստի չափն է, որը կարող է ավելացվել x%-ից ավել հավանականությամբ (չի գերազանցի (100-x)% հավանականությունը հետագա n օրերի ընթացքում:

Ռիսկային արժեքի մեծությունը որոշելու համար, անհրաժեշտ է իմանալ շահույթների և կորուստների չափերի և դրանց ի հայտ գալու հավանականությունների միջև կախվածությունը, այսինքն, շահույթների և կորուստների հավանականությունների տեղաբաշխումն ժամանակի ընտրված միջակայքի ընթացքում: Այդ դեպքում ըստ առաջադրված նշանակության կորուստների

հավանականությունները կարելի է միաձշանակ սահմանել համապատասխան վնասի չափով: Սակայն հավանականությունների տեղաբաշխման իրական օրենքը մեծ մասամբ անհայտ է:

Ռիսկային արժեք սահմանելիս հիմնական *ցուցանիշները* հանդիսանում են հավատարմագրված միջակայքերը և ժամանակի հորիզոնը: Քանի որ վնասները հանդիսանում են շուկայում տեղի ունեցող տատանումների հետևանք, հավատարմագրված միջակայք է ծառայում այն սահմանը, որը առանձնացնում է շուկայի «նորմալ» տատանումները էքստրեմալ գնային տատանումներից՝ ըստ դրանց դրսևորման հաճախականության: Սովորաբար, վնասների հավանականությունը սահմանվում է 1%, 2,5% կամ 5% մակարդակի վրա (համապատասխան հավատարմագրված միջակայքը կազմում է 99%, 97,5% և 95%), սակայն ռիսկ- մենեջերը կարող է ընտրել որևէ այլ նշանակություն՝ համապատասխան կապիտալի կառավարման այն ռազմավարությանը, որին հետևում է տվյալ ընկերությունը: Բացի սուբյեկտիվ գնահատականից, հավատարմագրված միջակայքը կարող է սահմանվել նաև օբյեկտիվ մեթոդով: Դրա համար կառուցում են շահույթների և վնասների տեղաբաշխման հավանականությունների իրապես դիտվող (էմպիրիկ) գրաֆիկ և այն համատեղում են նորմալ տեղաբաշխման խտության գրաֆիկի հետ: Էմպիրիկ և նորմալ տեղաբաշխման «պոչերի» հատման կետերն էլ կառաջադրեն որոնելի միջակայքը: Հարկ է հաշվի առնել, որ հավատարմագրված միջակայքի մեծացումով ռիսկային արժեքի ցուցիչը կաճի: Ակնհայտ է, որ կորուստները, որոնք տեղի են ունենում մինչև 1% հավանականությամբ, ավելի բարձր կլինեն, քան 5% հավանականությամբ առաջացած կորուստները:

Ժամանակի հորիզոնի ընտրությունը կախված է նրանից, թե որքան հաճախ են տեղի ունենում գործարքները տվյալ ակտիվներով, ինչպես նաև դրանց իրացվելիությունից: Ֆինանսական ինստիտուտների համար, որոնք ակտիվ

գործառույթներ են վարում կապիտալի շուկայում, հաշվարկի տիպիկ շրջան է հանդիսանում 1 օրը, այն դեպքում, երբ ռազմավարական ներդրողները և ոչ ֆինանսական ընկերությունները կարող են օգտագործել նաև մեծ ժամանակաշրջաններ: Բացի այդ, ժամանակի հորիզոն սահմանելիս, հարկ է հաշվի առնել ըստ շահույթների և վնասների տեղաբաշխման վիճակագրության առկայությունը ժամանակի ցանկալի միջակայքի համար: Ժամանակի հորիզոնի երկարաձգման հետ մեկտեղ աճում է նաև ռիսկային արժեքի ցուցիչը: Ներըմբռնողաբար հասկանալի է, որ շահույթներն ու վնասները, օրինակ 5 օրվա համար, կարող են ունենալ մեծ մասշտաբներ, քան 1 օրվա համար: Գործնականում համարում են, որ n օրերի ընթացքում ռիսկային արժեքի մեծությունը մոտավորապես $\sqrt{n}$ անգամ ավելի է, քան 1 օրվա համար:

Հարկ է հիշել, որ ռիսկային արժեքի հայեցակարգը ոչ ակնհայտորեն ենթադրում է, որ գնահատվող ակտիվների պորտֆելի կազմն ու կառուցվածքն անփոփոխ կմնան ամբողջ ժամանակային հորիզոնի ընթացքում: Այդպիսի ենթադրությունը հազիվ թե արդարացված է ժամանակի համեմատաբար մեծ միջակայքերի համար, դրա համար պորտֆելի յուրաքանչյուր նորացման ժամանակ անհրաժեշտ է խմբագրել ռիսկային ակտիվի մեծությունը:

Ռիսկային արժեքի ցուցիչը, իհարկե, չի հանդիսանում ռիսկերի գնահատման միակ և ունիվերսալ գործիք: Որպես կանոն, ռիսկային արժեքի հաշվարկն ուղեկցվում է մի քանի հնարավոր սցենարների մանրամասն վերլուծությամբ, հավանականությունների տեղաբաշխման էմպիրիկ մոդելավորմամբ և պորտֆելի կայունության թեստավորումով՝ հիմնական պարամետրերի փոփոխությունների նկատմամբ: Ռիսկային արժեքի մեծությունը որպես շուկայական ռիսկի ընդհանրացնող գնահատական անհրաժեշտ է առաջին հերթին

ընկերության բարձրագույն ղեկավարության կողմից օպերատիվ որոշումներ կայացնելու համար:

Ռիսկային արժեքի ցուցիչի հաշվարկի համար օգտագործվում են երեք տարբեր տնտեսա-մաթեմատիկական մեթոդներ՝ վերլուծական, պատմական մոդելավորման մեթոդը և Մոնթե-Կարլոյի վիճակագրական փորձարկումների մեթոդը: Դրանցից առաջինը հանդիսանում է պարամետրիկ և թույլ է տալիս գնահատականներ ստանալ փակ (մեկուսի) տեսքով, իսկ մյուս երկուսը ներկայացնում են յուրատեսակ մաթեմատիկական փորձարկում: Այդ մեթոդների նախնական փուլ և իրագործման անհրաժեշտ պայման է հանդիսանում այսպես կոչված «ռիսկի շուկայական գործոնների որոշումը, այսինքն, հիմնական գների և տոկոսադրույքների, որոնք ազդեցություն են թողնում պորտֆելի արժեքի վրա: Շուկայական գործոնների սահմանափակ հավաքակազմի առանձնացումը թույլ է տալիս ֆինանսական գործիքի գինը ներկայացնել որպես այդ գործոնների ֆունկցիա և դրանով որոշել պորտֆելի արժեքի քանակական նկարագրության գլխավոր հիմնախնդիրը:

Շուկայական գործոնների որոշումը ենթադրում է պորտֆելի մեջ մտնող ֆինանսական գործիքների տարրալուծումը անմիջականորեն ռիսկի շուկայական գործոնների հետ կապված ավելի պարզ գործիքների, և նրանց հետագա դիտարկումը որպես «ենթապրոֆիլներ» կամ դիրքեր, որոնք կազմված են այդպիսի նախնական գործիքներից: Օրինակ ֆորվարդային պայմանագրի գինը մեկ տարադրամը մեկ այլ տարադրամով փոխանակելու մատակարարման համար կախված է երեք շուկայական գործոններից. «մեկ տարադրամի մյուսի նկատմամբ «սփոթ» փոխանակման կուրսից և երկու տոկոսադրույքներից՝ ըստ պայմանագրի տարադրամներից յուրաքանչյուրի: Պորտֆելի մեջ մտնող բոլոր գործիքների համար, պետք է ստացվեն վերլուծական կախվածություններ, որոնք արտահայտում են դրանց ընթացիկ արժեքը ռիսկի շուկայական գործոնների միջոցով: Որոշ դեպքերում,

երբ արժեքի ճշգրիտ բանաձևն անհայտ է, գործիքի արժեքի գնահատման համար կիրառում են թվային մեթոդներ: Դա առավել բարդ փուլ է, քանի որ խոշոր ֆինանսական ինստիտուտի համար այդպիսի գործոնների քանակը կարող է 100-ներով լինել: Հետագա փուլերը ներառում են շուկայական գործոնների ապագայում ակնկալվող նշանակությունների վիճակագրական տեղաբաշխման ցուցանիշների տեսակի և գնահատման որոշումը, ստացված նշանակությունների և վերլուծական կախվածությունների օգտագործումը տարբեր դիրքորոշման արժեքների պոտենցիալ փոփոխությունները որոշելու համար, որոնք կազմում են պորտֆելը և արժեքի փոփոխության հետագա՝ ըստ կարգի դասավորության և հանրագումարի բերելը բոլոր դիրքորոշումներում ամբողջ պորտֆելի արժեքի ակնկալվող փոփոխությունների գնահատման համար:

**Վերլուծական (կովարիացիոն, դելտա-նորմալ) մեթոդը** հիմնվում է ֆինանսական ակտիվների պորտֆելի դասական տեսության վրա: Վերլուծական մեթոդի ամենահայտնի իրագործում է հանդիսանում Risk Metrics-ի համակարգը, մշակված J.P.Մորգան բանկի կողմից: Որպես հիմնական վարկած ենթադրվում է, որ ռիսկի շուկայական գործոնների փոփոխություններն ունեն նորմալ տեղաբաշխում: Այդ ենթադրությունը թույլ է տալիս որոշել շահույթների և վնասների տեղաբաշխումն ամբողջ պորտֆելի համար, որը նույնպես նորմալ կլինի: Այնուհետև, իմանալով նորմալ տեղաբաշխման օրենքի հատկությունները հեշտությամբ կարելի է հաշվել վնասը, որը տեղի կունենա առաջադրված տոկոսի դեպքերից ոչ ավելի հաճախ:

Վերլուծական մեթոդի անկյունաքարն է հանդիսանում ռիսկի պատկերման ընթացակարգը (անգլ. Risk mapping): Այն ենթադրում է պորտֆելից յուրաքանչյուր գործիքի տարրալուծումը բազմաթիվ ավելի պարզ, ստանդարտ գործիքների և դիրքորոշումների, ընդ որում յուրաքանչյուր ստանդարտ դիրքորոշում պետք է արտացոլի ռիսկի միայն մեկ շուկայական գործոն: Յուրաքանչյուր

ստանդարտ դիրքորոշման համար սահմանվում է նրա ընթացիկ արժեքը, որպես ֆունկցիա միակ շուկայական գործոնից, այն պայմանով, որ ռիսկի այլ շուկայական գործոնների նշանակությունները հանդիսանում են ֆիքսված: Օպցիոնների գնահատման համար գործածվում է գծային ապրոքսիմացիա, որի դեպքում օպցիոնների արժեքը արտահայտվում է սփոթի դելտա-համարժեք դիրքորոշման տեսքով:

Այսպիսով, ֆինանսական գործիքների ելքային պորտֆելը ներկայացվում է ստանդարտ դիրքորոշումների համարժեք պորտֆելի տեսքով: Համարժեքությունը, որն ընդհանուր առմամբ կարող է լինել միայն մոտավոր, նշանակում է, որ ստանդարտ դիրքորոշումների պորտֆելն ունի նույնպիսի զգայունություն շուկայական գործոնների նշանակությունների փոփոխությունների նկատմամբ: Ռիսկային արժեքի մեծությունը որոշվում է հենց ստանդարտ դիրքորոշումենրի համարժեք պորտֆելի համար: Նման ապրոքսիմացիան տալիս է լավ արդյունքներ, եթե ստանդարտ դիրքորոշումների թիվը բավականաչափ մեծ է և պորտֆելը չի պարունակում օպցիոնների և նրանց վրա հիմնված գործիքների մեծ քանակ, որոնց գնահատման համար ապրոքսիամցիան կարող է լինել ոչ համազոր:

Հաջորդ փուլում ենթադրություն է արվում, որ մեկօրյա տոկոսային փոփոխությունները կամ ռիսկի գործոնների նշանակությունների լոգարիթմների աճերը ունեն նորմալ տեղաբաշխում մաթեմատիկական սպասման հետ, որը հավասար է զրոյի: Յուրաքանչյուր շուկայական գործոնի համար բերվում է միջին քառակուսային շեղման մեծության վիճակագրական գնահատականը, ինչպես նաև գործոնների տարբեր զույգերի միջև հաշվարկվում է կորելյացիոն գործակիցները: Ստացված արդյունքներն օգտագործվում են որոշելու միջին քառակուսային շեղումների կորելյացիոն գործակիցները ստանդարտ դիրքորոշումների արժեքների համար: Ստանդարտ դիրքորոշման միջին քառակուսային շեղումը հաշվարկվում է որպես

համապատասխան շուկայական գործոնի միջին քառակուսային շեղման արտադրյալ՝ ըստ տվյալ շուկայական գործոնի դիրքորոշման ճկունության արժեքի գործակցի հետ (դիրքորոշման արժեքի տոկոսային փոփոխությունը շուկայական գործոնի մեծության 1%-ով փոփոխության դեպքում): Կորելյացիայի գործակիցները ստանդարտ դիրքորոշումների համար հավասար են կորելյացիայի գործակիցներին համապատասխան շուկայական գործոնների միջև, բացառությամբ նրա, որ կորելյացիայի գործակիցը փոխում է նշանը, եթե ստանդարտ դիրքորոշման արժեքը հակառակ է փոփոխվում՝ շուկայական գործոնի փոփոխության նկատմամբ:

Այնուհետև կազմվում է ստանդարտ դիրքորոշումների արժեքների փոփոխության կովարիացիոն մատրիցան: Այդ մատրիցայի և դիսպերսիայի բանաձևի օգնությամբ նորմալ տեղաբաշխված փոփոխականների գումարի համար կարելի է հաշվարկել ստանդարտ դիրքորոշումներից բաղկացած պորտֆելի արժեքի դիսպերսիան:

Կովարիացիոն մատրիցան բազմապատկվում է ձախից և աջից դիրքորոշումների արժեքների նշանակությունների վեկտորով, որի արդյունքում հաշվարկվում է պորտֆելի դիսպերսիայի նշանակությունը, որտեղից քառակուսի արմատ հանելու միջոցով գտնվում է նրա միջին քառակուսային շեղումը: Ի վերջո, նորմալ տեղաբաշխման հատկությունների հիման վրա որոշվում է ռիսկիային արժեքի նշանակությունը: Այսպես, եթե հավատարմագրման միջակայքն առաջադրված է 95% մակարդակի վրա, ապա ռիսկային արժեքի մեծությունը հավասար է 1,65 պորտֆելի ստանդարտ շեղմանը: Այսպիսով, ռիսկային արժեքի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$VaR = Z \cdot \sqrt{t} \cdot \sqrt{p \cdot Q \cdot p^T},$$

որտեղ Z-ը միջին քառակուսային շեղումների քանակն է, որը համապատասխանում է առաջադրված հավատարմագրման միջակայքին, t- ժամանակային հորիզոնն է, p-դիրքորոշման չափի

վեկտորը, $Q$- դիրքորոշման արժեքի փոփոխությունների կովարիացիոն մատրիցան:

**Պատմական մոդելավորման մեթոդը** (historical simulation) հանդիսանում է համեմատաբար պարզ մոտեցում, որն ի տարբերություն վերլուծական մեթոդի, չի հիմնվում հավանականությունների տեսության վրա և պահանջում է համեմատաբար ոչ մեծ թվով ենթադրություններ ռիսկի գործոնների համար շուկայական վիճակագրական տեղաբաշխումների վերաբերյալ: Ինչպես և վերլուծական մեթոդում, պորտֆելի գործիքների արժեքները պետք է վաղօրոք ներկայացվեն որպես ռիսկի շուկայական գործոնների ֆունկցիաներ:

Շահույթների և վնասների որոնելի տեղաբաշխումը գտնվում է էմպիրիկ ճանապարհով: Ընթացիկ պորտֆելը ենթարկվում է ռիսկի շուկայական գործոնների նշանակությունների իրական փոփոխությունների ազդեցությանը, որոնք դիտվում էին անցյալում, օրինակ, վերջին n ժամանակահատվածներում: Դրա համար կառուցվում է շուկայական գործոնների վարկածային նշանակությունների n բազմություն նրանց ներկայիս նշանակությունների և վերջին n ժամանակահատվածներում տոկոսային փոփոխությունների հիման վրա: Այսպիսով, ստացված վարկածային նշանակությունները հիմնված են իրական տվյալների վրա, բայց նրանց հետ նույնական չեն: Շուկայական գործոնների նշանակությունների հիման վրա հաշվարկվում է պորտֆելային արժեքի n վարկածային նշանակությունները: Այդ նշանակությունների համեմատումը պորտֆելային ընթացիկ արժեքի հետ հնարավորություն է տալիս գտնել շահույթների և վնասների n մեծությունները, առաջացած շուկայական գործոնների փոփոխությամբ: Ստացված մեծությունները նույնպես վարկածային են, քանի որ պորտֆելը կարող էր ունենալ տարբեր կազմ վերջին n ժամանակահատվածների ընթացքում: Վերջին փուլ է հանդիսանում պորտֆելային արժեքի փոփոխությունների արդյունքում ստացված շահույթների և վնասների

հավանականությունների էմպիրիկ տեղաբաշխման կառուցումը, և ռիսկային արժեքի մեծության որոշումը:

**Մոնթե-Կարլոյի վիճակագրական փորձարկումների մեթոդը** (*Monte-Carlo simulation*) նույնպես վերաբերվում է նմանակեղծման մոդելավորման մեթոդներին և ունի մի շարք ընդհանուր առանձնահատկություններ պատմական մոդելավորման մեթոդի հետ:

Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ Մոնթե-Կարլոյի մեթոդում չի կատարվում մոդելավորում՝ շուկայական գործոնների իրապես դիտվող նշանակությունների օգտագործմամբ: Դրա փոխարեն ընտրվում է վիճակագրական տեղաբաշխումը, որը լավ ապրոքսիմացնում է շուկայական գործոնների դիտվող փոփոխությունները և կատարվում է նրա ցուցանիշների գնահատում: Այդ նպատակի համար հաճախ գործածվում է «Ստյուդենտի» տեղաբաշխումը կամ նորմալ տեղաբաշխումների խառնուրդը: Այնուհետև ընտրված տեղաբաշխման հիման վրա կեղծ պատահական թվերի գեներատորի օգնությամբ գեներացիայի են ենթարկվում շուկայական գործոնների հազարավոր և նույնիսկ տասնյակ հազարավոր վարկածային հավաքակազմերը: Ստացված նշանակություններն օգտագործվում են պորտֆելի արժեքի փոփոխությամբ առաջացած շահույթների և վնասների մեծությունների հաշվարկի համար: Վերջին փուլում կառուցվում է պորտֆելի շահույթների և վնասների տեղաբաշխումը և որոշվում է ռիսկային արժեքի մեծությունը:

Ռիսկային արժեքի ցուցանիշի հաշվարկի մեթոդի ընտրությունը կորոշվի պորտֆելի կազմով և կառուցվածքով, վիճակագրական տվյալների և ծրագրային ապահովման հասանելիությամբ, հաշվարկային հզորություններով և մի շարք այլ գործոններով:

Վերլուծական մեթոդը զիջում է նմանակեղծման մոդելավորման մեթոդներին այն պորտֆելի ռիսկի գնահատման հուսալիության հարցում, որը բաղկացած է օպցիոններից և նրանց վրա հիմնված

գործիքներից, որոնց արժեքը կախված է շուկայական գործոններից ոչ գծային ձևով, հատկապես, համեմատաբար մեծ ժամանակային հորիզոններում: Պատմական մոդելավորման մեթոդը հայեցակարգորեն պարզ է և առավել հասանելի բարձրագույն ղեկավարության ըմբռնմանը, սակայն դրա իրականացումը պահանջում է նշանակությունների ժամանակային շարքերի առկայություն ըստ հաշվարկներում գործածվող բոլոր շուկայական գործոնների, ինչը միշտ չէ, որ հնարավոր է խիստ դիվերսիֆիկացված պորտֆելների համար: Հատկապես դա վերաբերվում է ըստ տոկոսադրույքների տվյալներին՝ զարգացած ֆինանսական շուկաներ չունեցող երկրների տարադրամների համար: Բացի այդ, պատմական մոդելավորումը ենթադրում է, որ անցյալում շուկայի վարքը կկրկնվի նաև ապագայում, ինչն ընդհանուր առմամբ ճիշտ չէ: Մոնթե-Կարլոյի մեթոդի իրականացման ժամանակ գլխավոր դժվարությունը հանդիսանում է համազոր տեղաբաշխման ընտրությունը՝ յուրաքանչյուր շուկայական գնահատականի համար և նրա ցուցանիշների գնահատականը:

*Ստուգողական հարցեր*

1. Ինչու՞մն է կայանում ռիսկերի գնահատման վիճակագրական մեթոդը:
2. Ինչու՞մն է կայանում ռիսկերի գնահատման փորձագիտական մեթոդը:
3. Ինչպիսի՞ հաջորդականություն պետք է ունենա ռիսկերի փորձագիտական վերլուծության ալգորիթմը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկերի գնահատման սցենարային մեթոդը:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում պատմական մոդելավորման մեթոդը:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում Մոնթե-Կարլոյի վիճակագրական փորձարկումների մեթոդը:

# ԳԼՈՒԽ 5
# ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

*Մկրաձիր նախքան գումար ներդնելը եւ մի մոռացիր մկրաձել, երբ արդեն ներդրել ես*
*Ֆ. Դրյլ*

## 5.1 Ռիսկի ապահովագրումը

Ցանկացած գործունեության հաջողության հասնելու նախադրյալ է հանդիսանում ռիսկերի գրագետ կառավարումը, որի ընթացում սուբյեկտը պետք է կարողանա տարբերակել ռիսկի կառավարման ռազմավարությունները՝ միևնույն ժամանակ ընտրելով իր համար նախընտրելի տարբերակը:

Առաջինը՝ *խուսափում ռիսկից* տարբերակն է: Փաստացի վերցված այն ենթադրում է գործունեության լճացում, քանզի այդ դեպքում արդյունքների ստացումը դառնում են խնդրահարույց: Կարելի է ենթադրել, որ ճիշտ լուծումը հենց դա է՝ հրաժարվել գործունեությունից, որը կապված է ռիսկի հետ, վախենալով անհաջողության հասնելու: Բայց տվյալ տարբերակի ընտրությունը չի հանդիսանում խնդրի օպտիմալ լուծում: Արտաքին (հաճախ նաև ներքին) տնտեսական գործոնների անորոշությունը կարող է բերել բավականին բարձր արդյունքների:

Երկրորդ տարբերակը դա *ռիսկի ընդունումն* է: Այս ռազմավարությունը ենթադրում է, որ մտածված ընդունում են ռիսկի առկայությունը, սակայն այս տարբերակը նույնպես չի հանդիսանում խնդրի օպտիմալ լուծումն այն հանգամանքների պատճառով, որ հավանական վերջնական արդյունքը չի կարող համընկնել նախագծվողի հետ:

Երրորդ տարբերակը դա *ռիսկի կառավարումն* է, այսինքն ռիսկի որոշակիացում և գնահատում, ինչպես նաև միջոցառումների ձեռնարկում այն նվազեցնելու նպատակով: Եվ հեց դա է, որ

համարվում է առաջնահերթ ռազմավարություններից մեկը, որը նպատակաուղված է հաջողության հասնելու:

Ռիսկի կառավարումը սուբյեկտից պահանջում է ոչ միայն ռիսկի աստիճանի որոշում, նրա գնահատում, վերլուծություն և այլն, այլ նաև հնարավոր կորուստներից խուսափելու միջոցառումների իրականացում:

Քանի որ յուրաքանչյուր գործարք գտնվում է ռիսկի որոշակի աստիճանի ազդեցության տակ, ռիսկի կառավարման սկզբունքների կիրառումը թույլ է տալիս նվազեցնել հնարավոր կորուստը և ստանալ ակնկալվող շահույթը:

Ռիսկի կառավարման ընթացքում անհրաժեշտ է օգտագործել ռիսկերի նվազեցման մեխանիզմները, որոնց հիմնական եղանակներն են.

- ապահովագրությունը,
- ֆինասավորումը,
- հեջավորումը,
- դիվերսիֆիկացիան:

Ռիսկի կառավարման ռազմավարության մեջ հաճախ անհրաժեշտ է լինում այն փոխանցել «երրորդ» անձանց (ապահովագրական ընկերություն, բանկ և այլն): Սովորաբար մարդուն պետք է վճարել, որպեսզի նա իր վրա վերցնի ռիսկը, և, որքան մեծ է ռիսկը, այնքան մեծ է պահանջվող հատուցումը:

Ռիսկերի ապահովագրման էությունը կայանում է ապահովագրվողից դեպի ապահովագրող (ապահովագրական ընկերություն) ռիսկերի փոխանցման մեջ: Միևնույն ժամանակ ապահովագրությունը չի դնում իր առջև ռիսկերի արտահայտման հավանականության նվազեցումը, այլ նպատակաուղղված է ռիսկերի արտահայտումից առաջացած հնարավոր վնասի փոխհատուցման վրա:

**Ապահովագրումը** ռիսկի աստիճանի իջեցման ամենակարևոր և տարածված եղանակներից մեկն է: Նրա էությունն այն է, որ ձեռնարկությունը ռիսկից խուսափելու համար պատրաստ է

հրաժարվել իր եկամուտների մի մասից, այսինքն պատրաստ է վճարել ռիսկի աստիճանի նվազեցման համար:

Մաքուր ռիսկերի մեծ մասը (բայց ոչ բոլորը) ենթակա են ապահովագրման, սակայն սպեկուլյատիվ ռիսկերը ընդհանրապես չեն ապահովագրվում: Չապահովագրվող ռիսկը դա ռիսկ է, որի ապահովագրումից խուսափում են ապահովագրական կազմակերպությունների մեծ մասը, քանի որ նրա հետ կապված վնասների հավանականությունը գրեթե անկանխատեսելի է: Կարելի է գնել ապահովագրություն տարերային աղետներից, օրինակ՝ ջրհեղեղից կամ երկրաշարժից: Սակայն ապահովագրական կազմակերպությունները, մեղմ ասած, դժկամորեն են ընդունում համագործակցության հնարավորությունը այն դեպքերում, երբ ռիսկը կապված է պետական պարտատոմսերի կամ ընդհանուր տնտեսական իրավիճակի հետ: Այնպիսի անորոշ գործոններ, ինչպիսին են օրենսդրության փոփոխությունները կամ տնտեսական տատանումները, դուրս են գալիս ապահովագրման շրջանակներից:

Երբեմն չապահովագրվող ռիսկերը դառնում են ապահովագրվող, երբ սպասվող վնասների ստույգ գնահատման համար կուտակվում է բավարար տեղեկատվություն: Ի սկզբանե ապահովագրական կազմակերպությունները դժկամորեն էին ապահովագրում ավիաուղևորներին, սակայն տասնամյակներ հետո այս ռիսկը դարձավ կանխատեսելի:

**Չապահովագրվող ռիսկերի** շարքին են դասվում.

1. Շուկայական ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել սեփականության կամ եկամուտի կորստի, օրինակ՝ գների սեզոնային կամ ցիկլիկ փոփոխությունները, սպառողների անտարբերությունը, նորաձևության փոփոխությունները, առավել որակյալ ապրանք առաջարկող մրցակիցը:

2. Քաղաքական ռիսկը՝ այնպիսի իրադարձությունների առաջացման վտանգն է, ինչպիսիք են իշխանափոխությունը, պատերազմը, ազատ առևտրի սահմանափակումը, չափազանց

բարձր կամ չհիմնավորված հարկերը, տարադրամի ազատ փոխանակման սահմանափակումը:

3. Արտադրողական ռիսկը այնպիսի գործոնների վտանգն է, ինչպիսիք են սարքավորումների ոչ տնտեսական աշխատանքը, հումքային ռեսուրսների պակասը, տեխնիկական խնդիրների լուծման անհրաժեշտությունը, գործադուլները, պարապուրդները, աշխատանքային կոնֆլիկտները:

4. Անձնական ռիսկը այնպիսի գործոնների վտանգն է, ինչպիսիք են գործազրկությունը՝ բաժանության, աղքատության, կրթության պակասի, աշխատանք ստանալու հնարավորության բացակայության կամ ռազմական ծառայության ընթացքում առողջության խաթարման հետևանքով:

Ապահովագրվող ռիսկը այն ռիսկն է, որի համար սպասվող վնասների աստիճանը հեշտ որոշվում է և այդ իսկ պատճառով ապահովագրական կազմակերպությունը պատրաստ է այդ վնասները փոխհատուցել:

**Ապահովագրվող ռիսկերի** շարքին են դասվում.

1. Գույքային ռիսկերը, այն կուրուստների առաջացման վտանգն է, որոնք հանգեցնում են սեփականության ուղղակի և անուղղակի կորստի:

2. Անձնական ռիսկերը, այն կորուստների առաջացման վտանգն է վաղաժամ մահվան, անաշխատունակության, ծերության արդյունքում:

3. Իրավաբանական պատասխանատվության հետ կապված ռիսկերը կորուստների առաջացման վտանգն է ավտոմեքենայի օգտագործման, շինության մեջ գտնվելու, զբաղմունքի տեսակի, ապրանքի արտադրության, մասնագիտական սխալների պատճառով:

Ապահովագրվող ռիսկը, որը պատրաստ է իր վրա վերցնել ապահովագրական ընկերությունը, սովորաբար համապատասխանում է հետևյալ պահանջներին.

1. Ապահովագրվող վտանգը չի կարող լինել կանխամտածված գործողությունների արդյունք: Դա նշանակում է, որ ապահովագրական ընկերությունները չեն վճարում այն վնասների համար, որոնք կանխամտածված հասցվել է ապահովագրված կազմակերպության կամ նրա հրահանգով, որևէ ֆիզիկական անձի կողմից: Օրինակ՝ հրդեհի պատճառով ապահովագրական վկայագրի մեջ չեն ներառվում վնասները, որոնք հասցվել են ապահովագրված կազմակերպության կողմից: Սակայն այդպիսի վկայագիրը նախատեսում է վնասների փոխհատուցում, եթե հրդեհը տեղի է ունեցել կազմակերպության աշխատակցի պատճառով:

2. Վնասները պետք է հաշվարկման ենթակա լինեն և ապահովագրման համար ծախսերը պետք է տնտեսապես արդարացված լինեն: Եկամուտ ունենալու համար ապահովագրական ընկերություններին անհրաժեշտ է ունենալ տեղեկատվություն տվյալ աղետի արդյունքում վնասների հաճախականության և լրջության մասին: Եթե այդ տեղեկատվությունը ընդգրկում է երկար ժամանակամիջոց և հիմնված է դեպքերի մեծ քանակության վրա, ապա ապահովագրական ընկերությունները սովորաբար կարող են բավականին հստակ կանխագուշակել՝ ապագայում ի՞նչ վնասներ կարող են առաջանալ:

3. Ռիսկի մի տեսակը պետք է ընդգրկի նման դեպքերի զգալի քանակությունը: Որքան ավելի շատ դեպքեր կընդգրկվեն տվյալ կարգի մեջ, այնքան ավելի հավանական է, որ ապագան կհաստատի ապահովագրական ընկերության կանխատեսումները: Այդ իսկ պատճառով ապահովագրական ընկերությունները ավելի մեծ պատրաստակամությամբ են իրենց վրա վերցնում այն ռիսկերը, որոնց հետ բախվում են շատ կազմակերպություններ և անհատներ: Օրինակ՝ հրդեհը ընդհանուր վտանգ է, որը սպառնում է բոլոր շինություններին, այդ պատճառով հրդեհի հետևանքով վնասների ապահովագրումը մեծ դժվարություններ չի առաջացնում:

4. Ռիսկը չպետք է միաժամանակ ընդգրկի բոլոր ապահովագրվածներին: Եթե ապահովագրական ընկերությունը չի ընդգրկում մեծ աշխարհագրական գոտիներ կամ բնակչության լայն շերտեր, ապա ընդամենը մեկ աղետը կարող է հանգեցնել նրան, որ այն ստիպված կլինի վճարել բոլոր ապահովագրական վկայագրերի համար:

5. Հավանական ֆինանսական կորուստները պետք է լինեն շոշափելի ապահովագրողի համար: Ապահովագրական ընկերությունը չի կարող իրեն թույլ տալ զբաղվել գրասենյակային աշխատանքով՝ կապված մեծ քանակությամբ մանր ապահովագրական պահանջների բավարարման հետ: Այդ պատճառով մի շարք վկայագրեր ներառում են այնպիսի հողված, որը նախատեսում է, որ ապահովագրական ընկերությունը կփոխհատուցի վնասների միայն այն մասը, որը գերազանցում է վկայագրում նշված գումարը: Դա այսպես կոչված չապահովագրվող մնացորդն է, որը իրենից ներկայացնում է վնասի ընդհանուր գումարի որոշակի մաս, որը պատրաստ է վճարել ինքը՝ ապահովագրվողը:

Ապահովագրությունը իրենից ներկայացնում է նրա մասնակիցների միջև տնտեսական հարաբերությունների ամբողջություն՝ ֆինանսական ներդրումների հաշվին, նպատակային ապահովագրական ֆոնդի ձևավորման և վնասների փոխհատուցման և ապահովագրական գումարների վճարման համար: Ապահովագրական հարաբերություններում մասնակցում են երկու կողմեր՝ ապահովագրողը և ապահովագրվողը: Ապահովագրողը կազմակերպում է ապահովագրական ֆոնդի ձևավորումը և կիրառումը: Ապահովագրողը իր վրա է վերցնում վնասների փոխհատուցման կամ ապահովագրական գումարի վճարման պարտավորությունը ապահովագրական դեպքի առաջացման ժամանակ:

Ապահովագրվող հանդիսանում է ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը ապահովագրության պայմանագիր է

կնքում ապահովագրողի հետ: Ապահովագրվողը պարտավոր է ժամանակին վճարել ապահովագրական մուծումները և ունի իրավունք ապահովագրական իրադարձության դեպքում ստանալ ապահովագրական փոխհատուցումը կամ ապահովագրական գումարը:

Ապահովագրության էական, տարբերակիչ հատկանիշները հետևյալն են.

1.Ապահովագրողի և ապահովագրվողի միջև հարաբերությունները ունեն հավանական բնույթ, քանի որ նրանց հիմքում ընկած է ապահովագրական ռիսկը:

Հետևելով օբյեկտների բավականին մեծ քանակությանը, որոնք ենթարկվում են միևնույն ռիսկին՝ միևնույն ժամանակամիջոցում, ի հայտ է գալիս պատահական իրադարձությունների տեղի ունեցման օրինաչափությունը:

Հավանականությունների տեսության օգնությամբ կարելի է հաշվարկել ապահովագրական սակացուցակները բավականին մեծ հստակությամբ: Սակայն յուրաքանչյուր առանձին ապահովագրվողի համար ապահովագրական իրադարձության վրա հասնելը պետք է մնա անսպասելի, հակառակ դեպքում ապահովագրության իմաստը կորում է:

2. Միջոցների վերադառնալիությունը: Ապահովագրողի կողմից ապահովագրական փոխհատուցման համար կուտակված բոլոր միջոցները վերադարձվում են ապահովագրվողներին, սակայն՝ ոչ յուրաքանչյուրին առանձին-առանձին, այլ միայն նրանց, ով տուժել է տվյալ ժամանակամիջոցում: Հետևաբար, ըստ ապահովագրվողների ամբողջության ապահովվում է ապահովագրողի և ապահովագրվողի հարաբերությունների համարժեքությունը:

3. Վնասի դասավորումը. որոշակի ժամանակամիջոցում ապահովագրվողի կողմից կրած վնասի ընդհանուր գումարը տարածվում է ապահովագրության բոլոր մասնակիցների վրա, ընդ որում դասավորման արդյունքը արտացոլում է ապահովագրական

վճարի մեծությունը՝ յուրաքանչյուր մասնակցի ներդրումը ապահովագրական ֆոնդի ձևավորման մեջ:

Կապված այն բանի հետ, որ ապահովագրական իրադարձությունները ոչ հավասարապես են բաշխվում ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ, ապահովագրողը իրականացնում է վնասի ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային վերաբաշխում:

Վնասի տարածական բաշխումը ապահովագրվողների միջև բաշխումն է: Վնասի ժամանակային վերաբաշխումը իրականացվում է հետևյալ կերպ. բարենպաստ տարիներին պահեստավորվում են ապահովագրական ֆոնդի միջոցների մի մասը, որպեսզի անբարենպաստ տարիներին ապահովագրողը կարողանա կատարել իր պարտականությունները ապահովագրվողի առջև:

Ապահովագրական շուկան ապրանքա-դրամային հարաբերությունների ուրույն ոլորտ է, որտեղ որպես առքուվաճառքի օբյեկտ հանդես է գալիս ապահովագրական պաշտպանությունը: Ապահովագրական շուկայի զարգացման համար օբյեկտիվ հիմք է հանդիսանում վերարտադրության ընթացքում առաջացող վերարտադրողական գործընթացի անխափանելիության անհրաժեշտությունը, որը արտահայտվում է չնախատեսված անբարենպաստ իրադարձությունների դեպքում տուժածներին դրամական օգնության ցուցաբերման մեջ: Ապահովագրական շուկայի տարրեր են հանդիսանում վաճառողը, գնորդը, ապրանքը և ապրանքի ընտրության հարցում գնորդի իրական ազատությունը:

Որպես ապահովագրական ծառայության վաճառողներ հանդես են գալիս ապահովագրողները: Ապահովագրական ծառայությունների գնորդներ կարող է լինել յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ, եթե դա չի հակասում տվյալ ապահովագրման օրենքներին և պայմաններին: Այդպես, անձնական ապահովագրման մեջ գոյություն ունեն որոշակի

տարիքային սահմանափակումներ, գույքային ապահովագրման մեջ՝ ըստ գույքի կազմի, մաշվածության աստիճանի և այլն:

Շուկայական պայմաններում ձեռնարկությունները հանդիսանում են տնտեսապես ինքնուրույն սուբյեկտներ, որը մի կողմից առաջացնում է պատասխանատվություն իր գործունեության արդյունքների համար, մյուս կողմից՝ այդ արդյունքներին չհասնելու որոշակի ռիսկ:

Այստեղից հետևում են երկու բավականին կարևոր հետևություններ. առաջինը՝ շուկայի պայմաններում կտրուկ աճում է ապահովագրման անհրաժեշտությունը առանց բացառության բոլոր տնտեսական սուբյեկտների մոտ, երկրորդը՝ բացի մեզ համար սովորական տարերային աղետների և դժբախտ պատահարների ռիսկերից, ինչպես նաև տեխնիկական ռիսկերից, ասպարեզ են դուրս գալիս տարբեր տեսակի տնտեսական ռիսկեր: Այս երկու գործոնները արմատապես փոխում են ինչպես ապահովագրական ծառայությունների սպառողների կառուցվածքը, այնպես էլ հենց ապահովագրական պահանջմունքները և հետևաբար՝ ապահովագրական ծառայությունների առաջարկը:

Ներկա դրությամբ առանձնացնում են ապահովագրական ծառայությունների հետևյալ ամբողջությունը՝ գույքային, սոցիալական, անձնական, պատասխանատվության ապահովագրում, ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրում:

Գույքային ապահովագրման դեպքում որպես օբյեկտ հանդես են գալիս նյութական արժեքները, սոցիալականում՝ քաղաքացիների եկամուտների մակարդակը, անձնականում՝ նրանց կյանքը, առողջությունը, աշխատունակությունը: Սոցիալական և անձնական ապահովագրությունները կարող են միավորվել ընտանեկան եկամուտների ապահովագրման մեջ:

Պատասխանատվության ապահովագրման դեպքում որպես օբյեկտ հանդես են գալիս ապահովագրվողների պարտավորությունը կատարելու պայմանագրային պահանջները՝

կապված արտադրանքի մատակարարման, վարկատուների պարտքերի մարման կամ նյութական կամ այլ վնասների փոխհատուցման հետ:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրման օբյեկտ է հանդիսանում եկամուտի ոչ լրիվ ստացման կամ վնասի ձևավորման ռիսկը:

Վերը նշված ապահովագրման հինգ ոլորտները իրենց հերթին ստորաբաժանվում են ենթաոլորտների և ապահովագրման տեսակների:

Գույքային ապահովագրումը բաժանվում է պետական ձեռնարկությունների, վարձակալների գույքի, քաղաքացիների գույքի ապահովագրման: Նրա տեսակներն են շինությունների, տնային գույքի, տրանսպորտի ապահովագրումը:

Սոցիալական ապահովագրությունը ներառում է նպաստների, թոշակների, արտոնությունների ապահովագրությունը: Նրա տեսակներն են տարիքային և հաշմանդամության թոշակների ապահովագրումը:

Անձնական ապահովագրումը կյանքի և դժբախտ պատահարներից ապահովագրումն է: Նրա տեսակներն են խառնակազմ ապահովագրումը, կյանքի ապահովագրումը, ապահովագրումը մահվան և աշխատունակության կորստի դեպքում, երեխաների ապահովագրումը:

Պատասխանատվության ապահովագրումը պարտքի ապահովագրումն է և ապահովագրումն է վնասի փոխհատուցման դեպքում: Նրա տեսակներն են վարկերի կամ այլ տեսակի պարտքերի չմարման ապահովագրությունը:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը առևտրային գործունեության տարբեր ոլորտներն են՝ արտադրական, միջնորդային, բանկային, բորսային և այլն: Նրա տեսակներն են ապահովագրումը շահութաբերության կամ եկամուտի կանխապայմանավորված մակարդակի իջեցման դեպքում, չնախատեսված վնասների դեպքում:

Օրենքով սահմանված են նաև ապահովագրման երկու ձևեր՝ պարտադիր և կամավոր:

Ապահովագրման պարտադիր ձևին հատուկ են հետևյալ սկզբունքները՝ օրենքը՝ որպես ապահովագրման պարտադիրության իրավական հիմք, ապահովագրման ենթակա օբյեկտների լրիվ ընդգրկումը, օրենքում նշված օբյեկտների վրա ապահովագրության պարտադիր տարածման մեքենայականությունը, ապահովագրական պաշտպանության ցուցաբերումը՝ անկախ ապահովագրական վճարումից, անժամկետություն, ապահովագրական ապահովման կարգավորում:

Ապահովագրության կամավոր ձևը սահմանվում է հետևյալ չափորոշիչներով. կամավոր ապահովագրությունը գործում է ապահովագրական կանոնադրության հիման վրա, սակայն կամավոր սկզբունքով, պայմանագրում ապահովագրության ժամկետի սահմանափակություն, պայմանագիրը ուժի մեջ է մտնում միայն ապահովագրական ապահովագնի վճարումից հետո, ապահովագրական ապահովությունը և պայմանագրի այլ կետերը սահմանվում են կողմերի համաձայնությամբ:

Ապահովագրության կամավոր և պարտադիր ձևերի հարաբերակցությունը սահմանվում է ըստ մի շարք գործոնների, ներառյալ պատմական ավանդույթները, ապահովագրական մշակույթը, ապահովագրական քաղաքականությունը և այլն, սակայն գլխավոր գործոն է հանդիսանում շուկայի զարգացումը, քանի որ շուկան ենթադրում է գնորդի և վաճառողի ազատություն ապրանքի ընտրության հարցում:

Տնտեսվարության պայմաններում յուրաքանչյուր տեսակի ռիսկերից վնասը այսպես թե այնպես ազդում է երկրի սոցիալ-տնտեսական ներուժի վրա: Այս կապակցությամբ ռիսկերի հավաքածուն հաշվի է առնվում տարբեր սուբյեկտների կողմից իրենց կենսագործունեության ընթացքում: Հատկապես կարևոր է ռիսկի մինիմիզացման և սահմանման գործընթացը ձեռնարկատիրական գործունեության մեջ, որը հիմք է

հանդիսանում տնտեսության մեջ որակական շարժի հասնելու համար:

Որպեսզի հաղթահարվեն ռիսկերի առաջացման հավանականության հետ կապված բացասական միտումները և սոցիալ-տնտեսական գործընթացները տարվեն անհրաժեշտ ուղղությամբ՝ տալով նրան շարժունակություն և պատեհ կառուցվածքայնություն, հարկավոր է ավելի մեծ ուշադրությամբ դիտարկել մրցակցային ապահովագրական շուկայի ձևավորման յուրահատկությունները և ապահովել ապահովագրական գործունեության համար կայուն իրավական դաշտ:

Ապահովագրությունը, որպես ռիսկերի կառավարման հիմնական մեթոդ, տալիս է իրական հնարավորություն մեծածավալ նախագծերի իրականացման համար: Ապահովագրությունը ապահովում է վնասների փոխհատուցումը, ստեղծում է մեխանիզմներ դրանց կանխարգելման և նվազեցման համար:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է ապահովագրումը և ո՞րն է նրա էությունը:
2. Ո՞ր ռիսկերն են դասվում չապահովագրվողների շարքին և ո՞րն է դրանց էությունը:
3. Ո՞ր ռիսկերն են դասվում ապահովագրվողների շարքին և ո՞րն է դրանց էությունը:
4. Ինչպիսի՞ պահանջների պետք է համապատասխանի ապահովագրվող ռիսկը:
5. Ինչպիսի՞ էական և տարբերակիչ հատկանիշներ ունի ապահովագրությունը և ապահովագրական շուկան:
6. Ապահովագրության ո՞ր երկու ձևերն են օրենքով սահմանված և ո՞րն է դրանց տարբերությունը:
7. Ո՞րն է ապահովագրության՝ որպես ռիսկի կառավարման մեթոդի էությունը:

## 5.2 Ռիսկի ֆինանսավորումը

Ռիսկի ֆինանսավորման հիմնական նպատակը բավարար միջոցների առկայության ապահովումն է անբարենպաստ իրադարձությունների դեպքում ձեռնարկությանը հնարավոր կորուստների փոխհատուցման և տնտեսական գործունեության շարունակման համար:

Ռիսկի ֆինանսավորման և վնասների փոխհատուցման (Risk financing) առավել հաճախ կիրառվող մեթոդներն են.

- վնասների փոխհատուցումը ընթացիկ եկամուտներից,
- վնասների փոխհատուցումը պահուստներից,
- վնասների փոխհատուցումը փոխառության օգտագործման հաշվին,
- վնասների փոխհատուցումը ինքնաապահովագրման հիման վրա,
- վնասների փոխհատուցումը ապահովագրման հիման վրա,
- վնասների փոխհատուցումը ոչ ապահովագրական միավորման հիման վրա,
- վնասների փոխհատուցումը այդ ֆինանսավորման փոխանցման հաշվին պայմանագրի հիման վրա,
- վնասների փոխհատուցումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների օգնության հիման վրա,
- վնասների փոխհատուցումը հովանավորության հիման վրա:

Առաջին չորս մեթոդները ռիսկերի կրճատման գործողություններ են, իսկ վերջին հինգը՝ ռիսկի փոխանցման գործողություններ:

*1) Վնասների փոխհատուցումը ընթացիկ եկամուտներից*

Վնասների՝ ընթացիկ եկամուտներից փոխհատուցման մեթոդի (Current expensing of losses) էությունը կայանում է նրանում, որ վնասի փոխհատուցումը իրականանում է ըստ նրա առաջացման կազմակերպության ընթացիկ գումարային հոսքերի հաշվին: Ընդ որում, ոչ մի (արտաքին կամ ներքին ) ֆոնդ չի ստեղծվում:

Տվյալ մեթոդի կիրառումը արդարացվում է այն դեպքերում, եթե պոտենցիալ վնասների ծավալը մեծ չէ: Վնասների հաճախականությունը կարող է լինել տարբեր, սակայն սպասվող վնասը պետք է լինի բավականին փոքր, այդ իսկ պատճառով տվյալ մեթոդը հատկապես հաճախ է կիրառվում այն դեպքերում, երբ անբարենպաստ իրադարձությունների հավանականությունը ևս բավականին քիչ է: Այնպիսի գործոններ, ինչպիսին են ռիսկերի միատարությունը կամ անմիատարությունը, էապես չեն ազդում ընթացիկ եկամուտներից ռիսկի ֆինանսավորման կամ վնասների փոխհատուցման մեթոդի կիրառման մասին որոշման ընդունման վրա:

Ռիսկերի կառավարաման տվյալ մեթոդը բավականին հաճախ է կիրառվում, քանի որ շատ իրավիճակներում վնասները այնքան աննշան են, որ կազմակերպությունը կարող է դրանք ինքնուրույն փոխհատուցել: Այնուամենայնիվ նրա ընտրության դեպքում անհրաժեշտ է հիշել, որ ենթադրվող վնասը անկարող է տեղի ունենալ կարճ ժամանակամիջոցում կամ այն ընթացքում, երբ կազմակերպությունը ցածր եկամուտներ ունի: Այդ պատճառով կազմակերպության ֆինանսական հնարավորությունները վճռական գործոն են հանդիսանում այս մեթոդի ընտրության համար:

Այս մեթոդի կիրառման համար օգտագործվող հնարավոր վնասի սահմանագծային նշանակությունը պետք է ընտրվի՝ հաշվի առնելով նշված սահմանափակումները, նախևառաջ կազմակերպության ֆինանսական հոսքերի փոփոխությունները: Համապատասխան սահմանի որոշման համար կարող են օգտագործվել նաև ռիսկային կապիտալի տեսակի գնահատականները:

*2) Վնասների փոխհատուցումը պահուստների հաշվին*

Պահուստներից վնասների փոխհատուցման մեթոդը (Reserving) ենթադրում է, որ ընթացիկ վնասը փոխհատուցվում է պահեստային ֆոնդերի միջոցների հաշվին, որոնք ստեղծվում են հատուկ այս նպատակների համար:

Այն ռիսկերի բնութագիրը, որոնց համար կարող է կիրառվել այս մեթոդը, և ռիսկերի քանակական գնահատականի հետ կապված նկատառումները շատ մոտ են նրանց, որ դիտարկված էին ընթացիկ եկամուտներից վնասների փոխհատուցման մեթոդի համար: Պահուստներից վնասների փոխհատուցման մեթոդի հիմանական տարբերությունը նախորդներից կայանում է վնասների մեծ չափի մեջ, ինչը և պահանջում է նշված պահուստային ֆոնդերի ստեղծում: Այդ պատճառով նրա կիրառման պայամանները առաջին հերթին կապված են ավելի լայն սահմանագծային նշանակությունների հետ: Այդուհանդերձ հավելյալ առաջանում է հարց պահուստների չափերի հիմնավոման մասին: Չափազանց փոքր պահուստները թույլ չեն տա պաշտպանվել ռիսկերից, չափազանց մեծ պահուստները չարդարացված կշեղեն զգալի ֆինանսական միջոցները կազմակերպության հիմնական գործունեության ոլորտից:

*3) Վնասների փոխհատուցումը փոխառության օգտագործման հաշվին*

Փոխառության օգտագործման հաշվին վնասների փոխհատուցման մեթոդը (Borrowing) կիրառվում է այն դեպքում, եթե կազմակերպությունը վնասի փոխհատուցման համար կարող է հույս դնել փոխառություն (վարկ) ստանալու վրա: Ի տարբերություն փոխհատուցամաև նախորդ մեթոդներից այստեղ վնասների փոխհատուցամաև համար միջոցների աղբյուրը ոչ թե ներքին, այլ արտաքին է, չնայած, ինչպես և առաջ, վնասների փոխհատուցման համար պատասխանատվությունը ամբողջովին կազմակերպության վրա է: Տվյալ մեթոդի գլխավոր առանձնահատկություններն են վարկի ստացման հնարավորու-

թյունը և փոխառության պայմանները: Ոչ միշտ է, որ զգալի վնասներ կրած կազմակերպությունը կարող է հույս դնել փոխառություն ստանալու վրա, իսկ եթե անգամ կարող է, ապա շատ դեպքերում պայմանները բավականին խիստ կլինեն, քանի որ կարտահայտեն վարկատուի կողմից փոխառությունը չվերադարձնելու ռիսկի գնահատականը: Հենց այս փաստը կսահմանի դիտարկված մեթոդի կիրառելիության պայմանները և գործնական կիրառման առանձնահատկությունը:

Ռիսկի կառավարման տվյալ մեթոդի արդյունավետության գնահատման համար կիրառվում են նույն մոտեցումները, ինչ և բանկային վարկային ռիսկերի վերլուծության համար: Սակայն ավելի մեծ ուշադրություն է հատկացվում փոխառության իրացվելիության և վերադարձելիության ուսումնասիրությանը:

*4) Վնասների փոխհատուցումը ինքնաապահովագրման հիման վրա*

Ինքնաապահովագրություն եզրույթը (Self-Insurance) մասնագիտական գրականության մեջ տարբեր ձևով է կիրառվում.

- որպես՝ կազմակերպության ընթացիկ եկամուտներից, հատուկ ձևավորվող պահուստներից կամ այլ աղբյուրներից ռիսկի ֆինանսավորման կամ վնասների փոխհատուցման մեթոդ (որը համընկնում է ռիսկի կրճատման գործողության շրջանակներում ֆինանսավորման մեթոդների խմբի սահմանման հետ)
- որպես ապահովագրման ձև, որն իրականացվում է սեփական կազմակերպության, ֆինանսա-արդյունաբերական, արդյունաբերական խմբերի շրջանակներում և այլն, մասնավորապես կեպտիվ ապահովագրական կազմակերպությունների միջոցով իրականացվող ապահովագրման ձև:

Այս եզրույթի երկրորդ նշանակությունը. ռիսկերի կառավարման այս մեթոդի էությունը՝ կայանում է սեփական ապահովագրական ֆոնդերի ստեղծման մեջ, որոնք նախատեսված են վնասների

փոխհատուցման համար՝ ըստ ապահովագրական և վերաապահովագրական կազմակերպությունների ֆոնդերի տեսակի: Այս դեպքում ինքնաապահովագրումը տարբերվում է ընթացիկ եկամուտներից կամ հատուկ ձևավորվող պահուստներից ռիսկի ֆինանսավորման կամ վնասների փոխհատուցման մեթոդներից նրանով, որ այն աշխատում է միատար ռիսկերի մեծ քանակության հետ: Ինչպես և ապահովագրման ժամանակ, այս մեթոդը ևս նախատեսում է միատար ռիսկերի մեծ կենտրոնացման հնարավորություն ամբողջական վնասի հստակ կանխատեսման նպատակով: Սակայն ի տարբերություն դասական ապահովագրման ապահովագրական պահուստները ստեղծվում են մեկ գործնական միավորի ներսում, որպես օրենք՝ արդյունաբերական կամ ֆինանսա-արդյունաբերական խմբի:

Ինքնաապահովագրումը ենթադրում է հատուկ ֆինանսական մեխանիզմների ստեղծում, որոնք թույլ են տալիս վաղօրոք ձևավորել նշված ֆոնդերը՝ առաջացած վնասների ֆինանսավորման համար: Այս տեսակի առավել տարածված մեխանիզմներից է հանդիսանում կեպտիվ ապահովագրական կազմակերպությունների ստեղծումը:

Կեպտիվ ապահովագրական կազմակեպությունները (captive insurance) ապահովագրական կազմակերպություններ են, որոնք մտնում են ոչ ապահովագրական կազմակերպությունների խմբի մեջ (արդյունաբերական, ֆինանսա-արդյունաբերական խմբերի և այլն) և ապահովագրում են ամբողջ խմբի ռիսկերը: Թեպետ ֆորմալ այդպիսի ապահովագրական կազմակերպությունը հանդիսանում է առանձին իրավական անձ և հետևում է բոլոր նորմատիվ գրավոր կարգադրություններին, ռիսկերը մնում են կազմակերպությունների խմբի ներսում, իսկ համապատասխան պահուստային ֆոնդերը ևս մնում են նշված խմբի շրջանակներում:

Կեպտիվ ապահովագրական կազմակերպության կիրառումը ունի մի շարք առավելություններ: Այն թույլ է տալիս՝

- ներդնել ապահովագրական ֆոնդերի միջոցները միավորված գործնական միավորի սահմաններում,
- պահել եկամուտը համապատասխան խմբի ներսում,
- ստանալ որոշակի արտոնություններ հարկադրման հետ կապված (ինչը նախատեսվում է մի շարք երկրների օրենսդրությամբ),
- ապահովագրական պայամանագրերի ձևակերպման ժամանակ խուսափել բյուրոկրատական քաշքշուկներից:

Այնուամենայնիվ, դիտարկվող մեթոդը ունի նաև էական թերություն. այն խմբին նոր ռիսկ է ավելացնում՝ մեծ, աղետային ռիսկերի առաջացման հետ կապված ընդհանուր ֆինանսական արդյունքների վատթարացման ռիսկ: Դա բացատրվում է կեպտիվ ապահովագրական կազմակերպության և խմբի այլ կառուցվածքային տարրերի միջև վնասի փաստացի վերաբաշխմամբ այնպես, որ վնասի առաջացման դեպքում այն ամբողջապես մնում է տվյալ խմբի վրա: Հետևաբար, կեպտիվ ապահովագրական կազմակերպության ստեղծման ժամանակ ռիսկերի հետ կապված կառավարիչը պետք է մանրամասն գնահատի ինքնաապահովագրման տվյալ մեխանիզմի կիրառման բոլոր առավելությունները և թերությունները:

Այս մեթոդը կիրառվում է այն ռիսկերի հանդեպ, որոնց վնասների չափը կամ հավանականությունը չեն գերազանցում տրված սահմանագծային նշանակությունները: Հնարավոր վնասի չափի կամ հավանականության սահմանագծային նշանակությունները որոշվում են ոչ միայն կազմակերպության ֆինանսական հնարավորություններով, այլ նաև ամբողջ ֆինանսա-արդյունաբերական խմբի, որի մեջ նա մտնում է:

*5) Վնասի փոխհատուցում ապահովագրման հիման վրա*

Ապահովագրումը (Insurance) ռիսկերի կառավարման առավել հաճախ կիրառվող մեթոդներից մեկն է:

Ռիսկի ֆինանսավորման կամ վնասի փոխհատուցման այս մեթոդի էությունը կայանում է հնարավոր վնասի փոխհատուցման

համար պատասխանատվության ապահովագրական կազմակերպության նման գործառնություններում մասնագիտացած այլ սուբյեկտին փոխանցման մեջ: Ապահովագրության օգտագործումը նշանակում է վնասների փոխհատուցման համար նույն կազմակերպության մասնակցության աստիճանի նվազեցում (իսկ երբեմն անգամ լրիվ հրաժարում մասնակցությունից) ապահովագրական կազմակերպության վրա որոշակի գումարի դիմաց իր ռիսկի տեղափոխման հաշվին:

Կազմակերպության հարթության վրա ռիսկերի կառավարման տվյալ մեթոդը գործնականում հաճախ կիրառվում է հետևյալ դեպքերում: Անկախ ռիսկերի միատարությունից կամ անմիատարությունից, ինչպես նաև ռիսկերի քանակությունից ապահովագրության կիրառումը նպատակահարմար է, եթե ռիսկի իրացման հավանականությունը, այսինքն վնասների առաջանալը, մեծ չէ, սակայն հնարավոր վնասի չափը բավականին մեծ է: Նշենք, որ սակայն, եթե ռիսկերը միատար են և դրանք շատ են, կազմակերպությունը կարող է դրանք կառավարել ոչ թե ապահովագրության օգնությամբ, այլ ինքնաապահովագրության, երբ ապահովագրական ֆոնդերը ձևավորվում են նույն կազմակերպության ներսում: Այս դեպքում հաշվի առնելով միատար ռիսկերի մեծաքանակությունը ապահովագրական միավորման ստեղծումը դառնում է արդարացված: Իսկ եթե ռիսկերը միատար չեն, ապա անկախ դրանց քանակությունից, ապահովագրության օգտագործումը հատկապես արդարացված է, քանի որ հաշվի առնելով ռիսկերի անմիատարությունը և հնարավոր մեծ վնասները ինքնաապահովագրման հիման վրա կազմակերպությունը չի կարող իր համար ապահովել ֆինանսական կայունություն:

*6) Վնասների փոխհատուցում հովանավորության հիման վրա*

Հովանավորության հիման վրա վնասների փոխհատուցման մեթոդը (Sponsorship) ենթադրում է հովանավորության հաշվին ռիսկերի համաֆինանսավորում: Տվյալ մեթոդի կիրառումը

նշանակում է վնասների փոխհատուցման գործում կազմակերպության մասնակցության նվազեցում հովանավորին ռիսկի պատասխանատվության փոխանցման հաշվին, այսինքն ռիսկի՝ հովանավորի կողմից հովանավորության հաշվին:

Ռիսկի կառավարման տվյալ մեթոդի կիրառման աստիճանը հավանաբար կապված է հովանավորների շռայլությունից: Ինչպես և ռիսկի կառավարման նախորդ մեթոդը շատ դեպքերում պետք չէ դիտարկել որպես հիմնական, քանի որ դժվար է հույս դնել հովանավորի օգնության վրա քանի դեռ վնաս չի առաջացել: Այն կարող է կիրառվել միայն այն բանից հետո, երբ վնասի չափը հայտնի կլինի և պարզ կդառնա, որ ռիսկի կրողների համար դրանք չափազանց մեծ են:

*Ստուգողական հարցեր*

1. Ո՞րն է ռիսկի ֆինանսավորման հիմնական նպատակը:
2. Ռիսկի ֆինանսավորման և վնասների փոխհատուցման ինչպիսի՞ մեթոդներ գոյություն ունեն:
3. Ո՞րն է ընթացիկ եկամուտներից վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:
4. Ո՞րն է պահուստներից վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:
5. Ո՞րն է փոխառության հաշվին վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:
6. Ո՞րն է ինքնաապահովագրման հիման վրա վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:
7. Ո՞րն է ապահովագրման հիման վրա վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:
8. Ո՞րն է հովանավորության հիման վրա վնասների փոխհատուցման մեթոդի էությունը:

*Ոչ մի խնդիր հնարավոր չէ լուծել այն մակարդակի վրա,*
*որի վրա այն ծագել է*
*Ալբերտ Էյնշտեյն*

## 5.3 Ռիսկի հեջավորումը

Հեջավորում եզրույթը (անգլ. Hedging՝ պարսպել) կիրառվում է բանկային, բորսային և առևտրային ոլորտներում ապագայում տարադրամի արժույթի անբարենպաստ փոփոխություններից տարադրամային ռիսկերի ապահովագրման տարբեր մեթոդների սահմանման համար:

Հեջավորում իրականացնող տնտեսվարող սուբյեկտը կոչվում է հեջեր:

Գոյություն ունի հեջավորման երկու գործառնություններ.

- հեջավորում բարձրացման նպատակով,
- հեջավորում նվազեցման նպատակով:

Հեջավորումը բարձրացման նպատակով կամ հեջավորումը գնմամբ, իրենից ներկայացնում է ֆորվարդային կամ օպցիոնների պայմանագրերի գնման բորսայական գործառույթ: Բարձրացման համար հեջավորումը կիրառվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է ապահովագրվել տարադրամի փոխարժեքի ապագայում հնարավոր բարձրացումից: Այն թույլ է տալիս սահմանել գնման արժեքը (այսինքն տարադրամի փոխարժեքը) ավելի վաղ, քան տարադրամը ձեռք կբերվի:

Ենթադրենք, երեք ամիս հետո տարադրամի փոխարժեքը կբարձրանա, իսկ տարադրամը անհարաժեշտ կլինի հենց երեք ամիս հետո: Տարադրամի փոխարժեքի ենթադրվող աճի հետևանքով վնասների փոխհատուցման համար անհրաժեշտ է հենց հիմա՝ այսօրվա գնով, այդ տարադրամի հետ կապված ֆորվարդային պայմանագիր կամ օպցիոն ձեռք բերել և վաճառել այն երեք ամիս հետո այն պահին, երբ ձեռք է բերվում տարադրամը: Քանի որ տարադրամի փոխարժեքը և նրա հետ

կապված շտապ պայմանագիրը փոխվում են համամասնորեն մեկ ուղղությամբ, ապա ավելի վաղ գնված պայմանագիրը կարելի է վաճառել այնքան թանկ, որքան որ այդ ժամանակ կբարձրանա տարադրամի փոխարժեքը: Այսպիսով, բարձրացման նպատակով հեջավորում իրականացնող հեջերը ապահովագրում է իրեն՝ տարադրամի փոխարժեքի հետագա բարձրացումներից:

Հեջավորումը նվազեցման նպատակով իրենից ներկայացնում է ֆորվարդային կամ օպցիոնների պայմանագրերի գնման բորսայական գործառույթ:

Նվազեցմանն ուղղված հեջավորում իրականացնող հեջերը ենթադրում է ապագայում իրականացնել տարադրամի վաճառք, այդ պատճառով, բորսայում վաճառելով ֆորվարդային պայմանագիր կամ օպցիոն, որի միջոցով ապահովագրում է իրեն ապագայում տարադրամի փոխարժեքի հնարավոր անկումից:

Ենթադրենք, որ տարադրամի փոխարժեքը երեք ամիս հետո իջնելու է, իսկ տարադրամը հարկավոր կլինի վաճառել երեք ամիս հետո: Փոխարժեքի իջեցումից ենթադրվելիք կորուստների փոխհատուցման համար հեջերը վաճառում է պայմանագիրը այսօր բարձր գնով, իսկ երեք ամիս հետո իր տարադրամը վաճառելու համար, երբ նրա փոխարժեքը իջնում է, գնում է նույն շտապ պայմանագիրը տարադրամի իջեցված (գրեթե) նույն փոխարժեքով:

Այսպիսով, նվազեցման նպատակով հեջավորումը կիրառվում է այն դեպքում, երբ տարադրամը անհրաժեշտ է վաճառել ավելի ուշ:

Հեջերը ձգտում է նվազեցնել շուկայում տարադրամի փոխարժեքի անորոշության հետևանքով առաջացած ռիսկը շտապ պայմանագրերի գնման և վաճառքի օգնությամբ: Դա հնարավորություն է ընձեռնում ֆիքսել փոխարժեքը և եկամուտները ու ծախսերը դարձնել առավել կանխատեսելի: Ընդ որում հեջավորման հետ կապված ռիսկը չի անհետանում: Այդ ռիսկը իրենց վրա են վերցնում սպեկուլյանտները, որոնք գնում են որոշակի, նախապես հաշվարկված ռիսկի:

Հեջավորումը իրականացվում է ֆյուչերսային շուկայում: Սպեկուլյանտը իր վրա է վերցնում այդ ռիսկը եկամուտ ստանալու նպատակով: Սպեկուլյանտները շտապ պայմանագրերի շուկայում մեծ դեր են խաղում: Վերցնելով իրենց վրա ռիսկը եկամուտ ստանալու նպատակով գների տարբերության վրա հիմնված խաղի ժամանակ՝ նրանք ստանձնում են կայունացուցչի դերը:

Սպեկուլյանտներին չի հետաքրքրում ապրանքի կոնկրետ տեսակի (տարադրամի) մատակարարման ձևը կամ իրականացումը: Շուկան գրավում է նրանց գների սպասվող տատանումներով: Այդ պատճառով նրանք գրավում են որոշակի տարադրամային դիրքեր:

Կարևոր է նաև այն, որ սպեկուլկյանտը շատ հաճախ ներգրավված է գործառնության մեջ միայն մեկ շուկայում: Եթե հեջերը կարող է փոխհատուցել իր կորուստները ֆյուչերսային շուկայում իրական ապրանքի շուկայում ստացված եկամուտով, ապա սպեկուլյանտը պետք է պատրաստ լինի ֆյուչերսային շուկայում հնարավոր կորուստների:

Բորսայում շտապ պայմանագրերի գնման ժամանակ սպեկուլյանտը վճարում է երաշխիքային մուծում, որով և որոշվում է ռիսկի չափը:

Եթե տարադրամի փոխարժեքը իջել է, ապա սպեկուլյանտը, որը ավելի վաղ գնել է պայմանագիրը, կորցնում է գումար, որը հավասար է երաշխիքային վճարին:

Իսկ եթե տարադրամի փոխարժեքը աճել է, ապա սպեկուլյանտը վերադարձնում է իր գումարը, որը հավասար է երաշխիքային վճարի և ստանում է հավելյալ եկամուտ տարադրամի փոխարժեքի և գնված պայամանգրի տարբերությունից:

Դիտարկենք հեջավորման գործընթացը տարադրամի փոխարժեքի բարձրացման դեպքում:

Օրինակ: *Տնտեսվարող սուբյեկտի հրաժարվելը տարադրամային ռիսկի հեջավորումից:*

Տարադրամային ռիսկերի հեջավորումից հրաժարվելու դեպքում սուբյեկտը իր վրա ռիսկ է վերցնում և ոչ ակնհայտ դառնում է սպեկուլյանտ՝ հույս դնելով տարադրամի փոխարժեքի բարենպաստ դինամիկայի վրա: Ընդ որում ստացումների արժեքը անմիջական կախվածության մեջ է ընկնում տարադրամի փոխարժեքից:

Տնտեսվարող սուբյեկտը երեք ամիս հետո ծրագրում է իրականացնել վճարումներ 10000$ չափով: Ընդ որում տվյալ պահին ընթացիկ փոխարժեքը կազմում է 375 դրամ/դոլ.: Հետևաբար 10000$ գնման համար ծախսերը կազմում են 3750000 դրամ:

Եթե երեք ամիս հետո ընթացիկ փոխարժեքը իջնում է մինչև 365 դրամ/դոլ. ապա դոլարային դիրքի համարժեքը կկազմի 3650000 դրամ (365 դրամ x 10000$):

Տնտեսվարող սուբյեկտը երեք ամիս հետո տարադրամի գնման համար կծախսի 3650000 դրամ, այսինքն կունենա գումարային միջոցների տնտեսում կամ 100000 դրամ պոտենցիալ եկամուտ:

Իսկ եթե երեք ամիս հետո ընթացիկ փոխարժեքը բարձրանա մինչև 385 դրամ/դոլ., ապա 10000$ գնման ժամանակ տնտեսվարող սուբյեկտի ծախսերը կկազմեն 3850000 դրամ (10000$ x 385 դրամ):

Հետևաբար գնման համար հավելյալ ծախսերը կկազմեն 100000 դրամ:

Հեջավորումից հրաժարվելու առավելությունը արտահայտվում է հավելյալ ծախսերի բացակայության և անսահմանափակ եկամուտ ստանալու հնարավորության մեջ:

Թերություններն են՝ ռիսկը և տարադրամի փոխարժեքի բարձրացման հետևանքով առաջացած հնարավոր կորուստները:

Օրինակ: *Հեջավորում ֆորվարդային գործառնության օգնությամբ:*

Ֆորվարդային գործառնությունը իրենից ներակայացնում է կողմերի փոխադարձ պարտավորություն՝ իրականացնել տարադրամային կոնվերսիա ֆիքսած փոխարժեքով և նախապես

համաձայնեցված օրը: Շտապ կամ ֆորվարդային պայմանագիրը պարտավորություն է երկու կողմերի համար (գնորդի և վաճառողի), այսինքն վաճառողը պարտավոր է վաճառել, իսկ գնորդը պարտավոր է գնել տարադրամի որոշակի քանակություն որոշակի օրը հաստատված փոխարժեքով:

Տնտեսվարող սուբյեկտը որոշել է կնքել 10000$ գնման-վաճառքի շտապ, այսինքն ֆորվարդային պայմանագիր: Պայմանագրի կնքման պահին ընթացիկ փոխարժեքը կազմում էր 375 դրամ/դոլ., իսկ եռամսյա ֆորվարդային փոխարժեքը ըստ պայմանգրի կազմում է 385 դրամ/դոլ.:

Հետևաբար, ըստ պայմանագրի տարադրամի գնման համար ծախսերը կկազմեն 3850000 դրամ (10000$ x 385 դրամ):

Եթե երեք ամիս հետո գործարքի իրականացման օրը ընթացիկ փոխարժեքը բարձրացել է մինչև 395 դրամ/դոլ., ապա տնտեսվարող սուբյեկտի ծախսերը տարադրամի գնման համար կկազմեն 3850000 դրամ: Եթե նա չկնքեր շտապ գործարք, ապա կծախսեր տարադրամի գնման համար 3950000 դրամ (10000$ x 395 դրամ):

Գումարային ռեսուրսների տնտեսումը կամ պոտենցիալ եկամուտը կկազմի 100000 դրամ:

Իսկ եթե երեք ամիս հետո գործարքի իրականացման օրը ընթացիկ փոխարժեքը նվազի մինչև 365 դրամ/դոլ., ապա շտապ գործարքի բացթողնված շահույթը կազմում է 200000 դրամ (10000$ x (365 դրամ – 385 դրամ)):

Ֆորվարդային գործառնության առավելությունը արտահայտվում է հավելյալ ծախսերի բացակայության և տարադրամի փոխարժեքի անբարենպաստ փոփոխություններից պաշտպանության մեջ:

Թերությունը՝ հնարավոր կորուստներն են, կապված բացթողնված շահույթի ռիսկի հետ:

Օրինակ: *Հեջավորում օպցիոնների օգնությամբ:*

Տարադրամի օպցիոնը գնորդի գնելու իրավունքն է և վաճառողի պարտավորությունը վաճառել մեկ տարադրամի որոշակի քանակություն փոխանակել մեկ այլի հետ նախօրոք համաձայնեցված օրը կամ համաձայնեցված ժամանակի ընթացքում:

Այսպիսով, օպցիոնային գործարքը պարտադիր է վաճառողի և ոչ պարտադիր գնորդի համար:

Տնտեսվարող սուբյեկտը գնում է տարադրամային օպցիոնը, որը նրան իրավունք է տալիս (բայց ոչ պարտավորություն) գնել տարադրամի որոշակի քանակություն ֆիքսած փոխարժեքով համաձայնեցված օրը (եվրոպական ոճ):

Տնտեսվարող սուբյեկտը ենթադրում է երեք ամսվա ընթացքում իրականացնել վճարումներ 10000$ չափով և ցանկանում է ֆիքսել նվազագույն փոխարժեքը:

Նա գնում է օպցիոն դոլարների գնման համար հետևյալ չառորոշիչներին համապատասխան.

- Գումար 10000$:
- Ժամկետ 3 ամիս:
- Օպցիոնի փոխարժեքը 375 դրամ/դոլ.:
- Օպցիոնի արժեքը 5 դրամ/դոլ.:
- Ոճը եվրոպական:

Տվյալ օպցիոնը իրավունք է տալիս տնտեսվարող սուբյեկտին գնել 10000$ 3 ամիս հետո 375 դրամ/դոլ. փոխարժեքով: Տնտեսվարող սուբյեկտը վճարում է տարադրամի վաճառողին օպցիոնային տարբերագին 50000 դրամ չափով (10000$ x 5= 50000 դրամ), այսինքն տվյալ օպցիոնի գինը կազմում է 50000 դրամ:

Եթե երեք ամիս հետո օպցիոնի իրականացման օրը դոլարի ընթացիկ փոխարժեքը կիջնի մինչև 365 դրամ, ապա տնտեսվարող սուբյեկտը կհրաժարվի օպցիոնից և կգնի տարադրամ առձեռն շուկայից՝ վճարելով տարադրամի գնման համար 3650000 դրամ (10000$ x 365 դրամ):

Հաշվի առնելով օպցիոնի գնման գինը (տարբերագինը) տարադրամի ձեռքբերման համար տնտեսվարող սուբյեկտի ծախսերը կկազմեն 3700000 դրամ.:

Իսկ եթե երեք ամիս հետո օպցիոնի իրականացման օրը դոլարի ընթացիկ փոխարժեքը աճում է մինչև 385 դրամ, ապա տնտեսվարող սուբյեկտի ապագա ծախսերը տարադրամի գնման համար արդեն ապահովագրված են:

Եթե նա տարադրամը գներ առձեռն շուկայում 385 դրամ ընթացիկ փոխարժեքի դեպքում, ապա գնման համար կծախսեր 3850000 դրամ (10000$ x 385 դրամ):

Գումարային ռեսուրսների տնտեսումը կամ պոտենցիալ շահույթը կազմում է 50000 դրամ (3750000 + 50000 - 3850000):

Օպցիոնների օգնությամբ հեջավորման առավելությունը կայանում է անբարենպաստ փոփոխություններից տարադրամի փոխարժեքի պաշտպանության մեջ: Թերությունը օպցիոնային տարբերագնի համար ծախսերն են:

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում հեջավորումը:
2. Ո՞վ է կոչվում հեջեր:
3. Հեջավորման քանի՞ գործառնություն գոյություն ունի և ո՞րն է դրանց տարբերությունը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում հեջավորումը բարձրացման նպատակով:
5. Ի՞նչ է իրենից ներկայացնում հեջավորումը նվազեցման նպատակով:
6. Ի՞նչ է իրենից ներկայացնում ֆորվարդային գործառնությունների օգնությամբ հեջավորումը:
7. Ի՞նչ է իրենից ներկայացնում հեջավորումը օպցիոնների օգնությամբ:

*Նրանք ովքեր կանգնում են հարաբանալ, անհրաժեշտ է մրածել այն մասին, որ սրիսկած կյինեն ավելի շատ ժամանակ ծախսել աշխատանքի վրա եւ շատ ավելի քիչ՝ պատիվ հանգստի վրա*
*Դանիել Կահնեման*

## 5.4 Ռիսկի դիվերսիֆիկացումը

Դիֆերսիֆիկացիան՝ դա ռիսկի համատեղ ենթարկվածության նվազեցման միջոց է, տարբեր տեսակի ակտիվների միջև միջոցների բաշխման հաշվին, որոնց գինը կամ եկամտաբերությունը իրար միջև անմիջականորեն կապված չեն:

Դիվերսիֆիկացման էությունը մի իրադարձության ընթացքում առավելագույն հնարավոր կորուստների նվազեցման մեջ է, սակայն այդ դեպքում միաժամանակ աճում է ռիսկերի տեսակների քանակությունը, որոնք անհրաժեշտ է վերահսկել:

Այսպիսով, դիվերսիֆիկացումը թույլ է տալիս խուսափել ռիսկի մի մասից գործունեության ամենատարբեր տեսակների միջև կապիտալի բաշխման ժամանակ: Օրինակ՝ ներդրողի՝ մեկ ընկերության փոխարեն 5 տարբեր բաժնետիրական ընկերություններից բաժնետոմսերի ձեռքբերումը 5 անգամ մեծացնում է նրա կողմից միջին եկամուտի ստացման հավանականությունը և համապատասխանաբար 5 անգամ նվազեցնում է ռիսկի աստիճանը:

Ֆինանսական ակտիվների ձևավորման և համապատասխանաբար՝ բանկային փոխատվությունների պորտֆելի ձևավորման ժամանակ դիվերսիֆիկացումը շուկայական և վարկային ռիսկերի նվազեցման առավել տարածված մեխանիզմներից մեկն է:

Սակայն դիվերսիֆիկացումը ներդրումային ռիսկը չի կարող զրոյացնել: Դա կապված է այն բանի հետ, որ տնտեսվարող սուբյեկտների ձեռնարկատիրական և ներդրումային գործունեության վրա ազդում են արտաքին գործոնները, որոնք կապված չեն կապիտալի ներդրման կոնկրետ օբյեկտների

ընտրության հետ, և հետևաբար ՝ նրանց վրա դիվերսիֆիկացումը չի ազդում:

Արտաքին գործոնները ազդում են ամբողջ ֆինանսական շուկայի վրա, այսինքն նրանք ազդում են բոլոր ներդրումային ինստիտուտների գործունեության վրա. բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, այլ ոչ առանձին տնտեսվարող սուբյեկտների վրա: Արտաքին գործոնների շարքին են դասվում գործընթացները, որոնք տեղի են ունենում ամբողջ երկրի տնտեսության մեջ. ռազմական գործողություններ, քաղաքացիական անհանգստություններ, տարադրամի արժեզրկում, դրամանիշների քանակության կրճատում, բանկի հաշվառման դրույթների, առևտրային բանկերում վարկերի, ավանդների տոկոսադրույքների փոփոխություն և այլն: Այս գործընթացներով պայմանավորված ռիսկը չի կարելի նվազեցնել դիվերսիֆիկացման օգնությամբ:

Այսպիսով, ռիսկը բաղկացած է երկու մասից՝ դիվերսիֆիկացվող և չդիվերսիֆիկացվող ռիսկերից:

**Դիվերսիֆիկացվող ռիսկը,** որը նաև ոչ կանոնավոր է կոչվում, կարող է նվազեցվել ցրման ճանապարհով, այսինքն՝ դիվերսիֆիկացիայի:

**Չդիվերսիֆիկացվող ռիսկը,** որը նաև կանոնավոր է կոչվում, չի կարող նվազեցվել դիվերսիֆիկացիայի օգնությամբ:

Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կապիտալի ներդրման օբյեկտների ընդլայնումը թույլ է տալիս հեշտ և զգալի կերպով փոքրացնել ռիսկի ծավալները: Այդ պատճառով հիմնական ուշադրությունը հարկավոր է սևեռել չդիվերսիֆիկացվող ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Այդ նպատակով արտասահմանյան տնտեսությունը մշակել է, այսպես կոչված «պորտֆելային տեսությունը»: Այդ տեսության մի մաս է կանոնավոր ռիսկը և արժեթղթերի եկամտաբերության համաձայնեցվածությունը (Capital Asset Pricing Model - CAPM):

Դիվերսիֆիկացումը թույլ է տալիս խուսափել ռիսկի մի մասից գործունեության ամենատարբեր տեսակների միջև կապիտալի բաշխման ժամանակ:

Ռիսկ-մենեջմենթի մեջ տեղեկատվությունը մեծ դեր է խաղում: Ռիսկ-մենեջերը շատ հաճախ ստիպված է լինում ռիսկային որոշումներ կայացնել, երբ կապիտալի ներդրման արդյունքները անորոշ են և հիմնված են սահմանափակ տեղեկատվության վրա: Եթե նա ունենա առավել ամբողջական տեղեկատվություն, ապա կարող է անել ավելի ստույգ կանխատեսումներ և այդպիսով նվազեցնի ռիսկի աստիճանը: Դա վերածում է տեղեկատվությունը ապրանքի, ընդ որում բավական արժեքավոր: Ներդրողը պատրաստ է վճարել ամբողջական տեղեկատվության համար: Ամբողջական տեղեկատվության արժեքը հաշվարկվում է որպես տարբերություն որևէ ձեռքբերման կամ կապիտալի ներդրման սպասվող արժեքի միջև, երբ կա ամբողջական տեղեկատվություն, և՝ սպասվող արժեքի, երբ տեղեկատվությունը ամբողջական չէ:


Օրինակ՝ ձեռներեցը կանգնած է ընտրության առջև, թե որքա՞ն ապրանք գնել՝ 500 միավոր թե՞ 1000 միավոր: 500 միավոր գնելու դեպքում ծախսերը կկազմեն 2000 դրամ 1 միավորի համար, իսկ 1000 միավոր ապրանք գնելու դեպքում ծախսերը կկազմեն 1200 դրամ 1 միավորի համար: Ձեռներեցը հետագայում կվաճառի տվյալ ապրանքը 3000 դրամ արժեքով 1 միավորի համար: Սակայն նա չգիտի՝ արդյո՞ք ապրանքը պահանջարկ կունենա: Պահանջարկի բացակայության դեպքում նա ստիպված կլինի գինը զգալի իջեցնել, ինչը վնաս կհասցնի նրա գործառնությանը: Ապրանքի վաճառքի հավանականությունը կազմում է 50/50, այսինքն 0,5 հավանականություն կա 500 միավոր ապրանքի համար և 0,5՝ 1000 միավոր ապրանքի վաճառքի համար:

500 միավոր ապրանքի վաճառքի դեպքում շահույթը կկազմի 500000 դրամ (500 (3000-2000)), 1000 միավոր ապրանքի վաճառքի դեպքում՝ 1800000 դրամ (1000 (3000-1200), սպասվող միջին եկամուտը՝ 1150000 դրամ (0,5 x 500+ 0,5 x1800):

Որոշակիության պայմաններում տեղեկատվության սպասվող գինը կազմում է 1150000 դրամ, իսկ անորոշության պայմաններում՝ (1000 միավոր ապրանքի գնում ) կկազմի 900000 դրամ (0,5 x 1800): Այդ դեպքում ամբողջական տեղեկատվության արժեքը հավասար է 250000 դրամ (1150-900):

Հետևաբար, ավելի ստույգ կանխատեսման համար անհրաժեշտ է ստանալ հավելյալ տեղեկատվություն ապրանքի պահանջարկի մասին՝ վճարելով դրա համար 250000 դրամ: Անգամ եթե տեղեկատվությունը լինի ոչ լրիվ հստակ, ամեն դեպքում շահեկան է ներդնել միջոցներ պահանջարկի և սպառման շուկայի ուսումնասիրությունների մեջ, որը ապահովում է սպառման լավագույն հեռանկարային կանխատեսում:

Ռիսկի հավանականությունը և տեղեկատվության ծավալը/որակը փոխկապակցված են, որը պատկերված է գծանկար 10-ում:




Գ-ծանկար 10. Ռիսկի և տեղեկատվության կախվածությունը

*Ստուգողական հարցեր*

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում դիվերսիֆիկացումը:
2. Ո՞րն է դիվերսիֆիկացվող և չդիվերսիֆիկացվող ռիսկերի տարբերությունը:
3. Ինչի՞ց է թույլ տալիս խուսափել դիվերսիֆիկացումը:

## Թեստեր

Ի՞նչն է մարդկանց դրդում գնալ վտանգավոր փորձությունների: Ի՞նչն է ռիսկային վարվելաձևի հիմքը: Ինչու՞ են որոշ մարդիկ ձգտում սուր զգացողությունների՝ կյանքի և մահվան շեմին:

Գոյություն ունեն մարդկանց խմբեր, որոնք տարբերվում են հակվածությամբ դեպի նոր, սուր զգացողությունները: Նրանք ցանկանում են ոչ միայն անընդհատ փորձ ձեռք բերել, այլ ընտրում են ակտիվության բավականին անսովոր ձևեր՝ գրգռող և ռիսկային: Նրանց համար ռիսկը գործողություն է, ուղղված գրավիչ նպատակի, որին հասնելը կապված է վտանգի, կորստի սպառնալիքի, անհաջողության հետ:

Ներկայացված թեստերը թույլ են տալիս որոշել հակվածությունը ռիսկի հանդեպ: Սակայն անհրաժեշտ է հիշել, որ պատասխանները պետք է լինեն ծայրահեղ անկեղծ, ինչը կօգնի խուսափել սխալներից և անել անհրաժեշտ հետևություններ:

### 1. Թեստ
### «Պատրասվածությունը ռիսկի հանդեպ»
### (Շուբերտի թեստ)

Տվյալ թեստը թույլ է տալիս գնահատել ռիսկի հանդեպ պատրաստվածությունը: Այստեղ ռիսկը դիտվում է որպես անորոշության պայմաններում կատարվող գործողություն կամ հնարավոր վտանգ՝ հաջող ընթացքի հույսով:

Այս թեստի միջոցով գնահատվում է մարդու՝ ռիսկի հանդեպ պատրասվածության աստիճանը: 25 պատասխաններից յուրաքանչյուրը ընտրելու դեպքում անհրաժեշտ է ընտրել հետևյալ միավորները ըստ ներկայացված աղյուսակի.

- +2 միավոր – ամբողջովին համաձայն եմ, վստահ «ԱՅՈ»,
- +1 միավոր – ավելի շատ «ԱՅՈ», քան «ՈՉ»,
- 0 միավոր – ոչ «ԱՅՈ», ոչ «ՈՉ», միջանկյալ,
- -1 միավոր - ավելի շատ «ՈՉ», քան «ԱՅՈ»,
- -2 միավոր – վստահ «ՈՉ»:

1. Կգերազանցեիք արդյո՞ք սահմանված արագությունը, որպեսզի անհրաժեշտ օգնություն ցուցաբերեք ծանր հիվանդ մարդուն և շտապ նրան հասցնեք հիվանդանոց:
2. Կհամաձայնեիք արդյո՞ք լավ վարձատրման դիմաց մասնակցել երկարատև և վտանգավոր արշավի:
3. Կկանգնեիք արդյո՞ք փախչող, զինված վտանգավոր հանցագործի ճանապարհին:
4. Կկարողանայիք արդյո՞ք սլանալ ապրանքատար գնացքի ոտնատեղի վրա, որն ընթանում է 100 կմ/ժ արագությամբ:
5. Կկարողանայիք արդյո՞ք անքուն գիշերից հետո նորմալ աշխատել:
6. Արդյո՞ք առաջինը կանցնեիք շատ սառը գետը:
7. Արդյո՞ք ձեր ընկերոջը պարտք կտաք խոշոր գումար՝ համոզված չլինելով, որ նա կկարողանա այդ գումարը ձեզ հետ վերադարձնել:
8. Կմտնեիք արդյո՞ք վարժեցնողի հետ առյուծների վանդակ, եթե նա վստահեցներ, որ դա ապահով է:
9. Կկարողանայիք արդյո՞ք մագլցել գործարանային բարձր աշտարակի վրա՝ դրսից ցուցումների օգնությամբ:
10. Կկարողանայիք արդյո՞ք առանց համապատասխան պարտարստվածության կառավարել առագաստանավը:
11. Կխիզախեիք արդյո՞ք բռնել արագ վազող ձիու սանձը:
12. Կկարողանայիք արդյո՞ք 10 գավաթ գարեջուր խմելուց հետո հեծանիվ վարել:
13. Կկարողանայիք արդյո՞ք օդապարիկով թռիչք կատարել:

14. Կկարողանայիք արդյո՞ք անհրաժեշտության դեպքում առանց տոմսի Երևանից գնալ մինչև Մոսկվա:
15. Կկարողանայիք արդյո՞ք կատարել ավտոմոբիլային շրջագայություն, եթե ղեկին լինի ձեր ընկերը, ով բոլորովին վերջերս ծանր ճանապարհային պատահարի մեջ է եղել:
16. Կկարողանայիք արդյո՞ք 10 մետր բարձրությունից թռչել հրշեջ պարուսինաձածկի վրա:
17. Կկարողանայիք արդյո՞ք ձգվող անկողնային ռեժիմով հիվանդությունից ազատվելու համար գնալ կյանքի համար վտագավոր վիրահատման:
18. Կկարողանայիք արդյո՞ք թռչել ապրանքատար վագոնի ոտնատեղից, որը ընթանում է 50 կմ/ժ արագությամբ:
19. Կկարողանայիք արդյո՞ք բացառության կարգով յոթ այլ մարդկանց հետ մեկտեղ բարձրանալ վերելակով, որը նախատեսված է միայն վեց հոգու համար:
20. Կկարողանայիք արդյո՞ք խոշոր գումարային պարգեվատրման դիմաց՝ կապված փակ աչքերով անցնել մեքենայաշատ խաչմերուկը:
21. Կկատարեիք արդյո՞ք կյանքի համար վտանգավոր աշխատանք, եթե դրա համար ձեզ լավ վարձատրեն:
22. Կկարողանայիք արդյո՞ք 10 բաժակ օղի խմելուց հետո բարդ տոկոսներ հաշվել:
23. Կկարողանայիք արդյո՞ք ձեր ղեկավարի ցուցումով բռնել բարձրավոլտ լարը, եթե նա հավաստիացներ, որ այն հոսանքազերծված է:
24. Կկարողանայիք արդյո՞ք մի քանի նախնական բացատրություններից հետո ուղղաթիռ վարել:
25. Կկարողանայիք արդյո՞ք տոմսով, սակայն առանց գումարի և սննդամթերքի Երևանից հասնել Վլադիվոստոկ:

Հաշվեք ձեր հավաքած թվանշանների գումարը ցուցումներին համապատասխան: Թեստի ընդհանուր գնահատականը տրվում է

ըստ չընդհատվող սանդղակի՝ որպես շեղում միջին նշանակությունից:

Թեստի արդյունքները՝

- -30 միավորից ցածր՝ չափազանց զգույշ եք.
- -10-ից +10՝ միջին նշանակություններ.
- +20-ից բարձր՝ հակված եք ռիսկի:

Ռիսկի հանդեպ բարձր պատրաստվածությունը զուգորդվում է անհաջողությունից խուսափելու (պաշտպանության) ցածր հիմնավորմամբ: Ռիսկի հանդեպ պատրաստվածությունը ուղիղ համեմատական կերպով կապված է թույլտված սխալների քանակի հետ:

Տվյալ թեստի հիման վրա ուսումնասիրությունները տալիս են հետևյալ արդյունքները.

- Տարիքի հետ ռիսկի հանդեպ պատրաստվածությունը ընկնում է:
- Առավել փորձառու մարդկանց ռիսկի հանդեպ պատրաստվածության աստիճանը ավելի ցածր է, քան անփորձներինը:
- Կանանց մոտ՝ ռիսկի հանդեպ պատրաստվածությունը, իրականանում է ավելի որոշակի պայմաններում, քան տղամարդկանց մոտ:
- Ռազմական հրամանատարների և ձեռնարկությունների ղեկավարների պատրաստվածությունը ռիսկի հաղեպ ավելի բարձր է, քան ուսանողների մոտ:
- Անհատի մերժվածության աստիճանի աճի հետ զուգահեռ՝ ներքին կոնֆլիկտի իրավիճակում, պատրաստվածությունը ռիսկի հաղեպ աճում է:
- Խմբի պայմաններում ռիսկի հաղեպ պատրաստվածությունը առավել վառ է արտահայտվում, քան միայնակ գործողություններ կատարելու դեպքում և կապված է խմբակային սպասումներից:

## 2. Թեստ

### Անհատի՝ անհաջողություններից խուսափելու հիմնավորման ախտորոշման մեթոդիկա
### (Էլերսի թեստ)

Ձեզ առաջարկվում են բառեր որոնք ներկայացված են 30 տողերում՝ երեք բառ յուրաքանչյուր տողի վրա: Յուրաքանչյուր տողից ընտրեք երեք բառերից միայն մեկը, որը առավել ճիշտ ձեզ կբնութագրի, և նշեք այն:

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| 1. համարձակ | զգոն | նախաձեռնող |
| 2. հեզ | երկչոտ | համառ |
| 3. զգույշ | վճռական | հոռետես |
| 4. փոփոխական | աննրբանկատ | ուշադիր |
| 5. ոչ խելացի | վախկոտ | չմտածող |
| 6. ճարպիկ | աշխույժ | շրջահայաց |
| 7. սառնասիրտ | կասկածամիտ | խիզախ |
| 8. նպատակասլաց | թեթևամիտ | վախկոտ |
| 9. չմտածող | կոտրատվող | անշրջահայաց |
| 10. լավատես | բարեխիղճ | զգայուն |
| 11. թախծոտ | կասկածող | ոչ կայուն |
| 12. վախկոտ | անփույթ | անհանգիստ |
| 13. հապճեպ | հանգիստ | վախկոտ |
| 14. ուշադիր | անխելամիտ | խիզախ |
| 15. լրջամիտ | արագ | տղամարդկային |
| 16. նախաձեռնող | զգույշ | շրջահայաց |

| | | |
|---|---|---|
| 17. անհանգիստ | ցրված | զգայուն |
| 18. փոքրոգի | անփույթ | անքաղաքավարություն |
| 19. վախկոտ | անվճռական | նյարդային |
| 20. կատարողական | նվիրված | արկածալից |
| 21. շրջահայաց | աշխույժ | հուսահատ |
| 22. սանձահարված | անտարբեր | անփույթ |
| 23. զգույշ | անհոգ | համբերատար |
| 24. խելամիտ | հոգատար | խիզախ |
| 25. կանխատեսող | անվախ | բարեխիղճ |
| 26. հապճեպ | վախկոտ | անհոգ |
| 27. ցրված | թեթևամիտ | հոռետես |
| 28. շրջահայաց | խելամիտ | նախաձեռնող |
| 29. հանգիստ | անկազմակերպ | վախկոտ |
| 30. լավատես | զգոն | անհոգ |

Դուք ստանում եք 1-ական միավոր հետևյալ ընտրության համար (առաջին թիվը գծից առաջ տողի համարն է, գծից հետո երկրորդ թիվը սյունակի համարն է, որի մեջ անհրաժեշտ բառն է: Օրինակ՝ 1/2 նշանակում է, որ առաջին տողում մեկ միավոր ստացած բառը՝ երկրորդ սյունակի «զգոն» բառն է): Մյուս ընտրությունները միավորներ չեն ստանում:

### Հաշվարկի լուծումները

1/2; 2/1; 2/2; 3/1; 3/3; 4/3; 5/2; 6/3; 7/2; 7/3; 8/3; 9/1; 9/2; 10/2; 11/1; 11/2; 12/1; 12/3; 13/2; 13/3; 14/1; 15/1; 16/2; 16/3; 17/3; 18/1; 19/1; 19/2; 20/1; 20/2; 21/1; 22/1; 23/1; 23/3; 24/1; 24/2; 25/1; 26/2; 27/3; 28/1; 28/2; 29/1; 29/3; 30/2.

**Արդյունքը**

Որքան շատ է միավորների գումարը, այնքան բարձր է անհաջողություններից խուսափելու, պաշտպանության հիմնավորման մակարդակը: 2-ից - 10 միավոր՝ պաշտպանության ցածր հիմնավորում, 11-ից - 16 միավոր՝ հիմնավորման միջին մակարդակ, 17-ից - 20 միավոր՝ հիմնավորման բարձր մակարդակ, 20 միավորից բարձր՝ անհաջուղություններից խուսափելու, պաշտպանության հիմնավորման չափազանց բարձր մակարդակ:

**Արդյունքների վերլուծություն**

Տվյալ թեստի հիման վրա Դ.Մակ-Կլեմավդի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պաշտպանության բարձր մակարդակով մարդիկ առավել հաճախ են հայտնվում նման իրավիճակներում, քան նրանք, ովքեր ունեն հաջողության հիմնավորման բարձր աստիճան:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անհաջողություններից վախեցող մարդիկ (պաշտպանության բարձր մակարդակ) նախընտրում են նվազագույն կամ հակառակը՝ չափազանց բարձր ռիսկ, երբ անհաջողությունը չի սպառնում հեղինակությանը:

Պաշտապանողական պահելաձևի կողմնորոշումը ուժեղացնում է երկու հանգամանք՝ առաջինը՝ երբ առանց ռիսկի հաջողվում է հասնել սպասվող արդյունքի, երկրորդը՝ երբ ռիսկային քայլերը հանգեցնում են դժբախտ պատահարի: Ռիսկային քայլերի դեպքում անվտանգ արդյունքների հասնելը թուլացնում է պաշտպանության կողմնորոշումը, այսինքն անհաջողություններից խուսափելու հիմնավորումը:

## 3. Թեստ

### «Զգացողությունների որոնման պահանջը»

Ձեզ առաջարկվում են մի շարք պնդումներ, որոնք ներկայացված են զույգերով ա) և բ) տառերի տակ:

Յուրաքանչյուր զույգից հարկավոր է ընտրել միայն մեկ պնդում, որը առավել բնութագրող կլինի ձեզ համար և նշել համապատասխան տառը:

1. ա) Ես կնախընտրեի բազմաթիվ ճանապարհորդություններ պահանջող աշխատանք:

բ) Ես կնախընտրեի աշխատել մեկ վայրում:

2. ա) Ինձ ուժ է տալիս թարմ, ցուրտ օրը:

բ) Ցուրտ օրը ես շտապում եմ տուն հասնել:

3. ա) Ինձ դուր չեն գալիս օծանելիքների հոտերը:

բ) Ինձ դուր են գալիս որոշ օծանելիքների հոտերը:

4. ա) Ես կխիզախեի փորձել որևէ թմրանյութ, որպեսզի նոր զգացողություններ ապրեմ:

բ) Ես չէի փորձի թմրանյութեր, քանի որ նոր ձգացողությունների կարիք չեմ զգում:

5. ա) Ես կնախընտրեի ապրել կայուն հասարակության մեջ՝ առանց հեղափոխությունների և ցնցումների:

բ) Ես կնախընտրեի ապրել երկրի պատմության անհանգիստ տարիներին:

6. ա) Ես չեմ հասկանում արագ վարել սիրող մարդկանց:

բ) Ես սիրում եմ արագ վարել, քանի որ դա ինձ գրգռում է:

7. ա) Ես սիրում եմ ռիսկ, մոլեգնություն:

բ) Ես չեմ սիրում վտանգավոր միջոցառումներ և գործում եմ «յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր» սկզբունքի համաձայն:

8. ա) Քաղաքական և աշխարհայացքային խնդիրների շուրջ վեճերը ինձ չեն գրավում:

բ) Ես սիրում եմ վիճել, դա ինձ գրգռում է:

9. ա) Ես չեմ սիրում միապաղաղ գործունեություն, այն ինձ քնեցնում է:

բ) Ես նորմալ եմ վերաբերվում միապաղաղ աշխատանքին:

10. ա) Ես չէի ցանկանա հիպնոսի ենթարկված լինել:

բ) Ես կցանկանայի փորձել հիպնոսի ենթարկված լինել:

11. ա) Կյանքի ամենակարևոր նպատակը լիարժեք ապրելն է և կյանքից վերցնելը այնքան, որքան հնարավոր է:

բ) Երջանկությունը հանգիստ կյանքի մեջ է:

12. ա) Սառը ջրի մեջ դանդաղ եմ մտնում՝ թույլ տալով ինձ ընտելանալ:

բ) Ես սիրում եմ սառը ջրի մեջ միանգամից սուզվել, որպեսզի այրող զգացողություն ունենամ:

13. ա) Ես կարող եմ նորից և նորից հաճույքով լսել ռադիոընդունիչով հաղորդվող պոպուլյար երգերը:

բ) Ինձ պոպուլյար երգերը շուտ հոգնեցնում են:

14. ա) Մարդու ամենավատ թերությունը միշտ ուրախ և թեթևամիտ լինելն է:

բ) Մարդու ամենավատ թերությունը միշտ տխուր և ճանճրալի լինելն է:

15. ա) Ինձ դուր կգար մոտոցիկլետով արագ սլանալ:

բ) Մոտոցիկլետով բարձր արագությամբ սլացող մարդիկ ինքնասպաններ են:

16. ա) Ես նախընտրում եմ հանգիստ, «կարգավորված» մարդկանց:

բ) Ես նախընտրում եմ արտահայտված էմոցիոնալության տեր մարդկանց, անգամ եթե նրանք մի փոքր անհավասարակշռված են:

Այժմ տեղափոխեք ստացված տվյալները ներկայացված աղյուսակի մեջ: Յուրաքանչյուր համարի դիմաց գրեք համապատասխան տառը:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | 5 | | 9 | | 13 | |
| 2 | | 6 | | 10 | | 14 | |
| 3 | | 7 | | 11 | | 15 | |
| 4 | | 8 | | 12 | | 16 | |

Ստացված պատասխանները հարաբերակցվում են հետևյալ լուծումների հետ՝

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ա | 5 | բ | 9 | ա | 13 | բ |
| 2 | ա | 6 | բ | 10 | բ | 14 | բ |
| 3 | բ | 7 | բ | 11 | ա | 15 | ա |
| 4 | բ | 8 | բ | 12 | բ | 16 | բ |

Հաշվի են առնվում միայն լուծման հետ համընկնող պատասխանները: Յուրաքանչյուր համընկնում գնահատվում է մեկ միավոր: Ստացված միավորները միագումարվում են:

Գրառեք արդյունքը. Գումարը = _____

**Թեստի արդյունքները**

Զգացողությունների պահանջի բարձր աստիճանը (11-16) վկայում է նոր, նյարդերը գրգռող զգացողությունների հանդեպ ուժեղ, գրեթե անկառավարելի հակման առկայության մասին: Զգույշ եղեք: Ձեզ հեշտ է ներքաշել վտանգավոր և արկածախնդիր

միջոցառումների մեջ, սակայն դուք չեք վերահսկում ռիսկի և վտանգի աստիճանը: Իրականում կյանքի լիարժեքության զգացողությունը կարող է ձեզ ապահովել հետաքրքիր շփում, զգացողություններով լի իրադարձություններ, հետաքրքիր հանգիստ և ստեղծագործական հնարավորություններ:

Զգացողությունների պահանջի միջին մակարդակը (6-10) վկայում է այդ պահանջմունքը վերահսկելու ունակության մասին: Այդպիսի մարդիկ մի կողմից բաց են նոր փորձի առջև, սակայն մյուս կողմից կյանքի որոշակի պահերի կարող են ցուցաբերել չափվածություն և խելամտություն:

Զգացողությունների պահանջի ցածր մակարդակը (0-5 միավոր): Այդպիսի մարդիկ նախընտրում են կայունություն և դասավորվածություն ամեն տեսակ անսպասելիի և անհայտի հանդեպ: Արդյունքները վկայում են ծայրաստիճան շրջահայացության և զգուշության մասին՝ թեկուզ և նոր տպավորություններ և տեղեկություններ ստանալու հաշվին:

## Ռիսկի խնդրին անդրադարձած գիտնականներ




**Ռիչարդ Կանտիլիոն** (Cantilion Richard), (մոտ. 1680-1734), իռլանդացի տնտեսագետ: Ծնվել է Իռլանդիայի Քերրի կոմսությունում: Նրա կյանքի վաղ տարիների մասին տեղեկությունները սուղ են: Հայտնի է, որ նա հարստացավ, լինելով վաճառական Լոնդոնում, իսկ հետո՝ բանկիր՝ Փարիզում: Կյանքի վերջին տարիներին բնակվեց Լոնդոնում: Կանտիլիոնը հայտնի դարձավ «Ակնարկ առևտրի բնույթի մասին ընդհանրապես» (Essai sur la nature du commerce en general) աշխատության շնորհիվ, որը ֆրանսերեն լեզվով հրատարակվեց Լոնդոնում 1755թ: Մոտավորապես 1880թ. այդ աշխատությունը գրավեց անգլիացի տնտեսագետ Ուիլյամ Սթենլի Ջոնսի ուշադրությունը, ով այդ գիրքն անվանեց «քաղաքատնտեսության օրորոց»: Գրքի առաջին մասում տրվում էր հարստության սահմանումը, որտեղ առանձնացվում էին այնպիսի տարրեր, ինչպիսիք են հողը և աշխատանքը: Կանտիլիոնը պնդում էր, որ աշխատանքի վարձատրման մեջ եղած տարբերությունները կապված են կորցված ժամանակի, ծախսերի, աշխատանքային գործունեության տվյալ տեսակին տիրապետելու դժվարության աստիճանի, նրա հետ կապված ռիսկի, ինչպես նաև աշխատողից այդ աշխատանքային գործունեությունը կատարելու համար պահանջվող ունակությունների և նրա վրա դրվող պատասխանատվության հետ: Այդ գաղափարներից հետագայում աճեց Ադամ Սմիթի աշխատավարձի տեսությունը: Կանտիլիոնը հակադրում էր արտադրության ծախսերից առաջացած իրական արժեքը պահանջարկից և առաջարկից կախված շուկայական արժեքին:

«Դրամը, լինի այն թղթադրամ, թե՝ մետաղադրամ»,- պնդում էր նա,- «չի հանդիսանում ազգի հարստության իրական չափ, հարստության իրական աղբյուրը հողն է»:

Հողը բերում է երեք տեսակի եկամուտ: Սկզբում այն փոխհատուցում է հողագործի ծախսերը, հետո շահույթ է բերում նրան, ով իրապես տիրում է դրան և ի վերջո, շահույթ է բերում սեփականատիրոջը: Կանտիլիոնը պնդում էր, որ այն ձեռնարկումները, որոնք չեն վերաբերվում գյուղատնտեսական սեկտորին, ի վիճակի չեն առաջարկել եկամուտների երրորդ ճնի համարժեքը: Կանտիլիոնի աշխատությունում դիտարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսին են բարտերը, շուկայական գները, վարկը, տոկոսը և նրա հիմունքները, տոկոսադրույքների բարձրացումն ու նվազեցումը, արտաքին առևտուրը, բանկային գործը:

Որոշ առարկաների նրա մեկնաբանությունը ակնհայտորեն կանխորոշում է շատ ավելի ուշ ժամանակի գաղափարները, օրինակ, Մալտոսի տեսությունը: Կանտիլիոնը առաջինն գործածեց «իրական կամ ներքին արժեք» եզրույթը (այսօր այն անվանում են «նորմալ արժեք») և ցույց տվեց իրական արժեքի կապը շուկայականի հետ: Կանտիլիոնը մահացել է Լոնդոնում 1734 թվականի մայիսի 14-ին:



**Ադամ Սմիթը** (Adam Smith) ծնվել է 1723թ.-ի հունիսին (նրա ծննդյան ճշգրիտ ամսաթիվը հայտնի չէ) և մկրտվել է մայիսի 5-ին, շոտլանդական Ֆայֆ մարզի Կերկոլդի փոքրիկ քաղաքում, մաքսային աստիճանավորի ընտանիքում: Տասնչորս տարեկանում նա ընդունվեց Գլազգոյի համալսարան, որտեղ երկու տարի Ֆրենսիս Խատչեսոնի ղեկավարության ներքո ուսումնասիրեց փիլիսոփայության հիմունքները: 1740թ.-ին նա ընդունվեց Բեյլիոլ-քոլեջ Օքսֆորդում և այն ավարտեց 1746թ.-ին:

1748թ.-ին Սմիթը սկսեց դասախոսություններ կարդալ Էդինբուրգում, լորդ Քեյմսի հովանավորության ներքո: Հենց այդ համալսարանի ուսանողների համար դասախոսությունների պատրաստումն էլ խթան հանդիսացավ տնտեսության խնդիրների մասին Ադամ Սմիթի պատկերացումների ձևակերպման համար: Ադամ Սմիթի հիմնական գիտական տեսության հիմունքն էր մարդուն երեք կողմից դիտելու ձգտումը.

- բարոյականության տեսակետից,
- քաղաքացիական և պետական տեսակետից,
- տնտեսական տեսակետից:


Սմիթը հանրահայտ դարձավ 1776թ.-ին «Հետազոտություն ժողովուրդների հարստությունների բնույթի և պատճառների մասին» գրքի հրատարակումից հետո: Այդ գիրքը մանրամասն նկարագրում է տնտեսական ազատության հետևանքները: Գրքում ներառված են այնպիսի հայեցակարգեր, ինչպիսիք են laissez-faire, եսասիրության դերը, աշխատանքի բաժանումը, շուկայի ֆունկցիաները և ազատ տնտեսության միջազգային նշանակությունը: Ժողովուրդների հարստությունը սկզբնավորեց որպես գիտություն, գործի դնելով ազատ ձեռներեցության ուսմունքը:

Սմիթը շարադրեց ինտելեկտուալ համակարգը, որը բացատրում էր ազատ շուկայի աշխատանքը և մինչև այժմ հանդիսանում է տնտեսագիտական կրթության հիմքը: Սմիթի ամենահայտնի աֆորիզմն է «շուկայի անտեսանելի ձեռքը» արտահայտությունը, որը նա օգտագործում էր ռեսուրսների տեղաբաշխման մեջ եսասիրությունը որպես արդյունավետ լծակ մեկնաբանելու համար:

1778թ.-ին Սմիթը նշանակվեց որպես Էդինբուրգի (Շոտլանդիա) մաքսային վարչության պետ, որտեղ նա մահացավ 1790թ.-ի հուլիսի 17-ին տևական հիվանդությունից հետո:



**Ջոն Ստյուարտ Միլ** (Mill, John Stuart), (1806-1873), անգլիացի փիլիսոփա և տնտեսագետ: Ծնվել է Լոնդոնում շոտլանդացի տնտեսագետի և փիլիսոփայի՝ Ջեյմս Միլի ընտանիքում: Միլը նախ և առաջ հայտնի է իր «Ակնարկ ազատության մասին» աշխատությամբ, որտեղ ձևակերպված են այն պատճառները, որոնց համաձայն, հասարակությունը, հետապնդելով սեփական կենսականորեն կարևոր շահերը, պետք է մարդկանց համար ապահովի մաքսիմալ ազատություն բարոյական կամ ֆիզիկական ճնշումից: «Պետության արժեքը վերջին հաշվով, չափվում է այն անհատների արժեքով, որոնք կազմում են այդ պետությունը, պետություն, որը ճզմում է մարդկանց, որպեսզի նրանց հնազանդ գործիքներ դարձնի իր ձեռքում, նույնիսկ այն դեպքում, երբ հռչակում է բարի մտադրություններ, շուտով կհայտնաբերի, որ փոքրիկ մարդուկներով անհնար է հասնել որևէ մեծության, իսկ կառավարման ապարատի կատարելագործումը, որին ամեն ինչ զոհաբերվում էր, վերջին հաշվով ոչինչ չտվեց…»: Միլը մահացել է 1873թ.-ին Ավինյոնում:



**Ալֆրեդ Մարշալ** (Alfred Marshall), անգլիացի տնտեսագետ, տնտեսագիտության մեջ նեոդասական ուղղության առաջնորդ, տնտեսագիտության քեմբրիջյան դպրոցի ներկայացուցիչ: Մարշալը ծնվել է 1842թ. հուլիսի 26-ին Լոնդոնի Բերմոնդսի շրջանում: Սովորել է Իտոնում և Քեմբրիջի համալսարանում, որն ավարտել է 1865թ.: Քեմբրիջում դասավանդել է մաթեմատիկա, Բրիստոլի համալսարանական քոլեջում՝ քաղաքատնտեսություն, 1885-

1908թթ. իր մայրենի համալսարանում գլխավորում էր քաղաքատնտեսության ամբիոնը:

Տնտեսագիտության մեջ Մարշալի գլխավոր ներդրումն է հանդիսանում դասական տեսության և մարժինալիզմի միավորումը: Նա համարում էր, որ ապրանքի շուկայական արժեքը որոշվում է ապրանքի սահմանային հավասարակշռությամբ և նրա արտադրության վրա սահմանային ծախսերով: Տվյալ դրույթի գրաֆիկական համարժեք է հանդիսանում հանրահայտ գրաֆիկը, որը կոչվում է «Մարշալի խաչ» կամ «Մարշալի մկրատ»: Ջ. Մ. Քեյնսը կարծում էր, որ Մարշալի պնդման հիմքում ընկած ընդհանուր գաղափարն այն մասին, որ արժեքը սահմանվում է պահանջարկի և առաջարկի հավասարակշռված մակարդակի վրա, հանդիսանում է Կոպերնիկոսի Տիեզերական համակարգի համարժեքը:

Մարշալը տնտեսագիտության տեսության մեջ ներմուծեց կատեգորիաները, «պահանջարկի ճկունությունը», «սպառողի ավելցուկը»:

Գիտնականը վախճանվեց Քեմբրիջում իր տանը, 1924թ.-ի հուլիսի 13-ին: Թաղված է Քեմբրիջի Հարության եկեղեցու ծխական գերեզմանատանը:



**Արթուր Սեսիլ Պիգու**, (Pigou Arthur Cecil), (1877-1959)- անգլիացի տնտեսագետ: Ծնվել է 1877թ. նոյեմբերի 18-ին Ռայդում: Քեմբրիջի նեոդասական դպրոցի ականավոր ներկայացուցիչ, այդ դպրոցի հիմնադիր Ալֆրեդ Մարշալի աշակերտ և հետևորդ: Պիգուի գլխավոր աշխատությունն է «Բարեկեցության տնտեսագիտական տեսությունը» (The Economics of Welfare, 1920): Պիգուի առաջարկած բարեկեցության տնտեսագիտական տեսությունը, որն իրենից ներկայացնում էր ուշ ռիկարդիանական ուսմունքների միավորումը սահմանային օգտակարության դպրոցի

գաղափարների հետ, ընկած էր սոցիալական ռեֆորմների հիմքում, որոնք անցկացնում էին լեյբորիստները Մեծ Բրիտանիայում և օժանդակում համընդհանուր բարօրության պետությունների բազմաթիվ տեսությունների զարգացմանը: Տվյալ տեսությունում գլխավոր տեղը զբաղեցնում է ազգային դիվիդենդի հայեցակարգը, սահմանվող որպես հասարակության նյութական եկամտի մաս, որը կարող է արտահայտվել դրամներով: Մեծ նշանակություն է տրվում սոցիալական հիմնախնդիրների կազմակերպմանը և դիտարկմանը, մասնավորապես, աշխատանքի, աշխատավարձի և գործազրկության հարցերին, որոնց լուծումն ազդում է ազգային դիվիդենդի տեղաբաշխման մեծության վրա, այսինքն, տնտեսության մեջ ցիկլիկ տատանումների ուսումնասիրությանը, որոնց հիմնական պատճառը Պիգուն տեսնում էր աշխատանքի նկատմամբ պահանջարկի փոփոխություններում:

Դրա հետ մեկտեղ, ընդունելով պետության դերը սոցիալական հիմնախնդիրներ լուծելու հարցում, Պիգուն տնտեսության մեջ ազատ մրցակցության կողմնակիցն էր և սահմանափակում էր պետության միջամտությունը տնտեսական կյանքին, հանդես էր գալիս գների պետական կարգավորման և ռեսուրսների տեղաբաշխման դեմ: Պիգուն մահացել է Քեմբրիջում 1959թ.-ի մարտի 7-ին:




**Քեննեթ Էրոու**, (Arrow, Kenneth) (ծնվ. 1921 թ.)- ամերիկացի տնտեսագետ, ով 1972 թ.-ին արժանացավ Նոբելյան մրցանակի տնտեսագիտության գծով: Ծնվել է 1921թ.-ի օգոստոսի 23-ին Նյու Յորքում: Ավարտել է Նյու Յորքի Սիթի քոլեջը, 1940թ.-ին ընդունվել է Կոլումբիական համալսարան:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է BBC-ում: Պատերազմից հետո դարձավ Ստանֆորդի համալսարանի պրոֆեսոր, 1968թ.-ից Հարվարդի համալսարանի

պրոֆեսոր, տնտեսագիտական դպրոցի հիմնադիր: 1979թ.-ին վերադարձավ Ստանֆորդ:

Էրոուն, նախ և առաջ, հայտնի է որպես լայն տարածում ունեցող «հասարակական ընտրության» գաղափարի հակառակորդ, «Էրոուի թեորեմի» հեղինակ, որն ապացուցում է հասարակության կողմից իր գերակայությունների մասին «կոլեկտիվ» որոշում կայացնելու անհնարինությունը, ելնելով անհատական գերակայությունների հաշվարկից: Գիտնականի հետազոտությունները նաև նվիրված են տնտեսության զարգացմանը, տեղաբաշխման հիմնահարցերին և շուկայի ու պետության փոխհարաբերություններին: Էրոուի ձեռքբերումների թվում են՝ ընդհանուր տնտեսական հավասարակշռության մոդելը, որը նրա կողմից կառուցվեց Ժ. Դեբրյոյի հետ համատեղ, օպտիմալ պաշարների (կուտակումների) տեսությունը, անորոշության տեսությունը (ոչ լրիվ տեղեկատվության պայմաններում որոշում կայացնելը):

Էրոուի աշխատություններից է «Հավասարակշռության գոյությունը մրցակցային տնտեսության համար» (Existence of equilibrium for a competitive economy, 1954 թ., Ժ. Դեբրյոյի հետ համատեղ); «Պետական ներդրումներ, շահույթի նորմա և օպտիմալ հարկային քաղաքականություն» (Public investment, the rate of return, and optimal fiscal policy, 1970); «Ակնարկներ ռիսկի տեսության մասին» (Essays in the theory of risk-bearing, 1971), «Հետազոտություն ռեսուրսների տեղաբաշխման մասին» (Studies in resource allocation, 1977) և այլն:



**Ջոն Մեյնարդ Քեյնս** (John Maynard Keynes), - անգլիացի տնտեսագետ, բրիտանական ուղղության հիմնադիր տնտեսագիտական տեսության մեջ: Քեյնսը ծնվել է հայտնի տնտեսագետ, Քեմբրիջի համալսարանի տնտեսագիտության և փիլիսոփայության դասախոս Ջոն Նեվիլ Քեյսնի և հաջողակ


գրող՝ Ֆլորենս Ադա Բրաունի ընտանիքում, ով նույնպես զբաղվում էր հասարակական գործունեությամբ:

Ապագա մեծ գիտնականն իր կրթությունը ստացել է Իտոնում՝ Քեմբրիջի թագավորական քոլեջում, ընդ որում համալսարանում գիտնականը սովորել է Ա. Մարշալի մոտ, որն ուսանողի ընդունակությունների մասին բարձր կարծիք ուներ:

1906-1914թթ.-ին Քեյնսն աշխատում էր Հնդկաստանի գործերով դեպարտամենտում, Հնդկական ֆինանսների և տարադրամի թագավորական հանձնաժողովում: Այդ շրջանում նա գրում է իր առաջին գիրքը՝ «Հնդկաստանի դրամական շրջանառություն և ֆինանսներ» (1913), ինչպես նաև գիտական թեզը հավանականությունների հիմնախնդիրների վերաբերյալ, որի հիմնական արդյունքները հրատարակվեցին 1921թ.-ին «Տրակտատ հավանականությունների մասին» աշխատությունում: Գիտական թեզը պաշտպանելուց հետո Քեյնսը սկսում է դասավանդել Թագավորական քոլեջում:

20-ական թվականներին Քեյնսը զբաղվում է ապագա համաշխարհային տնտեսության և ֆինանսների հիմնախնդիրներով: 1921թ.-ի ճգնաժամը և նրան հաջորդող դեպրեսիան գրավեցին գիտնականի ուշադրությունը դեպի գների կայունության և արտադրության ու զբաղվածության մակարդակի հիմնախնդիրը: 1923թ.-ին Քեյնսը հրատարակում է «Տրակտատ դրամական ռեֆորմի մասին» աշխատությունը, որտեղ վերլուծում է դրամի արժեքի փոփոխությունների պատճառները և հետևանքները, ընդ որում ուշադրություն է դարձնում այնպիսի կարևոր պահերի, ինչպիսիք են սղաճի ազդեցությունը եկամուտների տեղաբաշխման վրա, ակնկալիքների դերը, կախվածությունը գների փոփոխության նկատմամբ ակնկալիքների և տոկոսադրույքների միջև: Ճիշտ դրամավարկային քաղաքականությունը՝ Քեյնսի կարծիքով, պետք է ելնի ներքին գները կայուն պահպանելու գերակայությունից, ոչ թե նպատակ ունենա աջակցել տարադրամի փոխարժեքի բարձրացմանը,

ինչպես այն անում էր Մեծ Բրիտանիայի կառավարությունը: Քեյնսը քննադատում էր վարվող քաղաքականությունը իր «Պարոն Չերչիլի տնտեսական հետևանքները» (1925) աշխատությունում:
1936թ. փետրվարին գիտնականը հրատարակում է իր հիմնական աշխատությունը՝ «Զբաղվածություն, տոկոս և դրամի ընդհանուր տեսություն», որտեղ որպես օրինակ ներմուծում է կուտակման բազմապատկիչ (մուլտիպլիկատոր) (Քեյնսի բազմապատկիչ): «Զբաղվածության, տոկոսի և դրամի ընդհանուր տեսությունը» գրքից հետո Քեյնսը հաստատվում է որպես լիդեր՝ իր ժամանակի տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության մեջ:
1942թ-ին Քեյնսին շնորհվեց պերի (բարոնի) ժառանգական տիտղոսը: Մահացել է 1946թ.-ի ապրիլի 21-ին: Թաղված է Ուեսթմինսթերում: Ջ. Քեյնսի գաղափարների ազդեցությամբ առաջացած տնտեսական հոսանքը հետագայում ստացավ քեյսականություն անվանումը:



**Նիկլաս Լուման**, (Luhmann Niklas)- գերմանացի սոցիոլոգ: Ծնվել է 1927թ.-ի դեկտեմբերի 8-ին Լյունեբուրգում: 1946-49 թթ.-ին ուսումնասիրում էր իրավաբանություն Ֆրայբուրգի համալսարանում: 1954-1962 թթ.-ին աշխատում էր Ներքին Սաքսոնիայի Հողային Վարչությունում, մշակույթի գործերով նախարարությունում: 1960-1961թթ.-ին արձակուրդ վերցնելով, սովորեց Հարվարդում Տոլկոտ Պարսոնսի մոտ, իսկ հայրենիք վերադառնալուց հետո, զբաղվում էր կառավարման տեսության ուսումնասիրմամբ: 1965թ.-ից զբաղվում է գիտական աշխատանքով, 1966թ.-ից պաշտպանեց միանգամից երկու գիտական թեզ սոցիոլոգիայի գծով: Սկսեց աշխատել Մյունստերի համալսարանում, իսկ 1968թ.-ին որպես պրոֆեսոր Բիլեֆելդի

համալսարանում, որտեղ և աշխատեց մինչև իր թոշակի անցնելը 1993թ.-ին:

Իր պրոֆեսորական գործունեության սկզբում, Լումանն իր առջև դրեց հետևյալ խնդիրը՝ 30 տարվա ընթացքում ստեղծել հասարակության լիակատար բնութագիրը՝ հենց այս խնդրի լուծմամբ էլ նա զբաղվեց իր ամբողջ կյանքի ընթացքում: «Հասարակության հասարակություն» («Die Gesellschaft der Gesselschaft») գիրքը, որը լույս տեսավ նրա մահից անմիջապես առաջ, դարձավ այդ պրոֆեսորական գործունեության պսակը: Լումանն ընդհանուր գրել է 77 գիրք և 250 հոդված սոցիալական ճանաչման և հասարակության համակարգային տեսության թեմաներով: Մահացել է 1998 թ.-ի նոյեմբերի 6-ին:



**Ֆրենք Խայնեման Նայթը** (Frank Khaneman Khight) (1885-1962) ծնվել է 1885 թ.-ի նոյեմբերի 7-ին Մակ-Լինում, Իլինոյս նահանգի հարավում բնակվող իռլանդական ծագմամբ ֆերմեր Ուիլտոն Նայթի և Ջուլիա Աննա Խայնեման Նայթի ընտանիքում, որտեղ նրանց տասնմեկ երեխաներից ավագն էր:

Ֆրենկ Նայթի եղբայրներից երկուսը՝ Մելվին Մոզեսը և Բրյուս Ուինտոնը, նույնպես դարձան տնտեսագետներ:

Նայթը կրթություն ստացավ Միջին Արևմուտքի մի շարք դպրոցներում և քոլեջներում: Ուսման մեջ նա դրսևորում էր ջանասիրություն, բարձր ինտելեկտ, որի համար ստանում էր գերազանց գնահատականներ: Նախապատրաստական շրջանն ավարտեց Թենեսի նահանգի համալսարանում երկու տարվա ուսումնառությամբ: 1911թ.-ին Նայթն ընդունվեց Կորնելի համալսարան սկզբում փիլիսոփայություն ուսումնասիրելու համար և մեկ տարի անց (փիլիսոփայության ամբիոնի ակտիվ աջակցությամբ) նա սկսեց ուսումնասիրել տնտեսագիտության տեսությունը: Նա գրեց գիտական թեզ («A theory of Business

Profit»), (1916), որն ի հայտ բերեց գնի և տեղաբաշխման տեսության բնագավառում նրա գիտելիքների ապշեցուցիչ խորությունը և լայնությունը, որոնց նա շատ արագ տիրապետեց: Նշանակալից փոփոխություններով թեզիսները հրատարակվեցին 1921թ.-ին, որպես բոլորինն հայտնի՝ «Risk, Uncertainty and Profit»: Նայթի հետագա ակադեմիական կարիերան հեշտությամբ կարելի է նկարագրել մի քանի խոսքով: Կորնելում մեկ տարի և Չիկագոյի համալսարանում երկու տարի դասավանդելուց (1917-1919) հետո, նա տեղափոխվեց Յովի համալսարան, որտեղ սկզբում աշխատում էր որպես դոցենտ, հետո՝ պրոֆեսոր ութ տարվա ընթացքում: 1927թ.-ին նա վերադարձավ Չիկագոյի համալսարան, որտեղ մինչև 1958թ.-ը դասավանդում էր և որտեղ ապրեց իր կյանքի մնացած մասը:

Կորնելը 1928թ.ին և Հարվարդը 1929թ.-ին փորձում էին ետ վերադարձնել նրան, բայց՝ ապարդյուն: Նա դասընթացներ էր կարդում գնի և տեղբաշխման մասին, ինչպես նաև տնտեսագիտական մտքի պատմության մասին, թեև երբեմն նա առաջարկում էր նաև այլ թեմաներ: Նա արժանացել է ամենամեծ պատիվների և ծառայությունների, ինչպիսիք նրան կարող էր տալ իր մասնագիտությունը՝ Ամերիկյան տնտեսական ասոցիացիայի պրեզիդենտ, որին նա համաձայնվեց 1950թ.-ին, 1936-ին և 1937-ին հրաժարվելուց հետո և ասոցիացիայի ամենաբարձր պարգևատրումը՝ Ուոլկերի մեդալը: Նայթը մահացել է Չիկագոյում 1972թ.-ի ապրիլի 8-ին:



**Հարրի Մարկովից**, (Markowitz, Harry), (ծնվ.1927) - ամերիկացի տնտեսագետ, ով 1990թ.-ին (Մ. Միլլերի և Ու. Շարպի հետ միասին) արժանացավ Նոբելյան մրցանակի տնտեսագիտության գծով: Ծնվել է Չիկագոյում 1927թ.-ի ապրիլի 24-ին: 1952թ.-ին ավարտել է Չիկագոյի համալսարանը, աշխատանքի անցել «ՌԷՆԴ» կորպորացիայում, համագործակցել է

Ֆոնդ Քոուլզի հետ: 1963թ.-ին դարձավ Ամփոփիչ վերլուծության միավորված կենտրոնի նախագահ, իսկ 1968թ.-ից Լոս Անջելեսում Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, 1972թ.-ից՝ Փենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր: 1974-1983թթ.-ին աշխատում էր «IBM»-ում, հետո ընտրվեց որպես Նյու Յորքի համալսարանի Բարուխ քոլեջի պրոֆեսոր:
Մարկովիցի աշխատանքները նվիրված են շուկայի արժեթղթերի, ներդրումների, օպտիմիզացիայի, գծային ծրագրավորման հետազոտմանը: «Պորտֆելային ներդրումների» կամ «պորտֆելի տեսության» հայեցակարգի հեղինակն է, ինչպես նաև տնտեսական մոդելների համակարգչային վերլուծության նպատակների համար «Սիմսկրիպտ» լեզվի հեղինակն է:



**Օսկար Մորգենշտերն**, (Oskar Morgenstern; ծնվել է 1902թ.-ի հունվարի 24-ին, Գերմանիայում: Մահացել է 1977թ.-ի հուլիսի 26-ին Փրինստոնում) - գերմանական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ, խաղերի տեսության հեղինակներից մեկը:

Հետազոտել է տնտեսական ցիկլի, միջազգային առևտրի հարցերը, քաղաքատնտեսության հիմնախնդիրների մաթեմատիկական և վիճակագրական մեթոդոլոգիան: Ջ. Ֆոն Նեյմանի հետ համատեղ շուկայական տնտեսության վերլուծության նկատմամբ կիրարկել է խաղերի տեսությունը (ակնկալվող օգտակարության տեսություն):
Նեյման-Մորգենշտերնի հայեցակարգի հիմնական դրույթները հրատարակվել են 1944թ.-ին «Խաղերի և տնտեսագիտական վարքի տեսություն» աշխատությունում: Մորգենշտերնը ծնվել է 1902թ.-ին Սիլեզիայում (Գերմանիա) միջին եկամուտ ունեցող ձեռներեցի ընտանիքում: Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստացել է Վիեննայում, 1925թ.-ին Վիեննայի համալսարանը նրան շնորհեց դոկտորի գիտական աստիճան: Մորգենշտերնը հետագա երեք տարիների ընթացքում որպես Ռոկֆելլերի ֆոնդի

կրթաթոշակառու ճանապարհորդել է Եվրոպայում և Ամերիկայում, իսկ Ավստրիա վերադառնալիս 1929թ.-ին սկսեց դասախոսությունների կուրս կարդալ Վիեննայի համալսարանում, որտեղ 1935թ.-ին դարձավ պրոֆեսոր: 1931-1938թթ.-ին տնօրեն էր Գործնական ցիկլերի հետազոտության ավստրիական ինստիտուտում և «Zeitschrift fur Nationalokonomie» ամսագրի խմբագիր, Ավստրիայի Ազգային բանկի խորհրդատու և փիլիսոփաների ու մաթեմատիկայի «Վիեննական խմբակի» անդամ: Մորգենշտերնը 30-ական թվականների ակտիվորեն զբաղվում էր տեսական և կիրառական հետազոտություններով, որի արդյունքը եղան մի քանի հոդվածներ և տնտեսական կանխորոշման վերաբերյալ երկու հիմնական աշխատություն: 1938թ.-ին գտնվելով արձակուրդի մեջ ԱՄՆ-ում, նա իմացավ Վիեննայի համալսարանից իր հեռացման մասին՝ Ավստրիան ֆաշիստների կողմից զավթվելու հետևանքով: Ընդունելով Նեյմանի հետ համատեղ աշխատելու առաջարկը, Մորգենշտերնը զբաղեցրեց պրոֆեսորական պաշտոնը Փրինսթոնի համալսարանում, որտեղ աշխատեց ընդհուպ մինչև իր թոշակի անցնելը 1970թ.-ին: 1976թ.-ին ընտրվեց որպես Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի պատվավոր անդամ: Վիեննայի համալսարանի դոկտոր 1925թ-ին, ԱՄՆ–ի քաղաքացի 1944թ.-ից: Դասավանդում էր Վիեննայի և Պրինսթոնի համալսարաններում:




**Ջոն ֆոն Նեյման**, (անգլ. John von Neumann, գերմ. Johann von Neumann, ծնվելիս Յանոշ Լայոշ Նեյման, հունգ. Neumann Ja´nos Lajos), (ծնվել է 1903թ. դեկտեմբերի 28-ին Բուդապեշտում – մահացել է 1957թ. փետրվարի 8-ին Վաշինգթոնում):

Արդեն վեց տարեկանում նա կարողանում էր մտքում բաժանել երկու ութանիշ թվերը և հոր հետ զրուցել հին հունարեն լեզվով:

Յանուշը միշտ հետաքրքրվում էր մաթեմատիկայով, թվերի բնույթով և շրջապատող աշխարհի տրամաբանությամբ: Ութ տարեկանում նա արդեն լավ հասկանում էր մաթեմատիկական անալիզը: Ֆոն Նեյմանը Բուդապեշտի համալսարանում քսաներեք տարեկանում ստացավ փիլիսոփայության դոկտորի աստիճան մաթեմատիկայի գծով:

Խաղերի տեսությունը դա իրավիճակներում որոշումներ կայացնելու օպտիմիզացիայի սկզբունքների մաթեմատիկական անալիզն է, որտեղ մասնակցում են երկու և ավելի «խաղացողներ», որոնք գործում են իրարից անկախ և ունեն (ծայրահեղ դեպքում՝ մասամբ) տարբեր հետաքրքրություններ: Պարզագույն օրինակ է հանդիսանում այնպիսի խաղի ռազմավարությունը, ինչպիսին է պոկերը: Յուրաքանչյուր պտույտ որոշակի աստիճանի կախված է խաղացողների ազատ որոշումներից, որոնք գիտեն խաղի ֆիքսված կանոնները և նախորդ քայլերի արդյունքները, այն, որ պարտվում են որոշ խաղացողներ, շահում են ուրիշները, դա կոչվում է զրոյական գումարով խաղ, յուրաքանչյուր խաղացողի խնդիրը ամեն անգամ կայանում է նրանում, որ անկախ ուրիշներից մշակեն լավագույն ռազմավարությունը և շահեն: Երկու խաղացողների համար զրոյական գումարով «ոչ կոոպերատիվ» խաղի այս պարզ օրինակը հանդիսանում էր Նեյմանի և Մորգենշտերնի առաջարկած «մինիմաքսային» լուծման դասական տիպը: Նրանք նաև պնդում էին, որ գրեթե բոլոր տնտեսական իրադարձությունները կարելի է դիտարկել որպես նման խաղի արդյունք, բայց չկարողացան առաջարկել որոշակի լուծում՝ ոչ զրոյական գումարով և n մասնակիցներով կոոպերատիվ խաղերի համար, որոնցում ներգրավված են ինչպես հակառակ, այնպես էլ համընկնող շահերը, իսկ շատ տնտեսական գործընթացներ ունեն ոչ զրոյական գումար (վերջնական արտադրանքի արժեքը գերազանցում է ռեսուրսների արժեքը) և հենց դրա համար էլ նրանք չեն ենթադրում լիովին հակադիր շահեր: Հենց այս հանգամանքն էր տնտեսագետների մոտ բացառիկ սկեպտիկ վերաբերմունք

առաջացնում տնտեսության մեջ խաղերի տեսության պոտենցիալ հնարավորությունների հանդեպ:



**Ջոն Ֆորբս Նեշ-կրտսեր**, (John Forbes Nash, Jr. ) - ծնվել է 1928թ.-ի հունիսի 13-ին, Արևմտյան Վիրջինիայում, Բլյուֆիլդում)- ամերիկացի մաթեմատիկոս, որն աշխատում էր խաղերի տեսության և դիֆերենցիալ երկրաչափության ոլորտում: Նոբելյան մրցանակի դափնեկիր տնտեսագիտության գծով 1994թ.-ին «Ոչ կոոպերատիվ խաղերի տեսության մեջ հավասարակշռության վերլուծության համար» (Ռայնհարդ Զելտենի և Ջոն Խարշանիի հետ համատեղ): Լայն հասարակայնությանը հայտնի է մեծ մասամբ Ռոն Խովարդի «Մտքի խաղերը» (A beautiful mind) կենսագրական դրամայից, որը նրա մաթեմատիկական հանճարի և շիզոֆրենիայի հետ պայքարի մասին է:

Ջոն Նեշը ծնվել է 1928թ.-ի հունիսի 13-ին Բյուֆիլդում, Վիրջինիայի նահանգ: Դպրոցում միջակ էր սովորում, իսկ մաթեմատիկա ընդհանրապես չէր սիրում՝ դպրոցում այն ձանձրալի էին դասավանդում: Երբ տասնչորս տարեկան էր, նրա ձեռքն ընկավ Էրիկ Տ. Բելլի «Մեծ մաթեմատիկոսները» գիրքը: «Կարդալով այդ գիրքը, ես ինքս՝ առանց կողմնակի օգնության կարողացա ապացուցել Ֆերմի փոքր թեորեմը», - գրում էր Նեշն ինքնակենսագրությունում: Այսպես նրա մաթեմատիկական հանճարը հայտնեց իր մասին: Բայց դա միայն սկիզբն էր:

Դպրոցին հետևեց Կարնեգիի Պոլիտեխնիկական ինստիտուտում (ներկայումս Կարնեգի-Մելոնի մասնավոր համալսարան) ուսումը, որտեղ փորձեց ուսումնասիրել քիմիա, լսեց միջազգային տնտեսության դասընթաց, իսկ հետո՝ վերջնականապես հաստատվեց մաթեմատիկայով զբաղվելու իր որոշման մեջ: 1948թ.-ին ինստիտուտը երկու դիպլոմով՝ բակալավրի և մագիստրոսի, ավարտելով, ընդունվեց Պրիստոնի համալսարան: Նեշի

ինստիտուտի դասախոս Ռիչարդ Դաֆֆինը նրան տվեց ամենալակոնիկ երաշխավորագիր-նամակներից մեկը: Նրանում միայն մեկ տող էր. «Այս մարդը հանճար է» (This man is a genius):
Պրիստոնում Ջոն Նեշը լսեց խաղերի տեսության մասին, որն այն ժամանակ նոր էր ներկայացվում Ջոն ֆոն Նեյմանի և Օսկար Մորգենշտերնի կողմից: Խաղերի տեսությունը ցնցեց նրա երևակայությունն այնպես, որ քսան տարեկանում Ջոն Նեշը կարողացավ ստեղծել գիտական մեթոդի հիմունքները, որը հսկայական դեր խաղաց համաշխարհային տնտեսության զարգացման հարցում: 1949թ.-ին 21-ամյա գիտնականը խաղերի տեսության վերաբերյալ գրեց քսանյոթ էջից բաղկացած գիտական թեզ: 45 տարի անց այդ աշխատանքի համար նա արժանացավ Նոբելյան մրցանակի տնտեսագիտության գծով: Նեշի ներդրումն այսպես են նկարագրել.«Ոչ կոոպերատիվ խաղերի տեսության մեջ հավասարակշռության ֆունդամենտալ վերլուծության համար»: Նեյմանը և Մորգենշտերնը զբաղվում էին այսպես կոչված զրոյական գումարով խաղերով, որոնցում մի կողմի շահումը հավասար էր մյուս կողմի պարտությանը: 1950-1953թթ.-ին Նեշը հրատարակեց չորս, առանց չափազանցության հեղափոխական աշխատություն, որոնցում ներկայացրեց ոչ զրոյական գումարով խաղերի վերլուծությունը, խաղերի կարգը, որոնցում շահած մասնակիցների շահումի գումարը հավասար չէ պարտված մասնակիցների կորցրած գումարին: Այդպիսի խաղի օրինակ կարող են դառնալ ընկերության արհմիության և ղեկավարության միջև աշխատավարձի բարձրացման մասին բանակցությունները: Այդ իրավիճակը կարող է ավարտվել կամ երկարատև գործադուլով, որից երկու կողմերն էլ կտուժեն, կամ փոխշահավետ համաձայնության ձեռքբերումով: Նեշը կարողացավ կռահել մրցակցության նոր դեմքը, մոդելավորելով այն իրավիճակը, որը հետագայում ստացավ «հավասարակշռություն ըստ Նեշի» կամ «ոչ կոոպերատիվ հավասարակշռություն» անվանումը, որի դեպքում երկու կողմերն էլ օգտագործում են իդեալական ռազմավարություն,

քանի որ յուրաքանչյուր փոփոխություն միայն կվատթարացնի նրանց վիճակը:
2001թ.-ին 38 տարի անց Նեշը վերադարձավ Պրինստոնի իր գրասենյակը, որտեղ շարունակում է զբաղվել մաթեմատիկայով:



**Ամոս Տվերսկի**, (Amos Tverski, մարտի 16 1937 – 2 հունիսի 1996) - կոնգինիտիվ գիտության առաջնորդ: Կահնեմանի հետ համատեղ ստեղծել է հեռանկարների տեսությունը, որպեսզի բացատրի իռացիոնալ մարդկային տնտեսական ընտրությունները:

Դոկտորական աստիճանն ստացել է Միչիգանի համալսարանում 1965թ.-ին: Դասախոսություն է կարդացել Երուսաղեմի Հրեական համալսարանում մինչև Ստենֆորդի համալսարան տեղափոխվելը: Նաև մի շարք գլխավոր աշխատանքներում համագործակցել է Թոմաս Գոլովիչի, Պոլ Սլովիչի և Ռիչարդ Թեյլորի հետ:



**Վերնոն Լոմաքս Սմիթ** (Vernon Lomax Smith - ծնվել է 1927թ. հունվարի 1-ին Ուիչիտում, Կանզաս նահանգում) - ամերիկացի տնտեսագետ: 2002թ.-ին Նոբելյան մրցանակի դափնեկիր «Լաբորատոր փորձարկումների համար որպես միջոց էմպիրիկ տնտեսական վերլուծությունում, հատկապես այլընտրանքային շուկայական մեխանիզմների վերլուծության համար»:
Սովորել է Կանզասում: Դոկտորի աստիճանը ստացել է Հարվարդում: Դասավանդել է Պերդյուի, Ջորջ Մեյսոնի համալսարաններում, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում, Նեյրո-տնտեսության հետազոտությունների կենտրոնի աշխատակից, Փորձարկումային տնտեսագիտական

հետազոտությունների միջազգային հիմնադրամի նախագահ, Տնտեսագիտության կոորպորացիայի նախագահ (1986-87) և «Հասարակական ընտրություն» ընկերության նախագահ (1988-90), Ադամ Սմիթի անվան մրցանակի դափնեկիր (1995):



**Դանիել Կահնեմանը** (Kahneman, Daniel) (ծնվել է Թել Ավիվում 1934թ.-ին)- իսրայելա-ամերիկյան հոգեբան, «վարքային» տնտեսագիտության տեսության հիմնադիրներ, տնտեսագիտության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր 2002թ.-ին «Տնտեսագիտության մեջ հոգեբանական մեթոդիկայի կիրառման համար, հատկապես անորոշության պայմաններում դատողությունների կազմավորման և որոշումներ կայացնելու հետազոտություններում» (Վ. Սմիթի հետ համատեղ):

Կահնեմանի կյանքը դրսևորում է ժամանակակից գիտնականների կոսմոպոլիտիզմը: Աշխատանքն սկսելով Երուսաղեմի Հրեական համալսարանում (1954թ. բակալավրի աստիճան «հոգեբանություն և մաթեմատիկա» մասնագիտությամբ), Կահնեմանն այն ավարտեց արդեն Բերքլիի համալսարանում (1961թ. «հոգեբանություն» մասնագիտության գծով դոկտորական աստիճան): Հետագա տասնյոթ տարիների ընթացքում նա դասավանդում էր Երուսաղեմի Հրեական համալսարանում, դա համատեղելով ԱՄՆ-ի և Եվրոպայի (Քեմբրիջ, Հարվարդ, Բերքլի) մի շարք համալսարաններում աշխատանքի հետ: 1970թ.-ից Կահնեմանը որոշ ժամանակով թողեց Իսրայելում իր աշխատանքը, համատեղ գիտական նախագծերով զբաղվելով ամերիկացի և կանադացի գիտնականների հետ, այդ երկրների գիտահետազոտական կենտրոններում: 1993թ.-ին նա աշխատում է որպես պրոֆեսոր ԱՄՆ-ի Պրիստոնի համալսարանում, 2000թ.-ից՝ զուգահեռ կրկին դասավանդում է Երուսաղեմի Հրեական համալսարանում:

Թեև կրթությամբ և մասնագիտությամբ Կահնեմանը հանդիսանում է հոգեբան, նրան տնտեսագիտության գծով 2002թ.-ին Ալֆրեդ Նոբելի անվան մրցանակ շնորհելն արժանացավ տնտեսագետների հավանությանը, որոնք ընդունում են տնտեսագիտության բնագավառում նրա աշխատանքների մեծ նշանակությունը: Կահնեմանն «երկրորդ ոչ տնտեսագետն է» (մաթեմատիկոս Ջոն Նեշից հետո), որն ստացավ Նոբելյան մրցանակ տնտեսագիտության գծով: Կահնեմանի հետազոտությունների գլխավոր օբյեկտը անորոշության պայմաններում մարդու կողմից որոշումներ կայացնելու մեխամիզմներն են: Նա ապացուցեց, որ մարդկանց կողմից կայացվող որոշումները էապես շեղվում են նրանից, ինչը նշանակված (պատվիրված) է *homo ecnomicus*-ի ստանդարտ տնտեսագիտական մոդելով: «Տնտեսական մարդու» մոդելի քննադատությամբ զբաղվում էին նաև մինչև Կահնեմանը (կարելի է հիշել, օրինակ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Հերբերտ Սայմոնին և Մորիս Ալլեին), բայց հենց նա և իր կոլեգաներն առաջին անգամ սկսեցին հետևողականորեն ուսումնասիրել որոշումներ կայացնելու հոգեբանությունը:

1979թ.-ին հայտնվեց *«Հեռանկարների տեսություն, ռիսկի պայմաններում որոշումներ կայացնելու վերլուծություն»* հոդվածը, գրված Կահնեմանի կողմից՝ համատեղ հոգեբանության պրոֆեսոր Ամոս Տվերսկու հետ, (Երուսաղեմի և Ստենֆորդի համալսարաններ): Այս հոդվածի հեղինակները, որոնք սկիզբ դրեցին այսպես կոչված վարքային տնտեսագիտությանը (behavioral economics), ներկայացրին հսկայական քանակության փորձերի արդյունքներ, որոնց ընթացքում մարդկանց առաջարկվում էր ընտրություն կատարել երկու տարբեր այլընտրանքների միջև: Այդ փորձարկումներն ապացուցեցին, որ մարդիկ չեն կարող ռացիոնալ կերպով որոշում գնահատել ո՛չ ակնկալվող շահերի կամ կորուստների մեծությունները, ո՛չ էլ դրանց հավանականությունները: Նախ, հայտնաբերվեց, որ մարդիկ տարբեր կերպ են արձագանքում համարժեք (շահերի և

կորուստների հարաբերակցության տեսանկյունից) իրավիճակներին՝ կախված նրանից, արդյոք նրանք կորցնում են թե՝ շահում: Այդ երևույթն անվանում են *ասիմետրիկ ռեակցիա բարեկեցության փոփոխության նկատմամբ*: Մարդը վախենում է կորստից, այսինքն՝ կորուստների և ձեռքբերումների զգացողությունները ոչ սիմետրիկ են: Ձեռքբերումներից մարդու բավարարման աստիճանը, օրինակ, 100 դոլար ձեռք բերելիս շատ ավելի ցածր է, քան միևնույն գումարը կորցնելու դեպքում վշտալիս: Դրա համար էլ մարդիկ պատրաստ են ռիսկի գնալ, որպեսզի կորուստներից խուսափեն, բայց հակված չեն ռիսկի գնալ, որպեսզի օգուտ ստանան: Երկրորդ փորձարկումները ցույց են տվել, որ մարդիկ հակված են սխալվել հավանականությունները գնահատելիս: Նրանք թերագնահատում են այն իրադարձությունների հավանականությունը, որոնք ավելի շուտ, տեղի կունենան, և գերագնահատում են ավելի քիչ հավանական իրադարձությունները: Գիտնականները հայտնաբերեցին հետաքրքրիր օրինաչափություն, նույնիսկ ուսանող-մաթեմատիկոսները, որոնք լավ գիտեն հավանականությունների տեսությունը, իրական կյանքի իրավիճակներում չեն օգտագործում իրենց գիտելիքները, այլ ելնում են իրենց մոտ ձևավորված ստերեոտիպերից, նախապաշարմունքներից, զգացմունքներից և հույզերից:

Որոշումներ կայացնելու տեսության փոխարեն, որը հիմնված է հավանականությունների տեսության վրա, Դ. Կահնեմանը և Ա. Տվերսկին առաջարկեցին նոր տեսություն՝ *հեռանկարների տեսությունը* (prospect theory): Համաձայն այդ տեսության, նորմալ մարդն ընդունակ չէ ճիշտ գնահատել ապագա շահերը բացարձակ արտահայտությամբ: Իրականում նա դրանք գնահատում է որոշակի համընդհանուր ստանդարտի հետ համեմատելով, ձգտելով նախ և առաջ խուսափել իր վիճակի վատթարացումից: Հեռանկարների տեսության օգնությամբ կարելի է բացատրել

մարդկանց շատ իռացիոնալ արարքները, որոնք չեն բացատրվում «տնտեսական մարդ» դիրքորոշումից:

Նոբելյան կոմիտեի կարծիքով, ցուցադրելով, թե որքան վատ են մարդիկ կարողանում կանխորոշել ապագան, Դ. Կահնեմանը «բավարար հիմքով հարցի տակ դրեց տնտեսագիտության տեսության ֆունդամենտալ պոստուլատների գործնական արժեքը»: Պարգևատրման ժամանակ, նա բացահայտ ընդունեց, որ Նոբելյան մրցանակին արժանանալու պատիվը հազվադեպ է արտացոլում մեկ մարդու ներդրումը գիտության մեջ: «Դա հատկապես բնորոշ է իմ դեպքին, քանի որ ես մրցանակ եմ ստացել այն աշխատանքի համար, որը շատ տարիներ առաջ կատարել եմ իմ մոտ ընկեր և կոլեգա Ամոս Տվերսկու հետ, որը կյանքից հեռացավ 1996թ.-ին: Այսօր նրա բացակայության միտքը շատ է վշտացնում ինձ», - ասաց Կահնեմանը:

Հետաքրքիր է նշել, որ ամերիկյան տնտեսագետ Վերնոն Սմիթը, որը տնտեսագիտության գծով պարգևատրվեց Նոբելյան մրցանակով Կահնեմանի հետ մեկտեղ, հանդիսանում է նրա մշտական ընդդիմադիրը, ապացուցելով, որ փորձագիտական ստուգումը հիմնականում հաստատում (այլ ոչ թե հերքում) է տնտեսագետների համար սովորական ռացիոնալ վարքի սկզբունքները: Նոբելյան կոմիտեի որոշման մեջ՝ 2002թ.-ին մրցանակը հավասար բաժանել տնտեսագիտության գծով «տնտեսական մարդու» ռացիոնալ մոդելի քննադատի և պաշտպանի միջև նկատելի էր ոչ միայն ակադեմիական օբյեկտիվություն, այլ նաև ինքնատիպ հեգնանք դեպի ժամանակակից տնտեսագիտության մեջ տիրող իրավիճակը, որտեղ հակադիր մոտեցումներն ունեն գրեթե միատեսակ ժողովրդականություն:

## Ռիսկ-մենեջմենթի հիմնական եզրույթները

**Ակվիզիտոր** - ապահովագրական ընկերության աշխատակից, ապահավագրական գործակալ, որն իրականացնում է գործունեություն ապահովագրական պայմանագրեր, ապահովագրության մասին համաձայնագրեր կնքելիս կամ նորացնելիս:

**Ակտուար** - ֆինանսական ռիսկերի գնահատման գծով մասնագետ:

**Անդերրայթեր** - միջնորդ արժեթղթերի հետ գործառնություններում; բանկային գործունեությունում; արժեթղթերի շուկայում; ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի էմիտենտին երաշխավորում է դրանց զետեղումը շուկայում համաձայնեցված պայմաններով հատուկ վարձատրման դիմաց; ապահովագրության մեջ իրավաբանական անձ, որը պատասխանատու է հանդիսանում ապահովագրական (վերաապահովագրական) պայմանագրեր կնքելու և ապահովագրական պարտավորությունների պորտֆելի ձևավորման համար; իրականացնում է ապահովագրության վկայականի բաժանորդագրումը կամ իր վրա է ընդունում ապահովագրական ռիսկը:

**Վերլուծություն ըստ Մոնթե-Կարլոյի մեթոդի** - մեթոդ, որը հիմնված է նախագծի մոդելավորման բազմակի նմանակեղծման վրա՝ հնարավոր արդյունքների տեղաբաշխումը հաշվարկելու նպատակով:

**Երկրորդական ռիսկ** - ռիսկ, որը ծագում է որպես ռիսկին արձագանքելու միջոցառումների անցկացման անմիջական հետևանք:

**Ռիսկերի որակական գնահատում** - ռիսկերի և դրանց առաջացման պատճառների որակական վերլուծության անցկացում: Ներառում է ռիսկերի հավանականությունների և ազդեցությունների

գնահատումը՝ օգտագործելով, օրինակ, հավանականությունների և ազդեցությունների մատրիցան՝ ռիսկերը ըստ աստիճանների բաժանելու համար (ցածր, չափավոր կամ բարձր), որպեսզի սահմանի գերակայությունները՝ ռիսկին արձագանքելը պլանավորելու համար:

**Ռիսկերի քանակական գնահատում** - ռիսկերի հավանականությունների և հետևանքների չափում և դրանց ազդեցության գնահատում: Ռիսկերը բնութագրվում են դրանց հնարավոր հետևանքների հավանականությունների տեղաբաշխումներով: Վերլուծության ընթացքում կիրառում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են նմանակեղծող մոդելավորումը և որոշումների ծառի վերլուծությունը:

**Ռիսկերի թուլացում** – ուղիների որոնում ռիսկի հավանականության և/կամ որոշակի ցուցանիշների վրա ռիսկի ազդեցության նվազեցում:

**Մնացորդային ռիսկ** - ռիսկ, որը մնացել է նրան արձագանքելու հետ կապված գործողություններ իրականացնելուց հետո:

**Ռիսկի փոխանցում** - երրորդ կողմին ռիսկերի հետևանքները փոխանցելու ուղիների որոնում, փոխանցված ռիսկերին արձագանքելու համար պատասխանատվության փոխանցումով:

**Ռիսկի ընդունում** - ռիսկերին արձագանքելու պլանավորման մեթոդիկա, որով նախագծի անձնախումբը որոշում է կայացնում չփոփոխել նախագծի պլանը հաշվի առնելով ռիսկը կամ իրավիճակը, երբ գտնված չէ ռիսկին արձագանքելու հարմար ռազմավարությունը:

**Բազիսային ռիսկ** - ֆյուչերսային և կանխիկ գումարի միջև հարաբերակցության անբարենպաստ փոփոխությունների ռիսկ՝ ժամկետային պայմանագրի գործելու շրջանում:

**Ապրանքային ռիսկ** - կորուստների ռիսկը ապրանքային գների դինամիկայի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում, ներառյալ՝ - ապրանքային գների փոփոխությունները սփոթ շուկայում և ժամկետային շուկայում ապրանքների գների

հարաբերակցություններում փոփոխությունները, ապրանքային գների անկայունության փոփոխությունները, փոփոխությունները տարբեր ապրանքների գների հարաբերակցություններում:

**Կորելյացիոն ռիսկ** - ֆինանսական գործիքների կորուստների ռիսկ, կապված արտադրանքների, տարադրամների կամ շուկաների միջև խախտումների (ընդհատումների) հետ:

**Վարկային համարժեքի ռիսկ** – կորստի ռիսկ պայմանավորված կոնտրագենտի կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով:

**Տարադրամի կոնվերտացման ռիսկ** – ռիսկ, որը առաջանում է մի տարադրամը մյուսով կոնվերտացնելու անկարողության պատճառով, քաղաքական, տնտեսական քաղաքականության արդյունքում:

**Աղետի ռիսկ** – ֆորս-մաժորի, անկանխելի պարագայի վրա հասնելու ռիսկ՝ կորստի ռիսկ ընկերության գործունեության համար բացասական հետևանքներ ունեցող իրադարձությունների պատճառով, ներառյալ՝ տարերային աղետները, պատերազմը, ֆինանսական շուկաների անկումը կամ գործունեության դադարեցումը:

**Ֆոնդային ռիսկ** - կորստի ռիսկ՝ արժեթղթերի շուկայում բացասական փոփոխությունների հետևանքով, ներառյալ՝ բաժնետոմսերի գների փոփոխությունները; բաժնետոմսերի գների անկայունության փոփոխությունները; տարբեր բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի ինդեքսների գնի փոխհարաբերություններում փոփոխությունները:

**Հեջավորման գործիքներ** - ֆինանսական գործիքները (տարադրամ, արժեթղթեր, դեպոզիտներ, պայմանագրեր), որոնց օգնությամբ իրականացվում է պաշտպանություն հնարավոր ռիսկերից:

**Տոկոսադրույքի/տոկոսային ռիսկ** - կորստի ռիսկ տոկոսադրույքների բացասական փոփոխությունների հետևանքով, ներառյալ՝ տոկոսադրույքների անմիջական փոփոխությունները; եկամուտների կորի ձևում փոփոխություններ (հավասարեցում կամ

կտրուկ աճ); տոկոսադրույքների անկայունության փոփոխություններ; փոփոխություններ տոկոսադրույքի տարբեր ինդեքսների միջև փոխհարաբերություններում կամ տեղաբաշխման մեջ; պարտքի հիմնական գումարի ժամկետից շուտ մարում (օրինակ, հիփոթեքային փոխառություններ):

**Իրավական ռիսկ** - ռիսկ, երբ մասնակիցների միջև համաձայությունն անհնարին կլինի կատարել ըստ գործող օրենսդրության կամ, որ համաձայնությունը հարկ եղած ձևով ձևակերպված չի լինում; կորստի ռիսկ՝ գործող օրենսդրության իրավական պահանջների խախտման պատճառով կամ գործող օրենսդրությունում բացթողումների պատճառով:

**Իրացվելիության ռիսկ** - մասնակիցներից մեկի կողմից իր պարտավորությունների կատարման ժամանակավոր հապաղման ռիսկ կամ ռիսկ, երբ կոնտրագենտը լիովին չի կատարի իր պարտավորությունները պահանջվող ամսաթվին, բայց կկարողանա դա կատարել այդ ամսաթվից որոշ ժամանակ անց:

**Շուկայի իրացվելիության ռիսկ** - կորստի ռիսկ՝ շուկայում իրացվելիության բացակայության պատճառով, որը խոչընդոտում է դիրքորոշումների կամ պորտֆելների արագ և արդյունավետ իրացվելիությունը և սահմանափակում հասանելիությունը դեպի դրամական միջոցները:

**Գործառնական ռիսկ** – ռիսկ՝ կապված կառավարման, աջակցության և հսկողության համակարգերում և ընթացակարգերում թերությունների հետ:

**Գնային ռիսկ** - կորստի ռիսկ՝ ապրանքի շուկայական գնի կամ ֆինանսական գործիքի փոփոխությունների պատճառով:

**Օրենսդրական ռիսկ** - կորստի ռիսկ՝ կապված օրենսդրության պահանջը կատարելու անկարողության պատճառով:

**Վերաներդրման ռիսկ** - կորստի ռիսկը կապված եկամուտներն ավելի ցածր դրույքներով վերաներդնելու հետ:

**Հեղինակության կորստի ռիսկ** - կորստի ռիսկ՝ շուկայում հեղինակության կորստի պատճառով:

**Համակարգված ռիսկ** - ռիսկ, որը պայմանավորված է շուկայի ընդհանուր շարժմամբ և կապված չէ կոնկրետ արժեթղթի հետ:
**Համակարգային ռիսկ** - ռիսկ, որը կապված է մասնակիցներից մեկի իր պարտականությունները կատարելու անկարողության հետ, որը հանգեցնում է այլ մասնակիցների աշխատանքի խախտմանը:
**Հարկադրման ռիսկ** - կորստի ռիսկ՝ պայմանավորված հարկադրման օրենսդրության կամ չնախատեսված հարկադրման փոփոխությունների պատճառով:
**Անկայունության (վոլատիլության) ռիսկ** - ռիսկ, երբ ստանդարտ կամ «ներկառուցված» օպցիոն պահողը կամ վաճառողը կենթարկվի կորուստների՝ վոլատիլության իրական փոփոխության կամ շուկայական ակնկալիքների հետ կապված փոփոխության դեպքում:
**Վոլատիլություն (փոփոխունություն) -** վիճակագրական ցուցանիշ, որը բնութագրում է շուկայական գնի կամ եկամտի՝ ժամանակի մեջ փոփոխվելու միտումը:
**Ռիսկի աութսորսինգ -** ռիսկի գնահատման կամ ռիսկի կառավարման փոխանցում կողմնակի կազմակերպությանը:
**Ռիսկերի վիզուալիզացիա** (տեսանելի դարձնելը) - դա ռիսկերի տեսանելի պատկերումն է գրաֆիկների տեսքով, որոնք ընդգծում են համապատասխան ռիկսերի կարևոր, էական կողմերը:
**Տեղեկատվության արտաքին աղբյուրներ -** դրսից ստացվող որակական տեղեկատվության և քանակական տվյալների աղբյուրներ:
**Տեղեկատվության ներքին աղբյուրներ** - որակական տեղեկատվության և քանակական տվյալների աղբյուրներ, որոնք վերաբերվում են և ստացվում են ընկերության ներսից:
**Ռիսկերի նույնականացում** - որոշում կայացնող անձանց մոտ այն ռիսկերի ամբողջական պատկերի ձևավորում, որոնք սպառնում են բիզնեսին և նրա աշխատակիցների կյանքին և առողջությանը:
**Ռիսկի փոխակերպում** - ռիսկերի կառավարում դրանց վրա անմիջապես ազդելու օգնությամբ (ռիսկից հրաժարում, վնասի

հաճախականության նվազեցում, վնասի կանխում, ռիսկի աութսորսինգ):

**Կոմերցիոն ռիսկ** - տնտեսական կորուստների ռիսկ, կապված կոմերցիոն, արտադրա-տնտեսական գործունեության իրականացման հետ:

**Ընդունելի ռիսկի հայեցակարգ -** ռիսկերի կառավարման հայեցակարգ, որը կայանում է իրավիճակներից մեծ մասում ռիսկից լիովին ազատվելու անհնարինությունը ընդունելու և առաջարկում է ռիսկը նվազեցնել մինչև այն մակարդակը, երբ այն դադարում է սպառնալից լինել:

**Ռիսկի չափանիշային ցուցանիշներ** - ռիսկի բնութագրեր, որոնց շեմային նշանակությունների համաձայն որոշումներ են կայացվում ռիսկերի կառավարման այս կամ այն ընթացակարգի ընտրության վերաբերյալ:

**Ռիսկի չափանիշ** - ցուցանիշ՝ որոնք հանդիսանում են հնարավոր վնասի հավանականությունը և չափը:

**Մաքսիմալ հնարավոր վնաս** – կազմակերպությանը հասցված առավելագույն ֆինանսական վնաս՝ հանգամանքների ամենավատթար զուգադիպման դեպքում:

**Ռիսկի չափ -** մեծություն, որը թվով արտահայտում է համապատասխան ռիսկի չափը:

**Առավել հավանական վնաս** - վնասի նշանակություն, որը համապատասխանում է դրա տեղի ունենալու ամենամեծ հավանականությանը:

**Ռիսկի օբյեկտիվ ըմբռնում** - անորոշ հնարավորություն, անբարենպաստ ելքի առկայություն, որը կախված չէ ռիսկի ենթարկվող անձի կամքից և գիտակցությունից:

**Ակնկալվող ընդհանուր վնաս** - ընդհանուր վնասի մաթեմատիկական սպասում:

**Ռիսկի ըմբռնում** - որակական վերլուծություն, որն ուղեկցվում է ռիսկի կառուցվածքային բնութագրերի հետազոտությամբ:

**Տեղեկատվության օգտակարություն** - ռիսկի կառավարման համակարգի տեղեկատվական ապահովման սկզբունք, որը կայանում է նրանում, որ որոշումներ կայացնելու համար ընդամենը անհարժեշտ է օգտագործել այն տեղեկատվությունը, որն իսկապես դրա համար անհրաժեշտ է:

**Ռիսկի չափանիշային ցուցանիշների շեմային նշանակություններ** - ռիսկի չափանիշային ցուցանիշների շեմային նշանակությունները, որոնք հաշվի են առնվում ռիսկերի կառավարման այս կամ այն ընթացակարգն ընտրելիս:

**Ռիսկերի կառավարման ծրագիր** - պատահական իրադարձություններից առաջացած վնասների անբարենպաստ ազդեցության նվազեցման համար անհրաժեշտ ռեսուրսների և գործողությունների պլանավորման, մատակարարման և կազմակերպման ընդունված համակարգ:

**Ռիսկերի կառավարման ընթացակարգ -** կազմակերպության կառավարման և զարգացման ընդհանուր ռազմավարության կոնվերտացման տարբերակ (ռիսկից խուսափում, ռիսկի կրճատում, ռիսկի փոխանցում):

**Ռիսկի կառուցվածքային բնութագիր** - ռիսկի նկարագրում նրա հիմնական բնութագրերի միջոցով՝ վտանգ, ռիսկին ենթակա լինելը, խոցելիություն, այլ ռիսկերի հետ փոխներգործություն:

**Ռիսկերի կառավարման արդյունավետություն** - ռիսկի կառավարման համակարգի տեղեկատվական ապահովման սկզբունք, կայանում է նրանում, որ ռիսկի կառավարման վրա ծախսերը չպետք է գերազանցեն ռիսկի նվազման և նրա անբարենպաստ հետևանքներից առաջացած արդյունքը:

**Էքստրապոլյացիա** - անհայտ նշանակությունների կանխորոշումն է հայտնի նշանակությունների տիրույթի սահմանից դուրս ֆունկցիա առաջարկելու ուղիով:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Գրիգորյան Ռ. Լ. «ՀՀ տնտեսական սուբյեկտների արտաքին առևտրային գործարքների ռիսկի նվազեցման ուղղությունները» ատենախոսություն (թեկնածուական), 2004
2. Àëüãèí À. Ï. Ãðàíè ýêîíîìè÷åñêîãî ðèñêà. - Ì .: Çíàíèå, 1991.
3. Áàëàáàíîâ È.Ò. Ðèñê-ìåíåäæìåíò. – Ì .: Ôèíàíñû è ñòàòèñòèêà, 1996.
4. Áåê Ó. Îò èíäóñòðèàëüíîãî îáùåñòâà ê îáùåñòâó ðiñêà. Ïåð. À.Ä. Êîâàëåâà. - THESIS. № 5, 1994.
5. Áåðíñòàéí Ï. Ïðîòèâ áîãîâ: Óêðîùåíèå ðiñêà. Ïåð. ñ àíãë. - Ì .: ÇÀÎ “Îëèìï Áèçíåñ”, 2000.
6. Åëäåíñ Ý.. Ñóäüáà, ðiñê è áåçîïàñíîñòü. Ïåð. ê.ô.í. Ñ. Ï .Áàíüêîâñêîé. -THESIS. № 5, 1994.
7. Ãðàíâûé Ï.Ã., Ïåòðîâà Ñ.Í., Ïîëòàâöåâ Ñ.È., Ðîìàíîâà Ê.Ã., Õðóñòàëåâ Â.Á., Àðõèïêî Ñ. Ì . Ðèñêè â ñîâðåìåííîì áèçíåñå. – Ì .: Àëàíñ, 1994.
8. Ëóìàí Í. Ðèñê, íåîïðåäåëåííîñòü, ñëó÷àéíîñòü. Ïåð. ê.ô.í À.Ô.Ôèëèïîâà. -THESIS. № 5, 1994.
9. Ìàëûõèí Â.È. Ôèíàíñîâàÿ ìàòåìàòèêà: Ó÷åá. Ïîñîáèå äëÿ âóçîâ. – Ì .: Þ Í ÈÒÈ-ÄÀ Í À, 2000.
10. Íàéò Ô. Ïîíÿòèå ðiñêà è íåîïðåäåëåííîñòè. Ïåð. Ñ.À.Àôîíöåâà THESIS. № 5, 1994.
11. Íåéìàí ôîí Äæ., Ì îðãåíøòåðí Î. Òåîðèÿ èãð è ýêîíîìè÷åñêîå ïîâåäåíèå. – Ì .: Íàóêà, 1970.
12. Ðåé È. Êðèòèíà. Òîðãîâëÿ è óïðàâëåíèå ðèñêàìè: Ïåð. ñ àíãë. – (ñåðèÿ “Çàðóáåæíûé ýêîíîìè÷åñêèé ó÷åáíèê”). – Ì .: Äåëî, 1999.
13. Ðîãîâ Ì .À. Ðèñê-ìåíåäæìåíò. – Ì .: Ôèíàíñû è ñòàòèñòèêà, 2001.
14. Ðýãðåä Ê., Õüþñ Ñ. Óïðàâëåíèå ôèíàíñîâûìè ðèñêàìè. Ïåð. ñ àíãë. – Ì .: È Í ÔÐÀ- Ì , 1996.
15. Õîõëîâ Í.Â Óïðàâëåíèå ðèñêîì: Ó÷åá. Ïîñîáèå äëÿ âóçîâ. – Ì .: Þ Í ÈÒÈ-ÄÀ Í À, 2001.
16. Ýððîó Ê. Âîñïðèÿòèå ðèñêà â ïñèõîëîãèè è ýêîíîìè÷åñêîé íàóêå. - THESIS. № 5, 1994.
17. Kahneman, D., Tversky, A. “Prospect theory: An analysis of decisions under risk”. Econometrica, 47, 1979, 313-327.

**Ռաֆայել Լենսերի Գրիգորյան**
տնտեսագիտության թեկնածու

**Ռիսկի կառավարում**
Ուսումնական ձեռնարկ

Գեղարվեստական ձևավորող՝ Վալերիա Վալերիի Սարգսյան
Սրբագրիչ՝ Գրիգոր Սուրենի Հովակյան
Համակարգչային էջատող՝ Վալերիա Վալերիի Սարգսյան

Տպաքանակը՝ 200 օրինակ
Տպագրված է «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչությունում